Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՄԵԼՄՆՅԱ ԲԱԼԱՅԱՆ

ՀԱՅ ԱՂՎԱՆԻՔ ԵԿԵՂԵՑԻՆ

(Սկզբնավորումից մինչեւ մեր օրերը)

Ստեփանակերտ -2009

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԼԱՅԱՆ

ՀԱՅ ԱՂՎԱՆԻՑ ԵԿԵՂԵՑԻՆ

(Սկզբնավորումից մինչև մեր օրերը)

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ
«Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն
2009

ՀՏԴ 23/28 : 941 (479.25)
ԳՄԴ 86.37 + 63.3 (2Հ)
Բ 200

Տպագրվում է ԱրՊՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ պ.գ.թ., դոցենտ Վ.Բալայան

Աշխատանքը ներկայացնում է Ամենայն Հայոց կաթողիկոսության կարեւորագույն ճյուղերից մեկը հանդիսացող Հայոց արևելից կողմանց կամ Հայ Աղվանից կաթողիկոսության՝ կազմավորումից մինչեւ արդի ժամանակները ազգապահպան առաքելությունը, իր հոգևոր իշխանության տակ գտնվող հայության քաղաքական, տնտեսական, վարչահիրավական, մշակութային-լուսավորչական փաստական գործունեությունը՝ առկա աղբյուրների և հրապարակի վրա գտնվող պատմագիտական գրականության համադրման միջոցով:

Նվիրվում է Արցախի թեմի վերաբացման 20-ամյակին:

Բալայան Մելանյա
Բ 200 Հայ աղվանից եկեղեցին (Սկզբնավորումից մինչև մեր օրերը). – Ստեփանակերտ: Վաչագան Բարեպաշտ, 2008. - 240 էջ:

ԳՄԴ 86.37+63.3 (2Հ)

ISBN 978-99941-2-215-8

© Մելանյա Բալայան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....4
Հայ Աղվանից կաթողիկոսության կազմավորման հանգամանքները
Քրիստոնեության տարածումը Հայոց Արևելից կողմերում:
Հայոց Արևելից եկեղեցու կազմավորումը.....16
Աղվանից կաթողիկոսության ստեղծման հանգամանքները 36
Հայ Աղվանից կաթողիկոսության Պարտավյան շրջանը
Հայ Աղվանից կաթողիկոսությունը VI-VII դարերում 47
Հայ Աղվանից եկեղեցու պայքարը քաղկեդոնականության դեմ VIII դարում.....73
Հայ Աղվանից կաթողիկոսությունը IX-XIV դարերում /աստանդական շրջանը/
Հայ Աղվանից կաթողիկոսների ինքնուրույն ձեռնադրության հանգամանքները IX-X դարերում.....89
Հայ Աղվանից կաթողիկոսությունը XI-XII դարերում.....124
Հայ Աղվանից կաթողիկոսությունը XIII-XIV դարերում.....143
Հայ Աղվանից եկեղեցու Գանձասարյան շրջանը (XV-XIX դարեր)
Հայ Աղվանից կաթողիկոսությունը XV դարում.....158
Հայ Աղվանից եկեղեցու Գանձասարյան շրջանը.....171
Հայոց Արևելից եկեղեցին 19-20-րդ դարերում
Ղարաբաղի Հայոց հոգևոր թեմը.....189
Արցախի թեմը խորհրդային ժամանակաշրջանում.....208
Արցախի վերաբացված թեմը.....218
ՎԵՐՋԱԲԱՆ.....224
Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկ.....232

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայոց արևելից կողմանց կամ պատմագիտության մեջ հայտնի Աղվանից կաթողիկոսության պատմությունը Հայոց եկեղեցու պատմության մի բաժինն է՝ իր յուրահատկություններով ու ընդհանրություններով հանդերձ: Ինչպես հայտնի է հին ու միջնադարյան պատմական աղբյուրները, կենտրոնանալով Հայոց եկեղեցու հոգևոր-քաղաքական, մշակութային-հասարակական գործունեության վրա, համեմատաբար ընդհանրական տեղեկություններ են հաղորդում Հայ Աղվանից եկեղեցու պատմության վերաբերյալ, որոնք էլ հակասական մեկնաբանություններ են ստացել հետագա ուսումնասիրողների կողմից:

Հայոց արևելից կողմանց եկեղեցին իր սկզբնավորման պահից հանդիսացել է Հայ առաքելական եկեղեցու անբաժանելի մասը և միայն բուն Աղվանքին բռնակցվելուց հետո՝ 5-րդ դարի երկրորդ կեսից, դառնալով Աղվանից մարզպանության բաղկացուցիչ մարզերից, նոր քաղաքական կազմավորման ընդհանուր անվան պատճառով սկսեց կոչվել Աղվանից եկեղեցի:

Պատմագիտական աղբյուրների քննության արդյունքում հայտնի է նաև, որ Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգները, կապված Պարսկաստանի կողմից իրականացված վարչատարածքային քաղաքականության արդյունքում ստեղծված Աղվանից մարզպանության մեջ ընդգրկման հետ, պատմագիտության մեջ անվանվել են Աղվանք, սակայն մշտապես շեշտվելով որպես հայկական[1]:

Պատմաքաղաքական իրադարձությունների ազդեցությամբ Պարսկաստանի կողմից արհեստականորեն ստեղծված վարչաքաղաքական այս միավորը՝ Աղվանից մարզպանությունը շուտով սկսեց մասնատվել, որի արդյունքում ստեղծվեցին առանձին վարչա-իրավական կազմավորումներ: Այս նոր կազմավորումների հիմքում արդեն էթնիկական

1. Այդ մասին մանրամասնությունները տես՝ Բ.Ուլուբաբյան, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, Եր., 1981:

գործոնն էր գերակշռող և որի հետևանքով էլ նրանք իրենց վրա արդեն իսկ սկսեցին կրել ազգագավառին բնորոշ իրենց անվանումները: Այս ամենի հետևանքն էլ եղավ այն, որ «Աղվանք» ընդհանրական հասկացությունը աստիճանաբար սկսեց կորցնել իր նախկին աշխարհագրական լայն իմաստն ու ավելի գործածական դարձավ միայն Հայոց արևելից Արցախ և Ուտիք նահանգների հարաբերությամբ, քանզի նրանք Աղվանից մարզպանության կազմավորումից սկսած այդ անվանումը կրում էին իրենց վրա: Այսպիսով, Աղվանից մարզպանության քայքայումից հետո «Աղուանք» հասկացությունը կորցնում է մարզպանության ողջ տարածքն արտահայտող նախկին ընդարձակ իմաստը և տարածքային առումով սկսում է գործածելի դառնալ միայն նրա հարավային մարզերի՝ Ուտիքի և Արցախի համար, որոնք այդ անվանումը կրում էին մարզպանության կազմավորումից սկսած՝ 461թ.: Այսուհետև Կուր և Արաքս գետերի միջև ընկած և Առանշահիկների իշխանության ներքո գտնվող այդ տարածությունը սկսում է պատմության մեջ հանդես գալ «Աղուանք» անվամբ, որը նշված քաղաքական ու էթնիկական փոփոխությունների հետևանքով ստացել էր նոր իմաստ և արտացոլում էր միայն ցույց տրված երկրամասը»[2]:

Հետևաբար, Հայոց արևելից կողմանց եկեղեցին մարզպանության վերացումից հետո էլ շարունակել է իր վրա կրել աշխարհագրական այդ անվանումը, շարունակաբար կոչվելով «Աղվանից եկեղեցի»:

Այսպիսով, սկիզբ առնելով IV դարից, Գրիգոր Լուսավորչի հիմնադրած Աղվանից եկեղեցական թեմը իր գոյությունը պահպանել է մինչև XX դարի կեսերը՝ պատմության ընթացքում կրելով մի շարք էական փոփոխություններ: Մասնավորապես, եթե սկզբնապես այն հիմնադրվել է որպես բուն նաև Աղվանքի քրիստոնյա բնակչությանը միավորող հոգևոր հաստատություն, ապա աստիճանաբար այն հիմնականում դառնում է Հայոց արևելից, պատմագրության մեջ «Աղվանք» անունով առավելապես հիշատակված, Արցախ և Ուտիք նահանգների հոգևոր հաստատությունը, միևնույն ժամանակ պահպանելով իր նախնական

2. Հ.Սվազյան, Աղվանից աշխարհի պատմություն /հնագույն շրջանից -VIII դարը/, Եր., 2006:

անվանումը՝ Աղվանից Աթոռ և ի հոգևորս մշտապես ենթակա մնալով Հայոց կաթողիկոսությանը:

Սույն աշխատանքի նպատակը Ամենայն Հայոց կաթողիկոսության ճյուղերից մեկը հանդիսացող Հայոց արևելից կողմանց կամ Հայ Աղվանից կաթողիկոսության կազմավորումից մինչև մեր ժամանակներն ընդգրկող նրա պատմության, ազգապահպան առաքելության, իր հոգևոր իշխանության տակ գտնվող հայության քաղաքական, տնտեսական, վարչահիրավական, մշակութային, լուսավորչական գործունեության, ինչպես նաև Ամենայն Հայոց կաթողիկոսության և Հայ Աղվանից կաթողիկոսության հարաբերությունների վերլուծությունն է՝ առկա աղբյուրների համադրման միջոցով:

Ընդհանրապես Հայոց եկեղեցու, և մասնավորապես Հայոց արևելից կողմանց կամ Հայ Աղվանից եկեղեցու պատմության վաղ միջնադարյան, միջնադարյան, նաև ուշ միջնադարյան ժամանակների վերաբերյալ սկզբնաղբյուրները թեև սակավաթիվ չեն եղել, պատմագիտական տվյալներից կարելի է եզրակացնել անգամ, որ հնուց ի վեր գրվել են մեծ թվով ձեռագիր պատմություններ, սակայն նրանց մեծագույն մասը տարաբախտաբար, այրվել-ոչնչացվել է մեր հայրենիքը մեկը մյուսի հետևից ասպատակող հեթանոս ու մահմեդական հրոսակների կողմից: Արդյունքում՝ փրկվել ու պահպանվել են նրանցից միայն մասունքներ, որոնք այսօր էլ հնարավորություն են ընձեռնում պարզաբանելու տակավին մութ ու աներկբայական թվացող բազում հարցեր:

Չնայած Հայ Առաքելական եկեղեցու անցյալին նվիրված բավարար թվով հետազոտություններին, նրա առանձին թեմերի, այդ թվում Հայոց արևելից կողմանց եկեղեցու ամբողջական ընթացքը ներկայացնող առանձին և հանգամանալից պատմագիտական ուսումնասիրություններ առայսօր չեն ստեղծվել, որի հետևանքով հիմնադրույթային շատ հարցեր դեռևս մնում են չլուսաբանված: Կասկածի տակ է առնվում նույնիսկ Աղվանից կոչված Հայոց արևելից կողմանց եկեղեցու ազգային բնույթը, նրա հայոց եկեղեցական հաստատության հզորագույն թեմերից մեկը լինելու փաստը:

Հայոց արևելից կողմերում քրիստոնեության սկզբնավորման ու

տարածման, Հայ Աղվանից կաթողիկոսության ստեղծման հանգամանքների հիմնախնդրի ուսումնասիրման ու շարադրման տեսանկյունից աղբյուրագիտական նշանակություն ունեն հայ պատմիչների, մասնավորապես Ագաթանգեղոսի[3], Մովսես Խորենացու[4], Փավստոս Բուզանդի[5], Ղազար Փարպեցու[6] պատմական աշխատությունները: Ներկայացվող հիմնահարցի համար աղբյուրագիտական առումով առայսօր անգնահատելի արժեք է ներկայացնում Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից» (ուշ ձեռագրերում և գրականության մեջ կոչված նաև «Պատմութիւն Աղուանից աշխարհի») երկը[7], որի առաջին մասերում շարադրված են V- VII դարում ստեղծված երկեր: Ավելի ուշ ժամանակներում հիշյալ պատմությանը կցվել են Հայ Աղվանից կաթողիկոսների ցանկերը մինչև XVIII դարը: 1860 թվականին գիրքը բնագրով առաջին անգամ հրատարակվել է Մոսկվայում և Փարիզում, իսկ Ք.Պատկանյանի թարգմանությամբ 1861թ Սանկտ-Պետերբուրգում ռուսերեն: Այնուհետև Մ.Կաղանկատվացու «Պատմութիւնը» ունեցավ մի շարք հրատարակություններ ու թարգմանություններ[8]:

«Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկը կարևոր սկզբնաղբյուր է Հայաստանի հյուսիս-արևելյան երկու նահանգների՝ Արցախի և Ուտիքի պատմության ուսումնասիրության համար, քանի որ նրանում շա-

3. Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Եր., 1983:
4. Մ.Խորենացի, Պատմութիւն Հայոց, Եր., 1981:
5. Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք.Պատկանյանի, Եր., 1987:
6. Ղազարի Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ.Տեր-Մկրտչյանի և Ստ.Մալխասյանցի, Եր., 1982:
7. Մ. Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Եր., 1983:
8. Պատմութիւն Աղուանից արարեալ Մովսիսի Կաղանկայտուացւոյ. ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբ Կ.Վ.Շահնազարեան, Փարիզ, 1860, հ.Ա և Բ: Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, ի լոյս ընծայեաց Մկրտիչ էմին, Մոսկուա, 1860: История Агван Моисея Каганкатваци писателя X века, Санкт-Петербург,1861. (թարգմ. Ք.Պատկանյանի): Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, (Մկրտիչ էմինի հրատարակության արտատպությունն է): The History of the Caucasian Albanians By Movses Dasxuranci translated by C.J.F. Dowsett, London, 1961.

ռադրված է հիշյալ երկրամասերի պատմությունը, և որի համար որպես աղբյուր ծառայել են մայրենի լեզվով գրված պատմագրական երկերը[9]: Դրանք կարևոր տեղեկություններ են պարունակում Կուր և Արաքս գետերի միջև ընկած Հայոց Արցախ և Ուտիք նահանգներում, որոնք պատմագիտության մեջ հայտնի են նաև «Հայոց Արևելից կողմանք», «Երկիրն արևելից», «Հայ Աղվանից աշխարհ» անվանումներով, քրիստոնեության տարածման, Հայ Աղվանից կաթողիկոսության ստեղծման, նրա հոգևոր, ինչպես նաև սոցիալտնտեսական ու մշակութային-լուսավորչական գործունեության վերաբերյալ: Հայ Աղվանից եկեղեցու՝ սկզբնավորումից մինչև X դարն ընդգրկող ժամանակահատվածի պատմությունը համահավաք կերպով առաջին անգամ իր արտացոլումն է գտել Մ.Կաղանկատվացու /Մ.Դասխուրանցու/ գրքում:

IX-X դարերում Հայոց եկեղեցու նվիրապետության համակարգում և Աղվանից եկեղեցու հետ եղած հարաբերությունների հիմնավոր պարզաբանման տեսանկյունից աղբյուրագիտական կարևոր արժեք են ներկայացնում Անանիա Մոկացու[10], Հովհաննես Դրասխանակերտցու[11], Մատթեոս Ուռհայեցու[12], Կիրակոս Գանձակեցու[13], Ստեփանոս Օրբելյանի[14] պատմական երկերը:

Հայ Աղվանից եկեղեցու պատմության ամբողջական ընթացքը, առանձնապես Հայոց Մայր աթոռի և Հայ Աղվանից եկեղեցական հարաբերությունները ճշգրիտ ու հիմնավոր ներկայացնելու տեսանկյունից կարևոր փաստեր է պարունակում Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցու «Ջամբռ»[15] աշխատությունը:

9. Տես՝ Հ.Սվազյան, Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» աղբյուրները, ՊԲՀ, 1972, հմ. 3, էջ 193-206:
10. Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից որ ընդ ժամանակս լեալ իցէ ծեռնադրութիւնն արտաքոյ սուրբ լուսաւորչի աթոռոյն, Յավելուած Արարատի, 1897թ., մարտ:
11. Յովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Եր., 1996:
12. Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Եր., 1991:
13. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Եր., 1961:
14. Ստեփաննոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911:
15. Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873:

Քննարկվող հիմնահարցի համար սկզբնաղբյուրային նշանակություն ունեն նաև միջնադարյան ձեռագրերի հիշատակարանները[16], «Գիրք թղթոց»[17] և «Կնիք հաւատոյ» ժողովածուներում հավաքագրված փաստաթղթերը, որոնք հարուստ տեղեկություններ են պարունակում նաև Հայ Աղվանից եկեղեցու պատմության վերաբերյալ: Հարկ է նշել, որ «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» ժողովածուի մեջ զետեղված միջնադարյան ձեռագրերի մի որոշակի մասը ստեղծվել է հենց Հայոց արևելից կողմերի հոգևոր կենտրոններում՝ տեղի հոգևոր գործիչների և մասնավորաբար Հայ Աղվանից կաթողիկոսների անմիջական նախաձեռնությամբ: Դրանք կարևոր աղբյուր են առանձին հոգևոր գործիչների գործունեության ժամանակաշրջանները ճշգրիտ ներկայացնելու, արժանահիշատակ իրադարձությունները մեկնաբանելու, առանձին հոգևոր կենտրոնների՝ վանքերի ու եկեղեցիների պատմությունը շարադրելու համար:

Հիշյալ տեսանկյունից կարևոր սկզբնաղբյուրային նշանակություն ունեն նաև միջնադարյան վիմագրերը. «Դիվան հայ վիմագրության» շարքի V պրակը[18] ամբողջությամբ ընդգրկում է Արցախի վիմագիր արձանագրությունները, որոնց հիմնական մասը առնչվում է Աղվանից եկեղեցուն: Առանձնակի կարևորություն են ներկայացնում նաև Արցախյան ազատամարտից հետո հատկապես ազատագրված տարածքներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում գտնված նորահայտ արձանագրությունները, որոնց նույնպես նշանակալից տեղ է հատկացվել աշխատանքում:

Քննարկվող հիմնահարցի համար աղբյուրագիտական արժեք են ներկայացնում միջնադարյան կանոնագրքերի նյութերը, հրատարակ-

16. Ե-ԺԲ դարերի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմ. Ա.Ս.Մաթևոսյան, Եր., 1988: ԺԳ դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմ. Ա.Ս.Մաթևոսյան, Եր., 1984: ԺԴ դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմ. Լ.Խաչիկյան, Եր.,1950: ԺԵ դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմ. Լ.Խաչիկյան, մաս Ա, Եր., 1955, մաս Բ, Եր., 1958, մաս Գ, Եր., 1967:
17 «Գիրք Թղթոց», Թիֆլիս, 1901:
18. Դիվան Հայ վիմագրության, պրակ V, Եր., 1982:

ված Վազգեն Հակոբյանի աշխատասիրությամբ[19]:

Հայոց արևելից կողմերում տեղի ունեցած պատմաեկեղեցական իրադարձություններին նշանակալից տեղ է հատկացրել Միքայել Չամչյանը իր եռահատոր «Հայոց պատմություն»[20] աշխատության մեջ:

Քննարկվող հիմնահարցի տեսանկյունից ինչպես պատմագիտական, այնպես էլ աղբյուրագիտական արժեք են ներկայացնում Մակար եպիսկոպոս Բարխուտարյանցի[21], Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցի[22] երկրագրական աշխատությունները:

Ընդհանրապես Հայ եկեղեցու պատմության ուսումնասիրության համար մեթոդաբանական առումով կարևոր արժեք ունի Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի «Ազգապատում» եռահատոր աշխատությունը[23], որը կարևոր տեղեկություններ է պարունակում նաև Հայ Աղվանից եկեղեցու պատմության վերաբերյալ: Աշխատության մեջ հեղինակը առանձնակի տեղ է հատկացրել նաև ներեկեղեցական հարաբերություններին, հիմնախնդիր, որ հիմնաքարային նշանակություն ունի Հայոց եկեղեցու ամբողջական պատմության ճշգրիտ արտացոլման տեսանկյունից:

Անդրադառնալով Սարգիս Ջալալյանցի և Մակար Բարխուտարյանցի վերոնշյալ աշխատանքներին, հարկ է ընդգծել հոգևոր գործիչների կատարած ազգանվեր առաքելությունը, քանզի կրելով մեծ զրկանքներ, նրանք մեկ առ մեկ գրի են առել վանքերի, խաչքարերի, գերեզմանաքարերի արձանագրությունները, գիտակցելով, որ դրանք կարող են ոչնչանալ ու արժանանալ հազարավոր այն մատյանների ճակատագրին, որոնք փոշիացել և որոնց միայն անուններն է հիշատակվում

19. Կանոնագիրք Հայոց, աշխատասիրությամբ Վ.Հակոբյանի, հ.Բ, Եր., 1971:
20. Միքայել Չամչյան, Պատմութիւն Հայոց, հ.Բ, Վենետիկ, 1785, հ.Գ, Վենետիկ, 1786, նույնի՝ Խրախճեան պատմութեան Հայոց, Վենետիկ, 1811:
21. Մ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, մաս Ա, Վաղարշապատ, 1902, մաս Բ, Թիֆլիս, 1907, նույնի՝ Աղվանից երկիր և դրացիք, Արցախ, Եր., 1999:
22. Ս.արքեպս. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, Ա մաս, Տփղիս, 1842, Բ մաս, Տփղիս, 1858:
23. Մ.Օրմանյան, Ազգապատում, հ.Ա, Պեյրութ, 1959, հ.Բ, Պեյրութ, 1960, հ.Գ, Պեյրութ, 1961, նույնի՝ Հայոց եկեղեցին, Եր., 1993:

պատմության մեջ: Պատմագիտական սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող հիշյալ ուսումնասիրությունների տպագրության շնորհիվ նրանց իրավամբ հաջողվեց սերունդներին հանձնել հոգևոր այդ գանձերը, որոնց մի նշանակալից մասը այսօր իրոք որ անհետացել են և որոնք աղբյուրագիտական կարևորագույն արժեք են ներկայացնում նաև ուսումնասիրվող հիմնախնդրի համար:

Հայ Աղվանից կաթողիկոսության պատմությանը ընդհանուր և հատուկ աշխատություններում անդրադարձել են Հովհաննես Շահխաթունյանցը[24], Ղ.Ալիշանը[25], Լեոն[26]: 18-19-րդ դարերի պատմությունը շարադրելու տեսանկյունից արժեքավոր է Գյուտ Աղանյանցի կազմած «Դիվան Հայոց պատմության» ժողովածուն՝ հրատարակված 1893-1915թթ.:

19-20-րդ դարերի պատմության ամբողջական ուսումնասիրության տեսանկյունից խնդիրը առավել դյուրանում է նրանով, որ պահպանված մեծ թվով հրովարտակները, կաթողիկոսական կոնդակները հնարավորություն են տալիս առավել ճշգրիտ ու փաստացի ներկայացնել իրականությունը, մի հանգամանք, որ այսօր էլ համարվում է մեր պատմագիտության հիմնական խնդիրներից մեկը: Եվ դա հիմնավորվում է նաև այն պարզ գիտակցությամբ, որ ընդհանրապես Հայ եկեղեցու պատմությունը խորհրդային ժամանակներում՝ աթեիստական «գաղափարախոսության տիրապետության» պայմաններում, միանգամայն այլ, կարելի է անգամ նշել, հակագիտական ու իրական հիմքից զուրկ ձևակերպումներ է ստացել: Սակայն բարեբախտաբար, միևնույն ժամանակներում գտնվել են նաև գիտության առանձին երախտավորներ, որոնք համառորեն փորձել են ներկայացնել եկեղեցին ու նրա պատմությունը այնպիսին, ինչպիսին որ այն իրականում էր: Եվ այդ տեսանկյունից արժանավաստակ ու հիշատակության արժանի պատմա-

24. Յովհաննէս եպս. Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, էջմիածին, 1842:
25. Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901: Արցախ, Եր., 1993:
26. Լեո, Պատմություն Ղարաբաղի Հայոց հոգևոր թեմական դպրոցի, Թիֆլիզ, 1914: Երկերի ժողովածու, հ.1, Եր., 1967, հ.2, Եր., 1967:

գիտական ուսումնասիրություններ են գրել Աս. Մնացականյանը[27], Բ. Ուլուբաբյանը[28] և ուրիշներ:

Հայոց արևելից կողմանց պատմության, այդ թվում և քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից պատմագիտական արժեքավոր ուսումնասիրությունների հեղինակ է Հ. Սվազյանը[29]: Հարկ է նշել, որ ուսումնասիրվող հիմնախնդրին առնչվող նրա գիտական թե անցյալ և թե ներկա հրապարակումները որպես ուղենիշ են հանդիսացել սույն աշխատության մի շարք հիմնահարցերի ճշգրիտ ու հիմնավոր պարզաբանման համար:

Քննարկվող հիմնախնդրի առնչությամբ մեծարժեք գիտական ուսումնասիրություններ ունեն Բ.Հարությունյանը[30], Ա.Հակոբյանը[31], Կ.Ղահրամանյանը[32], Ս.Կարապետյանը[33]: Անվիճելի է Բ.Հարությունյանի և Ալ.Հակոբյանի ներդրումը Հայոց արևելից կողմանց պատմության, այդ թվում և Աղվանից կաթողիկոսության պատմության առանձին հիմնահարցերի ուսումնասիրության գործում: Ս.Կարապետյանի հետազոտությունները հիմնախնդրի առնչությամբ պարունակում են արժեքավոր ու մինչ այժմ գիտական շրջանառության մեջ չմտած կարևոր վիմագիր վկայություններ:

Բացի վերոհիշյալներից, քննարկվող հարցի շուրջը հրատարակվել են բազմաթիվ հոդվածներ, մենագրություններ, պաշտպանվել են թեկնածուական ատենախոսություններ, որոնք մեծապես օգնել են սույն աշխատության գիտական վերլուծությունների հիման վրա ու առավել հանգամանալից շարադրմանը[34]:

Սույն մենագրությունը նվիրված է Հայոց արևելից կողմանց հոգևոր կյանքի, նրա հոգևոր հաստատության՝ իբրև Հայոց եկեղեցու մի մասի, նրա անբաժան և հզորագույն թեմերից մեկի պատմությանը: Այդ ուղղությամբ ներկա ժամանակներում հիշատակության արժանի է Բ.Ուլուբաբյանի «Հայոց Արևելից եկեղեցին և մշակույթը» աշխատությունը: Գրքի բովանդակությունից կարելի է հասկանալ, որ հեղինակի նպատակն է եղել գիտական հիմնավորվածությամբ ներկայացնել Հայոց արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, որպես հայկական երևույթ: Աշխատության մեջ հիմնականում մեծ տեղ է հատկացված հիշյալ եկեղեցու նշանավոր առանձին հոգևոր գործիչների գործունեության լուսաբանմանը:

Ուսումնասիրության շարժառիթներից մեկը կայանում է նրանում, որպեսզի գիտական փաստերով ներկայացվի, որ Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգների քրիստոնեական եկեղեցին սկզբնավորվել է որպես Հայ Առաքելական եկեղեցու մի մաս, այսինքն ինչպես Ազ-

27. Աս.Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Եր., 1966:

28. Բ.Ուլուբաբյան, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, Եր., 1981, Հայոց Արևելից եկեղեցին և մշակույթը, Եր., 1998:

29. Հ.Ս. Սվազյան, Աղվանից մարզպանության կազմավորման հարցի շուրջը, ՊԲՀ, 1979, հմ.4: Մ.Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» աղբյուրները, ՊԲՀ, հ.3, 1972: Աղվանից իշխաններ Ջուանշիրի և Վարազ-Տրդատի իշխանության տարեթվերի հարցի շուրջ, «Լրաբեր», Եր., 1973, Г.Сваэян, Род Михранидов в Албании, "К Освещению проблем истории и культуры Кавказской Албании и Восточных провинций Армении, Ер., 1991. «Սուրբ Եղիշան Հայոց Արևելից կողմանց, Ջողա երկրի և Աղվանից աշխարհի լուսավորիչ», Լրաբեր հասարակական գիտությունների, 2000, հմ.2: «Քրիստոնեության Աղվանք ներթափանցման ուղիներն ու ժամանակաշրջանը», ՊԲՀ, 2002, հմ.2: Աղվանից աշխարհի պատմություն /հնագույն շրջանից - VIII դարը/, Երևան, 2006թ.:

30. Բ.Հարությունյան, Մասքթաց Սանեսան թագավորի արշավանքը Հայաստան, Լրաբեր հաս.գիտ., 1981, հմ.6: Հայոց եկեղեցու թեմական բաժանումը, ՊԲՀ, 2000, հմ.2: Աղվանից աշխարհի պատմություն /հնագույն շրջանից - 8-րդ դարը/, Եր., 2006:

31. Ал. Акопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ер., 1987,32. К.А.Каграманян, Источники "Истории страны Алуанк", Автореф. дисс. ... к.и.н., Ер., 1973.

33. Ս. Կարապետյան, Բուն Աղվանքի վիմագրերը, Եր., 1997: Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Եր., 1999:

34. Աբր. Զամինեան, Հայոց եկեղեցու պատմութիւն, Նոր Նախիջևան, 1908: Սամվելյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հ.1, Երևան, 1939: Հարությունյան Բ., Մեծ Հայքի հյուսիս-արևելյան մարզերի վարչաքաղաքական կացությունը 387-451թթ., Բանբեր Երևանի համալսարանի, 1976, հմ.2: Պետրոսյան Եզն. քհն., Աղվանից աշխարհի կաթողիկոսության մի քանի թվականների շուրջ, Էջմիածին, 1984, ԺԱ-ԺԲ: Պետրոսյան քհն. Եզնիկ, Հայ եկեղեցու պատմություն, Երևան, 1990: Լեռնիկ Մկրտումյան, Աղվանից /Գանձասարի/ կաթողիկոսությունը 17-19-րդ դարերում, Երևան, 2001, /ատենախոսություն/: Մելանյա Բալայան, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին /6-15-րդ դարեր/, Երևան 2004, /ատենախոսություն/:

գը, այնպես և եկեղեցին միևնույնն են, և դրանք տարանջատ ներկայացնելը պարզապես միամտություն է ու հակագիտական, ինչն էլ մշտապես փորձել և ներկայումս էլ նույն «ջանասիրությամբ» փորձում են ներկայացնել ադրբեջանցի «պատմություն հորինող» գիտնականները[35]:

Հայ եկեղեցու պատմության ընթացքը ցույց է տալիս, որ ամենատարբեր ժամանակներում Հայաստանի քաղաքական մասնատվածությունն իր որոշակի ազդեցությունն է ունեցել նաև Հայ եկեղեցական հաստատության վրա, սակայն բնավ չի հասցրել ակնհայտ մասնատման, քանզի այն հանդիսանում էր համազգային հոգևոր հաստատություն: Այսպիսով, մեր հիմնական նպատակն է սույն աշխատության միջոցով ներկայացնել Հայ Աղվանից եկեղեցու հնարավորինս ամբողջական պատմությունը՝ Հայոց քաղաքական ու Հայ եկեղեցու պատմության համատեքստում:

Ուսումնասիրության մեջ առանձնակի տեղ է հատկացված նաև Ամենայն Հայոց կաթողիկոսության և Հայ Աղվանից կաթողիկոսության հարաբերությունների լուսաբանմանը հիշյալ տեսանկյունով:

Հայ Աղվանից եկեղեցու պատմության ամբողջական ու գիտականորեն հիմնավորված ուսումնասիրությունը միայն կարող է ճշգրտորեն բացահայտել նրա կատարած իրական դերն ու նշանակությունը Հայոց արևելից Արցախ և Ուտիք նահանգների հայության ազգային ինքնության պահպանման գործում:

Ակնհայտ է նաև, որ յուրաքանչյուր քրիստոնյա ազգի հոգևոր կյանքի ձևակերպումը, ամփոփումն ու արտացոլումը որոշակի սկզբունքների ու առանձնահատկությունների միջոցով կազմում է տվյալ ազգի եկեղեցին: Հետևաբար ազգի հոգևոր կյանքի պատմական ընթացքի վերաբերյալ ընդհանուր գաղափար կազմելու տեսանկյունից ևս կարևոր է տվյալ ազգի եկեղեցական հաստատության գործունեության հնարավորինս հիմնավոր ուսումնասիրումն ու լուսաբանումը: Ընդ-

35. Ф.Мамедова, Политическая история и историческая география Кавказской Албании, Баку,1984. Р.Геюшев, Христианство в Кавказской Албании, Баку, 1984. Д.А.Ахундов, Архитектура древнего и ранне-среднего Азербайджана, Б. 1986.

հանրացնելով, նշենք, որ քրիստոնեությունը Հայաստանում տարածելու ավելի քան 2000-ամյա և Հայոց եկեղեցու 1707-ամյա պատմության կարևոր ու յուրօրինակ բաժիններից է Հայոց արևելից կողմերի՝ պատմագիտության մեջ «Աղվանից» անունով հայտնի, Հայոց եկեղեցու մի հատվածի պատմությունը, որն իր միանման՝ այսինքն համահայկական միասնական ընթացքով հանդերձ, ունի նաև իրեն յուրահատուկ առանձնահատկություններն ու պատմական էտապները:

Հայ Աղվանից կաթողիկոսության կազմավորումից մինչև արդի ժամանակների պատմությունը հոգևոր ու պատմա-քաղաքական տեսանկյունից կարելի է ստորաբաժանել հետևյալ հիմնական շրջանների՝

1. Հայ Աղվանից կաթողիկոսության կազմավորման շրջան(I-V դարեր)
2. Հայ Աղվանից կամ Հայոց արևելից եկեղեցու Պարտավյան շրջան (VI-IX դարեր)
3. Հայ Աղվանից եկեղեցու աստանդական շրջան (IX-XIV դարեր)
4. Հայ Աղվանից եկեղեցու Գանձասարյան շրջան (XV-XIX դարեր)
5. Ղարաբաղի Հայոց հոգևոր թեմ(1815-1933թթ.)
6. Արցախի հոգևոր թեմ(1989թվականից հետո):

Նշված ժամանակաշրջաններից յուրաքանչյուրի ուսումնասիրության հիմքում պետք է դրվի ինչպես հոգևոր, այնպես և պատմա-քաղաքական գործոնը, քանի որ երկրի քաղաքական վիճակի փոփոխությունների ազդեցության տակ որոշակիորեն փոխվում էին նաև եկեղեցու գործունեության համար անհրաժեշտ քաղաքական ու տնտեսական պայմանները, սակայն, որ և ամենակարևորն է, մշտապես հաստատուն մնալով իր դավանանքին ու բուն էությանը:

ՀԱՅ ԱՂՎԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Քրիստոնեության տարածումը Հայոց Արևելից կողմերում: Հայ Աղվանից եկեղեցու կազմավորումը:

Ազգային ավանդությունները, հայ պատմիչները (Ագաթանգեղոս, Մովսես Խորենացի, Մովսես Կաղանկատվացի, Ստեփանոս Օրբելյան) հայտնում են, որ քրիստոնեությունը առաջին դարից առաքյալների միջոցով քարոզվել ու տարածվել է Մեծ Հայքում: Աղբյուրները միաժամանակ մատնանշում են նաև, որ հայ ժողովրդին մեծ ու անգնահատելի ծառայություն են մատուցել Ս.Թադևոսն ու Ս.Բարդուղիմեոսը, որոնք մարտիրոսվելով Հայաստանում՝ հանուն քրիստոնեական հավատքի, դարձան մեր եկեղեցու առաջին լուսավորիչներն ու սրբերը:

Մ. Կաղանկատվացու վկայությամբ՝ Ս.Թադևոս առաքյալը, գալով Արտազ գավառը, նահատակվեց, իսկ նրա աշակերտ Ս.Եղիշան, վերադառնալով Երուսաղեմ, եպիսկոպոս ձեռնադրվեց Տեառնեղբայր Հակոբի կողմից և ճանապարհվեց դեպի Աղվանք՝ քարոզչական գործունեություն ծավալելու նպատակով: Պարսկաստանի կողմից մտնելով ձախափնյա Աղվանք, նա հասնում է Չողա (Դերբենդ) բնակավայրը, այնուհետև, նույն քարոզչական առաքելությամբ գնում է Կուր գետի աջափնյա մասը՝ Հայոց Արևելից կողմերը[36]: Ի դեպ, Մ. Կաղանկատվացու հենց այս վկայակոչումն էլ փորձում են իրենց «շահերին» համապատասխանեցնել ադրբեջանցի պատմություն «ստեղծողները», մասնավորապես Ռ.Գյուուշևը և Ֆ.Մամեդովան, «Արևելք» անվան տակ ընդունելով միմիայն անդրկուրյան Աղվանից աշխարհը, մինչդեռ բազմիցս քննարկված ու անվիճելի ճշմարտություն է, որ պատմիչը մշտապես ի նկատի է ունեցել Հայաստանի հյուսիսարևելյան Ուտիք-Արցախյան նահանգները[37]:

36. Մ.Կաղանկատվացի, էջ 10:
37. Մանրամասն տես՝ Բ.Ուլուբաբյան, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության: Աս.Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966: Հ.Սվազյան, «Աղվանից աշխարհ» հասկացությունը ըստ Մովսես Կաղանկատվացու, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1973, N1, էջ 225-234:

Մ.Կաղանկատվացու վկայակոչմամբ՝ Ուտիքի Գիս ավանում Ս.Եղիշան հիմնադրում է եկեղեցի և «Յայսմ տեղւոջ եղև սկիզբն արևելեայցս եկեղեցեացս մայրաքաղաքաց և լուսաւորութեան տեղի»[38]: Այնուհետև Ս.Եղիշան շարունակում է իր քարոզչությունը: Կրելով բազում զրկանքներ՝ նա անցնում է Ջերգունի դաշտը և Հոմենք կոչված վայրում՝ «ի տեղի զոհարանի դիւցամոլ կռապաշտիցն. անդ էառ զնահատակութեան պսակն»[39]:

Եվ այսպես, Ս.Եղիշայի քարոզչական գործունեության արդյունքում, ինչպես բուն Աղվանքում, այնպես և Հայոց Արևելից կողմերում հիմնադրվում են քրիստոնեական համայնքներ[40]:

Ս.Եղիշայի նահատակության թվականը հայտնի չէ: Հիմնահարցի առնչությամբ պատմական աղբյուրների քննության արդյունքում Հ.Սվազյանը տրամաբանորեն նշել է, որ «սբ. Եղիշան իր առաքելական գործունեությունը ծավալել է ոչ շուտ, քան մ.թ. II դարի սկզբներին: Եվ որովհետև նա էր այն առաջին ավետարանիչը, որ եկել էր Աստծո խոսքը քարոզելու, ուստի կասկած չկա, որ քրիստոնեությունն մուտք է գործել Աղվանք սբ. Եղիշայի գործունեությամբ պայմանավորված՝ II դարի արշալույսին»[41]:

Հայտնի է, որ քրիստոնեության առաջին քարոզիչ առաքյալների նահատակության վայրերը սրբացվել են և նրանցից մի քանիսը պահպանվել են, որոնցից կարելի է հիշատակել նահատակված «Եղիշա առաքյալի գերեզմանը Հոմենք կամ Բոմեն վայրում, նրա աշակերտներ՝ Քահալցիցիկի գերեզմանը Վարդաշենի մոտ, Գյումրատայինը՝ Ծերիկ գյուղում, Վլասինը Նիժում: Այս քարոզիչ-նահատակների գերեզմանների տեղում հետագայում կանգնեցվել են կոթող-հուշասյուններ, մատուռներ կամ, ավելի ուշ՝ եկեղեցիներ»[42]: Այդ մասին վկայություն կա

38. Նույն տեղում:
39. Նույն տեղում, էջ 10-11:
40. Տես՝ Հ.Սվազյան, Քրիստոնեության Աղվանք ներթափանցման ուղիներն ու ժամանակաշրջանը», ՊԲՀ, 2002, հմ. 2, էջ 135:
41. Նույն տեղում:
42. Ս. Կարապետյան, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 86:

նաև Մ.Դասխուրանցու մոտ. «...յետ բազում ժամանակաց բարեպաշտն Վաչագան՝ Աղուանից արքայ, կանգնեաց սիւն ի գբի նահատակութեանն Եղիշայի...»[43]: Մակար եպիսկոպոս Բարխուտարյանցը, որն իր իսկ հավաստմամբ լրջորեն համակված էր մեր հայրենիքի դարավոր պատմության «հիշատակարանները» վերջնական ավերումից ու ոչնչացումից փրկելու մտայնությամբ, այցելելով նշված սրբավայրը, գրել է. «այժմ անյայտացած է սիւնն եւ լցուած հորն, բացի մի կանգուն խորութիւնից: Այսու ամենայնիւ յաճախում է հայերից եւ մահմեդականներից ուխտաւորաց մեծ բազմութիւն»[44]: Այսինքն չնայած սյունը այլևս գոյություն չուներ, սակայն վայրը այնուհանդերձ, շարունակում էր մնալ որպես ուխտատեղի՝ իր նախկին նշանակությամբ: Հետևաբար, կարելի է ընդգծել, որ արցախահայ հոգևոր կյանքում քրիստոնեական վարդապետության արմատները հասնում են I դարի վերջերը և II դարի սկզբները: Հիշյալ ժամանակահատվածն էլ համարվում է Արցախում և Ուտիքում կամ Հայաղվանքում քրիստոնեության տարածման առաջին փուլը:

Այսպիսով, առայսօր պատմագիտությանը հայտնի փաստերը վկայում են, որ Մեծ Հայքում, այդ թվում և նրա հյուսիսարևելյան Արցախ և Ուտիք նահանգներում քրիստոնեությունը առաքյալների ժամանակներից սկսած շարունակաբար տարածվել ու արմատավորվել է: Այս տեսակետն է հիմնավորել նաև Հայ եկեղեցու պատմության ասպարեզում երախտավոր ծառայություններ կատարած Մաղաքիա Օրմանյանը, որը մասնավորապես նշել է. «Առաքելութեան կնիքը, զոր Հայոց Եկեղեցին ամէն ատեն իրեն սեփականած և իւրացուցած է, և զոր ամէն պաշտօնական գրութեանց մեջ համարձակօրեն հռչակած է, մէկ կողմեն կիաստատէ անոր սկզբնական և նախնական ծագումը, և մյիւս կողմէ կըհաւաստե անոր ուղղակի ինքնուրոյն սկզբնաւորութիւնը, առանց ուրիշ հնագոյն եկեղեցւոյ մը գործակցութեան»[45]: Հայ եկեղեցու պատմության մինչև IV դարը ընդգրկող այդ ժամանակահատվածն էլ ընդունված է անվանել առաքելական ժամանակաշրջան:

Ամբողջ Հայոց աշխարհում՝ ներառյալ Հայոց արևելից կողմերը՝ մինչև անդրկուրյան Աղվանքը և Կասպից ծովի առափնյա շրջանները Գրիգոր Պարթևի քարոզչական գործունեության մասին Ագաթանգեղոսը գրել է. «Եւ այսպէս ընդ ամենայն երկիրն Հայոց, ի ծագաց մինչև ի ծագս, ձգտէր տարածանէր զմշակութիւն քարոզութեանն և աւետարանութեանն. ի Սատաղացւոց քաղաքէն մինչև առ աշխարհաւն Խաղտեաց, մինչև առ Կաղարջօք, մինչ ի սպառ ի սահմանս Մասքթաց, մինչև ի դրունս Ալանաց, մինչ ի սահմանս Կասպից, ի Փայտակարան քաղաք արքայութեանն Հայոց.»[46]:

Դժվար չէ նկատել, որ պատմիչի հիշատակած սահմանների մեջ ներառված են նաև Հայոց արևելից կողմերը, այսինքն՝ Արցախ և Ուտիք նահանգները:

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո Գրիգոր Լուսավորիչը նոր եռանդով ու ոգևորությամբ սկսեց քարոզել ու վարդապետել, ամենուրեք եկեղեցիներ հիմնադրել ու քահանաներ կարգել, դպրոցներ բացել՝ քրիստոնեությունը հաստատուն ու առավել ամուր հիմքերի վրա դնելու համար: Հայաստանի բոլոր կողմերում բացվում են եկեղեցիներ, Լուսավորչի կողմից կարգվում քահանաներ, գավառական եպիսկոպոսներ...[47]:

Մ.Կաղանկատվացու վկայությամբ՝ Գրիգոր Լուսավորիչը շրջագայել է Հայոց արևելից կողմերում. «Եւ եկեալ ի Հաբանդ գաւառ՝ ուսուցանէր և խրատէր պահել զպատուիրանս Որդւոյն Աստուծոյ. անդ արկանէր հիմն եկեղեցւոյն ի գիւղաքաղաքին Ամարասայ. և կացուցանէր գործօնս և հրամանատարս՝ շինել եկեղեցի»[48]: Սույն փաստը արձանագրել է նաև Ստ. Օրբելյանը. «Երթեալ ի Վիրս, և անտի յԱղվանս մինչ ի Մասքութս և ի պահակն Հոնաց. և հաստատեալ զամենայնսն ի հաւատս՝ գայր փոքր Սիւնիք. և մտեալ յԱմարաս՝ շինէ եկեղեցի և թողու անդ սպասաւորս»[49]:

43. Մ. Կաղանկատվացի, էջ 12:
44. Մ. Բարխուտարեանց, Աղվանից երկրի և դրացիք, էջ 132:
45. Մ.արք. Օրմանյան, Հայոց եկեղեցին, էջ 24:

46. Ագաթանգեղոս, էջ 468:
47. Նույն տեղում, էջ 476:
48. Մ.Կաղանկատվացի, էջ 35:
49. Ստ. Օրբելյան, էջ 20:

Եվ այսպես, առկա փաստերը թույլ են տալիս եզրակացնելու, որ քրիստոնեական դարձը հենց IV դարի սկզբին կատարվեց նաև Հայոց արևելից կողմերում՝ Ս.Գրիգոր Լուսավորչի անմիջական քարոզչության շնորհիվ:

Աղբյուրագիտական տվյալները, մասնավորապես Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Մովսես Կաղանկատվացու հաղորդած տեղեկությունները, միաժամանակ փաստում են, որ Լուսավորչից հետո Հայոց արևելից կողմերի քրիստոնեական լուսավորության առաքելությունը ստանձնել էր նրա թոռ, տակավին պատանի Գրիգորիսը. «Եւ երկրորդ սրբոյն Գրիգորիսի կաթուղիկոսին սուրբ քարոզութեամբն իւրով վերըստին լուսաւորեայց զաշխարհս.»[50]:

Շարունակելով իր քարոզչությունը, Գրիգորիսը, չի սահմանափակվում միայն Հայոց արևելից կողմերում քրիստոնեության տարածմամբ: Նա իր աշակերտների հետ անցնում է անդրկուրյան Աղվանք, հասնում մինչև հյուսիս-արևելքում գտնվող մասքութների երկիրը, որտեղ էլ նահատակվում է: Նրա նահատակությունից հետո, ինչպես հաղորդում է Փավստոս Բուզանդը, «զնա որք ընդ նմա երթեալ էին 'ի գաւառէն Հաբանդայ, և բերին 'ի գաւառն իւրեանց 'ի կողմանց Աղուանից 'ի սահմանս Հայոց 'ի Հաբանդ, 'ի գեօղն՝ որ անուանեալ կոչի Ամարաս: Եւ եդին զնա առ եկեղեցեաւն, զոր շինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի, հաւուն Գրիգորիսի՝ քահանայապետին մեծի աշխարհին Հայաստան երկրին: Եւ ամ յամէ աշխարհաժողովուրդք 'ի մի վայր ժողովեալ կողմանցն այնոցիկ և աշխարհաց գաւառացն այնոցիկ, զսորա զօր տօնին զյիշատակ քաջութեան ցնծան»[51]: Նույն իրողությունը նկարագրել է նաև Մովսես Խորենացին, իսկ Ամարասի տեղադրության վերաբերյալ հետևյալ կերպ է նշել. «Զոր բարձեալ սարկաւագաց նորին, բերելով ի փոքր Սիւնիս, թաղեցին յԱմարաս աւանի»[52]:

Գրիգորիս եպիսկոպոսի դամբարանը պահպանվել ու առայսօր գոյություն ունի: Տարաբախտաբար վերջին շրջանում՝ Արցախյան ազա-

50. «Նիւթեր Աղուանից պատմութեան համար», «Լումայ», 1897, գիրք Բ, էջ 329:
51. Փ.Բուզանդ, գլ. զ, էջ 26:
52. Մ.Խորենացի, էջ 310:

տամարտի տարիներին, տապանաքարը ջարդվել է «օմոն» կոչված ադրբեջանցի ելուզակների կողմից, սակայն արձանագրությունը բարեբախտաբար կարդացվում է: Տապանաքարի վրա փորագրված է համեմատաբար ուշ շրջանում՝ 1860-ական թվականներին[53] կատարված հետևյալ արձանագրությունը. «Դամբարանն սրբոյն Գրիգորիս Աղուանից կաթողիկոսի և թոռին սուրբն Գրիգորիս Լուսավորիչի Պարթևի, ծնեալ յամի ՅԻԲ (322), և օծեալ ՅԽ (340) նահատակեալ ՅԽԸ (348)-ը* Սանեսան թագաւորէն Մազքթաց ի Դերբենդ, բերեալ յԱմարասն սուրբ նշխարի ձեռն ձեռնասուն սարկավագաց նորին Արցախունի»[54]:

Այսպիսով, Հայոց արևելից կողմերում քրիստոնեության արմատավորման երկրորդ փուլը սկիզբ է առել IV դարի առաջին տասնամյակներին, ուստի, ինչպես նշվել է, «սբ. Եղիշան ու Մանուկ Գրիգորիսն էին Աղվանից եկեղեցու այն երկու հիմնասյուները, որոնք սկզբնավորում ու հաստատում են հավատը երկրում»[55]:

Չնայած հոգևոր գործիչների՝ IV դարում ծավալած քարոզչական առաքելությանը, որի արդյունքում Հայաստանի տարբեր ծայրերում, այդ թվում և Արցախում հիմնվել էին բազմաթիվ եկեղեցիներ և եկեղեցիներում՝ դպրոցներ, որտեղ ընդգրկված էին հայ մանուկներ՝ քրիստոնեաբար կրթություն ստանալու նպատակով, այնուհանդերձ, քրիստոնեության ամրապնդման գործում տակավին հանդիպում էին լուրջ արգելքներ: Դրա հիմնական պատճառն այն էր, որ եկեղեցիներում բացակայում էր մայրենի լեզվով գրականությունը, ժամասացությունը կատարվում էր ասորերեն կամ հունարեն լեզուներով, որը անընմբռնելի էր ժողովրդի համար:

Հայաստանում, այդ թվում և Հայոց արևելից կողմերում քրիստոնե-

53. Լեո, Երկերի ժողովածու, հ.8, Երևան, 1985, էջ 30:
*Բ.Հարությունյանը արդարացիորեն ժխտում է վերոհիշյալ թվականը, այն համարելով ոչ ճշգրիտ: Ըստ նրա Գրիգորիսը նահատակվել է 330-331թթ.: Բ. Հարությունյան, Մասքթաց Սանեսան թագավորի արշավանքը Հայաստան, «Լրաբեր հաս. գիտ.», 1981, հ. 6, էջ 75-76:
54. «Էջմիածին», ամս., 1976, հ. Զ, էջ 58:
55. Հ.Սվազյան, «Քրիստոնեության Աղվանք ներթափանցման ուղիներն ու ժամանակաշրջանը, էջ 140:

ության հետագա ամրապնդման առաքելությունը կապված է Ս.Մաշտոցի անվան հետ: Կորյունի հաղորդած տեղեկությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ V դարի առաջին երեք տասնամյակների ընթացքում Մաշտոցը ուղևորվել է դեպի բուն Աղվանք և փաստացիորեն շարունակել Գրիգորիսի առաքելությունը:

Ինչպես վկայում է Կորյունը, բուն Աղվանքի Բաղասականից Մ.Մաշտոցը մտավ Հայոց արևելից կողմերը, որտեղ նրան մեծարանքով դիմավորեց Գարդմանքի տեր Առանշահիկ Խուրսը, որը և մեծ աջակցություն ցույց տվեց՝ տեղում լուսավորության գործը կարգավորելու խնդրում. «Ընդ առաջ լինէր նմա իշխանն արդմանից, որում (անուն) Խուրս կոչէին, և ասպընջական եղեալ նմա աստուածասէր երկիւղածութեամբ, առաջի դնէր զանձն վարդապետին, հանդերձ իշխանութեամբն իւրով»[56]:

Կորյունը, պատմելով իր ուսուցչի թարգմանած Սուրբ գրքերի մասին, հիշում է նաև, որ աշակերտների խմբերն առած՝ երկրի ամենատարբեր նահանգներն ու գավառներն էր այցելում, ժողովրդի լուսավորության գործը կազմակերպում «զամենայն ժամանակս կենաց իւրոց, զամառն և զձմեռն, զտիւ և զգիշեր, անվեհեր և առանց յապաղելոյ»[57]: Մեր կարծիքով V դարի առաջին կեսերում ապրած հեղինակը, բնականաբար, ընդհանուր կերպով է նշել Մեծ Հայքում Ս.Մաշտոցի շրջագայություններն ու գործունեությունը: Ինչ վերաբերում է Հայոց արևելից կողմերում նրա գործունեությանը, ապա այս պարագայում պատմագրի կողմից հիշատակված է Ուտիքի Գարդմանքը, որը Մեծ Հայքի ծայրագավառներից էր, որտեղից էլ Ս.Մաշտոցը անցել է հարևան երկրներ, մասնավորապես անդրկուրյան Աղվանք ու Վիրք: Եվ այդ հանգամանքը մատնանշելու համար էլ հավանաբար հիշատակված է Գարդմանքը: Ակնհայտ է, որ Ս.Մաշտոցի գործունեության շրջանում՝ V դարի առաջին քառորդում, Մեծ Հայքի հյուսիս-արևելյան ծայրամասային Արցախ և Ուտիք նահանգները շարունակում էին մնալ Արշակունյաց թագավորության կազմում: Ս.Մաշտոցի գործունեությունը խորապես ու-

56. Կորյուն, Վարք Մաշտոցայ, Եր., 1980, էջ 126:
57. Նույն տեղում:

սումնասիրած Ներսես Ակինյանը այն տեսակետն է արտահայտել, որ 415 թվականին Մ.Մաշտոցը շրջագայել է Հայոց արևելից կողմերում և նրա այցելության նպատակն էր հայոց դպրության առաջին արգասիքները տարածելու, թերևս նաև քրիստոնեության հիմքերն ամրապնդելու գործը[58]: Հրաչյա Աճառյանը թվագրում է այդ ուղևորությունը 423թ.[59]:

V դարը հայոց պատմության մեջ բնութագրվեց որպես քաղաքական արհավիրքների դար: 428 թվականին Արշակունյաց թագավորության անկումից հետո, թեև Հայաստանը դարձավ Պարսկաստանին հարկատու երկրներից մեկը, սակայն որոշ ժամանակ տակավին պահպանում էր ներքին որոշակի ինքնուրույնություն, երկիրը կառավարում էր հայ մարզպանը, զինվորական ուժը շարունակում էր մնալ հայ նախարարների իրավասության ներքո և, որ ամենակարևորն է, քրիստոնեական եկեղեցին շարունակում էր մնալ ամենաազդեցիկն ու հայ ժողովրդին միավորող միակ համազգային հաստատությունը: Եվ այս «վտանգավոր» հաստատությունը վերացնելու նպատակով պարսից Հազկերտ արքան ձեռնարկեց վճռական ու անհանդուրժողական միջոցառում:

442-449թթ. ընթացքում Հազկերտը շարունակ մասնակի հալածանքներ էր կիրառում քրիստոնյաների նկատմամբ[60]: Նրա առաջին գործերից մեկը հանդիսացավ եկեղեցու ազատությունների սահմանափակումն ու նրան հարկատու դարձնելը[61]: Դատավարության իրավունքը խլվեց եկեղեցուց ու հանձվեց մոգպետի[62]: Ժողովրդի համբերության բաժակը լցվեց, երբ Սասանյան արքունիքը կոնկրետ քայլեր ձեռնարկեց հայ եկեղեցին ամբողջությամբ վերացնելու ուղղությամբ:

449թ. վերջերին Հազկերտը նամակով դիմում է հայ նշանավոր նախարարներին, որտեղ բացարձակորեն առաջարկում էր թողնել քրիստոնեությունն ու ընդունել զրադաշտականությունը: Սակայն կրոնա-

58. Ն.Ակինյան, Մ.Մաշտոց վարդապետ, Վիեննա, 1949, էջ 315:
59. Հ.Աճառյան, Հայոց գրերը, Եր., 1984, էջ 381:
60. Տես Եղիշե, գլ.1:
61. Տես Նույն տեղում, էջ 44:
62. Նույն տեղում, էջ 46:

փոխության հարցի քննարկման արդյունքում որոշվեց, որ «այն ներքին գործ է, խղճի հարց, որ ոչինչ կապ չունի քաղաքական հպատակության հետ և որի շրջանում մարդը պիտի կատարելապես ազատ լինի»[63]: Եվ բոլոր նախարարներն Ավետարանի վրա երդվեցին հավատարիմ մնալ եկեղեցուն ու իրենց արյունը չխնայել նրա պաշտպանության համար: Եվ այսպես, ժողովի կողմից մերժողական պատասխան է ուղարկվում Պարսից արքունիքին:

Զրադաշտականությունը Հայաստանում տարածելու և հաստատելու նպատակով Պարսից կառավարությունը այնտեղ է ուղարկում այրուձի ու մոգպետի գլխավորությամբ 700 մոգերից կազմված խումբ[64]: Հայաստանից բացի նրանք պիտի քարոզեին նաև Վիրքում, Աղվանքում, Լփնաց, Աղձնյաց, Կորդովաց, Ծավդեից (Արցախ), Դասն աշխարհներում[65]:

Պարսկաստանը վերջնական նպատակին հասնելու համար Հայաստան ուղարկեց իր կանոնավոր զորաբանակը: Հայրենիքի ու եկեղեցու պաշտպանության համար հայերի կողմից մղված հերոսամարտը տեղի ունեցավ 451թ. մայիսի 26-ին, Ավարայրի դաշտում:

Ավարայրի ճակատամարտը հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության անմոռանալի էջերից է նախ և առաջ այն իմաստով, որ այն իր մեջ ներառում էր նաև գաղափարական անձնազոհություն. «Ավարայրի դյուցազնամարտում դրսևորվեց հայ ժողովրդի միասնական, անխորտակելի կամքը, արիության ոգին, ազատասիրությունը, եկեղեցասիրությունն ու հայրենասիրությունը»[66]:

Ավարայրի հերոսամարտում զոհված հայորդիները դասվել են «հայրենիքի նահատակների» շարքը, սրբացվել ու դարձել հայրենիքին անմնացորդ ծառայելու պայծառ օրինակ: Այսօր էլ «Վարդանանց տոնը» համազգային տոն է, որ նշվում է ամենուրեք՝ թե հայրենիքում և

63. Լեո, Երկերի ժողովածու, հ.2, Եր., 1967, էջ 64:
64. Եղիշե, էջ 102:
65. Եղիշե, էջ 102: Տես նաև՝ Կ.Ն.Յուզբաշյան, Ավարայրի ճակատամարտից դեպի Նվարսակի պայմանադրությունը, Եր., 1989, էջ 165:
66. Էջմիածին, ամս., 1961, Բ, էջ 9:

թե սփյուռքում[67]: Երվանդ Լալայանի տվյալներով՝ դարի սկզբներին այն տոնվում էր նաև Գանձակի գյուղերում[68]:

Ավարայրի նահատակների անունները հավերժացնող բազմաթիվ սրբավայրեր են կառուցվել Հայոց աշխարհի տարբեր վայրերում, այդ թվում նաև Արցախում: Արցախի հայությունը սրբությամբ է պահպանել Ավարայրի բոցաշունչ ոգու՝ Ղևոնդ Երեցի հիշատակը: Վարանդայի Ավետարանոց, Սարգսաշեն, Վերին Թաղավարդ և Մոշախմհատ գյուղերի կենտրոնում՝ բարձր սարի գագաթին, վեր է խոյանում Սուրբ Ղևոնդա անապատը կամ Ղևոնդիկ վանքը: Ըստ ավանդության եկեղեցում պահպանվում է Ղևոնդի պատկերը: Այս բնակավայրերի ծերերը ժամանակին Սարգիս եպիսկոպոս Ջալալյանցին պատմել են նաև, որ Ս.Ղևոնդ երեցի ու Ավարայրում նահատակված շատ այլ հայերի նշխարները բերել ամփոփել են այդտեղ և կառուցել եկեղեցի[69]:

Հադրութի շրջանի ծայրամասային Ամուտուկ գյուղի եկեղեցին կոչվում է Վարդան Զորավարի անունով: Այդ եկեղեցում «որպես սրբություն, պահվում է սևագույն քար, որն ըստ ավանդության ներկված է սուրբ Վարդանի արյամբ»[70]:

Վարդան զորավարի անունով մեկ ուրիշ մատուռի ավերակներ գտնվում է Մարտունու շրջանի Մուշկապատ գյուղում: Սարգիս Ջալալյանցը գրել է. «Մուշկապատցիք ունեն զքարաշեն եկեղեցի, առ որով է մատուռն սուրբ Վարդան նահատակի, ուր յաճախեն ուխտաւորք բազումք»[71]:

Այսօր Վարդանանց հաղթանակի հիշատակը վերստին սրբությամբ է պահում Հայաստանյաց Առաքելական եկեղեցին, իր բոլոր թեմերով հանդերձ և նրանց թվում նաև Արցախյան վերաբացված թեմը:

67. Տես՝ С.Т. Еремян, Народно-освободительная борьба армян против персов в 450-451гг. ВДИ, 1951, н.4.
68. Ե. Լալայան, Երկեր 5 հատորով, հ.2, Եր., 1988, էջ 449:
69. Ա.Ղանալանյան, Ավանդապատում, Եր., 1969, էջ 229: Տես նաև Ե.Լալայան, նույն տեղում, էջ 40:
70. Խ.Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հ.Ա, Եր., 1931, էջ 314:
71. Սարգիս եպիս. Ջալալեանց, ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս Բ, էջ 339:

428-462 թվականներին Պարսկաստանի կողմից իրականացված վարչական վերաբաժանումների հետևանքով Հայաստանից անջատվեցին Հայոց արևելից Արցախ և Ուտիք նահանգներն ու մտցվեցին նոր կազմավորվող Աղվանից մարզպանության կազմի մեջ[72]: Հ.Սվազյանի կարծիքով մարզպանությունը ստեղծվել է 461 թվականին՝ Վաչե Բի գահից հեռացվելուց հետո[73], իսկ ըստ Ա.Հակոբյանի՝ արդեն 428-450թթ. միջակայքում[74]: Իսկ հիշյալ ժամանակներում եկեղեցու հոգևոր սահմանները որոշվում էին այն աշխարհագրական վայրի քաղաքական սահմաններով, որտեղ տեղակայված էր և եկեղեցին: Նման պայմաններում անվիճարկելի փաստ պետք է ընդունել այն հանգամանքը, որ Աղվանից մարզպանության կազմավորման հետ մեկտեղ Հայոց արևելից կողմանց և բուն Աղվանքի եպիսկոպոսական աթոռները միացվում են և կազմում այսպես կոչված Աղվանից եկեղեցին, սակայն միշտ ի հոգևորս ենթակա լինելով Հայոց կաթողիկոսությանը[75]:

V դարի վերջերին նորից սրվում են հակասությունները Հայաստանի ու Պարսկաստանի միջև: Ժողովրդաազատագրական պայքարի ղեկավարի դերում այս անգամ հանդես է գալիս Վահան Մամիկոնյանը: Հայ ժողովրդի քաջարի զավակը կարողացավ հզոր Պարսկաստանին ապացուցել, որ ամեն մի ժողովուրդ իրավունք ունի պահպանելու իր ինքնությունը, իր հավատքն ու անկախությունը: Պարսկաստանն էլ ստիպված էր ընդունելու այդ փաստը: 484 թվականին գահ բարձրացած Վաղարշ արքայից արքան ընդունում է հայ նախարարների պահանջները. «Եւ զամենայն զոր ինչ խորհեալ է ձեր և իմացեալ, և խօսեցաւ առաջի մեր ձեր Վահանն՝ տուեալ եղիցի ձեզ մեր գրով և կնքով զամենայն խնդիրդ ձեր այսօր մինչև ցյաւիտեանս»[76]:

72. Տես՝ Բ.Հարությունյան, Մեծ Հայքի հյուսիսարևելյան մարզերի վարչաքաղաքական կացությունը 387-451թթ., Բանբեր Երևանի համալսարանի, 1976, հ.2, էջ 92:
73. Տես՝ Հ.Ս. Սվազյան, Աղվանից մարզպանության կազմավորման հարցի շուրջը, ՊԲՀ, 1979, հմ.4, էջ 212:
74. Ал. Акопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, стр. 120.
75. Տես՝ Եզնիկ քհն. Պետրոսյան, Հայ եկեղեցու պատմություն, Եր., 1990, էջ 54:
76. Ղազար Փարպեցի, էջ 422:

Պարսից արքունիքը, վերը նշված պայմանների թելադրանքով, հարկադրված էր տեղական ազնվականությանը սիրաշահելու նպատակով Աղվանից ողջ մարզպանության ընդգրկած տարածքից Արցախի, Կամբեճանի, բուն Աղվանքի, հավանաբար, որոշ մասի և Ուտիքի վրա նշանակել տեղի ազնվականության ներկայացուցչին[77]:

Եվ այսպես, Արցախի հայ Առանշահիկները վերստին վերականգնեցին իրենց նախնիների ավանդական իրավունքները: Վերականգնված իշխանության գահակալը դարձավ Վաչագան Գ Բարեպաշտը: Մ.Կաղանկատվացու հավաստմամբ պարսից Վաղարշ արքան (484-488թթ.) հաստատում է Վաչագանին իր թագավորական հրամանով «...և տարեալ թագաւորեցուցանէին ի ձեռն Վաղարշու՝ արքային Պարսից»[78]:

Վերոնշյալ հարցի կապակցությամբ Հ.Սվազյանը իրավացիորեն հետևյալն է նշել, որ «... չի կարելի ասել, թե Վաչագան Գ-ի իշխանության գլուխ անցնելով Աղվանքում վերականգնվեց թագավորությունը և կամ, որ առավել սխալ կլինի, ստեղծվեց առանձին թագավորություն Աղվանից մարզպանության կազմում»[79]: Ըստ հայ պատմագիտության մեջ գերիշխող մյուս կարծիքի՝ Վաչագան Բարեպաշտը Աղվանքի Արշակունյաց արքայատոհմի վերջին ներկայացուցիչը եղավ(485-523թթ.)[80]:

«Խաղաղ շինարար և մանավանդ սաստիկ եկեղեցասեր ու սրբերի նշխարների սիրահար»՝ այսպես է բնութագրել Վաչագանին Լեոն[81]: Պատահական չէ, որ նրա իշխանապետության շրջանում Հայոց արևելից կողմերում նշանակալիորեն բարձրացավ Հայոց եկեղեցու հեղինակությունը:

Ի դեպ, Վաչագանի համար շատ ծանր ժամանակներ էին հատկա-

77. Մ.Կաղանկատվացի, գլ ԺԷ:
78. Նույն տեղում, էջ 48:
79. Հ.Սվազյան, Աղվանից մարզպանության կազմավորման հարցի շուրջը, ՊԲՀ, 1979, հմ.4, էջ 218:
80. Ա.Յակոբեան, «Վաչագանի վեպը»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Ե-Զ դարերի Աղուանքում, «Հանդես Ամսօրեա», Վիեննա, ճԺէ տարի, 2003:
81. Լեո, հ.2, էջ 153:

պես նրա իշխանության սկզբնական տարիները: Երկրամասը պատերազմներից ու ասպատակություններից քար ու քանդ էր եղել, եկեղեցիները կորցրել էին իրենց նախկին հզորությունը, նրանց կողքին աճել էին կռատներ, ակտիվացել էին տարատեսակ աղանդների (մատնահատների, խեղդողների, կուրացողների) հետևորդները, որոնք խանգարում էին եկեղեցու ընդհանուր ընթացքին: Նույն իրավիճակն էր տիրում նաև եկեղեցիներին ու վանքերին կից դպրոցներում: Վաչագանը դարձավ իր ժողովրդի ազգային ինքնությունը վերակենդանացնողն ու պահապանը: Ուշ ավանդույթը նրան համարում էր «ի զարմից Հայկայ»[82]: Պատմիչի վկայությամբ Վաչագանը նշանակալիորեն ամրապնդել էր հայալեզու դպրոցների վիճակը՝ անձամբ մշտապես հետևելով նրանց դասընթացներին, որոնցում ընդգրկված էին «զմանկունս կախարդացն, և՝ դիւթաց, և քրմաց, և մատնահատաց, և դեղատուաց. հրամայէր ի դպրոցս ունել և ուսուցանել զաստուածեղէն ուսումն և տեղեակս առնել վարուց քրիստոնէութեան, առ ի հաստատել ի հաւատս երրորդութեանն և ուղղել յաստուածապաշտութիւն զիւրեանց ամբարիշտ հայրունեան ազգս»[83]:

Վաչագան Բարեպաշտի հետ միասին, որպես հովվապետ, հանդես է գալիս Շուքհաղիշոն: Վերջինս իր ձեռնադրությունը, ըստ ավանդության, ստացել էր Բաբկեն Հայոց կաթողիկոսից՝ ժողովրդի ընտրությամբ և իշխանների ցանկությամբ: Երկուսով համերաշխաբար լուսավորում ու վերակենդանացնում են երկրամասը՝ հաղթահարելով բազում արգելքներ: Հայ Աղվանից եկեղեցին սկսում է բուռն վերելք ապրել: Մ.Կաղանկատվացին մանրամասնորեն է նկարագրել Վաչագան Բարեպաշտի եկեղեցաշեն գործունեությունը, բայց և անհարկի տուրք տալով եկեղեցական արարողություններին, հաճախ է շեղվել պատմական բուն խնդրից, փաստ, որի առնչությամբ Հ.Սվազյանը իրավացիորեն նշել է. «Կաղանկատվացին, որպես քրիստոնեա պատմիչ, հիմնականում նրան է վերագրում սրբերի, նշխարքների գյուտերը, չծանծրանալով այդ գյուտերի պատմություններին նվիրել նույնիսկ

82. Կ.Գանձակեցի, էջ 193:
83. Մ. Կաղանկատվացի, էջ 50-51:

ամբողջական գլուխներ...»[84]:

Մ.Կաղանկատվացու վկայությամբ ընդհանրապես Վաչագան Բարեպաշտի իշխանապետության ընթացքում եպիսկոպոսները, քահանաները, սարկավագները և եկեղեցական ամբողջ միաբանությունը մեծ հարգանք էր վայելում[85]: Նրա եկեղեցասիրությունը փաստող հանգամանք է նաև պատմիչի վկայությունն այն մասին, որ Վաչագան Բարեպաշտի հրամանով կառուցվում են տարվա օրերի թվով եկեղեցիներ, այսինքն 365 կամ 366[86]: Աստվածասեր իշխանը իր անմիջական ներկայությամբ ու մասնակցությամբ նպաստում էր եկեղեցական ծեսերի ու արարողությունների հեղինակության բարձրացմանը ժողովրդական ամենալայն զանգվածների շրջանում: Այս ամենից բացի, նա հատուկ հրովարտակներով պարտավորեցնում էր իր իշխանության քաղաքացիներին՝ պաշտելու սրբերի մասունքներն ու հիշատակները, լինել քրիստոնեական կրոնի ջերմեռանդ պաշտպանը:

Շարունակելով իր ազգանպաստ գործունեությունը՝ Վաչագան Բարեպաշտը որոշում է ազնվականների, հոգևորականների ու ժողովրդի համար ստեղծել հաստատուն կանոններով մի օրենսգիրք, որպեսզի յուրաքանչյուրը ըմբռնի այն ու առաջնորդվի դրանով: Նա նպատակ ուներ նաև վերացնել աշխարհականների ու հոգևորականների, քահանաների ու եպիսկոպոսների, ազնվականների ու շինականների միջև երբեմն ծագող անհամաձայնությունները: Ակնհայտ փաստ է, որ IV դարում քրիստոնեությունը ընդունած հայ եկեղեցում ինչպես ծիսական, այնպես էլ կանոնակարգային շատ այլ հարցեր տակավին լրիվությամբ չէին մշակվել ու ձևակերպվել Հայոց եկեղեցու ընդերքում: Եվ լինելով ժամանակի փորձված քաղաքագետ, Վաչագան Բարեպաշտը նաև հասկանում էր, որ դրա համար անհրաժեշտ էր մանրակրկիտ նախապատրաստություն: Հրապարակվելիք օրենքների կատարյալ ու անառարկելի ձևակերպման նպատակով նա նամակների միջոցով հարցում-

84. Հ.Սվազյան, Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» աղբյուրները, ՊԲՀ, հ.3, 1972, էջ 197:
85. Մ. Կաղանկատվացի, էջ 50:
86. Նույն տեղում, էջ 338: Տես նաև՝ Մակ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ.Ա, էջ 84:

ներ է ուղարկում ժամանակի հեղինակավոր ու ուսյալ մարդկանց: Մ.Կաղանկատվացին գրի է առել դրանցից մի քանիսը, որոնք ուղղված էին «զՄատթէ երէց գիտնավոր»[87], «Երանելոյն Աբրահամու՝ Մամիկոնէից եպիսկոպոսի»[88], Պետրոս Սյունեցի եպիսկոպոսին և այլոց: Այս վերջինի վերաբերյալ վկայություն կա նաև Ստեփանոս Օրբելյանի մոտ:

Երկարատև ու մանրակրկիտ նախապատրաստությունից հետո Վաչագան Բարեպաշտը հրավիրեց մի բազմամարդ ժողով Աղվենում, որ կայացավ «յամսեանն մարերի, որ օր երեքտասան էր ամսոյն»[89] և որը պետք է քններ ու հաստատեր Հայ Աղվանից արքա Վաչագանի նախաձեռնությամբ ստեղծված կանոնական սահմանադրությունը: Բարեբախտաբար, Մ.Կաղանկատվացին մեկ առ մեկ գրի է առել նաև ժողովի մասնակիցների ցուցակը, որը պարզորոշ ցույց է տալիս, որ ժողովին ներկա էին հիմնականում Արցախի և Ուտիքի աշխարհիկ ու հոգևոր ներկայացուցիչները: Հոգևորականների թվում էին նաև ներկայացուցիչներ անդրկուրյան Աղվանքից: Ասվածը համոզիչ ներկայացնելու համար կրկին անդրադառնանք պատմիչի շարադրած ցուցակին. «Ես Վաչագան՝ Աղուանից արքայ, և Շուփհաղիշոյ՝ Պարտաւայ արքեպիսկոպոս, Մանասէ՝ Կապաղակայ եպիսկոպոս, Յունան՝ Հաշուայ եպիսկոպոս, Անանիա և Սահակ, և Ուտոյ Փոդ եպիսկոպոս, Յովսէփ՝ Կաղանկատուաց երէց, Մատթէ՝ Պարտաւայ երէց, Թոմա՝ թագաւորի դրան երէց, Պողոս՝ Գայեգուճու երէց, Շմաւոն՝ Ցրոյ քորեպիսկոպոս, Մատթէ՝ Դարահոճոյ երէց, Աբիկազ՝ Բեդայ երէց, Ուրբաթայր՝ Մանուշէից երէց, Յովէլ և Պարմիդէ և՝ Յակոբ երիցունք, և ազատ մարդիկ, և նահապետք Արցախայ, Բակուր՝ Կաղանկատուաց նահապետ և այլք բազումք, որք միաբան առաջի իմ եկին ի հանդէս ի հովոց՝ ի տեղւոջս յԱղուէն»[90]:

Այստեղից ակնհայտ է դառնում, որ անդրկուրյան Աղվանքի հայտնի բնակավայրերից ներկայացուցիչներ ունեին միայն Կապաղակը՝ Աղ-

87. Մ.Կաղանկատվացի, էջ 86:
88. Նույն տեղում, էջ 88:
89. Նույն տեղում, էջ 89:
90. Նույն տեղում, էջ 89-90: Տես նաև՝ Կանոնագիրք Հայոց, էջ 91-93:

վանքի մայրաքաղաքը, և Ցրի քաղաքը, իսկ մյուս մասնակիցների մեծ մասը Արցախից և Ուտիքից էին: Այդ առիթով նույնիսկ Ռ.Գեյուշևը գրել է. «Աղբյուրները չեն հաղորդում, որ այն ժամանակ կաթողիկոսական նստավայրը գտնվում էր Չողում, նույնիսկ ժողովի մասնակիցների մեջ չեն հանդիպում Չողից ժամանած պատվիրակների անուններ»[91]:

Տարաբախտաբար, ժողովի գումարման տարեթվի մասին կոնկրետ հիշատակություն չկա պատմիչի մոտ, որ և պատմագիտության մեջ տարակարծիքների տեղիք է տվել: Նա միայն նշել է, որ ժողովը կայացավ «յամսեանն մարերի, որ օր երեքտասան էր ամսոյն»[92], որը Ն.Ակինյանի կարծիքով հուլյան տոմարով համապատասխանում է 560-579թթ. ապրիլի 30-ից մայիսի 1-ը[93]: Նրա վերջնական եզրահանգումը այն էր, որ ժողովը գումարվել է V դարի առաջին կեսին, իսկ քանի որ ժողովի կանոնների բովանդակությունից հասկացվում է, որ այն կրում էր Շահապիվանի ժողովի ազդեցությունը, հետևաբար, ըստ նրա, ժողովը գումարվել է 443 թվականից ոչ շատ ուշ: Վերջին միտքը, իհարկե, այնքան էլ համոզիչ չի հնչում:

Ժողովի գումարման տարեթվի հարցի վերաբերյալ հանգամանալից ուսումնասիրությամբ զբաղվել է նաև Ս. Հովհաննիսյանը, որի կարծիքով Աղվենի ժողովում ընդունված կանոնները իրենց վրա կրել են Աշտիշատի կանոնների ազդեցությունը: Ս.Հովհաննիսյանը ընդհանրապես հակակարծիք է այն տեսակետին, որ Աղվենի ժողովը գումարվել է Վաչագան Գ Բարեպաշտի օրոք, քանի որ, ըստ նրա «Շուփհաղիշոն չէր կարող լինել 487-510թթ. թագավորած Վաչագան 3-րդի ժամանակակիցը»[94]: Այնուհետև նա որոշ, ոչ այնքան համոզիչ փաստարկներից հետո ամփոփելով իր տեսակետը, հետևյալն է գրում. «Կաղանկատվացին յուր Պատմությունը մագաղաթին հանձնելիս շփոթել է Վաչագան երկրորդի և Շուփհաղիշոյի գործունեության ժամանակաշրջանները: Վա-

91. Геюшев Р.Б, Христианство в Кавказской Албании, стр. 43.
92. Մ.Կաղանկատվացի, էջ 89:
93. Ն.Ա.Ակինյան, Մովսես Դասխուրանցի և յուր Պատմությունն Աղուանից, Վիեննա, 1970, էջ 138:
94. Ս.Հ. Հովհաննիսյան, Աղվենի սահմանադիր ժողովի կանոնները և նրանց աղերսը Աշտիշատի կանոնների հետ, ՊԲՀ, 1967, հմ.4, էջ 265:

չագան 2-րդի գործունեությունը վերագրվել է Վաչագան 3-րդին: ... Աղվենի սահմանադիր ժողովը հրավիրվել է Վաչագան 2-րդի թագավորության և Շուփհաղիշոյի հայրապետության օրոք, ամենայն հավանականությամբ՝ 372/387թթ., հունիսի առաջին օրերից մեկում»[95]:

Սակայն քանի որ մեր հիմնական խնդրին առնչվող այս հարցը, այնուամենայնիվ, մեր կողմից ուսումնասիրվող նյութի համար այնքան էլ առանցքային չէ, ուստի նշենք միայն պատմագիտության մեջ ընդունված համոզիչ ու տրամաբանական տեսակետը: Այդ տեսակետի հեղինակն է Բագրատ Ուլուբաբյանը, որը հարցի շուրջը եղած աղբյուրների համակողմանի ուսումնասիրությունից հանգել է այն եզրակացության, որ «Աղվենի ժողովը գումարվել է V դարի վերջին կամ VI դարի սկզբին, և կանոններն էլ ընդունել է Վաչագան Բարեպաշտ Առանշահիկը»[96]:

Քննարկվող խնդրի տեսանկյունից առավել կարևորություն ներկայացնող հարց է Աղվենի ժողովի սահմանած և Մ.Կաղանկատվացու կողմից լրիվությամբ գրի առնված 21 կանոնների մեկնաբանությունն ու դրանց նշանակության բացահայտումը: Ժողովի կողմից սահմանված կանոնները հիմնավորապես ուղղված էին Հայոց եկեղեցու և, մասնավորապես, նրա արցախյան (գրականության մեջ հայտնի Աղվանից-Մ.Բ.) թեմի բարեկարգությանն ու դավանաբանական խնդիրներին:

Կանոններով հստակորեն սահմանվում են եկեղեցական դասի տարբեր աստիճանների ներկայացուցիչների, ինչպես նաև հոգևորականության ու աշխարհիկ մարդկանց փոխհարաբերություններն ու նրանցից յուրաքանչյուրի իրավունքները: Երկրի ներքին կյանքի ամենակարևոր գործոններից մեկը՝ դատելու գերագույն իրավունքը, վերապահվում է արքունիքին: ԺԱ կանոնի մեջ նշված է. «Եւ որ զկին թողու առանց պատճառանաց և առանց պսակի կին առնէ, և՝ որ անօրէն և մարդասպան է, և՝ կամ զգէտս հարցանէ, զայնպիսին կապեալ ի դուռն արքունի տարցին, և դառն մահ ի վերայ դիցեն»[97]: Հարկ է նշել, որ գերագույն դատավարության հարցի նմանակերպ ձևակերպումն ուղղված էր ոչ թե եկեղեցական կազմակերպության իրավունքների սահմանափակմանը, այլ նրան անաստվածահաճ ձեռնարկումներին մասնակից դարձնելու աննպատակահարմարությանը: Եկեղեցական դասը մշտապես պետք է գտնվեր բարոյական կատարելության ամենաբարձր աստիճանի վրա. «Աղվենի կանոններով նյութական ու բարոյական ապահով, արտոնյալ վիճակ է ստեղծվում եկեղեցու և եկեղեցականների համար, սակայն միայն այն դեպքում, եթե նրանք իրենց կոչման բարձրության վրա են»[98]:

Կանոնների բովանդակությունից պարզորոշ նկատվում է, որ այն ամենից առաջ նպատակ ուներ ամրապնդել ու հզորացնել եկեղեցին, և եթե դրան կխանգարեն նույնիսկ եկեղեցականները, ապա նրանք նույնպես կպատժվեն ամենայն խստությամբ: Օրինակ՝ Զ կանոնի մեջ նշված է. «Վանաց երէց, կամ վանական ոք եթէ ի վանացն գայթանք առնէ, և ի վերայ յայտ լինի, անարգեսցեն զնա և ի տեղւոյն ի բաց հանցեն, և զխոստակն յեկեղեցի կալցին»[99]:

Առանձին կանոններ վերաբերում էին եկեղեցուն տրվող հարկերին, եկեղեցական արարողություններին, եկեղեցի հաճախելու կարգին: Աղվենի կանոնների գիտական համակողմանի ու խորը վերլուծություն է կատարել Բ.Ուլուբաբյանը, որը և իրավացիորեն նշել է հետևյալը. «Վաչագան Բարեպաշտի կանոնները, ճիշտ է, օրինականացնում էին եկեղեցու և նրա տնօրենների իրավունքները, բայց և միաժամանակ ընդգծում էին աշխարհիկ տերերի պարտականություններն ու իրավունքները երկրի կառավարման և օրենքների պահպանման գործում»[100]:

Ինչպես արդեն իսկ նշվել է, Աղվենի կանոններով կարգավորվում են նաև աշխարհիկ ու հոգևոր դասերի փոխհարաբերությունները: Դրա վկայություններից է ԻԱ կանոնը, որտեղ մասնավորապես նշված է. «Եւ ազատ մարդ ոք յիւր եկեղեցւոջ թէ սեղան կանգնէ, կամ նշխարս ինչ բերէ, կամ պատարագ առնէ, եպիսկոպոսին հրամանաւ արասցէ, որչափ

95. Նույն տեղում, էջ 270-274:
96. Բ.Ուլուբաբյան, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, էջ 178:
97. Մ.Կաղանկատվացի, էջ 92:

98. Բ.Ուլուբաբյան, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, էջ 189:
99. Մ.Կաղանկատվացի, էջ 91:
100. Բ.Ուլուբաբյան, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, էջ 193:

և իւր կարողութիւն իցէ: Եւ որ զայս հրամանաւ առնէ և կատարէ, օրհնեալ լիցի. և որ ոչն առնէ, հեռի եղիցի յեկեղեցւոյն. և ապա ըստ կարի տուգանս բերցէ առաջի եպիսկոպոսին»[101]: Այսպիսով, Հայոց արևելից կողմերում քրիստոնեական հավատի ամրապնդման գործում անգնահատելի դեր ունեցավ Աղվենի ժողովն ու նրա կողմից ընդունած կանոնների ժողովածուն: Այն իրենով նշանավորեց մի նոր ու հաստատուն քայլ Հայոց արևելից կողմանց հայության հոգևոր-բարոյական հայացքների ձևավորման ասպարեզում: «Նրանք (Աղվենի կանոնները- Մ.Բ.) ամրապնդում են Աղվանից եկեղեցու հիմքերը, հանդիսանալով նրա առաջին օրենքները»[102]:

Ժողովածուն միաժամանակ հանրագումարի է բերում ժամանակի սոցիալ-քաղաքական պայմաններում Հայ Աղվանից եկեղեցու ունեցած դերն ու նրա առջև ծառացած խնդիրներն ու պարտականությունները: Այն ավարտվում է ԻԲ կանոնով, որում նշված է.«Զայս պայման արարին եպիսկոպոսունք, և՛ քահանայք, և՛ ազատ մարդիկ առաջի արքայի: Եթե ի մեր եպիսկոպոսաց, և՛ յերիցանց, և՛ եկեղեցւոյ բերանոյ օրհնեալ լիցի թագաւորն թագուհեաւն և զավակօքն հանդերձ, և ամենայն աշխարհաւս հանդերձ, որք յայս ժողովս են, օրհնեալ եղիցին: Եւ զայս հրաման մատանեցին Մուծիկ՝ արքայի հրամանատար, Միրհորիկ՝ հազարապետ, ազգապետք՝ Մարուք, Տիրազդ, Սպարակոս, Շամա, Բակուր, Առատան, Արշէս, Վարդան քաջ, արդմանայ տէր, Խուրս, երմանոսան, Խոսկէն, Փիրոգ նահապետ և ամենայն ազատք Աղուանից: Եւ վասն առաւել հաստատութեան գրոյս Վաչագանայ՝ Աղուանից արքայի մատանին եդաւ ի վերայ»[103]:

Աղվենի ժողովածուն իր մեջ պարունակում է նաև հետաքրքրական մեկ այլ յուրահատկություն. նրանում արտացոլված են Հայ առաքելական եկեղեցու Արևելից կողմերի թևին բնորոշ տեղական որոշ առանձնահատկություններ, որոնք դրսևորվում էին եկեղեցուն տրվող տուրքերի, օրինազանցների համար սահմանված պատիժների, հոգևորականների ու աշխարհիկ մարդկանց փոխհարաբերություններում և այլն: Այստեղից հետևում է, որ կանոնական ժողովածուի ընդունումը բնականոն էր Հայոց արևելից կողմերի հայության համար, որովհետև կենտրոնական հայկական պետականության բացակայության պայմաններում եկեղեցուն նայում և ընդունում էին որպես միակ կենտրոնական և համազգային հաստատությունը, որի իրավասության տակ գտնվող հարցերի լուծման համար այս կանոնական ժողովածուն ամբողջությամբ համարվում էր բարձրագույն իշխանության կամքի արգասիք, հասարակության ներքին կյանքը կարգավորող պաշտոնական ուղեցույց:

Ընդհանուր գծերով այսպիսինն էր Հայ Առաքելական եկեղեցու նվիրապետության մեջ մտնող Հայոց արևելից կողմանց եկեղեցին՝ սկզբնավորումից մինչև VI դարը՝ ինքնուրույն կաթողիկոսության ստեղծման նախաշեմին:

101. Մ.Կաղանկատվացի, էջ 94:
102. Ал. Акопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках,стр. 185.
103. Մ.Կաղանկատվացի, էջ 94:

Աղվանից կաթողիկոսության ստեղծման հանգամանքները

Հայոց եկեղեցու պատմության ընթացքը ցույց է տալիս, որ Հայաստանի քաղաքական մասնատվածությունը երբեմն իր անդրադարձներն է ունեցել նաև Հայոց եկեղեցական ընդհանուր հաստատության որոշակի տարանջատման բնագավառում, սակայն երբեք չի հասցրել ակնհայտ մասնատման այն պարզ պատճառով, որ այն իրենից ներկայացնում էր մեկ ընդհանուր ազգի հոգևոր հաստատություն, որտեղ չկային էական դավանաբանական խնդիրներ: Քաղաքական հանգամանքներն ու տիրապետողների ձգտումները պառակտել Հայոց եկեղեցին ու աստիճանաբար ընդհանրապես վերացնել այն, կամ, լավագույն դեպքում, ենթարկեցնել, այդպես էլ վերջնական հաջողություն չունեցան: Այս վերջինը փաստող վկայություն է 451 թվականին Քաղկեդոնում ընդունված դավանանքային բանաձևը, այն է՝ Քրիստոսի «երկու բնության» հարցը, որը «դարձավ հիմնախնդիր բառի կատարյալ իմաստով, փաստորեն ժամանակի հիմնախնդիրը»[104]: Քաղկեդոնականությունը դարձավ Բյուզանդական կայսրության նվաճողական քաղաքականության դրսևորման յուրահատուկ ձև, ինչը ստիպեց Հայոց եկեղեցու հայրերին ձեռնարկելու հոգևոր պաշտպանություն, որպիսին էր «միաբնակությունը»* և դրա շնորհիվ ազգային ինքնության պահպանման պատասխան միջոցներ:

Հիմնախնդրի քննարկման առումով կարևոր է հիշատակել Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի հետևյալ տեսակետը. «Հայոց ազգային եկեղեցին եղած է այն միակ յոդակապը, որ Հայկայ սերունդին ցրուած մնացորդները կրցած է իրարմէ անքակտելի պահել, և իբրեւ

104. Կ.Մելիքյան, Հետքաղկեդոնական ժամանակաշրջանի/Վդարի II կես - VI դար/ դավանաբանական որոշ հարցերի շուրջ, Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2001, էջ 12:

* Մնալ հավատարիմ Նիկեայի սբ. Կյուրեղ Ալեքսանդրացու բանաձևին՝ «Մի է Բնությունն Բանին Մարմնացելոց» և նզովել բոլոր տեսակի միաբնակներին և ապա միակամներին, խույս տալով երկաբնակության՝ Նեստորական վտանգից:

մեկ ազգ պահպանել: Եկեղեցին եղած է, որ անվիճելի կերպով ներարկած է անոր մէջ ներքին կենսականութեան տարրները, և պատրաստած է արտաքին միջոցներ և գործնական եղանակներ և գործառնական ձեռնարկներ՝ Հայ ազգութեան գոյութիւնը ապահովելու: Եկեղեցւոյ շնորհիւն է, որ Հայութիւնը մնացած է իբր յատուկ և ինքնուրոյն մարմին մը, որ դարերու այլայլութեանց և արկածներու բռնութեանց ներքեւ ալ, ինքն իր մէջ շարունակուելով միշտ նոյն մնացած է»[105]:

Ահա այս գիտակցումով էլ Հայոց եկեղեցու հոգևոր հայրերը վստահաբար ձեռնարկում էին համապատասխան միջոցառումներ, որոնց հաջողության կարևորագույն նախապայմանը առկա դավանաբանական միասնությունն ու քրիստոնեական հավատքին հայ ժողովրդի բոլոր խավերի ի սկզբանե անմնացորդ նվիրվածությունն էր:

Եվ այսպես, Հայոց Առաքելական եկեղեցին, շարունակելով պայքարը այլադավանության դեմ, միաժամանակ հզորանում ու ամրապնդում էր իր դիրքերը: 506թ. տեղի ունեցավ Դվինի եկեղեցական առաջին ժողովը՝ Բաբկեն կաթողիկոսի հրավերով ու ղեկավարությամբ, որին մասնակցում էին նաև վրաց ու աղվանից եպիսկոպոսները[106]:

Ա.Հակոբյանի կարծիքով չնայած սկզբնաղբյուրները չեն հիշատակում Դվինի ժողովին Հայոց Աղվանքից ներկայացած մասնակիցների անունները, սակայն պետք է ենթադրել, որ Հայոց Աղվանից հոգևոր առաջնորդն ու եպիսկոպոսները նույնպես մասնակցել են հիշյալ ժողովին[107]: Այս տեսանկյունից թերևս համոզիչ է նաև Եզնիկ քհն. Պետրոսյանի կողմից արված մեկնաբանությունը. «Բնավ էլ պատահական երևույթ չպետք է համարել այն, որ 506թ. «Հայոց, Վրաց, Աղվանից և Սյունյաց» եպիսկոպոսները հավաքվել են Հայոց կաթողիկոսության կենտրոն Դվինում քննելու իրենց հուզող հարցերը: Թեպետև Վրաց և Աղվանից, որոշ ժամանակ էլ Սյունյաց եկեղեցիները ունեցել են ինքնավար կառավարություն, սակայն ի հոգևորս բոլորն էլ ենթարկվել են

105. Մ.արք. Օրմանյան, Հայոց եկեղեցին, էջ 245:

106. Հովհ. Դրասխանակերտցի, էջ 64: Տես նաև Ե.. Տեր-Սինասյան, Պատմաբանասիրական հետազոտություններ, Եր., 1971, էջ 44:

107. Տես Ալ.Акопян, стр. 129.

Դվինի Հայոց կաթողիկոսությանը: Այս շատ հստակ ձևով վկայվում է ոչ միայն ժամանակի հայկական, այլ նաև օտար աղբյուրներում»[108]:

Հիշյալ տեսակետների շուրջը կասկածները փարատվում են Հովհ. Դրասխանակերտցի կաթողիկոսի հետևյալ վկայությամբ. «...մեծ Հայրապետն Հայոց Բաբգէն առնէ ժողով եպիսկոպոսաց Հայոց, Վրաց և Աղուանից ի Նոր քաղաք ի սուրբ կաթողիկէի ի մայրն եկեղեցեաց Հայոց, որք նմանապէս ...խոտեցին զժողովն Քաղկեդոնի... ի նմին հիման սրբոյն Գրիգորի հաստատեալ կային»[109]:

Սկզբնաղբյուրներում նշված «Աղվանից եպիսկոպոսների» շարքում, բնականաբար, արդեն իսկ հասկացվում են նաև Աղվանից մարզպանության ենթակայության տակ գտնվող Արցախից և Ուտիքից ժամանած եպիսկոպոսները: Ժողովի կողմից կազմված «Հաւատոյ նամակը» բաղկացած էր երեք օրինակից, քանի որ Հայոց, Վրաց և Աղվանից եպիսկոպոսները առանձին են ստորագրել դրանք, որպես առանձին քաղաքական միավորների, այն է մարզպանությունների ներկայացուցիչներ: «Այսուիկ վարիմք հաւատովք, զոր և գրեցաք իսկ ձեզ յառաջագոյն, Վրաց և Աղուանից միաբանութեամբ, իւրաքանչիւր աշխարհի գրով»[110]:

«Գիրք թղթոցում» զետեղված այս պարբերությունը և հատկապես «իւրաքանչիւր աշխարհի գրով» խոսքերը պարզ և անվիճելի կերպով ապացուցում են, որ Բաբկեն կաթողիկոսի Ա թղթի հետ միասին Դվինի 506թ. ժողովի մասնակից վրաց և աղվանից եպիսկոպոսներն առանձին-առանձին «Հաւատոյ նամակ» են տվել՝ իրենց ստորագրություններով վավերացրած[111]:

Եվ այսպես, և 506թ. և 554թ. Դվինում գումարված եկեղեցական ժողովները «ամրագրեցին Հայոց դավանանքային ինքնորոշումը և ազգային միաբանությունը նոր պայմաններում»[112]:

108. Տես՝ Եզն.քին Պետրոսյան, Հայոց եկեղեցու պատմություն, էջ 55:
109. Հովհ. Դրասխանակերտցի, էջ 64:
110. «Գիրք թղթոց», էջ 51:
111. Տես՝ Ե.. Տեր-Մինասյան, Պատմա-բանասիրական հետազոտություններ, էջ 43:
112. Է.Լ. Դանիելյան, Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ առաքելական եկեղեցին (VI-VIIդարեր), Եր., 2000թ. էջ 4:

Հայոց եկեղեցու ամբողջական պատմության ուսումնասիրությունից երևում է, որ հիշյալ, նաև հետագա ժամանակներում ծագած դավանաբանական զանազան բնույթի խնդիրները երբեք չներգործեցին ու չկարողացան խաթարել Հայոց եկեղեցու հիմնական դիրքն ու հաստատուն կերպարը, թեկուզ և երկրի քաղաքական մասնատվածության պայմաններում:

Ակնհայտ է, որ Հայոց արևելից կողմերի, այսինքն՝ Արցախ և Ուտիք հայաշխարհների, ինչպես նաև անդրկուրյան Աղվանքում քրիստոնեական քարոզչության շնորհիվ առաջացած հոգևոր առաջնորդությունը, ինքնստինքյան կազմում էր Հայոց եկեղեցու մաս, իսկ հոգևոր առաջնորդարանը ի սկզբանե գտնվում էր Մեծ Հայքի Արցախ նահանգի Ամարաս բնակավայրում: Հոգևոր այս առաջնորդության մեջ ընդգրկված էին նաև բուն Աղվանքի քրիստոնյա ցեղերը: Եվ առաջնորդությունն էլ Աղվանից է անվանվել վերը հիշատակված պատճառով, ինչն էլ տարակարծիքների, այդ թվում սխալ տեսակետների տեղիք է տվել: Հիշյալ տեսակետը հիմնավորվում է պատմական աղբյուրների համապատասխան վկայություններով: Փ.Բուզանդը հետևյալ կերպ է ներկայացնում Ս.Գրիգորիսի մասունքների հուղարկավորությունը. սարկավագները Գրիգորիսի մարմինը «բերին ի գաւառն իւրեանց ի կողմանց Աղուանից, ի սահմանս Հայոց ի Հաբանդ, ի գեօղն, որ անուանեալ կոչի Ամարազ: Եւ եդին զնա առ եկեղեցեաւն, զոր շինեալ էր առաջնոյն Մեծին Գրիգորի, հաւուն ռիգորիսի՝ քահանայապետին մեծի աշխարհին Հայաստան երկրին»[113]: Հարկ է նկատել, որ պատմիչը ի նկատի է առել Հայոց Աղվանքը, որովհետև անգամ հատուկ շեշտել է «ի կողմանց Աղուանից, ի սահմանս Հայոց»: Հովհաննես Դրասխանակերտցին, բառացի արտագրելով Մովսես Խորենացուց, նույն փաստը հետևյալ կերպ է ներկայացրել. «և տարեալ հանգուցանեն զսուրբ մարմին նորա ի գեօղն Ամարաս, որ ի Փոքր Սիւնիս»[114]: Հասկանալի է, որ Փոքր Սյունիք անվան տակ կաթողիկոս պատմիչը ի նկատի ուներ Արցախ աշխարհը: Իսկ Մատթեոս Ուռհայեցին, անդրադառնալով Հայոց

113. Փ.Բուզանդ, էջ 27:
114. Հովհ.Դրասխանակերտցի, էջ 46:

Աղվանքին, այն անվանել է «յաշխարհն Աղուանից, որ ասի խորին աշխարհ Հայոց»[115]:

Ստեփանոս Օրբելյանը, նկարագրելով մոնղոլների տիրապետության մռայլ ժամանակները, գրի է առել նաև Գրիգորիսի անվան հետ կապված հետևյալը փաստը. «Սա յուղարկեալ զՁալալն որդի Տարսայիծին, այլ ևս մուղալ արամբք ի մեծ աթոռն Աղվանից յԱմարաս, որ ի հինսն լեալ էր աթոռ կաթողիկոսաց նոցին. ետ տանել առ ինքն զգաւազան սրբոյն Գրիգորիսի որդւոյն Վարդանայ, որդւոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի. քանզի և կայր գերեզման նորին անդ: Վասն որոյ և գաւազանն ի նմին եկեղեցւոջ պահեցաւ: Ընդ նմին տարան և զսքանչելի խաչն աստուածահրաշ... եւ այսու օրինակաւ կողոպտեցաւ աշխարհն Աղվանից ի պատուական և յաստուածային գանձուցն»[116]:

Միքայել Չամչյանը, նկարագրելով Ս.Գրիգորսի առաքելությունը, գրել է. «Սոյն այս սուրբ Վրթանէս ձեռնադրեալ զերէց որդի իւր զԳրիգորիս արխեպիսկոպոս առաքեաց յԱղուանս Հայոց. որ և նահատակեցաւ անդ, ի նոցանէ: Եւ, ի սմանէ համարի սկզբնաւորութիւն կաթուղիկսութեան Աղուանից»[117]:

Անշուշտ, պատմիչը ևս վկայակոչում է հիշյալ տեսակետը, նշելով, որ Ս.Վրթանեսը իր «երեց» որդուն ձեռնադրում է «Հայոց Աղվանքի» (ընդգ.-Մ.Բ..) եպիսկոպոս, որով և հետագայում սկիզբ է դրվում Հայ Աղվանից կաթողիկոսության: Հետևաբար, առկա աղբյուրների վկայակոչմամբ կարելի է վստահաբար ասել, որ Աղվանից կաթողիկոսությունը հիմնադրվել է որպես Հայոց եկեղեցու բաղկացուցիչ մաս: Այն իր ծագմամբ, էությամբ ու գոյությամբ մշտապես հայ լուսավորչական թեմ է եղել: Ինչ վերաբերում է բուն Աղվանքի աղվանական ցեղերին, ապա «... աղվանները քրիստոնեության մուտքից հետո, և ապա հետզհետե ընկել են հայերի ինչպես քաղաքական, այնպես էլ կրոնական ու մշակութային ազդեցության տակ: Ի վերջո աղվանների ճնշող մասը էթնիկապես համաձուլվել է հայերի հետ: Այդ բանում կարևոր դեր է կա-

115. Մատթեոս Ուռհայեցի, էջ 2:
116. Ստ.Օրբելյան, էջ 470:
117. Միք.Չամչեան, Խրախճան Պատմութեան Հայոց, էջ 84:

տարել Աղվանական եկեղեցին..., որը Հայ եկեղեցու արքեպիսկոպոսություններից մեկն էր, որի պետը նախկինի պես շարունակում էր կրել Աղվանից կաթողիկոսի տիտղոսը, այնպես, ինչպես Հայկական եկեղեցու կազմում Աղթամարի և Կիլիկիայի կաթողիկոսները»[118]:

Հայ Աղվանից կաթողիկոսության հիմնադրումը թելադրված էր նաև ժամանակի քաղաքական պայմաններով: Քաղաքական մեկուսացման մեջ հայտնված Հայոց արևելից նահանգների հոգևոր առաջնորդարանների վիճակը ավելի էր ծանրացել թեկուզ միայն այն պատճառով, որ զրկված լինելով Ամենայն Հայոց կաթողիկոսության ամենօրյա հսկողությունից, նրանք ենթակա էին տարատեսակ վտանգների: Եթե անտեսենք անգամ նրա գոյությանը սպառնացող վտանգը տիրապետողների կողմից, ապա պետք է հաշվի նստենք այն իրողության հետ, որ Քաղկեդոնի ժողովի հեղինակներն ու կողմնակիցները ջանք ու եռանդ չէին խնայում այդ ժողովի նորմերը չընդունած եկեղեցիները իրենց ենթակայության տակ դնելու, հետևաբար նաև նրանց ինքնուրույն գոյատևմանը վերջ տալու նպատակին հասնելու ուղղությամբ: Փաստորեն դավանանքային այդ շեղումները լի էին հայոց հոգևոր ու քաղաքական ուժերը ջլատելու վտանգով:

Այսպիսով, Հայոց արևելից կողմանց, ինչպես նաև անդրկուրյան թեմերը, մերժելով քաղկեդոնականությունը, այդ ուղղությամբ առավել վստահաբար գործելու կարևորագույն երաշխիքը տեսնում էին հիշյալ թեմերը մեկ նվիրապետությունում միավորելու մեջ: Այդ քայլին էր մղում նաև VI դարում ստեղծված քաղաքական աննպաստ իրադրությունը:

Վաչագան Բարեպաշտի մահից հետո հաճախակի էին դարձել հյուսիսից խազարների արշավանքները, որոնք ավերում էին բնակավայրերը, այրում եկեղեցիները, մատենագրական երկերն ու ավետարանները: «Ապա յերկրորդ ամին Խոսրովու արքայից արքայի, յորժամ զսկիզբն հայ թուականին եդին, ի սոյն ամի փոխեցին զաթոռ հայրապետութեանն Աղուանից ի Չորայ քաղաքէն ի մայրաքաղաքն Պարտաւ վասն հինահալած արշաւանաց թշնամեաց խաչին Քրիստոսի: Եւ նս-

118. Հ.Ս. Անասյան, Հայկական Մատենագիտություն, հ.Ա, Եր., 1959, էջ 614:

տուցին հայրապետ զտէր Աբաս ի գաւառէն Մեծիրանց, որ կալեալ զաթոռն ամս ԽԴ, սրբական վարուք կեցեալ փոխադրի յանմահ կեանսն»[119]:

Աղբյուրների հաղորդած տեղեկությունները վկայում են, որ սկզբում Ամարասը, այնուհետև Պարտավը հանդիսացել են Հայոց եկեղեցու Արևելյան թեմի եպիսկոպոսական կենտրոնը: Եվ VI դարի սկզբին խազարական արշավանքների վտանգից դրդված, եպիսկոպոսական աթոռը ժամանակավորապես Պարտավից տեղափոխվել էր Չող: Հիշյալ հիմնախնդրի վերաբերյալ ճշգրիտ աղբյուրների բացակայության պատճառով ուսումնասիրողները ստիպված էին պարզապես ենթադրություններ կատարելու մասնավորապես Մ.Կաղանկատվացու հաղորդած որոշ տեղեկությունների շուրջը, և որի հետևանքով ավելի խճճված տեսք է ընդունել այն: Հիմնախնդրի գիտականորեն ճշգրիտ ու համոզիչ մեկնաբանություն է տվել Ա.Հակոբյանը. «Եպիսկոպոսական աթոռը Պարտավ է տեղափոխվել հենց Չող-Դերբենդից, որտեղ 428 թվականից ի վեր գտնվում էր Աղվանքի մարզպանի նստավայրը... ամենայն հավանականությամբ հենց այդ հանգամանքն էլ բացահայտում է Աղվանից մարզպանության հոգևոր առաջնորդարանի տեղադրությունը»[120]: Հեղինակը 428 թվականին է վերագրում Աղվանից մարզպանության կազմավորումը, սակայն հիմնավորելով իր շարադրանքը, միաժամանակ նշում, որ նրա կազմում մինչև 462 թվականը գոյություն է ունեցել նաև Աղվանից թագավորությունը Կապաղակ կենտրոնով, որտեղ գտնվում էր նաև Աղվանից հոգևոր առաջնորդը՝ Աղվանից եպիսկոպոսը: Այստեղից էլ իրավացիորեն եզրակացնելով Ա.Հակոբյանը նշում է, որ թագավորության վերացումից հետո, այսինքն՝ «462 թվականից հետո Աղվանքի հոգևոր առաջնորդարանը տեղափոխվում է մարզպանության մայրաքաղաքը՝ Չող-Դերբենդ»[121]: Հավանաբար դրանից հետո էլ, ըստ նրա, սկզբնաղբյուրները Աղվանից հոգևոր առաջնորդին հիշատակում են արքեպիսկոպոս ձևով:

119. Մ.Կաղանկատվացի, էջ 119:
120. Ал.Акопян, стр. 133.
121. Նույն տեղում, էջ 134:

Ա.Հակոբյանի հիշյալ տեսակետը հիմնավոր ու համոզիչ է, քանի որ ակնհայտ է, որ հոգևոր առաջնորդարանը հիմնականում տեղակայվել է աշխարհիկ իշխանության անմիջական հովանու ներքո: Եվ տվյալ պարագայում նորաստեղծ մարզպանության կենտրոն Չողում հոգևոր առաջնորդարանի հաստատումը չպետք է կասկած հարուցի:

Սակայն կա քաղաքական մեկ այլ հանգամանք ևս, որը թույլ է տալիս եզրակացնելու, որ հիշյալ իրադարձություններից քիչ հետո, այսինքն V դարի վերջին, Վաչագան Բարեպաշտի կողմից հիմնած իշխանապետությունը, որ ընդգրկել է բացառապես Արցախ և Ուտիք նահանգները, նույնպես ունեցել է իր հոգևոր առաջնորդարանը՝ եպիսկոպոսության ձևով: Իշխանապետությանը ենթակա հոգևոր կենտրոնները միավորված էին այս պարագայում Պարտավի եպիսկոպոսի հովանու ներքո: Վաչագան Բարեպաշտի իշխանապետության շրջանում Հայոց արևելից կողմերի եկեղեցին շարունակում էր գտնվել Հայոց եկեղեցու ավանդական ենթակայության տակ: Ա.Հակոբյանը նշում է, որ «Աղվանից պատմությունը» ոչինչ չգիտե Աղվանից եկեղեցու կապաղակյան շրջանի մասին[122]: Անշուշտ դա ունի իր հիմնավորումը: Աղվանից եկեղեցու կապաղակյան շրջանում Ուտիքի և Արցախի եկեղեցական կառույցները նրանից առանձին էին գործում: Հիշյալի ապացույց է Գարդմանի եպիսկոպոսության հիշատակությունները:

Ա.Հակոբյանը իրավացիորեն նշել է նաև, որ «Աղվանից պատմությունը» և նրա «աղվանական» սկզբնաղբյուրները արտացոլում են աջակողմյան Աղվանքի Արցախ և Ուտիք հայաշխարհներում հիմնավորված նյութերը, որը Աղվանից եկեղեցու իրավասության տակ է անցել 428-462թթ. Աղվանից մարզպանության կազմավորման և Չողում նրա հոգևոր կենտրոնի հաստատման ժամանակ[123]: Տեսակետը հիմնավորվում է Մ.Դասխուրանցու «Փոխումն հայրապետական աթոռոյն Աղուանից ի Չորայ և նստուցանել ի մեծ քաղաքին Պարտաւ...» գլխում[124], որտեղ պարզորոշ նշված է, որ այն տեղի է ունեցել 552 թվա-

122. Ал.Акопян, стр. 135.
123. Նույն տեղում:
124. Մ.Կաղանկատվացի, հ.2, գլ.Դ:

կանին:

Անշուշտ, Վաչագան Բարեպաշտի իշխանապետությունը և Աղվենի ժողովն ու նրա ընդունած «Սահմանադրութիւն կանոնականը» չընդունելու դեպքում առաջադրված տեսակետը կդառնա տրամաբանական ու համոզիչ: Սակայն հարկ է նկատել, որ Ա.Հակոբյանը ևս հակված է այն մտքին, որ Մ. Դասխուրանցին հիմնականում գրի է առել Հայոց արևելից կողմերի, այն է՝ Արցախ և Ուտիք հայաշխարհների կրոնական ու քաղաքական իրադարձությունները:

Հենվելով պատմական սկզբնաղբյուրների և նրանց շուրջը առկա պատմագիտական ուսումնասիրությունների վրա կարելի է եզրակացնել, որ V դարի վերջին և VI դարի սկզբին, մասնավորապես, Վաչագան Գ-ի իշխանապետության շրջանում Հայոց արևելից կողմանց եկեղեցին գտնվելով հիշյալ իշխանապետության հովանու ներքո, հաստատել էր նաև Ամենայն Հայոց եկեղեցուն ենթակա իր հոգևոր առաջնորդարանը, որը թերևս կրկին քաղաքական պայմանների թելադրանքով առանձնացել էր բուն Աղվանքի հոգևոր առաջնորդարանից, քանի որ վերջինս գտնվում էր Աղվանից մարզպանի հովանու ներքո: Եվ Վաչագան Բարեպաշտի իշխանապետության անկումից հետո, երբ Հայոց արևելից կողմերը կրկին հայտնվեցին Աղվանից մարզպանության կազմի մեջ, բնականաբար, անհրաժեշտություն էր առաջացել եկեղեցական երկու թեմերը, այն է բուն Աղվանից և Հայոց արևելից եպիսկոպոսական թեմերը միավորելու մեկ նվիրապետության մեջ:

Ուրեմն հետևությունը մեկն է. դավանանքային ու քաղաքական պայմանների թելադրմամբ 552 թվականին Պարտավում վերահաստատվեց եպիսկոպոսական աթոռը՝ միավորելով Հայոց արևելից կողմանց ու բուն Աղվանքի մի շարք թեմեր և իրենով սկզբնավորելով Հայոց արևելից կողմանց, աղբյուրներում «Աղվանից» անվանված կաթողիկոսական աթոռը: Այդ է վկայում նաև նորաստեղծ առաջնորդության առաջին գահակալ Աբաս եպիսկոպոսի տիտղոսը «Կաթողիկոս Աղուանից, Լփնաց և Չողայ»[125]: Նշված տիտղոսը, բնականաբար, ևս վկայություն է հիշյալ թեմերի մեկ առաջնորդության մեջ միավորվելու փաստի առնչությամբ: Պարտավում հաստատված նորահաստատ առաջնորդության պաշտոնական լեզուն դարձավ հայերենը[126]:

«Այսպիսով, VI դարի երկրորդ կեսին Աղվանից եկեղեցին ազգային տեսանկյունից դարձավ առավել հայկական, քան աղվանական, չնայած որ այն ընդգրկում էր աղվանական տարացեղ բնակչություն ունեցող ծախափնյա լայնարձակ տարածքներ...»[127]: Եվ դա պետք է ընդունել որպես բնականոն երևույթ, հաշվի առնելով այն իրողությունը, որ ծախափնյա Աղվանքը, ինչպես նշվել է, աղվանական առանձին ցեղերով բնակեցված տարածք էր: Արաբական մատենագիր աղբյուրների հավաստմամբ Կուրի ծախափնյա Աղվանքում ապրում էին յոթանասունից ավելի ցեղեր: Պարսկահպատակ Աղվանից մարզպանության ստեղծման արդյունքում քաղաքական մեկ միավորի մեջ էին հայտնվել ծախակողմյան աղվանական ցեղերը և հայ ժողովրդի Հայոց արևելից կողմանց հատվածը, որ տնտեսական, քաղաքական ու մշակութային ավելի բարձր մակարդակի վրա էր գտնվում՝ ի համեմատ աղվանական ցեղերի, ուստի և նա էր որոշում աղվանական եկեղեցու դավանաբանական դիմագիծը: Ձախափնյա Աղվանքի եպիսկոպոսները Արցախի և Ուտիքի հայոց հոգևոր առաջնորդներին էին ճանաչում իրենց եկեղեցու գլուխ, իսկ վերջիններս՝ իրենց հերթին, նույնը ընդունում էին Ամենայն Հայոց կաթողիկոսին: Այդ առիթով շատ հստակ է արտահայտվել Մ.Օրմանյանը. «Քուռ գետից ծախ եւ Կովկասեան լեռնաշղթայից հարաւ ընկած՝ բուն Աղուանքում քրիստոնէական քարոզութեան հետեւանքով առաջացած առաջնորդութիւնը ենթարկւում էր Հայոց եկեղեցուն, իսկ առաջնորդարանը գտնւում էր Մեծ Հայքի Արցախ նահանգի տարածքում՝ Ամարասում. Պարսից Սասանեանները, 387թ. Հայաստանը Բիւզանդիայի հետ կիսելուց ետոյ, Մեծ Հայքի Արցախ եւ Ուտիք նահանգները միացրին բուն Աղուանքին և կազմեցին Աղուանից մարզպանութիւնը: Վարչական այս ինքնուրոյնութեան հիման վրայ, 551թ. Դուինի եկեղեցական ժողովից յետոյ Աղուանից մարզ-

125. Բ.Ուլուբաբյան, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Եր., 1998, էջ 110:

126. Տես. Ал.Акопян, стр. 138.
127. Տես նույն տեղում, 139-140.

պանության առաջնորդութիւնը վերածուեց կաթողիկոսութեան, որ ենթակայ էր Ամենայն Հայոց հայրապետին եւ եղել է Հայ եկեղեցու նուիրապետական կառոյցներից մէկը... Մի խօսքով միշտ եղել է հայկական երևոյթ եւ հասկացութիւն, աղուան ցեղի կամ ցեղախմբի հետ կապ է ունեցել անուղղակիօրեն»[128]:

128. Մ.Օրմանյան, Հայոց եկեղեցին, էջ 275:

ՀԱՅ ԱՂՎԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՅԱՆ ՇՐՋԱՆԸ

Հայ Աղվանից կաթողիկոսությունը VI-VII դարերում

Նորահաստատ Հայ Աղվանից կաթողիկոսական աթոռը շուրջ 44 տարի գլխավորեց Տեր-Աբաս արքեպիսկոպոսը (552-596թթ.), որը և հանդիսացավ «Աղվանքի պատմության» կաթողիկոսաշարքի առաջին ներկայացուցիչը: VI-VIIդդ. Աղվանից անվանված հայ կաթողիկոսությունը Աղվենի ժողովի սահմանած կանոնների կիրառմամբ աստիճանաբար ամրապնդում էր իր տնտեսական ու իրավական դիրքերը, ընդլայնում իր հոգևոր ու քաղաքական գործունեությունը և գնալով առավել մեծ դեր էր կատարում Արցախ-Ուտիքյան հայաշխարհի հոգևոր-լուսավորչական, ինչպես նաև քաղաքական կյանքում:

Հայ Աղվանից կաթողիկոսության հոգևոր քաղաքական սահմանները, այլ կերպ ասած, նրանում միավորված եպիսկոպոսությունների հիմնահարցը առայսօր հեռու է պատմագիտական սպառիչ վերլուծությունից՝ հիմնականում պահպանված սկզբնաղբյուրների սակավաթիվ լինելու պատճառով: Սակայն հիմնախնդրի կարևորությունն ու արդիականությունը շատ մեծ է և, թեկուզև աղբյուրների սակավության պայմաններում, պատմագիտական լուրջ քննության կարիք ունի:

Հարցին առաջին անգամ անդրադարձել է Մակար արքեպիսկոպոս Բարխուդարյանցը, որ սակայն բավական հպանցիկ է. «Արցախեան մէն մի գաւառ ունեցած է իւր սեպհական վանքը եւ իւր առանձին գաւառակալ առաջնորդը՝ միաբաններով հանդերձ, որ, նստելով իւր իսկ վանքում, հովուած է նոյն գաւառի բանաւոր հօտը, օրինակ՝ Դիզակ գաւառն՝ իբրեւ եպիսկոպոսարան, նախ՝ ունեցած է Դիզափայտ վանքը, ապա՝ Կաւաք, ապա՝ տիչ եւ յետոյ՝ Սպիտակ-Խաչ վանքը. Վարանդան՝ Ամարասը եւ Հիրհերի տաճարը եւ երբեմն՝ Քոչիզի շինութիւնը. Խաչենն՝ Մեծ-արանց կամ Մեծ-իրանաց վանքը եւ Մայրաքաղաք, Ըռստակ

գաւառն՝ Դատի վանքը, Ջրաբերդն՝ Ջրվշտկի կամ Եղիշ-առաքեալի վանքը, Մեծ Կողմանք կամ Կիւլստանն՝ նախ՝ Հոռեկայ, եւ ապա՝ Ամենափրկիչ վանքերը, արդմանն՝ նախ՝ Մլգնաբերդ եւ յետոյ՝ Թարգմանչաց վանքերը, Փառիսոսն՝ նախ՝ Փառիսոսի, ապա՝ Խորանաշատի եւ յետոյ՝ Չարեքայ վանքերը, Քուստի կամ Քաւս գաւառն՝ Շխմուրատայ եւ Վարագայ վանքերը եւ այլն, եւ այլն»[129]: Սակայն հարկ է նկատել նաև, որ հոգևորական-պատմագրի այդ հպանցիկ անդրադարձն, այնուամենայնիվ, որոշակի հնարավորություն է ընձեռնում ծավալել ուսումնասիրության շրջանակները նախանշած ուղղություններով:

Մ.Բարխուդարյանցի նշած. «Արցախեան մէն մի գաւառ ունեցած է իւր սեպհական վանքը եւ իւր առանձին գաւառական առաջնորդը՝ միաբաններով հանդերձ, որ, նստելով իւր իսկ վանքում, հովուած է նոյն գաւառի բանաւոր հօտը», բավական տրամաբանական է և կասկածի տեղիք չի տալիս այն տեսակետին, որ, իրապես, Արցախի գավառներից յուրաքանչյուրն ուներ իր հոգևոր կենտրոնը՝ եպիսկոպոսարանը, մանավանդ, որ Հայոց եկեղեցու թեմական բաժանումը հենց նույն սկզբունքով էր արված, մի հանգամանք, որի բավական հետաքրքիր վերլուծությունը, սկզբնաղբյուրների հիման վրա, կատարել են Նիկողայոս Ադոնցը[130], Բաբկեն Հարությունյանը[131] և ուրիշներ: Մ.Բարխուդարյանցի տեղեկությունը գավառական առաջնորդների վերաբերյալ հնարավորություն է տալիս ուսումնասիրելու նաև բուն Աղվանքի տարածքում գոյություն ունեցած և Հայ Աղվանից եկեղեցու ենթակայության տակ եղած եպիսկոպոսությունների հիմնահարցը, որ նույնպես կարևորություն է ներկայացնում հիմնախնդրի ըստ էության պարզաբանման բնագավառում:

Հիմնահարցի քննության ընթացքում, մեր կարծիքով, պետք է հաշվի առնվի նաև այն հանգամանքը, որ չնայած Հայ Աղվանից եկեղեցին, ըստ էության, հանդիսացել է Հայ եկեղեցու ընդհանուր կառուցվածքային տարրերից մեկը, սակայն, ինչպես որ իրավացիորեն նշել է

129. Մ.Բարխուտարեանց, Արցախ, էջ 155-156:
130. Նիկողայոս Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987:
131. Բաբկեն Հարությունյան, Հայոց եկեղեցու թեմական բաժանումը, ՊԲՀ, հմ. 2, 2000:

Նիկ.Ադոնցը. «Պատմական Հայաստանը ոչ մշակութապես, ոչ էլ քաղաքականապես միատարր ամբողջություն չէր, և նրա յուրաքանչյուր մասի բախտը պետք է քննության առնվի տվյալ մասի սեփական պայմաններում: Հայ եկեղեցին Հայաստանի մի մասում բոլորովին այն չէր, ինչ էր մյուս մասում. դա կախված էր նրան շրջապատող քաղաքական մթնոլորտից»[132]: Հետևաբար, հիմնախնդրի քննարկման հիմքում պետք է դրվի Արցախի քաղաքական ու վարչական կացությունն ու դրա փոփոխությունները պատմա-քաղաքական իրադարձությունների ազդեցության տակ և, իհարկե, նաև բուն եկեղեցու պատմության աստիճանական ընթացքի վրա:

Հիմնախնդրի քննարկման հիմնակետ պետք հանդիսանա նախ և առաջ Հայ եկեղեցական հաստատության կազմավորման հանգամանքներն ու սկզբունքները, որը բնականորեն իր ուղղակի անդրադարձներն է ունեցել նրա իսկ ենթակառույցը հանդիսացող Հայ Աղվանից կաթողիկոսության վրա: Ագաթանգեղոսը վկայում է, որ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո Գրիգոր Լուսավորչի կողմից կարգվում են քահանաներ, գավառական եպիսկոպոսներ, որոնց թիվը հասնում էր 400-ի[133]:

Ն.Ադոնցը Հայոց եկեղեցու թեմական բաժանման վերաբերյալ խնդրի քննության արդյունքում, վկայակոչելով մի շարք հիմնավոր փաստարկներ, իրավացիորեն նշել է, որ Լուսավորչի կողմից 400 եպիսկոպոսների ձեռնադրման տարբերակը մտցվել է հետագա խմբագրությունների ժամանակ և չի համապատասխանում իրականությանը: Ն.Ադոնցը, հենվելով Ուխտանեսի վկայության վրա, որտեղ նշում է 30 եպիսկոպոսական թեմերի ցանկը, նաև զուգահեռներ անցկացնելով V-VI դարերում գումարված եկեղեցական ժողովների արձանագրությունների տվյալների հետ, իրավացիորեն նշում է, որ «պետք է որոշ համապատասխանություն լինի իշխանական տների և եկեղեցական ներկայացուցիչների միջև: Մենք իրավունք ունենք սպասելու, որ ամենազդեցիկ նախարարական տոհմերը ունենային իրենց եպիսկոպոսու-

132. Նիկողայոս Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 359:
133. Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Եր., 1981, էջ 476:

թյունները և ընդհակառակը: Եվ իրոք, եպիսկոպոսների ցանկը համեմատելով նախարարությունների ցանկի հետ, գտնում ենք, որ բոլոր հզոր տոհմերը ունեին իրենց եկեղեցական ներկայացուցիչները»[134]:

Հիշյալ խնդրի պարզաբանմանը նպաստող վկայություն պետք է ընդունել Ստ. Օրբելյանի տեղեկությունները Գրիգոր Լուսավորչի կողմից 36 եպիսկոպոսական աթոռներ հիմնելու մասին[135], որին լրացնող ու հաստատող տվյալներ պարունակում է նաև «Գահնամակը»: Ինչպես նշում է Նիկ.Ադոնցը, IV դարի սկզբին եպիսկոպոսական թեմեր հավանաբար ունեին ազդեցիկ նախարարական տոհմերը: Եվ քանի որ Գրիգոր Լուսավորչին Կեսարիա ուղեկցողները նույնպես Հայոց ամենաազդեցիկ նախարարական տոհմերի ներկայացուցիչներն էին, որոնց թվում էին նաև «Ուտիացւոց, Գարդմանացւոց և Ծավդէացւոց իշխանները»[136], ուստի անկարելի է, որ նրանք չունենային իրենց եպիսկոպոսական աթոռները:

Ստ. Օրբելյանի հիշատակած 36 եպիսկոպոսությունների ստեղծման վկայության, ինչպես նաև «Գահնամակի» և այլ սկզբնաղբյուրների քննության արդյունքում Բ.Հարությունյանը, թվարկելով 36 եպիսկոպոսությունները նշել է, որ «քրիստոնեության պետական կրոն հռչակման ժամանակներում Մեծ Հայքի կաթողիկոսը հաստատեց 36 եպիսկոպոսական աթոռներ, որոնց հիմքում դրված էր երկակի սկզբունք՝ թագավորության, ըստ աշխարհների վարչական բաժանումը, և ավատականության ուղին բռնած Հայաստանի առավել նշանավոր իշխանական ընտանիքների եպիսկոպոսական թեմերի իրավունք տալը»[137]:

Սկզբնաղբյուրների համադրման ու քննարկման արդյունքում Բ.Հարությունյանը 36 եպիսկոպոսությունների շարքում իրավացիորեն դասում է նաև Ծավդեից եպիսկոպոսին, որը ներկայացնում էր Մեծ Հայքի Արցախ նահանգը և Ուտիքի եպիսկոպոսին[138]: Սակայն հարկ է նկատել, որ սկզբնապես հաստատված այդ 36 եպիսկոպոսությունները,

134. Ն.Ադոնց, էջ 411:
135. Ստ. Օրբելյան, էջ 25:
136. Ագաթանգեղոս, էջ 446:
137. Բ.Հարությունյան, Հայոց եկեղեցու թեմական բաժանումը, ՊԲՀ, 2000թ., հմ. 2, էջ 126:
138. Տես՝ նույն տեղում, էջ 123:

բնականաբար, քրիստոնեության ավելի հիմնավոր հաստատմանը զուգընթաց, չէին կարող մնալ նույնը, ինչպես թվաքանակի, այնպես էլ տարածքային տեսանկյունից: Ինչպես իրավացիորեն նշել է Բ.Հարությունյանը, որ «եպիսկոպոսական աթոռների հաստատման հիմքում դրված էր երկակի սկզբունք՝ թագավորության, ըստ աշխարհների վարչական բաժանումը», ապա պետք է այդ հիմքի վրա նկատել նաև, որ վարչական բաժանումները պատմաքաղաքական իրադարձությունների ազդեցության տակ մշտական փոփոխություններ են կրել, մասնավորապես կամ ավելի մանրատվել, և կամ վարչական այս կամ այն միավորին կցվել, մի հանգամանք, որն ուղղակիորեն անդրադարձել է նաև եկեղեցական հաստատության վրա: Այսինքն, կարելի է վստահաբար ասել, որ քաղաքական հանգամանքների բերումով գոյություն ունեցած եպիսկոպոսությունները երբեմն տրոհվել են, իսկ երբեմն էլ պարզապես ստեղծվել են նորերը և բնականաբար այս ամենի արդյունքում նախապես հաստատված եպիսկոպոսական թեմերի քանակը աստիճանաբար ավելացել է, ինչն էլ իր հերթին հաստատում է Նիկ.Ադոնցի այն տեսակետը, որ 400 եպիսկոպոսությունների ձեռնադրման տարբերակը մտցվել է հետագա խմբագրությունների ժամանակ:

Հիմնախնդրի պարզաբանման տեսանկյունից մեծ կարևորություն են ներկայացնում նաև եկեղեցական ժողովների արձանագրությունները, վիմագիր աղբյուրները, այդ թվում տապանաքարերը: Վիմագիր աղբյուրների առումով արժանահիշատակ գործեր են հանդիսանում Սարգիս.արքեպիսկոպոս Ջալալյանցի[139], Մակար արքեպիսկոպոս Բարխուդարյանցի[140], Ս. Բարխուդարյանցի[141], Ս.Կարապետյանի[142] աշխատությունները:

«Գիրք թղթոցում» պահպանվել է Հովհաննես Բ. Գաբեղենացու «Թուղթ զոր Տէր Յովհաննէս հայոց կաթողիկոս և այլ եպիսկոպոսունք,

139. Ս.Ջալալյանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս Ա, Տփղիս, 1842, մաս Բ, Տփղիս, 1858 :
140. Մ.Բարխուդարյանց, Արցախ, Աղվանից երկիր և դրացիք, Եր., 1999:
141. Ս.Բարխուդարյանց, Դիվան հայ վիմագրության, պրակ V, Եր., 1982:
142. Ս. Կարապետյան, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, Եր., 1997: Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Եր., 1999: Հյուսիսային Արցախ, Եր., 2004:

առ Աղուանից եպիսկոպոսունս արարին»[143] վերնագրով նամակը, որն ուղղված էր. «Աբասու Պարտաւայ եպիսկոպոսի, Մովսէսի Բախաղատու եպիսկոպոսի, Գրիգորի Կապաղականու եպիսկոպոսի, Հոռոմակայ Ամարասու եպիսկոպոսի, Տիմաւթէի Բաղասականու եպիսկոպոսի, Ամբակումայ Շաքիոյ եպիսկոպոսի, Յոհանակայ Գարդմանաց եպիսկոպոսի, Ղևոնդի Մեծկուանց եպիսկոպոսի»: Նույն գրությունը պահպանվել է նաև Մ.Կաղանկատվացու աշխատության մեջ, սակայն պետք է նկատել, որ երկրորդ տարբերակում Աբասը հիշատակվում է ոչ թե որպես «եպիսկոպոս», այլ «կաթողիկոս»[144]: Տարբեր աղբյուրների հաղորդած տեղեկությունները թույլ են տալիս եզրակացնելու, որ Աղվանից եկեղեցին Հայոց կաթողիկոսության հարաբերությամբ ճանաչվում էր որպես ենթակա թեմ և ոչ առանձին կաթողիկոսություն: Ինչ վերաբերում է Մ.Դասխուրանցու հիշատակությանը, ապա պետք է ենթադրել, որ այն պարզապես հետագայում մտցված տարբերակ է, քանի որ Աբասը տակավին չէր ձեռնադրվել Աղվանից կաթողիկոս: VII և հետագա դարերի հայկական պատմական աղբյուրները հաղորդում են, որ Աղվանից կաթողիկոսները իրենց ձեռնադրությունը ստանում էին Հայոց կաթողիկոսից՝ սկսած Գրիգոր Լուսավորչից:

Ս.Երեմյանը, հենվելով Հովհաննես Բ Գաբեղենացու կողմից հիշատակված անունների վրա, գտնում է, որ Աղվանից կաթողիկոսությունը հիշյալ ժամանակաշրջանում բաղկացած էր 8 եպիսկոպոսական թեմերից[145]: Սակայն Բ.Ուլուբաբյանը վիճարկելով հիշյալ կարծիքը, իրավացիորեն նշել է, որ Հովհաննես Գաբեղենացին պարզապես չի հիշատակել Աղվանքի եպիսկոպոսական բոլոր թեմերի առաջնորդների անունները: Առաջադրված տեսակետը նա հիմնավորում է, մեջբերելով նույն ժամանակաշրջանին պատկանող այլ աղբյուրներում հիշատակված Մեծառանից, Գտչա, Չողի և այլ առաջնորդանիստ կենտրոնները[146]:Հայոց կաթողիկոսի Աղվանքի եպիսկոպոսներին ուղղված

143. «Գիրք թղթոց», էջ 81-84:
144. Մ.Կաղանկատվացի, էջ 126:
145. С.Т. Еремян, Экономический и социальный строй Албании III-VII веках, в кн. „Очерки истории СССР III-IX веков", Москва, 1958, стр. 324.
146. Բ.Ուլուբաբյան, Հայոց Արևելից եկեղեցին և մշակույթը, էջ 117:

վերոնշյալ նամակի հիմնական նպատակն էր՝ զգուշացնել նրանց իրենց թեմերը թափանցած նեստորականներին և քաղկեդոնականներին դիմագրավելու համար[147]:

Կաթողիկոսության մեջ ընդգրկված հիշյալ եպիսկոպոսությունների միաբանությունը նշանակալից դեր խաղաց քաղկեդոնականության և տարատեսակ աղանդների դեմ տարվող պայքարում: Ինքը՝ Տեր-Աբասը, աղբյուրներում հիշվում է որպես այլադավանության դեմ աննկուն պայքարող հոգևոր առաջնորդ:

Չնայած ձեռնարկված միջոցառումներին, այնուհանդերձ, VI դարի կեսերին քաղկեդոնականությունը որոշակիորեն թափանցել էր Հայոց արևելից կողմերը և Սյունիք, որը և մեծ անհանգստություն էր առաջ բերել Հայոց եկեղեցում: Այդ մասին են վկայում Հայոց Հովհաննես Բ Գաբեղենացու նամակները՝ ուղղված Աղվանքի կաթողիկոս Աբասին[148] և Սյունյաց եպիսկոպոս Վրթանեսին[149]:

Հայոց Հովհաննես Բ Գաբեղենացի կաթողիկոսը Աղվանքի հայոց կաթողիկոս Տեր Աբասին հետևյալն էր գրում. «Քանզի եհաս մեզ լուր դժնդակ համբաւու, եթէ են ոմանք գայլք յափշտակողք զգեստուք ոչխարաց, որ եկին յաշխարհդ ձեր ի վանաց պղծոյն Պետրոսի, որ անուամբ աղքատասէրք կոչին և գործովք քրիստոսատեացք և ուրացողք զսուրբ երրորդութիւնն, զչար որոմն անիծելոյն Նեստորի և զժողովոյն Քաղկեդոնի անարգելաբար սերմանեն ի հոգիս անմեղաց թիւրելով զնոսա յուղղափառ հաւատոյն՝ մատնել ի յաւիտենական կորուստն»[150]:

Այնուհետև կաթողիկոսը զգուշացնում է՝ ամուր ու անխախտ պահելու Նիկիայի Ա տիեզերական ժողովի ընդունած կանոնների հիման վրա Ս. Գրիգոր Լուսավորչի, Կոստանդնուպոլսի ու Եփեսոսի Բ և Գ տիեզերական ժողովների դավանած վարդապետությունն ու կանոնները: Աբաս կաթողիկոսը, Հայոց կաթողիկոսի թղթից զգաստացած, անմիջապես արգելեց ու վտարեց երկրամասից նեստորականության ու

147. Տես՝ Նույն տեղում:
148. Մ.Կաղանկատվացի, էջ 122:
149. Ստ.Օրբելյան, էջ 92:
150. Մ.Կաղանկատվացի, էջ 122-123:

քաղկեդոնականության քարոզիչներին: Նրանցից Թովմաս անունով վանականը դիմում է Երուսաղեմի Հովհաննես պատրիարքին, խնդրելով՝ իրեն պաշտպանելու նպատակով գրություն ուղարկել Աղվանքի Աբաս կաթողիկոսին: Պատրիարքը կատարում է նրա խնդրանքը և մի ընդարձակ գրությամբ զգուշացնում է Աբասին՝ հեռու մնալ մոլորված հավատացյալներից: Հովհաննես եպիսկոպոսապետի նամակից, որ հետևյալ նախաբանով է սկսված. «Սրբոյ եւ աստուածասիրի երանելոց հոգեւոր եղբօր եւ պաշտօնակցի մերոյ Աբասայ եպիսկոպոսի Աղուանից ի Յոհաննէ եպիսկոպոսապետէ Երուսաղեմի»[151], կարելի է նկատել, որ չնայած 552 թվականին, քաղաքական պայմանների թելադրանքով Հայոց արևելից եկեղեցին հռչակվել էր որպես կաթողիկոսություն, այնուհանդերձ, ինչպես Ամենայն Հայոց կաթողիկոսի, այնպես և Հայոց եկեղեցու մյուս թեմերի կողմից այն շարունակվում էր ընդունվել որպես Հայոց եկեղեցու հոգևոր թեմերից մեկը: Նամակը, որի էությունը դավանաբանական հարցերն էին, ուղղված էր հայ եկեղեցու դեմ, այն համարվում էր հերձված, որը «ընդ բազում հերձուածս միաւորի»[152]: Այնուհետև, շարադրելով իրենց դավանանքի սկզբունքները[153], խորհուրդ էր տալիս մերժել հայ եկեղեցու դավանանքը:

Այստեղից կարելի է նկատել, որ ծավալված դավանաբանական պայքարի նպատակը մեկն էր՝ մասնատել Հայոց միասնական եկեղեցին և Հայոց արևելից կողմանց կամ Աղվանից եկեղեցին դուրս բերել Հայոց եկեղեցու ազդեցությունից: Այս էր Թումաս վանականի և Երուսաղեմի Հովհաննես եպիսկոպոսապետի նամակի բովանդակության առանցքը: Դավանաբանական այդ պայքարում, ինչպես հաղորդում է Մովսես Դասխուրանցին, ի վերջո հաղթանակով է դուրս գալիս Հայոց եկեղեցին: Աղվանից Աբաս եպիսկոպոսը «հալածեաց ի տանէ Աղուանից զպիղծ վարդապետս աղանդոյն այնորիկ՝ զԹոմասն կեղծաւոր և զփսաղտն եղիա և զԲնոտն և զԻբաս և զայլսն ընդ նոսա, զնմանողս նոցին արար տարաբնակ ի հեռաւոր վայրս: Եւ այնու եղև խաղաղութիւն ուխտի եկեղեցւոյ ի ժամանակին յայնմիկ ողորմութեամբ տեառն ամենակալի.»[154]:

Այսպիսով, VI դարի երկրորդ կեսին Հայոց եկեղեցու միությանը մի կողմից պառակտման վտանգ էր սպառնում, իսկ մյուս կողմից՝ աստիճանաբար վատթարանում էր երկրի քաղաքական վիճակը: Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող Արևելյան Հայաստանում, հետևաբար նաև Արցախում և Ուտիքում պարսիկները ուժեղացրին ազգային և մանավանդ կրոնական հալածանքները: Նպատակը կրկին նույնն էր՝ հավատափոխություն, ինչը կրկին հանդիպեց հայ հոգևորականության ու նախարարների համառ դիմադրությանը: Քաղաքական պայմաններից թելադրվող և 572թ. սկսված համաժողովրդական շարժումը գլխավորեցին Վարդան Մամիկոնյանը («Կարմիր Վարդան») և Հովհաննես Բ Գաբեղենացի կաթողիկոսը: Ելնելով իր սեփական շահերից՝ Բյուզանդական կայսրությունը միջամտեց, որի արդյունքում դրանք վերածվեցին պարսկա-բյուզանդական մոտ քսան տարի տևած պատերազմի:

VI դարի երկրորդ կեսին Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև ծավալված ռազմա-քաղաքական բախումները աղետաբեր էին հայ ժողովրդի համար նախ և առաջ այն պատճառով, որ պատերազմական գործողությունների հիմնական թատերաբեմը Հայաստանն էր: Սակայն երկու հակամարտող պետությունների միջև ժամանակ առ ժամանակ ընդհատվող պայքարն ու հաստատված զինադադարը նույնպես աղետաբեր էին Հայաստանի համար, քանի, որ այդ ընթացքում էլ իրականացվում էին տարածքային բաժանումներ, որոնք ուղեկցվում էին վարչաքաղաքական, հարկային ու հոգևոր ճնշման ուժեղացմամբ:

591թ. Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև տեղի ունեցավ Հայաստանի երկրորդ բաժանումը: Հայկական աղբյուրները պահպանել են մանրամասն տեղեկություններ վարչաքաղաքական փոփոխությունների վերաբերյալ, որոնց համաձայն 591թ. բաժանումը Բյուզանդիային տեր դարձրեց Հայաստանի ամբողջ արևմտյան ու կենտրոնական նահանգներին՝ մինչև Հրազդան գետը և Պարսկաստանի հպատակության տակ թողեց միայն հյուսիս-արևելյան նահանգները՝ Սյունիքը, Արցա-

151. «Արարատ», 1896, մայիս, Հավելված, էջ 252-256:
152. Նույն տեղում, էջ 252:
153. Նույն տեղում:

154. Մ.Կաղանկատվացի, էջ 126:

խը, Ուտիքը, Շարուրը՝ Դվինի հետ, հարավ-արևելքում Վասպուրական նահանգը: Այսինքն՝ պարսկա-բյուզանդական սահմանագիծը անցնում էր հյուսիսային հատվածում՝ Սևանի ավազանով, հյուսիս-արևելյան մասից՝ Աղստև և Ջորագետ գետերի ավազաններով հասնում էր մինչև Կուր գետի հովիտը, այնուհետև այնտեղից հեռանալով, ձգվում մինչև Աղանդուն (Թերեք) գետի հովտի վերին շրջանը[155]:

Երկարամյա պատերազմներին հաջորդած զինադադարից հետո, ինչպես արդեն նշվել է, դարձյալ հայ ժողովրդին վիճակված չէր վայելելու խաղաղության պտուղները, քանի որ թե՛ Բյուզանդիան և թե՛ Պարսկաստանը Հայաստանի հարցում մշակել էին նույնանման ծրագիր, որը բովանդակում էր հայ իշխանական տների թուլացումն ու վտարումը և Հայոց եկեղեցու ենթարկեցումը: Բյուզանդիան ակտիվորեն շարունակում էր Հայոց եկեղեցին մասնատելու քաղաքականությունը: Հիշյալ նպատակին հասնելու քայլերից մեկը դարձավ հակաթոռության ստեղծումը:

592-593 թվականներին Կոստանդնապոլսում գումարվեց ժողով, որին հրավիրվել էին հայ հոգևորականներ, առաջարկվեց ընդունել Քաղկեդոնի դավանությունը: Հունաց բաժնի եկեղեցականների մի մասը ընդունեց այն[156]:

Սակայն Մովսես կաթողիկոսը, որ «ամենևին ոչ լինէր ի նոսա հուպ», դիմեց հայ հոգևորականությանը՝ հաստատուն մնալու իրենց նախնիների հավատքին[157]: Կայսրի հրամանով Ավան գյուղում ստեղծվեց կաթողիկոսական նոր կենտրոն, և Հովհան եպիսկոպոսը նշանակվեց նորաստեղծ աթոռի կաթողիկոս[158]:

Հայաստանի արևելյան մասին տիրացած Սասանյան Պարսկաստանի ներքին ու արտաքին քաղաքականության մեջ ևս մեծ տեղ ու-

155. Ն.Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 261: Վ.Իսկանյան, Հայ-բյուզանդական հարաբերությունները VII դարում՝ արաբական առաջին արշավանքների ժամանակ, ՊԲՀ, Եր., 1971, հմ.4, էջ 61:
156. Սեբեոս, էջ 91: Տես նաև՝ Աբր. Ջամինեան, Հայոց եկեղեցու պատմութիւն, Նոր Նախիջևան, 1908, էջ 110:
157. Սեբեոս, էջ 91:
158. Նույն տեղում:

ներ ինչպես Հայ Առաքելական եկեղեցու, այնպես և նրա դավանանքի նկատմամբ վերաբերմունքը: Հարկ է նշել, որ հիշյալ վերաբերմունքը ունեցել է տարբեր դրսևորումներ՝ քաղաքական պայմաններից կախված: Համենայնդեպս, տարվող քաղաքականության հիմնական նպատակը Հայ Առաքելական և բյուզանդական ուղղափառ եկեղեցիների միջև գոյություն ունեցող հակասությունների օգտագործումն էր:

591 թվականից մինչև 617 թվականը պարսկահպատակ Հայաստանի մարզպան էր նշանակվել Սմբատ Բագրատունին[159], որի գործունեությունը ուղղված էր հայրենի երկրի քաղաքական ու կրոնական գործերի բարեկարգմանը: Մինչև այդ 606 թվականին Դվինում գումարվեց եկեղեցական ժողով, որտեղ մշակվեցին մի շարք կանոններ՝ ուղղված քաղկեդոնականությանը հարած հոգևորականների դեմ[160]:

607թ. Դվինում գումարվեց նոր ժողով, որին ներկա էր նաև ծայրամասային թեմերից Սյունիքի եպիսկոպոսը, սակայն բացակայում էր Հայ Աղվանից կաթողիկոսը: Այս ժողովում կաթողիկոս ընտրվեց Աբրահամ Աղբաթանեցին[161]: Հայ Աղվանից կաթողիկոսի բացակայությունը Դվինի եկեղեցական ժողովին ունեցել է տարբեր մեկնաբանություններ, այդ թվում և այն, թե իբր այդ շրջանում պառակտում էր նկատված և Հայ Աղվանից եկեղեցին դուրս էր եկել Հայոց եկեղեցու հաստատությունից: Ուխտանես եպիսկոպոսը սույնի վերաբերյալ գրում է. «Իսկ Կաթուղիկոսն Աղուանից, որ յայնժամ Արք Եպիսկոպոս էր Կաթուղիկոսին Հայոց, հակառակութեամբ ինչ իրիք ո՛չ եկն ի ժողովն»[162]: Ասվածից, բնականաբար հասկանալի է, որ Հայ Աղվանից կաթողիկոսը՝ «Արքեպիսկոպոսը» չի ներկայացել ժողովին և չներկայանալու պատճառներն էլ հայտնի չեն կամ, համենայնդեպս, նշված չեն: Այսպես, վերոհիշյալ մեկնաբանությունը հաստատող որևէ փաստարկ տակավին չի հանդիպել: Ավելին, առավել շատ հանդիպում են այնպիսի վարկած-

159. А.Н. Тер-Гевондян, Армения и Арабский халифат, Ер., 1977, стр. 19.
160. Էդ.Դանիելյան, Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ Առաքելական եկեղեցին, էջ 94:
161. Ուխտանես, էջ 61: Տես նաև՝ Լեո, հ.2, էջ 231: Մ.Օրմանյան, Հայոց եկեղեցին, էջ 63:
162. Ուխտանես, էջ 61:

ներ, որոնք մատնանշում են, որ Հայ Աղվանից կաթողիկոսի ժողովին ներկա չգտնվելը պատճառ էր քաղաքական խառը իրադրության և քաղկեդոնականության տարածման վտանգին: Համենայնդեպս, այս նույն տեսակետն է հաղորդում Աբրահամ Ջամինեանը, սակայն անհասկանալիորեն դրանից եզրակացնելով, թե իբր Աղվանից եկեղեցին բաժանված էր Հայոց եկեղեցուց[163]: Ըստ նրա՝ «դավանության թղթեր» են փոխանակում «Հայոց ու Աղվանից մէջ, մինչև որ վերջապես նրանք դաւանութեամբ ու ձեռնադրութեամբ միանում են Հայոց հետ»[164]: Բացի այդ, եթե Աղվանից հայ եկեղեցին դավանապես բաժանված լիներ Հայոց եկեղեցուց, ապա անտրամաբանական է հնչում այն փաստը, որ Դվինի՝ 607թ. ժողովի կողմից ընդունվեց այնպիսի կարգ, որի համաձայն Հայոց կաթողիկոսը կարգվում է «Պատրիարգ, և զԱղուանից՝ Արք եպիսկոպոս, և զՎրացն՝ Մետրապոլիտ»[165]:

Մշակվեց և ընդունվեց նաև մի կանոնակարգ, համաձայն որի Աղվանից կաթողիկոսների նախնական ընտրությունը կատարվելու էր Աղվանից բոլոր թեմերի ներկայացուցիչների մասնակցությամբ կայացվող ժողովում, որից հետո նորընտիր կաթողիկոսը Աղվանքի հոգևոր ու աշխարհիկ վերնախավի ներկայացուցիչների ուղեկցությամբ պետք է մեկներ Ամենայն Հայոց կաթողիկոսի նստավայրը և արժանանար հայոց հայրապետի կողմից օծման շնորհին[166]: Ժողովի կողմից ընդունված հիշյալ կանոնակարգի լուսաբանումը լուրջ հնարավորություններ է ընձեռնում ճշգրտորեն մեկնաբանելու Ամենայն Հայոց կաթողիկոսության և Հայ Աղվանից կաթողիկոսության հարաբերությունը, մի հիմնախնդիր, որն առ այսօր պատմագիտության մեջ տեղ գտած հակասական տեսակետների պատճառով թերևս գիտական փաստերով նոր հիմնավորումների կարիք ունի:

Նշված ժամանակաշրջանում, մասնավորապես 608թ., վրաց եկեղեցին անջատվեց հայ եկեղեցուց, որի հիմնական պատճառը նրա կողմից քաղկեդոնականության ընդունումն էր[167]: Իսկ Հայոց եկեղեցում շարունակվեց պայքարը ինչպես քաղկեդոնականության, այնպես էլ տարատեսակ դավանանքային զեղումների դեմ: Ինչ վերաբերում է Աղվանից կոչված Հայ եկեղեցուն, ապա որպես Հայոց եկեղեցու մի թև, թերևս կարողացավ հաղթահարել դավանանքային հակամարտությունը:

Մ.Կաղանկատվացու վկայությամբ Տեր Աբասին 596 թվականին հաջորդել էր Տեր Վիրոն, որը ձեռնադրություն էր ստացել Հայոց Աբրահամ կաթողիկոսից[168]: Հայոց կաթողիկոսից ձեռնադրության ընդունումը ևս փաստում է այն մասին, որ Հայ Աղվանից կաթողիկոսությունը շարունակում էր մնալ Հայոց եկեղեցական հաստատության մեջ:

VII դարի առաջին տասնամյակում պարսկա-բյուզանդական քաղաքական պայքարի արդյունքում Սասանյաններին հաջողվեց որոշակի առավելությունների հասնել: Նման պայմաններում Խոսրով Փարվեզի դիրքորոշումը Հայոց եկեղեցու նկատմամբ վերստին փոփոխության ենթարկվեց: Այդ ուղղությամբ նրա կողմից տարվող ակտիվ քաղաքականության ելակետը դարձավ նվաճված երկրների քրիստոնեական եկեղեցիների ներկայացուցիչների ժողովի հրավիրումը Տիզբոնում: Ժողովի գումարման տարեթվի վերաբերյալ կան տարակարծիքներ[169]: Հարցի մանրակրկիտ ուսումնասիրությունից և բազում աղբյուրների համադրումներից հետո Էդ. Դանիելյանը այն կարծիքն է հայտնել որ. «Տիզբոնի ժողովը հրավիրվել էր 614 թվականից ոչ շուտ և 617 թվականից ոչ ուշ: Ուրեմն, տրամաբանական ու ընդունելի է Մ. Օրմանյանի առաջարկած ժամանակաշրջանը. «Պետք է որ ժողովը գումարուած ըլլայ 616-ին, կամ առնուազն 615-ին»[170]:

Սեբեոսի հաղորդմամբ ժողովին ներկա էին հայ հոգևորականության ներկայացուցիչներ, այդ թվում. «զՎիրոյ զԱղուանից կաթուղիկոսն, և

163. Աբր. Ջամինեան, Հայոց եկեղեցու պատմութիւն, էջ 115:
164. Նույն տեղում:
165. Ուխտանես, էջ 120:
166. Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ 240, վավ. 210, էջ 10բ-11ա:

167. Տես Հ.Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Եր., 1978, էջ 580:
168. Մ.Կաղանկատվացի, էջ 343:
169. Տես Ե.Գ.Տեր-Մինասյան, Պատմաբանասիրական հետազոտություններ, էջ 45-58:
170. Էդ.Դանիելյան, նշվ.աշխ., էջ 102: Տես նաև՝ Մ.Օրմանյան, Ազգապատում, հ.Ա, էջ 652-655:

այլ բազում եպիսկոպոսունք ի Յունաց կողմանէ, և իշխանք, որք, եկեալ էին ի ծառայութիւն Պարսից թագաւորին»[171]:

Հիշյալ ժամանակաընթացքում Հայ Աղվանից Վիրո կաթողիկոսը, աղբյուրների հավաստմամբ, որպես գերի, գտնվում էր Պարսկաստանում և չի բացառվում, որ պարսից արքայից արքան իր քաղաքական նպատակների համար նրան էլ մասնակից աներ ժողովին: Քննարկվող հարցի տեսանկյունից էականը այն է, որ Հայ Աղվանից կաթողիկոսը նույնպես մասնակցել է Տիզբոնում հրավիրված ժողովին, որի հրավիրման բուն նպատակը քաղկեդոնականության դեմ պայքարը ակտիվացնելն ու այն իսպառ արգելելն էր: Պարսից արքա Խոսրով Բ Փարվեզը քաղկեդոնականներին դարձի բերելու համար անգամ պատիժ էր սահմանել[171]: Սասանյանների հովանավորությամբ ու նախաձեռնությամբ կայացած Տիզբոնի ժողովի որոշումը բնականաբար բխում էր նրանց իսկ քաղաքական շահերից. քրիստոնյա եկեղեցիների միջև դավանանքային տարաձայնությունների առկայության պայմաններում Պարսից արքունիքը հանդես եկավ Հայ եկեղեցու «հովանավորի» դերում, որն էլ անշուշտ, ժամանակավոր երևույթ էր: Այդ մասին բավական արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Սեբեոս պատմիչը:

Հայ Աղվանից Վիրո կաթողիկոսը, ըստ աղբյուրների, գահակալել է 33 տարի և որից մոտ 25-ը՝ տաժանակրության մեջ, որի պատճառն այն էր, որ նա պարսից արքունիքի կողմից մեղադրվում էր հակապարսկական ապստամբությանը մասնակցելու մեջ[173]: Սեբեոսի հաղորդմամբ, բյուզանդական Մորիկ կայսրը, Հայոց եկեղեցուն հարված հասցնելու վրեժխնդրությամբ գրում է պարսից Խոսրով Փարվեզին. «Ազգ մի խոտոր և անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում և պղտորեն: Բայց եկ, ասէ, ես զիմս ժողովեմ և ի Թրակէ գումարեմ. և դու զքոյդ ժողովէ և հրամայէ յԱրևելս տանել»[174]:

Այդ մասին տեղեկանալով, Արևելյան Հայաստանում, այդ թվում և

171. Սեբեոս, էջ 150-151:
172. Նույն տեղում: Տես նաև Աբր.Զամինեան, Հայոց եկեղեցու պատմութիւն, էջ 115:
173. Նույն տեղում, էջ 150:
174. Սեբեոս, էջ 86: Տես նաև Մ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, էջ 92:

Հայոց արևելից կողմերում ապստամբություն է բռնկվում ու այն ճնշելու նպատակով ուղարկվում է պարսկական մեծաքանակ զորքը: Հայերի նկատմամբ դաժան հաշվեհարդարից հետո պարսիկները գերի են վերցնում Հայոց արևելից հոգևոր առաջնորդին. «... ամս քսան և հինգ ի դիպահոջ առ դրանն Խոսրովու՝ յանցական գտեալ զնա ընդ ապստամբողս մեծամեծացն իշխանաց աշխարհիս Աղուանից. որք ապստամբեցան յարքայէն Պարսից և կորեան անկան բազումք ի նոցանէ...»[175]: Ամենակարող Աստծո նախախնամությամբ, կարծես միայն, Տեր Վիրոն ազատություն ստացավ այնպիսի մի ժամանակ, երբ Հայոց արևելից երկիրը զգում էր նրա պես մի գործունյա և հայրենասեր հովվապետի կարիքը: Պատմիչը գովեստով է խոսում Հայոց Աղվանից կաթողիկոսի մասին. «այր հանճարեղ և իմաստուն, զօրաւոր ի բանս իմաստութեան, և լեզու նորա իբրև զգրիչ երագագրի ի պատմութիւնս խօսից խորհրդականաց և ի մտավարժութիւն գովութեանց թագաւորաց և մեծամեծաց, նա և խոնարհախօսութիւն նորա քաղցրալուր ռամկաց և խառնիճաղանճ ժողովրդոց»[176]:

Վերադառնալով հայրենիք հոգևոր առաջնորդը, սակայն ականատես է դառնում նրա նոր տառապանքներին՝ կապված խազարական հորդաների արշավանքի հետ, որ գլխավորում էր Ջեբու խաքանի որդի Շաքը: Արշավանքը տեղի է ունեցել 628 թվականին: Տփղիս մեծ ու վաճառաշահ քաղաքի ավերումից ու կողոպուտից հետո խազարները շարժվեցին դեպի Հայոց արևելից կողմերը: Ջեբու խաքանի հրահանգը հետևյալն էր, որ եթե այդ երկրների իշխողները հպատակություն հայտնեն և կամովին անցնեն նրանց ենթակայության տակ, ապա նրանց կթույլատրվի ապրել ու ծառայել իրենց, իսկ հակառակ դեպքում, չեն խնայի 15 տարեկանից վեր ոչ մեկին[177]:

Պարտավում գտնվող պարսիկ մարզպանը փախչում է Պարսկաստան և 25-ամյա բանտարկությունից նոր վերադարձած Աղվանից Վիրո կաթողիկոսը միայնակ է մնում այս նոր արհավիրքի դեմհանդի-

175. Մ.Կաղանկատվացի, էջ 150:
176. Նույն տեղում, էջ 150:
177. Նույն տեղում, էջ 154:

ման: Երկիրը կոտորածից ու ոչնչացումից փրկելու մտատանջությունն էր պատել Հայոց արևելից հոգևոր առաջնորդին և նա նախապես փորձեց խուսափողական պատասխաններով ձգձգել պատասխանը, որպեսզի կարողանար շահած ժամանակաընթացքում ժողովրդի փրկության համար կոնկրետ քայլեր ձեռնարկել:

Պատմիչի վկայությամբ Վիրոն ապաստանել էր Կողթ-Ագարակ կոչված ավանում, որը հավանաբար Արցախի Կողթ գավառի կենտրոնատեղին էր: Սակայն «Եւ ոչ արգելին զարշաւանս թշնամւոյն վիմախառն, ծորախիտ ապառաժք լերանց Արցախական ամուր գաւառացն. այլ գործեցին մեղք մեր առաջի նոցա զդժուարինսն ի դիւրինս և առանց գայթակղության էին գնացք ընթացից երիվարաց նոցա ի վերայ գլխոց լերանց»[178]: Հասնելով կաթողիկոսին, թշնամին վերստին առաջադրեց իր նախկին պահանջները: Վիրո կաթողիկոսը, փրկության այլ ելք չգտնելով, Արցախի Չարաբերդ-Զրաբերդում հավաքված երկրի իշխանավորներին, գավառապետերին, գյուղապետերին, հոգևոր դասի ներկայացուցիչներին՝ առաջարկում է կատարել զավթիչների պահանջը. «իւրաքանչիւր ոք ի ձենջ ըստ կարի իւրում բերցէ արծաթ և ոսկի և հանդերձս»[179]: Եվ, որպես օրինակ հայրենակիցներին, Վիրոն առաջինը սեփական ունեցվածքի լավագույն իրերը բաժին հանեց թշնամուն, իսկ այնուհետև մեծամեծերից կազմված մի պատվիրակության առաջնորդելով ներկայացավ Շաթին, որը իր մեծաքանակ բանակով գտնվում էր Ուտիքի դաշտային մասում՝ Պարտավից հյուսիս, Տրտու գետի հովտում: Վիրո կաթողիկոսը արժանանում է Շաթի բարեհաճո վերաբերմունքին, երբ ժողովրդի անունից հպատակություն է հայտնում խազարների խաքանորդուն: Շաթը իր հերթին բարեկամության երդում է տալիս Հայ Աղվանից կաթողիկոսին, որից հետո նրան մեծ պատվով ուղեկցում Պարտավի իր նստավայրը: Ստեղծված քաղաքական ծանր պայմաններում հոգևոր առաջնորդի իր ժողովրդին մատուցած մեծագույն ծառայություններից մեկն էլ պետք է համարել այն, որ նրան հաջողվեց մեղմ ու իմաստուն խոսքերով համոզել Շաթին, որպեսզի վերջինս ազատ արձակի իր զորքերի կողմից գերված բոլոր մարդկանց:

178. Նույն տեղում, էջ 157:
179. Նույն տեղում, էջ 158:

Բ. Ուլուբաբյանը, հիմք ընդունելով Ն. Ակինյանի Մ. Կաղանկատվացու երկի համապատասխան տվյալների վրա կատարած հիմնավորումը, նույնպես այն տեսակետին է հանգել, որի համաձայն Վիրոն ծագումով Ուտիքից էր[180]: Սակայն հարկ է նկատել, որ նրա հոգևոր գործունեության վերաբերյալ առանձին տեղեկություններ չեն մատնանշված և պատճառը որոշակիորեն պետք է հասկանալի լինի: Տարբեր աղբյուրներ նույնակերպ ներկայացնելով, որ Վիրոն իր աթոռակալության 25 տարիները անց է կացրել Պարսկաստանում, որպես աքսորյալ, իսկ վերադառնալուց հետո էլ քաղաքական դաժան պայմանների հետևանքով, բնականաբար, նա հնարավորություն չունեցավ զբաղվելու եկեղեցու առօրյա խնդիրներով: Եվ այդ է պատճառը, որ հոգևոր առաջնորդը առավել շատ ներկայացված է որպես քաղաքական գործիչ ու ղեկավար: Վիրոն իր մահկանացուն կնքել է հավանաբար 629 թվականին[181]:

VII դարի 30-40-ական թվականներին շարունակվող պարսկաբյուզանդական քաղաքական մրցակցության պայմաններում Հայոց եկեղեցին ըստ էության մնում էր հաստատուն իր դավանանքին ու շարունակում մերժել քաղկեդոնականությունը: Այստեղ տեղին է նաև նշել, որ հենց այդ ժամանակաշրջանում, երբ մի կողմից սկսվել էր Սասանյան պետության մայրամուտը, մյուս կողմից Արաբական խալիֆայության առաջխաղացումը, ապա նման պայմաններում Բյուզանդական կայսրության եկեղեցական քաղաքականությունը ավելի ճկուն բնույթ ընդունեց, որի նպատակը Հայ և Բյուզանդական եկեղեցիների միջև դավանանքային հաշտության պայմանների ստեղծումն էր և որն էլ բնականաբար, կնպաստեր քաղաքական մերձեցմանը[182]: Դավանանքային հաշտությունը դրսևորում էր «միակամության»՝ մի կամքի /միակամյա/ վարդապետությունը ընդունելու մեջ, որը հետազոտողների կարծիքով, չի կարելի նույնացնել քաղկեդոնականության հետ[183]:

180. Բ.Ուլուբաբյան, Հայոց Արևելից եկեղեցին և մշակույթը, էջ 127:
181. Եզնիկ քհն. Պետրոսյան, Աղվանից աշխարհի կաթողիկոսության մի քանի թվականների շուրջ, Էջմիածին, 1984, ԺԱ--ԺԲ, էջ 83:
182. Տես՝ Էդ. Դանիելյան, նշվ.աշխ., էջ 153:
183. Տես՝ նույն տեղում:

Վերը նշված քաղաքական պայմանների թելադրանքով Հայոց եզր կաթողիկոսը, քաղկեդոնականության դեմ պայքարելով, ստիպված էր ընդունելու «միակամության» վարդապետությունը, ինչը և նպաստեց հայ-բյուզանդական քաղաքական հարաբերությունների որոշակի բարելավմանը, որ սակայն ժամանակավոր բնույթ կրեց, կորցնելով իր քաղաքական նշանակությունը՝ Արաբական խալիֆայության առաջխաղացման և, առավելապես Հայաստանի նկատմամբ Բյուզանդիայի վարած նվաճողական քաղաքականության հետևանքով: Հավանաբար հենց վերոնշյալ հարաբերություններն է, որ հիմք են հանդիսացել ադրբեջանցի հեղինակ Ռ. Գյուուշևի արտահայտած այն թյուր ու հիմազուրկ կարծիքին, թե Հայոց Եկեղեցու հետ միակամ ու միասնական էր նաև Հայոց Արևելից կողմերի եկեղեցին, որի նստավայրը շարունակում էր գտնվել Պարտավ քաղաքում, չնայած քաղաքական արհավիրքներին ու աննպաստ իրադրությանը[184]:

Աղբյուրների վկայակոչմամբ Վիրո կաթողիկոսին փոխարինել է Տեր Զաքարիան, որի աթոռակալության ժամանակաշրջանը, հավանաբար, պետք է ընդունել 629թ-ից մինչև 644 թվականը: Վիրոյի աթոռակալության շրջանում Տեր-Զաքարիան նրա տեղապահն էր: «Եւ քահանայ ոմն անուն Զաքարիա՝ այր սուրբ, որ էր վանական Պարտաւայ եկեղեցւոյն, հեզ և հանդարտ, ...և վկայեալ յամենեցունց կարգեցաւ յեպիսկոպոսապետութիւն աթոռոյն Աղուանից»[185], վկայում է պատմագիրը:

Ըստ մատենագիտական աղբյուրների Տեր-Զաքարիան աթոռակալել է տասնհինգ տարի[186]: Եզնիկ քհն. Պետրոսյանը տարակարծություն է հայտնում Տեր Զաքարիայի հայրապետության շուրջը, նշելով, որ «դժվար է ասել, թե նրա հայրապետությունը եղել է Վիրոյի բացակայության տարիների՞ն, թե՞ նրանից հետո»[187]: Սակայն աղբյուրների հաղորդած տեղեկությունները հիմք են տալիս ենթադրելու, որ Տեր Զաքարիան, իրավամբ, Վիրոյի բացակայության ժամանակ եղել է նրա տեղապահը, քանի որ գործող կանոնակարգով կաթողիկոսի կենդանության օրով, որը տվյալ դեպքում քաղաքական պայմանների թելադրանքով գտնվում էր տաժանակրության մեջ, բնականաբար չէր կարող նոր կաթողիկոս ձեռնադրվել: Ուրեմն եզրակացությունը մեկն է. Տեր Վիրոյի աքսորավայրում գտնվելու ժամանակահատվածում Տեր Զաքարիան պարզապես փոխարինել էր նրան, իսկ նրա մահվանից հետո ձեռնադրվել Հայ Աղվանից կաթողիկոս:

Մակար եպիսկոպոս Բարխուտարյանցը, վկայակոչելով Մխիթար Գոշին, նշել է. «15 տարի հայրապետութիւն անելուց յետոյ վախճանում է Տեր Զաքարիա Բ, որին հաջորդում է Տեր Յովհան Բ Ամարասայ եպիսկոպոսութիւնից 647-ին»[188]: Աղբյուրների համադրությամբ պարզ հաշվարկով կարելի է նշել, որ Վիրո Հայ Աղվանից կաթողիկոսը իր մահկանացուն կնքել է 629 թվականին, իսկ Տեր Զաքարիան, ինչպես արդեն նշեցինք, անմիջապես փոխարինել է նրան և աթոռակալել 15 տարի, ուրեմն գահակալության թվականները պետք է ընդունել 629 թվականից մինչև 644 թվականը: Ամարասի Տեր Հովհան եպիսկոպոսի աթոռակալությունն էլ, հետևաբար, սկսվում է 644 թվականից և ոչ թե 647-ին:

Մակար եպիսկոպոս Բարխուտարյանցը, հավանաբար, ուշադրություն չի դարձրել իր իսկ վկայակոչած թվականներին, քանի որ հենց ինքը նշում է, որ «25 տարի հայրապետութիւն անելուց հետո վախճանում է Տեր Յովհան Բ, որին հաջորդում է Տեր Ուխտանէս 670-ին»[189]: Եթե ընդունեք 647 թվականը որպես Տեր Հովհանի աթոռակալության սկիզբ, ապա նրան փոխարինած Տեր Ուխտանեսը, որ ըստ հեղինակի աթոռակալել է 25 տարի, մինչև 670 թվականը, արդեն իսկ անընդունելի է: Ուրեմն այստեղից ու մի շարք այլ փաստերի համադրությունից կարելի է եզրակացնել, որ 644-668թթ. է աթոռակալել Տեր Հովհանը և նրան էլ հաջորդել է Տեր Ուխտանեսը՝ 668 թվականին:

VII դարի 40-50-ական թվականներին Հայաստանը դառնում է արաբա-բյուզանդական ռազմական ուժեղ բախումների ասպարեզ: Հայերը կենաց և մահու պայքար մղելով օտար զավթիչների դեմ ու միաժամանակ, օգտվելով նրանց մրցակցությունից, ձգտում էին երկիրը զերծ

184. Р.Геюшев, стр. 78.
185. Մ.Կաղանկատվացի, էջ 132:
186. Նույն տեղում, էջ 343, Կ.Գանձակեցի, էջ 195:
187. Եզն.քհն. Պետրոսյան, նշվ. հոդվածը, էջ 84:

188. Մ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ.Ա, էջ 102:
189. Մ.Կաղանկատվացի, էջ 107-108:

պահել նոր ավերածություններից ու կոտորածներից: Հիշյալ մտայնությամբ Դամասկոս է մեկնում հայ զորավար Թեոդորոս Ռշտունին և բանակցություններ վարում խալիֆի հետ: Սեբեոսի վկայությամբ Մոավիան նրան է վստահում Հայաստանի, Վրաստանի ու Աղվանքի իշխանությունը. «Եւ իշխանութիւն ետ նմա զՀայս և զՎիրս և զԱղուանս և զՍիւնիս, մինչև ցԿապկոհ և ցՊահակն ճորայ, և արձակեաց զնա պատուով: Եւ նորա պայման էր եդեալ նմա՝ ածել զերկիրն զայն ի ծառայութիւն»[190]:

Սակայն հաստատված խաղաղությունը երկար կյանք չունեցավ, քանի որ արաբների հիմնական նպատակը Այսրկովկասում վերջնական տիրապետության հասնելն էր: Նվաճող արաբական հորդաները անհամեմատ ուժեղ էին և հայ զինվորականներն էլ արդեն ծանոթ էին նրանց ուժին, քանի որ իրենց «դժբախտ ճակատագրի բերումով» մինչ այդ ստիպված էին Սասանյանների պահանջով կռվել նրանց սահմանների պաշտպանության համար: Այդ կռիվների մասնակիցն էր նաև 636 թվականից Աղվանքի զորքերի սպարապետությունը ստանձնած Ջևանշիրը[191], որ սերում էր Միհրանյան տոհմից:

Աղբյուրների համաձայն, VII դարի սկզբներին Գարդմանքում հայտնվել էր պարսկական ծագում ունեցող Միհրանը իր «հպատակներով», որն այստեղ էր եկել արքայի վրեժխնդրությունից խույս տալու նպատակով և նրան հաջողվել էր դավադրության շնորհիվ տեղի իշխաններին՝ Առանշահիկներին, զրկել իշխանությունից ու գավառի տերը դառնալ: Այդպես Հայոց արևելից կողմերում կամ Հայաղվանքում իշխանության ղեկի մոտ հայտնվում է պարսկական ծագմամբ Միհրանյան ճյուղը, որը սակայն «իր պարսկական կենցաղը պահպանում է միայն երկու սերնդի ընթացքում, որից հետո ընդունում է քրիստոնեությունը: ...Ընդունելով քրիստոնեությունը և միաձուլվելով տեղական իշխանների ներկայացուցիչների հետ, Միհրանյանները վերջնականապես հայացան, յուրացնելով տեղական բնակչության կենցաղն ու սովորույթները»[192]:

190. Սեբեոս, էջ 169:
191. Հ.Սվազյան, Աղվանից իշխաններ Ջուանշիրի և Վարազ-Տրդատի իշխանության տարեթվերի հարցի շուրջ, «Լրաբեր», Եր., 1973, հմ.11, էջ 108:

Միհրանյան իշխանությունն իր հզորության գագաթնակետին է հասնում Ջևանշիրի իշխանապետության օրոք(642-683թթ.)[193], որի գործունեության մասին գովեստով են խոսում ժամանակի մատենագիրներն ու հետագա պատմիչները, նրան երբեմն համեմատելով նաև Վաչագան Գ Բարեպաշտի հետ: Ջևանշիրի փառաբանությամբ հանդես է եկել նաև ժամանակակից պատմագիրը(որի երկն արտագրվել է Մովսես Դասխուրանցու կողմից), անվանելով նրան «զհռչակելին Ջուանշիր՝ Արևելից իշխան»[194]:

Ջևանշիրը բոլոր աղբյուրներում ներկայացված է որպես եկեղեցասեր ու քրիստոնեական հավատքին հավատարիմ իշխան, որն իր գործունեության մեջ մշտապես արժանավոր տեղ է հատկացրել քրիստոնեական եկեղեցու դիրքի ու հեղինակության բարձրացմանը: Նա իր ծննդավայրում՝ Գարդման բերդում. «կատարի գեղեցկայարմար շինումն տաճարի անուան Աստուծոյ»[195], այստեղ տեղադրելով Քրիստոսի խաչափայտի այն մասը, որը նվեր էր ստացել Հունաց Հերակլիոս կայսրից[196]: Իսկ Ջևանշիրի և Ամենայն Հայոց Անաստաս Հայրապետի Այրարատի գավառում կայացած հանդիպման առիթով պատմագիրը հետևյալն է գրել. «այր հասանէր անդր աղաւնին սուրբ՝ սիւնն եկեղեցւոյ՝ մեծն հայրապետն Հայոց Անաստաս: Զնա տեսեալ մեծահաւատ իշխանին՝ հոգեզուարճ բերկրանօք լցեալ, խոնարհեցուցեալ զինքն՝ օրհնեցաւ ի նմանէ որպէս ի հրեշտակէ սրբոյ»[197]: Վերադառնալով Գարդմանք, «մեծահաւատ իշխանը» մտնում է իր կառուցած եկեղեցին և իր «ուժն ու փառքը» Աստծուն վերագրելով, նոր միջոցներ է ձեռնարկում՝ նրա փառահեղ գեղեցկությունն ավելի շքեղացնելու համար:

192. Г.Свазян, Род Михранидов в Албании, "К Освещению проблем истории и культуры Кавказской Албании и Восточных провинций Армении, стр. 84.
193. Տես՝ Հ.Սվազյան, Աղվանից իշխաններ Ջուանշիրի և Վարազ-Տրդատի իշխանության տարեթվերի հարցի շուրջ, «Լրաբեր», Եր., 1973, հմ.11, էջ 112:
194. Մ.Կաղանկատվացի, էջ 196:
195. Մ.Կաղանկատվացի, էջ 187:
196. Նույն տեղում:
197. Նույն տեղում, էջ 195-196:

Ձևանշիրի իշխանապետության ժամանակաշրջանը, որ ըստ Հ.Սվազյանի, իրավացիորեն պետք է ընդունել 642-683թթ.[198], Հայոց արևելից կողմերի համար, թե աշխարհիկ ու թե հոգևոր իմաստով, պետք է համարել երանելի ժամանակահատված: Հայոց արևելից կաթողիկոսական աթոռը 670 թվականից մինչև 683 թվականը գլխավորում էր Տեր Ուխտանեսը: Նրա աթոռակալության ժամանակահատվածում Հայոց արևելից հոգևոր հաստատությունը նկատելիորեն ամրապնդում է իր դիրքերը: Վերակառուցվում են բազմաթիվ եկեղեցիներ, ինչպես նաև կառուցվում նորերը: Աղբյուրների հաղորդմամբ, Ս.Խաչի տոնի կապակցությամբ քրիստոնյա իշխանը ամառանոցից վերադառնում է Պարտավ, որպեսզի ներկա գտնվի իր իսկ կառուցած Աստծո տաճարի սուրբ հանդիսությանը: Նրա օրոք շարունակվեցին սուրբ մասունքների գյուտերն ու նրանց նվիրված եկեղեցական հանդիսավոր արարողությունները, որոնց հիմնական նպատակը Հայ Առաքելական եկեղեցու և Ս. Խաչի զորությամբ ժողովրդի հոգևոր դաստիարակությունն էր, նրան բարոյական կատարելության հասցնելը: Սակայն Հայ Առաքելական եկեղեցու կողմից ծավալած ու իրականացվող այդ առաքելությունը հաճախ էր ընդհատվում՝ հատկապես արտաքին քաղաքական հանգամանքների պարտադրմամբ:

VII դարում շարունակվում էր մի կողմից՝ Բյուզանդական կայսրության նվաճողական, այդ թվում Հայոց եկեղեցու ենթարկեցման քաղաքականությունը, իսկ մյուս կողմից՝ սկսվել էին արաբական ավերիչ արշավանքները, որոնք ամեն կերպ խաթարում էին Հայոց քաղաքական, տնտեսական ու հոգևոր կյանքը: Այդ մասին, որպես ժամանակակից ու ականատես, վկայություն է թողել Սեբեոսը. «Արդ՝ զի թշնամիք աստուածպաշտութեանն բազում անգամ արշաւել կորուսին. զերկիրս մեր. եւ որպէս զմարդիկ երկրիս կորուսին, եւ զկտակարանս եկեղեցւոյ եւ զվարդապետս նոյնպէս սպառեցին: Եւ արդ՝ կտակարանս և վարդապետս ոչ գոն...»[199]: Սակայն հարկ է նշել, որ մահմեդականության ներ-

198. Հ.Ս.Սվազյան, Աղվանից իշխաններ Ձուանշիրի և Վարազ-Տրդատի իշխանության տարեթվերի հարցի շուրջ, էջ 112:
199. Սեբեոս, էջ 156:

կայացուցիչները սկզբում հայտարարել էին, թե իրենք չեն հետապնդելու քրիստոնյաներին: Եվ իրավ, սկզբում գրեթե չէին խառնվում քրիստոնյա հպատակների ներքին եկեղեցական գործերին, անգամ հարգալից վերաբերմունք էին հանդես բերում դեպի հոգևորականությունը:

680 թվականից մինչև 686 թվականը Հայոց արևելից կամ Աղվանից կաթողիկոսությունը գլխավորում էր Եղիազարը, որ հայրապետ էր ընտրվել Ձևանշիրի կառավարման ժամանակ: Հիշյալ փաստի առնչությամբ վկայություն կա Մ.Դասխուրանցու մոտ: Պատմագիրը նշում է, որ երբ Աղվանից եպիսկոպոսական աթոռին Ուխտանեսին փոխարինում է Եղիազարը (680-686թթ.), Ձևանշիրը դեռևս կենդանի էր. «պարկեշտն այն Եղիազար ի նոյն ժողովոյն առնու առաքելական պատիւ, մինչդեռ բարեբաստիկն Ձուանշիր զաշխարհական տէրութիւնն վարէր յանհաստատելի կենցաղումս ի կամս Աստուծոյ»[200]:

Աղբյուրագիտական տվյալներից կարելի է եզրակացնել, որ Հայ Աղվանից կաթողիկոսները, որոնց թվում և Եղիազարը, ակտիվորեն էին մասնակցում երկրամասի քաղաքական անցուդարձերին՝ ինչպես Ձևանշիրի իշխանապետության օրոք, այնպես և նրանից հետո: Հատկանշական է, որ Ձևանշիրի մահից հետո Հայոց արևելից կողմանց, ինչպես նաև անդրկուրյան Աղվանքի ազդեցիկ իշխանական տների ներկայացուցիչները հավաքվում են հենց Եղիազար կաթողիկոսի մոտ՝ Մեծ իշխան ընտրելու նպատակով: «Յայնժամ տեարք տոհմից, կուսակալք, կողմնակալք, մեծամեծք, նախարարք և ամենայն իշխանք աշխարհիս այսորիկ ժողովեալք առ մեծ արքեպիսկոպոսն Եղիազար՝ խորհուրդ բարեաց վասն խաղաղութեան խորհէին և շինութեան աշխարհիս Աղուանից»[201]: Նրանց համաձայնությամբ առաջին իշխանի աթոռը ստանձնում է Ձևանշիրի եղբորորդի Վարազ-Տրդատը, որի մասին գովեստով է խոսում պատմիչը:

Հոգևոր առաջնորդների խաղաղասեր, քաղաքական գործունեությունը դրսևորվում էր ոչ միայն երկրամասի ներսում, այլ նաև արտաքին հարաբերությունների ոլորտում: Ձևանշիրի սպանությունը առիթ

200. Մ.Կաղանկատվացի, էջ 213:
201. Նույն տեղում, էջ 230-231:

հանդիսացավ հոների կողմից նոր արշավանքի կազմակերպման համար դեպի Արցախ և Ուտիք: Համոզված լինելով թշնամու ուժերի գերակշռության մեջ, Վարազ-Տրդատը ստիպված էր հավատարմության ու բարեկամության առաջարկություն կատարել և այդ նպատակով նրանց մոտ է ուղարկում Աղվանից Եղիազար կաթողիկոսին: «Զայս ամենայն խօսեցաւ կաթողիկոսն Աղուանից առաջի հիւղականին Հոնաց. որոյ յաւելեալ և այլ բանս աստուածայինս զանգիտականս՝ մերծեցուցանէր զնա յերկիւղ և ի սէրն Աստուծոյ և նուաճէր զմիտս նորա ի հաշտութիւն և ի սէր անքակտելի»[202]:

Քաղաքական այնպիսի իրավիճակ էր ստեղծվել, որ Հայաստանը, այդ թվում և Հայոց արևելից կողմերը մի կողմից հայտնվել էին երկու բռնատիրությունների՝ Արաբական խալիֆայության և Բյուզանդական կայսրության քաղաքական շահերի բախման ոլորտում, իսկ մյուս կողմից՝ պարբերաբար ենթարկվում էին հոների ավերիչ ասպատակություններին: Նման իրավիճակում Վարազ-Տրդատը որոշեց գտնել մի միջոց, որը հնարավորություն կտար որոշակիորեն մեղմացնելու հայերի դրությունը: Եվ այդպիսի միջոցը դարձավ հոների շրջանում քրիստոնեական հավատքի տարածումը և դրա շնորհիվ բարեկամական հարաբերությունների հաստատումը հոների հետ:

Քրիստոնեական կրոնի քարոզչության առաքելությամբ հոների մոտ է մեկնում Արցախի Մեծ Կվենք գավառի եպիսկոպոս Իսրայելը, որ սրբակեցության համբավ էր վայելում երկրամասում: «Ս.եկեղեցու այս ժիր մշակն ոչ միայն յաջողում է խոհեմութեամբ հաստատել սէր, խաղաղութիւն և անքակ հաշտություն, այլ և յաջողում է արմատախիլ անել նոցա սնոտիապաշտությունները»[203]:

Իսրայել եպիսկոպոսին համակրանքով է վերաբերում հոների խաքանը և նրան նույնիսկ առաջարկում մնալ իրենց մայրաքաղաք Վառաչանում: Խաքանը խոստանում է ընդառաջել նրան՝ իրենց մոտ հայրապետական աթոռ ստեղծելու հարցում և համապատասխան նամակներ է ուղարկում Հայ Աղվանից Եղիազար կաթողիկոսին ու Ամենայն Հայոց

202. Տես՝ Նույն տեղում, էջ 233:
203. Մ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ.Ա, էջ 114:

Սահակ հայրապետին՝ խնդիրքով, որ թույլատրեն Իսրայելին իրենց մոտ մնալ, որպեսզի կարողանա ավարտին հասցնել քրիստոնեության տարածման գործը:

Հոների Ալփ-Իլիթվեր խաքանի նամակները հասցեագրված էին նաև Հայ Աղվանից իշխան Վարազ-Տրդատին, Հայաստանի իշխան Գրիգոր Մամիկոնյանին: Հիշյալ նամակներից, որոնք գրի է առել Մ.Կաղանկատվացին[204], դժվար չէ նկատել, որ Արցախի Մեծկողմանց թեմի առաջնորդ Իսրայելին Հոնաց երկրի հոգևոր առաջնորդ դարձնելու խաքանի խնդրանքը՝ ուղղված ոչ միայն Աղվանից կաթողիկոսին և կամ իշխանին, այլև հենց Ամենայն Հայոց կաթողիկոսին ու Հայոց Մեծ իշխանին, ևս անվիճելի վկայություն է Աղվանից եկեղեցու Հայ եկեղեցու ենթակայությամբ գործելու մասին: «Այդ նշանակում է նույնիսկ Հոնաց թագավորը հաստատ գիտեր, որ Աղվանից կաթողիկոսության ոլորտը (ներառյալ և Մեծկողմանց եպիսկոպոսությունը) գտնվում էր Ամենայն հայոց հայրապետի գերագահության ներքո: Զարմանալի չէ, որ թղթաբեր ու Իսրայելի ուղեկից երկու հոներն էլ (Զիթգին Խուրսան, Չաթն Խազը) նախ ներկայացան Հայոց կաթողիկոսին, որպեսզի նրանից ստանան գլխավոր պատասխանը, նոր միայն գնան Աղվանից կաթողիկոսի և իշխանի մոտ»[205]:

Այս նույն միտքը հստակորեն ձևակերպված է նաև Հայոց կաթողիկոս Սահակի, Գրիգոր իշխանի, հայոց հոգևոր ու աշխարհիկ տերերի կողմից հոների Ալփ-Իլիթվերի խաքանին ուղղված պատասխան նամակի մեջ, որտեղ նշված է, որ Իսրայել եպիսկոպոսը քանի որ անմիջականորեն գտնվում է Աղվանից կաթողիկոսի ենթակայության տակ, ապա «նորա է գործդ այդ»[206]:

Ինչ վերաբերում է Հայ Աղվանից Եղիազար կաթողիկոսի կողմից տրված պատասխանին, ապա պատմագրի վկայությամբ նրանք համաձայնվեցին, միայն պայմանով, որ Իսրայել եպիսկոպոսը շարունակի իր առաքելությունը հոների մոտ. «Ոչ է պարտ դմա զհավատացեալ դմա յԱստուծոյ զհոտն իւր թողուլ միանգամայն և լինել ընդ ձեզ. այլ երթեալ և գալ դմա ըստ կարի իւրում հրամայեմք հաստատել զձեզ ի հա-

204. Մ.Կաղանկատվացի, էջ 262-263:
205. Բ.Ուլուբաբյան, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, էջ 156:
206. Մ.Կաղանկատվացի, էջ 265-266:

վատս Քրիստոսի և ողջ պահել զանխախտելի սէր մեր, որ առ միմեանս է: Այնմ և մեք կամակիցք եմք.զի լինելով դորա միջնորդ ընդ մեզ և ընդ ձեզ, բարձցի թշնամութիւն ի միջոյ մերմէ, և տնկեսցի սէր և խաղաղութիւն»[207]:

Այս ամենով հանդերձ պետք է նշել, որ հոների մոտ քրիստոնեությունը այդպես էլ հաստատուն արմատներ չունեցավ, չնայած, որ հետագա ժամանակներում ևս առանձին հայ հոգևորականներ, իրենց քարոզչական գործունեությամբ շարունակում էին իրագործել հոների շրջանում քրիստոնեական հավատքի տարածման ու ամրապնդման գործը: Այդ մասին վկայություններ հանդիպում ենք ոչ միայն հայ, այլ նաև օտար աղբյուրներում:

207. Նույն տեղում, էջ 265-266:

Հայ Աղվանից եկեղեցու պայքարը քաղկեդոնականության դեմ VIII դարում

VII դարի վերջին տասնամյակներում հայ ժողովրդի խաղաղ կյանքը շարունակ խաթարվում էր իրար հաջորդող բյուզանդական ներխուժումների ու արաբական ասպատակությունների հետևանքով: Բյուզանդաարաբական պայքարում ռազմական գերազանցությունը ի վերջո անցնելով արաբներին, Բյուզանդիան այնուամենայնիվ, չէր ցանկանում հաշտվել արաբների Հայաստանում ձեռք բերած քաղաքական գերիշխանության հետ: Նման պայմաններում վերստին նոր ուժ է ստանում կրոնական միջամտությունը: Քաղկեդոնականության ընդունել տալը, որին մշտապես ձգտել է կայսրությունը, վերջին հաշվով կնշնակեր Բյուզանդիայի քաղաքական գերիշխանության ամրապնդումը Հայաստանում, որ և միաժամանակ վտանգի տակ էր դնում նրա ազգային ինքնության հետագա պահպանումը: Ուրեմն պատահական չէ, որ հայերը կայսրության հիշյալ քաղաքականության դեմ բոլոր ժամանակներում հանդես են բերել անզիջում դիրքորոշում, մշտապես պարզելով հակաքաղկեդոնական-լուսավորչական դավանաբանական իրենց դրոշը: Բայց և այդ պայքարի ընթացքում թերևս եղել են առանձին հայ հոգևոր գործիչներ, որոնք տեղի են տվել՝ ընդունելով քաղկեդոնականությունը և դառնալով նրա քարոզիչներն ու տարածողները:

Հուստինիանոս 2-րդ կայսրը (685-695թթ.) Բյուզանդիայի դիրքերը ամրապնդելու նպատակով մեծաքանակ զորք է ուղարկում Հայաստան: Պատմիչների վկայությամբ բյուզանդական զորքերը անխնա ու սարսափելի կոտորած են սփռում՝ իրենց ճանապարհին ավերելով բազմաթիվ քաղաքներ, գյուղեր ու նաև եկեղեցիներ: Հայոց Աղվանքում, դաժան հաշվեհարդար տեսնելով արաբական հպատակություն ընդունած ժողովրդի հետ, որպես պատանդ, բանտարկում են Աղվանից իշխան Վարազ-Տրդատին՝ իր երկու որդիներ Գագիկի ու Վարդանի հետ միասին, և տանում Բյուզանդիա: Հետագայում, իրենց նպատակին հասնելու համար Բյուզանդական արքունիքն ու եկեղեցին օգտագործեցին նաև այս հանգամանքը:

686 թվականին մահանում է Հայ Աղվանից Եղիազար կաթողիկոսը: Աղվանքի Վարազ-Տրդատ իշխանի կին Սպրամի եռանդուն ջանքերով Աղվանքի կաթողիկոսական աթոռը անցնում է Գարդմանքի Ներսես Բակուր եպիսկոպոսին, որը աղբյուրների հավաստմամբ, գաղտնաբար քաղկեդոնականության համակիր էր[208]:

Ակնհայտ է, որ գործարքը իրագործվել է Բյուզանդիայի միջամտությամբ, որտեղ, ինչպես նշվել է, որպես պատանդ, գտնվում էին Աղվանքի Վարազ-Տրդատ իշխանն իր երկու որդիներով: Ամուսնու և որդիների ազատության համար Սպրամը պատրաստ էր կատարելու կայսրության կողմից առաջադրվող բոլոր պահանջները, մանավանդ, որ Մ.Կաղանկատվացու հավաստմամբ Սպրամը, ինչպես նաև նրա կողմից կաթողիկոս առաջադրված Ներսես Բակուր եպիսկոպոսը գաղտնի հարում էին քաղկեդոնականությանը. «...Ոմն յերկաբնակ աղանդոյն Քաղկեդոնի Բակուր անուն, երբեմն եղեալ եպիսկոպոս Գարդմանայ և Ներսէս յորջորջեալ: Սա ուխտադրեալ Սպրամայ Աղուանից տիկնոջ՝ կնոջ Վարազ Տրդատայ, որ էր ի նոյն աղանդն հետեւեալ, կնքէր դաշինս վասն փառամոլ տիրողութեանն, ասելով. «Եթէ կամ է քո, կոչեա զիս ի հայրապետութիւն Աղուանից, և ես արարից զամենայն Աղուանս խոստովանութեամբն Քաղկեդոնի»[209]:

Հավանաբար իշխանուհու կողմից կատարված այս նախաձեռնության մեջ դավանական վտանգ կանխազգալով և իշխանուհուն ու կաթողիկոս առաջադրված Ներսես Բակուրին քաղկեդոնականությանը հարելու մեջ կասկածելով, հենց ձեռնադրության ժամանակ Մեծառանք գավառի եպիսկոպոս Հովելը, իր պաշտոնակիցների աջակցությամբ, պահանջում է, որպեսզի Ներսես Բակուրը հատուկ հայտարարություն տա իր կողմից քաղկեդոնականությունը կտրականապես մերժելու վերաբերյալ, միաժամանակ տալով այն բովանդակող գրավոր երդմնաթուղթ[210]:

Ըստ Մ.Կաղանկատվացու, Հայ Աղվանից կաթողիկոս Ներսես Բակուրը իր աթոռակալության սկզբի շուրջ տասնչորս տարիները հավատարիմ էր մնացել իր երդմանը: Սակայն Հովելի մահից հետո, որի մոտ պահվում էր երդմնաթուղթը, Ներսես Բակուրը շտապում է իր ձեռքն առնել երդմնաթուղթն ու այն վերացնել: Այնուհետև, աստիճանաբար ամրապնդելով իր դիրքերը և հենվելով իրեն համակիր որոշ իշխանների ու հոգևորականության վրա, Աղվանից Ներսես Բակուր կաթողիկոսը բացահայտ հալածանքներ է սկսում իրենց դավանանքին հավատարիմ հոգևոր գործիչների, որոնց թվում քաղկեդոնական կրոնի երդվյալ հակառակորդ Մեծկողմանց Իսրայել եպիսկոպոսի, Գարդմանքի եպիսկոպոս Եղիազարի ու այլոց նկատմամբ, դրանով փորձելով քաղկեդոնականությունը արմատավորել ու այդ ճանապարհով Հայ Աղվանից եկեղեցին անջատել Հայոց եկեղեցուց:

Սակայն Ներսես Բակուրի հանուն քաղկեդոնականության ծավալած գործունեությունը հաջողություն չունեցավ, քանի որ Հայ Աղվանից աշխարհի հոգևորականության ու աշխարհիկ իշխանների մեծագույն մասը պարզապես ըմբոստացան նրա դեմ՝ նրա գործունեությունը համարելով դավաճանություն Հայ Առաքելական եկեղեցու նկատմամբ[211]: Նրանց նախաձեռնությամբ Պարտավում գումարվում է բազմամարդ ժողով, որին մասնակցում էին Բյուզանդիա տարագրված Վարազ-Տրդատին փոխարինող իշխան Շերոն, Աղվանից աշխարհի հոգևոր ու աշխարհիկ տերերը: Ժողովականների կողմից նամակ է ուղարկվում Ամենայն Հայոց Եղիա կաթողիկոսին, որ 703 թվականին հաջորդել էր Սահակ Ձորափորեցուն և իր կաթողիկոսության հենց սկզբնական ժամանակներից ստիպված էր լուրջ միջոցառումներ ձեռնարկել Բյուզանդիայի կողմից Հայոց եկեղեցուն պարբերաբար պարտադրվող քաղկեդոնականության դեմ, ինչպես նաև Հայ Աղվանից կաթողիկոսության հիշյալ անջատական ձգտումները կանխելու ուղղությամբ:

Հայոց կաթողիկոսին ուղղված նամակը հետևյալն էր. «Տեառն Եղիայի Հայոց կաթողիկոսի ի միաբան ժողովոյս Աղուանից երկրպագութիւն:

Վասն զի զմի հաւատ ունող հարքն մեր ընդ հարսն ձեր զմիմեանց

208. Հովհ.Դրասխանակերտցի, էջ 102:
209. Մ.Կաղանկատվացի, էջ 293:
210. Նույն տեղում: Տես նաև՝ Մ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, էջ 117:

211. Հովհ.Դրասխանակերտցի, էջ 102:

հոգային զհոգւոցն փրկութիւն, և ի ներել Տեառն Աստուծոյ՝ զօրացեալ տիեզերակործան զեղխ կրօնն Քաղկեդոնի, որ ելից զտիեզերս. և մեր կողմանքս մինչև ցայսօր ժամանակի անխառն յայնմ աղանդոյ էր մնացեալ: Իսկ այժմ զոր կարծէաք գոլ հովիւ բարի մեզ զՆերսէս, սա գայլ եղեալ՝ օձտել սկսաւ զբանաւոր հօտս Քրիստոսի, վասն որոյ կամեցաք յուշ առնել սրբութեան ձերում յայց ելանել որպէս ձերոց անդամոց և բժշկել զբեկումն մեր: Ողջ լերուք ի Տէր»[212]:

Նամակից պարզորոշ նկատելի է, որ վտանգի տակ էր դրված հայ ժողովրդի արևելյան հատվածի ազգային ինքնությունը, և որ անհրաժեշտ էին շուտափույթ միջոցառումներ ձեռնարկել: «Մի եկեղեցի էր միայն, որի հովանու տակ դեռ բաբախում էր հինավուրց միասնության կենդանի զարկերակը, և այդ բաբախյունը հայերեն խոսքն էր, սրբազան ավանդույթների, ազգային-հայրենասիրական ոգու անլռելի քարոզը: Իսկ հիմա մի ոմն Ներսես Բակուր, դաշնակցած իշխանուհի Սպրամի հետ, կտրում էր ազգային միասնության վերջին կապը՝ եկեղեցին, և Աղվանից բովանդակ հայությունը նետում բյուզանդական քաղկեդոնականությանն ի կեր»[213]:

Հայոց կաթողիկոսը սկզբնապես փորձում է, առանց կտրուկ միջոցների դիմելու, նամակի ու պատգամավորության միջոցով համոզել Ներսես Բակուրին՝ հրաժարվելու Հայոց եկեղեցու համար անընդունելի դավանանքից: Սակայն, ինչպես վկայում է Հովհ.Դրասխանակերտցին, «ոչ ևս զդջացան դառնալ ի մարդադաւան մոլորութենէ իւրեանց: Ապա Մեծն Եղիա զիմաստութիւն և զընդարձակութիւն սրտի ի գործ արկեալ՝ գրէ թուղթ առ ամիրապետն Իսմայէլեան Ոմար...»[214]: Ամենայն Հայոց կաթողիկոսը ստիպված էր օգնության խնդրանքով դիմել նաև արաբական խալիֆի Պարտավում նստող ներկայացուցիչ Աբդ ալ մելիք էմիր Մումինին: «...Յամենակալէն Աստուծոյ ունիմք զծառայական աշխարհս հնազանդ ձերոյ՝ տէրութեանդ. և մեք և Աղուանք զմի հաւատ պաշտել ունիմք զՔրիստոսի աստուածութեանն: Իսկ այժմ որ

212. Մ.Կաղանկատվացի, էջ 295:
213. Բ.Ուլուբաբյան, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, էջ 269:
214. Հովհ. Դրասխանակերտցի, էջ 102:

Աղուանից է կաթողիկոս նստեալ ի Պարտաւ, խորհուրդ արարեալ ընդ կայսրն Յունաց՝ զնա քարոզէ յաղօթս և զաշխարհս ստիպէ, զի ի հաւատ և ի միաբանութիւն նմա եկեսցեն...»[215]:

Ամենայն Հայոց կաթողիկոսի հիշյալ ձեռնարկումը, ինչպես Մ.Օրմանյանն է իրավացիորեն նշել, «պիտի չմեղադրենք», քանի որ «գործը պարզապես կրոնական չէր, այլ կրոնական երեւոյթին ներքեւ իսկապէս քաղաքական խնդիր էր, եւ եթէ յունական քաղաքականութեան հետեւելու համար քաղկեդոնիկ դաւանութիւն կը մշակուէր, իրաւացի էր, որ հակաքաղկեդոնիկ դաւանութիւնը պաշտպանելու համար արաբական քաղաքականութիւնը մշակուէր»[216]:

Հայոց եկեղեցու միասնությունն անխախտ պահելու և Ներսես Բակուրին պատժելու նպատակով 704 թվականին Պարտավ է ժամանում Հայոց Եղիա կաթողիկոսը մի խումբ եպիսկոպոսների ուղեկցությամբ: Ամենայն Հայոց կաթողիկոսի նախաձեռնությամբ Պարտավում գումարվում է ժողով: Ներսես Բակուր կաթողիկոսը, չկարողանալով արդարանալ, դատապարտվում է ժողովի կողմից ու հեռացվում: «Յորում որոշեցին զՆերսէս ոմն, Բակուր կոչեցեալ, կաթողիկոս Աղվանից, չար անարգանօք, և զթագուհին Սպրամ»[217]:

Պատմագրի վկայությամբ նույն ժողովում ընտրվում է Սիմեոն եպիսկոպոսը Հայոց Աղվանքի կաթողիկոս, աթոռակալելով սակայն, ընդամենը շուրջ մեկ և կես տարի՝ 704-705թթ.: Նա անհաշտ դիրքորոշում ուներ քաղկեդոնականության նկատմամբ, որ դրսևորվեց, Կ.Գանձակեցու հավաստմամբ, նրա ստեղծած 7 կանոններում[218]: Մովսես Դասխուրանցին իր գրքի ԺԱ գլխում՝ «Կանոնք տեառն Սիմէոնի Աղուանից կաթողիկոսի յետ կործանմանն Ներսիսի»[219], գրի է առել հիշյալ կանոնները, որոնք հետագայում մտցվել են Արսեն Ղլտճյանի խմբագրությամբ «Կանոնագիրք Հայոց» գրքի մեջ[220]:

215. Մ.Կաղանկատվացի, էջ 295-296:
216. Մ.Օրմանյան, Ազգապատում, հ.Ա, էջ 811:
217. Ստ.Օրբելյան, էջ 454-455: Տես նաև Ա.Հակոբյան, «Եղիա Արծիշեցու նորահայտ թուղթը», ՊԲՀ, 1982, հմ.4:
218. Կ.Գանձակեցի, էջ 197:
219. Մ.Կաղանկատվացի, էջ 305-311:
220. Արսէն Ղլտճեան, Կանոնագիրք Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 201-204:

Հայոց եկեղեցու հետագա միասնությունը հաստատուն պահելու նպատակով Հայոց Եղիա կաթողիկոսը Պարտավի նույն ժողովի մասնակիցներից դավանության թուղթ է պահանջում, որ նրանք կատարում են մեծագույն սիրով:

Մ.Դասխուրանցին բարեբախտաբար գրի է առել նաև ժողովի մասնակիցների կողմից կազմած երկու եկեղեցիների միաբանության ու դաշինքի հաստատության վերաբերյալ հավատարմագիրը. «Ձեռնարկ, զոր խնդրեաց Եղիա Հայոց կաթողիկոս ի ժողովոյն Աղուանից վասն միաբանութեան և ուխտի հաստատութեան Հայոց և Աղուանից»[221]:

Թղթի մեջ պարզորոշ ընդգծված էր, որ երկու եկեղեցիները մշտապես նույն դավանությունն են ունեցել, համատեղ պայքարելով այլազան աղանդների և հատկապես քաղկեդոնականության դեմ: Դատապարտվում են քրիստոնեության ոչ-լուսավորչական բոլոր ուղղությունները, հատկապես քաղկեդոնականությունը: Ժողովականները որոշում և պահանջում են խստագույնս պատժել հերձվածողության բոլոր փորձերը:

Հայ Աղվանից կաթողիկոսները, ընդունված կարգի համաձայն, Ամենայն Հայոց կաթողիկոսներից են ձեռնադրություն ստացել, իսկ եթե այդ կարգը երբեմն էլ խախտվել է, և Հայ Աղվանից որոշ կաթողիկոսներ, հակառակ ընդունված ավանդակարգի, ձեռնադրությունը ստացել են իրեն ենթակա եպիսկոպոսներից, ապա դա էլ ի զորու չէր խաթարելու եկեղեցիների միասնությունը: Այս հարցի կապակցությամբ էլ Պարտավի ժողովում որոշում է կայացվում մեկընդմիշտ վերացնելու Հայ Աղվանից կաթողիկոսների ենթակա եպիսկոպոսներից ձեռնադրություն ստանալու կարգը, վերահաստատելով նախկինը, որի համաձայն Աղվանից կաթողիկոսներին ձեռնադրելու իրավունք վերապահվում է միայն Ամենայն Հայոց կաթողիկոսներին: «Նոյնպէս և վասն ձեռնադրութեան կաթողիկոսացս Աղուանից այսպէս կանոնեցաք. քանզի ի սուղ ինչ ժամանակ կաթողիկոսքս մեր զկարգն յեպիսկոպոսացս մերոց առին, իսկ այժմ զի անփորձ և անընտրող գործով եղև և հերձուածեցաւ աշխարհս, վասն այդորիկ պայմանեցաք առաջի Աստուծոյ և ձերոյ հայ-

221. Մ.Կաղանկատվացի, էջ 298-302:

րութեանդ, եթե ձեռնադրութիւն հայրապետութեանս Աղուանից ի սուրբ Գրիգորի աթոռոյն լիցի՝ միաբանութեամբ աշխարհիս՝ որպէս և էրն ի սրբոյն Գրիգորայ անտի, զի անդ ընկալաք զլուսաւորութիւն. և ճշմարտութեամբ գիտեմք, թէ զոր դուք ընտրէք, հաճոյ Աստուծոյ է և մեզ»[222]:

Ամենայն Հայոց կաթողիկոսին տրված պայմանաթղթի տակ ստորագրել են. «Սիմէոն՝ Աղուանից կաթողիկոս, Յովհաննէս՝ Կապաղակայ եպիսկոպոս, Սիմէոն՝ Հոշոյ եպիսկոպոս, Սահակ՝ Ամարասայ եպիսկոպոս, Սահակ Մեծ Կուենից, եպիսկոպոս, սրբասէր Քշիկ՝ Ներսմերհի վանաց տանուտէր բոլոր ուխտիւ իւրով, որք անխառն յաղանդոյն պահեցան, Գտայ վանաց տանուտէր, Կատարոյ վանաց տանուտէր, Յովսեփայ վանաց տանուտէր, Դաւիթ՝ Կաղանկատուաց վանական, Պետրոս՝ Տկռակերտոյ վանական, Պօղոս՝ Աղածոբայ վանական: Այլև քրիստոսասէր ամենագով ազատք՝ աստուածապահ Շերոյ պատրիկ և Աղուանից իշխան, իշխան Ջուանքո պատրիկ՝ Աղուանից սպարապետ, Վարդան պատրիկ և նորին եղբայր տէր Գագիկ, Բաբ ի Հրահատեան, Վախտանգ ի Վարազմանեան, Պատրիկ ի Քարոյեան յազգէ թագաւորաց, Վահան ի Վարագ Յոհանեան, Թէոդորոս յԱնաստասեան, Ռոստոմ ի Վարազ Աքոյեան, Ջարմիհր ի Վարազ Քուրդաքեան յազգէ թագաւորաց, Մահմատ ի Շերոյեան և այլ ամենայն ազատք աշխարհիս օրհնեցաք և ընկալաք միաբանութեամբ հոգեւորաց և մարմնաւորաց զառաքելական հավատն մեր, որ նախ ի սրբոյն Եղիշայէ հիմնադրեալ և ապա ի սրբոյն Գրիգորիսէ հաստատեալ, որ ցայժմ ոչ էր ստերիւրեալ: Եւ ի հասանել փորձանացս՝ հասոյց Աստուած զօգնութիւն իւր ի ձեռն փոխանորդիդ սրբոյն Գրիգորի, որոյ ուղղափառութեանդ եղաք աշակերտք և եղիցուք տեառնդ Եղիայի Հայոց կաթողիկոսի, որ եղեր վրէժխնդիր թշնամւոյն արդարութեան»[223]:

Այստեղ հարկ է ընդգծել, որ պատմագրի նշած Աղվանից հոգևոր ու աշխարհիկ տերերի մեջ անդրկուրյան Աղվանքից հիշատակված է միայն մեկ հոգևորական՝ Կապաղակի Հովհաննես եպիսկոպոսը: Սրանից էլ կարելի է եզրակացնել, որ հավանաբար հիշյալ ժամանակաշրջա-

222. Նույն տեղում, էջ 302:
223. Նույն տեղում, էջ 300:

նում Աղվանից եկեղեցու շրջանակների մեջ ընդգրկված էին հիմնականում Հայոց արևելից կամ Հայ Աղվանքի բնակավայրերը, որոնք միաձույլ կերպով համառորեն իրենց հեռու էին պահում արաբների կողմից պարտադրվող մահմեդականացման ընթացքից:

Հայ Աղվանից հոգևոր ու աշխարհիկ տերերի կողմից ուղարկված դավանության թուղթը ստանալուց հետո Ամենայն Հայոց Եղիա կաթողիկոսը իր հերթին կազմում է համապատասխան թուղթ, որտեղ ներկայացնում է Հայոց եկեղեցու ներսում Հայ Աղվանից թեմի կողմից և, բացառապես Ներսես Բակուրի մեղսատվությամբ առաջացած ժամանակավոր անհամաձայնությունը, դատապարտում Ներսես Բակուրի դավանական շեղումները: Այդ առիթով Մաղաքիա Օրմանյանը գրել է. «Իւր յաջորդին Եղիա Արճիշեցի կաթողիկոսին (703-713թթ.) գլխաւոր գործն եղաւ այն նախանձայոյզ աշխատութիւնը, որով Աղուանից եկեղեցին Հայոց եկեղեցին հետ միաբանության մէջ պահեց»[224]:

Եվ այսպես, Մ.Բարխուտարյանցի բնորոշմամբ. «Հայոց և Աղուանից միացեալ եկեղեցին ընթանում էր քրիստոսաւանդ և առաքելական ուղղությամբ: Թէև վրդովուած էր քաղաքական բուռն հոսանաց յորդութեամբ, բայց անվրդով էր նախնական անխոտոր դավանութեամբ և ազատ ու անխառն արմտեան խմորեալ աղանդներից»[225]:

Հարկ է նշել նաև, որ հայկական սկզբնաղբյուրներում պավլիկյան աղանդավորական հոսանքի մասին պահպանված ամենահին տեղեկություններից մեկն էլ, ըստ Հ. Բարթիկյանի, Պարտավի հիշյալ ժողովի որոշման մեջ եղած հիշատակությունն է[226]: Բարեբախտաբար հիշյալ որոշումը պարունակող փաստաթուղթը պահպանվել է Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի NN 2966 և 3062 ձեռագրերում: Պարտավի հիշյալ ժողովի մասնակիցների կողմից ընդունված որոշման մեջ նշված է. «...թէ յորժամ դուք ձեռնարկէք յաղագս քաղկեդոնական աղանդոյն, և կամ Մայրագոմեցոյն, եթէ վասն պայլիկեանց, և թէ վասն

224. Մ.Օրմանեան, Հայոց եկեղեցին, էջ 67:
225. Մ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ.Ա, էջ 119:
226. Տես՝ Р.Бартикян, Источники для изучения истории Павликианского движения, Ер., 1961, стр. 31-33.

խառն ամուսնութեան, և թէ զի՞նչ և իցէ՝ ոչ ոք կարէ ելանել ըստ ձեր հրամանէ...»[227]:

Վերոնշյալ մեջբերումից դժվար չէ նկատել, որ Աղվանից եկեղեցին, քաղկեդոնականությունից զատ, լրջորեն մտահոգված էր նաև պավլիկյան աղանդի ներթափանցումով Հայոց արևելից կողմեր:

Հայոց եկեղեցական դավանության անաղարտ պահպանությանն ու միասնականությանն էր ուղղված Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռը Եղիայից հետո ստանձնած Հովհան Օձնեցու ողջ գործունեությունը և որն իրավացիորեն դասվել է Հայոց եկեղեցու սրբերի շարքը՝ իր առաքինի ու իմաստասիրական գործունեության շնորհիվ՝ վաստակելով Իմաստասեր պատվանունը: Ինչպես արդեն իսկ նշվել է, Հայ Աղվանքի եկեղեցու կացությանը նա ծանոթացել էր՝ լինելով տակավին վարդապետ ու եպիսկոպոս: Դառնալով կաթողիկոս, Հովհան Օձնեցին ավելի ազդու կերպով սկսեց պայքարել Հայոց եկեղեցուն շարունակ սպառնացող քաղկեդոնական ու այլազան աղանդների դեմ:

705 թվականին Հայ Աղվանից կաթողիկոս էր ձեռնադրվել Շաքիի Միքայել եպիսկոպոսը և աթոռակալել մինչև 742 թվականը[228]: Չնայած Մ. Դասխուրանցին նշում է, որ Միքայելը աթոռակալել է 35 տարի[229], սակայն առկա մյուս աղբյուրների քննության համաձայն Ա. Հակոբյանի հիշյալ տեսակետը առավել տրամաբանական և ընդունելի է: Պատմագրի վկայությամբ Տեր Միքայելի գործունեության կարևոր ուղղություններից մեկը դարձավ պայքարը Հայոց եկեղեցու կողմից սահմանված կանոնների բոլոր տեսակի խախտումների դեմ: Նրա նախաձեռնությամբ հրավիրվեց եկեղեցական ժողով՝ արյունակիցների միջև ամուսնությունը արգելելու համար, քանի որ Աղվանքի իշխաններից ոմանք խախտել էին այդ կարգը. «սա կոչեաց զՍողոմոն զհայր Մաքենոցաց վանացն և նովաւ հանդերձ նզովեաց զիշխանս Աղուանից՝ որք զերից ազգաց զձնունդս ամուսնացուցանէին, և զԹալիլէ առաջնորդ

227. Սամվել Անեցի, Հավաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 286:
228. Ալ.Ակոպյան, стр.277.
229. Մ.Կաղանկատվացի, էջ 313:

Վրաց՝ որ հրաման տայր այնպիսի ամուսնութեան»[230]:

Այսպիսով, թե քննարկվող ժամանակաշրջանում և թե հետագա բոլոր ժամանակներում Հայ Աղվանից եկեղեցին, գտնվելով Հայոց կաթողիկոսության հովանու տակ, կարողացավ հաղթահարել Բյուզանդական կայսրության կողմից Հայոց եկեղեցուն պարտադրվող քաղկեդոնականությունն ու պահպանել իր ազգային անաղարտ ինքնությունը:

VIII դարը Հայոց քաղաքական պատմության դժխեմ ժամանակահատվածներից է, երբ Հայաստան աշխարհը, այդ թվում Հայոց արևելից կողմերի գավառները և, ընդհանրապես, ամբողջ Այսրկովկասը վերջնականապես հայտնվեցին Արաբական խալիֆայության տիրապետության տակ: Արաբներն անմիջապես ձեռնամուխ եղան նորանվաճ երկրների քաղաքական ու վարչական բնագավառների հիմնովին վերափոխմանն ու վերակառուցմանը, որի նպատակն էր ամեն ինչ համապատասխանեցնել ու ի սպաս դնել Արաբական խալիֆայության շահերին: Հիշյալ, ինչպես նաև հետագա ժամանակներում ապրած հայ պատմիչներից բացի, արաբ կամ արաբերեն գրող մեծ թվով պատմիչներ, աշխարհագիրներ ու ճանապարհորդներ բարեբախտաբար այս կամ այն չափով անդրադարձել են նաև Հայաստանի աշխարհագրությանը և երբեմն մանրամասնորեն նկարագրել նրա տնտեսական ու քաղաքական կարևոր նշանակության քաղաքներն ու գլխավոր բնակավայրերը, նրանց ազգային կազմը և այլն:

Աղբյուրների հավաստմամբ, VIII դարի առաջին տասնամյակում Այսրկովկասում նվաճած տարածքներից արաբները ստեղծեցին վարչական մեկ միավոր՝ «Արմինիա» անունով[231]: Արմինիայի կազմավորման հետ գրեթե միաժամանակ նրա վարչական կենտրոնը դարձավ Դվինը[232]: Իսկ հետագայում՝ 789 թվականին, Մ.Դասխուրանցու հավաստմամբ, Դվինի մայրաքաղաքային դերն անցավ Պարտավին՝ Աղվանքում. «Եւ եղև այս տանս Աղուանից զրկանք մեծապէս, զի զմայրաքաղաքն Պարտաւ խլեցին յիշխանացն Աղուանից Տաճիկք ըստ իւրեանց անառակ ազգաշաղախութեանն: Եւ որպէս զառաջինն աթոռ իշխանութեանն իւրեանց արկին ի Դամասկոս Ասորեստանեայց, նոյնպէս աստ յԱղուանս նստուցին ի Պարտաւ կալ արքունեացն՝ և ծծել զպարարտութիւն երկրիս. յորոց մի ոմն յարքունեացն եկեալ ի Պարտաւ»[233]:

Ընդհանրապես հայկական ու արաբական սկզբնաղբյուրները հաստատում են, որ Արաբական խալիֆայության տիրապետության տակ կազմավորված Արմինիա վարչա-տարածքային միավորի մեջ ընդգրկված էին Մեծ Հայքից Սյունիքը, Արցախը, Ուտիքը, Պարսկահայքը, Փայտակարանը, Վասպուրականը, Այրարատը, Գուգարքը, Տայքը, Տուրուբերանը, Կորճայքը, Մոկքը, Չորրորդ Հայքի և Բարձր Հայքի մի մասը, նաև Վիրքն ու Աղվանքը:

Հայաստանում Արաբական տիրապետության վերջնական հաստատման հետ մեկտեղ, բնականաբար, առավել ծանր պայմանների մեջ հայտնվեց քրիստոնյա հայ ժողովուրդը, այդ թվում և հյուսիսարևելյան Արցախ և Ուտիք նահանգների հայությունը: Հայ ժողովուրդը, թեկուզև ավելի մեծ զոհերով, բայց այս անգամ էլ կարողացավ պահպանել իր ազգային ինքնուրույնությունը, իր քրիստոնեությունը անողոք նվաճողների հարվածների տակ: Հայկական աղբյուրները հարուստ տեղեկություններ են պարունակում Հայոց եկեղեցուն և եկեղեցական դասի ներկայացուցիչներին ծաղր ու ծանակի, խոշտանգումների, բռնությունների և կողոպուտի ենթարկելու մասին[234]:

Սկսվել էր նաև եկեղեցիների ու վանքերի մասսայական կողոպուտ, որ լայն ծավալ էր ընդունել հատկապես VIII դարի երկրորդ կեսին: Կիրակոս Գանձակեցու հաղորդմամբ Հովհան Օձնեցուն հաջորդած Դավիթ Արամոնեցի կաթողիկոսը (728-741թթ.), այլևս տանել չկարողանալով արաբների բռնությունները, հարկադրված կաթողիկոսությունը Դվինից տեղափոխում է Կոտայքի իր հայրենի Արամոնք գյուղը[235]: Հայ

230. Հովհ.եպս.Շահխաթունյանց, Ստորագրութիւն Կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ.2, էջ 336:
231. Ս.Մելիք-Բախշյան, Հայաստանը 7-9-րդ դարերում, Եր., 1968, էջ 99:
232. А.Н. Тер -Гевондян, Армения и Арабский халифат, стр. 74.

233. Մ.Կաղանկատվացի, էջ 325:
234. Ղևոնդ, Պատմություն, Եր., 1982, գլ.ԽԱ և ԽԲ:
235. Կ.Գանձակեցի, էջ 70:

Աղվանից կաթողիկոսությունը հիշյալ շրջանում տակավին գլխավորում էր Տեր Միքայելը, որի գործունեության վերաբերյալ մանրամասն տեղեկություններ չեն պահպանվել: 37 տարի հայրապետական պաշտոն վարելով վախճանվում է Տեր Միքայելը, որին, Մխիթար Այրիվանեցու վկայությամբ, հաջորդում է Տեր Անաստասը(742-746թթ.)[236]:

747 թվականին արաբական պետության ներսում սկսվեցին ներքին զինված բախումներ, որից փորձեց օգտվել «Արմինիայի» ժողովուրդը՝ թոթափելու արաբական լուծը[237]: 748 թվականին Աղվանից աշխարհի Պարտավ ու Բայլական քաղաքներում և նրանց շրջակայքում նույնպես բռնկվել էր ազատագրական շարժում, որը տարածվեց նաև հարակից շրջաններում: Հենվելով նաև արաբական աղբյուրների հաղորդած տեղեկություններին, Ստ.Մելիք-Բախշյանը գրել է. «Շամախիի շրջանում, ինչպես հաղորդում է արաբ պատմիչ Բալաձորին, արաբների դեմ պայքարը գլխավորում էր հայազգի Միքայելը»[238]:

Միայն 753-754 թվականներին արաբներին հաջողվեց ճնշել ազգային-ազատագրական այս շարժումը: Սակայն VIII դարի 40-50-ական թվականների հակաարաբական շարժումները Հայաստանի միայն արևելյան կողմերով չսահմանափակվեցին: Դրանք ընդգրկել էին նաև Հայաստանի արևմտյան կողմերը, այսինքն համահայկական բնույթ էին ստացել[239]: Ի պատասխան այդ բոլորի, արաբները ավելի սաստկացրին բռնություններն ու ասպատակությունները, որոնցից զերծ չէր նաև Հայոց եկեղեցին: Ինչպես արդեն իսկ նշվել է, արաբ ամիրապետները իրենց աթոռանիստ էին ընտրել Պարտավը՝ Հայոց արևելից կողմերի այդ ժամանակներում հոգևոր կենտրոնը:

746 թվականին Հայ Աղվանից հոգևոր առաջնորդը դարձավ Ամարասի առաջնորդությունից Տեր Հովսեփը և աթոռակալեց 17 տարի՝ մինչև 763 թվականը: Մ.Կաղանկատվացու աշխատության մեջ առանձին տեղեկություններ չեն հաղորդվում Տեր Հովսեփի գործունեության վերաբերյալ: 763 թվականին Աղվանից կաթողիկոսական աթոռը գլխավորեց Տեր Դավիթ Ա, որ նույնպես Ամարասի առաջնորդությունից էր: Նրա ընդամենը 4 տարի տևած աթոռակալությունը նշանավորվեց նրանով, որ երկրամասի համար քաղաքական ծանր պայմաններում անգամ կարողացավ ազատել և եկեղեցուն վերադարձնել նրանից բռնազավթած կալվածքներն ու գույքը: Հավանաբար հենց այդ հանգամանքն էլ պատճառ հանդիսացավ նրա թշնամիների կողմից կազմակերպած դավադրության: 767 թվականին թունավորման հետևանքով Հայ Աղվանից Տեր Դավիթ Ա կաթողիկոսը կնքեց իր մահկանացուն[240]:

236. Մ.Կաղանկատվացի, էջ 351: Տես նաև՝ Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 49:
237. А.Н. Тер-Гевондян, Армения и Арабский халифат, стр. 95.
238. Տես՝ Ստ.Մելիք-Բախշյան, նշվ.աշխ., էջ 311:
239. А.Н. Тер -Гевондян, Армения и Арабский халифат, стр. 88-97.

Այդ ժամանակաշրջանի Հայոց եկեղեցու կարևոր ձեռնարկումներից էր Պարտավում գումարված ժողովը: Արաբների երկարամյա տիրապետության արդյունքում Հայաստանը շարունակ ավերվում ու կողոպտվում էր, ի պատասխան որի ծայր էին առել հակաարաբական ապստամբություններ: Երկրում տիրող քաղաքական նման խառնակ դրության հետևանքով Ամենայն Հայոց Սիոն կաթողիկոսը (763-775թթ.) ստիպված էր եկեղեցական ժողովը գումարել Պարտավում՝ Դվինում անհնար լինելու պատճառով:

768 թվականին գումարված ժողովին մասնակցում էին Հայոց Աղվանքի Դավիթ Բ կաթողիկոսը, բազմաթիվ հոգևոր ու աշխարհիկ գործիչներ[241]: Ժողովի գումարման հիմնական նպատակն էր՝ միջոցառումներ ձեռնարկել երկրում տիրող անկարգությունների վերացման ուղղությամբ: Այն բացվում է Ամենայն Հայոց Սիոն կաթողիկոսի նախագահությամբ ու օրհնական խոսքով. «Ի սոյն միաբանական ժողով ամ յամէ մեզ արժան է հասանել, քննել եւ տեսանել զկարգս եկեղեցւոյ, զոր կանոնեցին սուրբ հարքն, թէ որպէս ունիցին առաջնորդք կամ ժողովուրդք եկեղեցւոյ: Վասն որոյ ես՝ Սիոն, որ ոչ ըստ արժանեաց, այլ ըստ ողորմութեանն Աստուծոյ, եպիսկոպոսապետ Հայոց, հոգ զայս յանձին եդեալ կոչեցի զեպիսկոպոսակիցս իմ ի հոգեկան հարկիս այսորիկ, խորհուրդ տնտեսել մեզ սպասաւորաց բանին, զոր ընկալաք յանձին

240. Մ.Կաղանկատվացի, էջ 345:
241. Կանոնագիրք Հայոց, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, հ.Բ, Եր.,1971,էջ 4:

հովուել զժողովուրդ Տեառն, հաստատել զաւանդեալ աւրինադրութիւն սուրբ հարցն, իսկ զքերին լնուլ բարեպաշտութեամբ, ի նոյն կանոն միաբանեալ»[242]:

Քննարկելով եկեղեցիներում առաջացած խառնաշփոթությունները, ոչ օրինական կերպով կատարվող ծեսերն ու արարողությունները, ժողովը մշակեց 24 կետից բաղկացած մի կանոնախումբ, որ Հայոց Կանոնագրքում մուծվել է 25(Ի)-րդ համարի տակ[243]: Ժողովի գումարումը նույնպես վկայություն է այն իրողության, որ կենտրոնական ազգային իշխանության բացակայության պայմաններում երկրի ներքին կյանքում հասարակական կարգ ու կանոն մտցնելու գործում անգնահատելի դեր էին կատարում ազգային եկեղեցական ժողովներում ընդունված կանոնները: Հատկանշական է նաև, որ հայ եկեղեցական ժողովներին մասնակցում էին նաև աշխարհիկ իշխաններ և որ ժողովները հրավիրվում էին հատկապես քաղաքական ճգնաժամային իրավիճակների դեպքում. «Այդ տեսակետից հետաքրքրություն են ներկայացնում Աշտիշատի (356թ.), Շահապիվանի (443թ.), Աղվանից Վաչագան թագավորի (488թ.), Դվինի (բ-րդ 555թ. և դ-րդ 648թ.), Պարտավի (768թ.)... եկեղեցական ժողովների կանոնները»[244]:

767 թվականին Հայոց արևելից կամ Հայ Աղվանից կաթողիկոս Դավիթ Ա-ի եղերական մահից հետո աթոռակալեց Դավիթ Բ եպիսկոպոսը՝ Մեծ Կողմանքի առաջնորդությունից: Ստույգ հայտնի չէ, նախորդի դժբախտ մահվան շարժառի՞թը, թե պարզապես արծաթասեր լինելու պատճառով, ինչպես որ նրան ներկայացնում են պահպանված աղբյուրները, Դավիթ Բ կաթողիկոսը այլազգիներին է վաճառում եկեղեցական կալվածքների մի մասը. «Սա վաճառեաց անօրինաց զԴաստակերտն և զՍահմանախաչն»[245]: Պատմության մեջ թողնելով միայն այսքանը՝ վախճանվում է 776 թվականին: Այնուհետև իրար են հաջորդում կաթողիկոսների մի շարք, որոնց մասին տեղեկություններ չունենք, բացի պատմագրի հաղորդած անվանացանկից ու նրանց գահակալության տարեթվերից, որ հետևյալն է.«Տէր Մաթէոս՝ ամ մի և կէս

242. Տես նույն տեղում, էջ 6:
243. Տես նույն տեղում, էջ 3-18:
244. Խ.Սամուելյան, Հայ հին իրավունքի պատմություն, հ.1, Եր., 1939, էջ 51:
245. Մ.Կաղանկատվացի, էջ 345:

(776-777), յեպիսկոպոսութենէն Կապաղակայ և սա դեղօք վախճանեցաւ ի դաւողաց:

Տէր Մովսէս, ամս բ:

Տէր Ահարոն, ամս բ:

Տէր Սողոմոն, կէս ամ:

Տէր Թէոդորոս, ամս դ յեպիսկոպոսութենէն Գարդմանայ»[246]:

Պատմագրի հաղորդած անվանացանկի համաձայն Թեոդորոս կաթողիկոսին փոխարինել է Տեր Սողոմոնը, որի աթոռակալությունը տևել է 785-ից մինչև 796 թվականը: Ժողովուրդը շարունակում էր մնալ արաբական ծանր լծի տակ, որ գնալով ավելի անտանելի էր դառնում նրանց կողմից վարվող ծանր հարկային քաղաքականության հետևանքով: Հուսահատ ժողովրդի թախանձանքից դրդված Աղվանից կաթողիկոսը խնդրում է Հայոց Եսայի հայրապետին՝ միջնորդելու համար արաբական իշխանությունների առջև՝ որոշակի չափով մեղմացնելու հարկերը: «Հայոց ժողովրդեան թախանձանքից ստիպեալ՝ Հայոց Եսայի կաթողիկոսն իր եպիսկոպոսներով դիմում է Աւբեթլա կամ Օբեթլա ոստիկանին, որ նստում էր Պարտավում... բայց ոչինչ չեն շահում»[247]:

Տեր Սողոմոնի աթոռակալությամբ ավարտվում է Հայոց արևելից կամ Հայ Աղվանից կաթողիկոսության Պարտավյան շրջանը, քանի որ նրան հաջորդած Հովհաննես Ա կաթողիկոսը(796-821թթ.), Պարտավում նստող արաբ ոստիկանի ճնշման տակ ստիպված է լինում կաթողիկոսական աթոռը Պարտավից տեղափոխել Տրտու գետի ափին գտնվող Բերդակ բնակավայրը, որ մինչ այդ Աղվանից կաթողիկոսների ամառանոցն էր: Հարկ է նշել նաև, որ Հարուն ալ Ռաշիդ խալիֆի օրոք՝ 793-794 թթ., հայերից բացի Պարտավն արդեն ուներ նշանակալից թիվ կազմող պարսիկ ազգաբնակչություն, որ նույնպես պայքարի մեջ էր գտնվում արաբների հետ և ստեղծված քաղաքական հեղհեղուկ վիճակը, բնականաբար, այլևս անտանելի դարձավ Հայոց հոգևոր առաջնորդարանի հետագա գործունեության համար: Ուստի և «հեռացաւ այնտեղից և աղուանից մտաւոր-կուլտուրական միակ ստացուածքը-կա-

246. Նույն տեղում:
247. Մ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ.Ա, էջ 129:

թողիկոսութիւնը, որ այնուհետև միայն լեռներում կարող էր ապրել»[248]:

Այսպիսով, VIII դարի վերջին Պարտավը այլևս դադարում է լինել Հայոց արևելից կողմերի հոգևոր կենտրոնը և Հայ Աղվանից կաթողիկոսության համար սկսվում է մի նոր՝ «աստանդական» շրջանը:

248. Լեո, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական հոգեւոր դպրոցի (1838-1913): Թիֆլիզ, 1914, էջ 41:

ՀԱՅ ԱՂՎԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԱՍՏԱՆԴԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ (IX-XIV ԴԱՐԵՐ)

Աղվանից կաթողիկոսների ինքնուրույն ձեռնադրության հանգամանքները IX-X դարերում

IX դարի սկզբներից ողջ արաբական խալիֆայությունում բռնկված ազգային-ազատագրական պայքարը ավելի համառ ու կազմակերպված բնույթ ընդունեց, որի հետևանքով խալիֆայությունը սկսեց թուլացում ապրել: Այդ նույն ժամանակներից սկսած Հայաստանում տեղի էր ունենում հայ նախարարական գերդաստանների քաղաքական դերի ու հեղինակության բարձրացում: Բագրատունիները, Սյունյաց տերերը, Արծրունիները, որոնք իրենց քաղաքական ու տնտեսական դերը զիջել էին արաբ մահմեդական ամիրայություններին, վերստին դարձան տնտեսական ու ռազմաքաղաքական ծանրակշիռ միավորներ, որոնք աստիճանաբար միավորելով իրենց ուժերը, երբեմն նաև զենքի էին դիմում՝ մեկընդմիշտ թոթափելու արաբական ծանր լուծը: Արցախ-Խաչենի տերն էր դարձել Սահլ-Սմբատյանը, որի տիրույթները ձգվում էին Սևանի արևելյան ափից մինչև Մուխանք դաշտը, իսկ Եսայի Առանշահիկը նույն ժամանակ տիրում էր Երկրամասի հարավային գավառներին[249]:

Պատմագրի վկայությամբ 822թ. Պարտավից արաբները հանկարծակի հարձակվում և ավերում ու կողոպտում են Վարանդայի գավառը, գերեվարելով հազարի հասնող հայ մարդկանց և ամրանում Շիկաքար բերդում: «Յայնժամ արի և շքեղատեսակն Սահլի Սմբատեան Եռանշահիկն տէր՝ քաջազօր եղբարք իւրովք և զօրօքն իւրեանց ի լուսանալ առաւօտուն ի վերայ յարձակեալ առ հասարակ դիաքաւալ զնոսա ցիր և ցան կացուցանէին, և որպէս յառիւծու ժանեաց զգերեալսն ի բաց կորզէին»[250]: Սահլ Սմբատյանին հաջողվեց սաստել նաև Բաբեկի աս-

249. Բ.Ուլուբաբյան, Արցախի պատմություն, Եր., 1994, էջ 43:
250. Մ.Կաղանկատվացի, էջ 326:

պատակությունները Արցախում, որ այդ ժամանակ իսկական չարիք էր դարձել Հայոց արևելից կողմերի հայության համար:

Նույն ժամանակահատվածում իր ռազմաքաղաքական դիրքերն է ամրապնդում Դիզակի Եսայի Առանշահիկ իշխանը՝ պատմագրության մեջ հայտնի Եսայի Աբու Մուսե հիշատակությամբ: Միաժամանակ շարունակվող դարավոր մրցակցությունը պարսկական ծագման Միհրանյան և Առանշահիկ հայ տոհմերի միջև հասել էր գագաթնակետին. առաջինը նկատելիորեն թուլացել, իսկ երկրորդը շարունակ հզորանում էր, տիրանալով հայրենի երկրամասի կարևոր բերդ-ամրոցներին: Եռանշահիկ կամ Առանշահիկ իշխանական տոհմի հզորության վկայություն է Քթիշի հերոսական պաշտպանությունը: Եսայի Աբու Մուսեի առաջնորդությամբ Դիզակի Քթիշ բերդում ամրացած հայ զինվորությունը արժանի հակահարված հասցրեց մինչ այդ Հայաստանի մեծագույն մասը նվաճած արաբ զորավար Բուղայի մեծաքանակ զորքին: Սակայն ինչպես միշտ այս անգամ էլ մահմեդական հակառակորդի կողմից գործի է դրվում խարդավանքը. հայ իշխանները, որոնց թվում և հաղթողի համբավը վաստակած Աբու Մուսեն, խաբեությամբ աքսորվում և տարվում են Սամառա[251]:

Քաղաքական այսպիսի ծանր իրավիճակում, երբ դժվար կացության մեջ էր նաև Մայր Աթոռը, Աղվանից կամ Հայոց արևելից կաթողիկոսությունը ողջ կարելիություններով շարունակում էր իր աստվածաբուխ առաքելությունը օրհասական դրության մեջ հայտնված ժողովրդի շրջանում: 821 թվականին Աղվանից Տեր Հովհաննես Ա կաթողիկոսին հաջորդել էր Մովսես Բ կաթողիկոսը, որն, ըստ աղբյուրների, աթոռակալել է ընդամենը 6 ամիս և նրան փոխարինել էր Կապաղակի առաջնորդությունից Դավիթ Գ եպիսկոպոսը (821-849թթ.)[252]:

849 թվականին Դավիթ Գ կաթողիկոսը ավանդեց իր հոգին և Հայոց արևելից հայրապետական աթոռը անցավ Հովսեփ Բ եպիսկոպոսին: Տարաբախտաբար վերոհիշյալ հոգևոր գործիչների գործունեության

251. Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն Տանն Արծրունեաց, Եր., 1985, էջ 296: Տես նաև՝ Լեո, Երկերի ժողովածու, հ.2, էջ 450:
252. Տես՝ Մ.Կաղանկատվացի, էջ 345: Կ.Գանձակեցի, էջ 198: Հովհ.Շահխաթունյանց, հ.Բ, էջ 337:

վերաբերյալ առանձնակի տեղեկություններ չեն հանդիպել: Տեր Հովսեփի աթոռակալության ժամանակահատվածը ճշգրտելու նպատակով առկա աղբյուրների համադրությամբ կարելի է նկատել, որ այն սկսվում է 849 թվականից, այսինքն իրեն նախորդից անմիջապես հետո, քանի որ և Մ. Դասխուրանցին և Կ. Գանձակեցին հավաստում են, որ նրա աթոռակալության երրորդ տարին լրանում է հայոց երեք հարյուր թվականը[253], և 27 տարի աթոռակալելով, իր մահկանացուն կնքել է 876 թվականին:

Պատմագրի հակիրճ վկայությամբ, մահացած Հովսեփ Բ կաթողիկոսից հետո կաթողիկոսական աթոռին տիրացավ Մեծ Կողմանց եպիսկոպոս Սամվելը (876-893թթ.): «Իսկ Մեծկողմանցն եպիսկոպոսն Սամուէլ անձնակամակ ընդ Միսայելի քահանայի, որ իմաստասէրն կոչիւր խորհրդազգած եղեալ՝ առանց գլխաւորագունին աջոյ տայ զեպիսկոպոսութիւնն իւր Միսայելի. և ինքն Սամուէլ զանկատարն առնու ձեռնադրութիւն յիւրմէ եպիսկոպոսէն»[254]: Պատմագրի հաղորդածից կարելի է նկատել, որ Սամուել եպիսկոպոսը հավանաբար Հայ Աղվանից հայրապետական աթոռը նախ և առաջ թափուր չթողնելու մտահոգությամբ դիմեց այդ քայլին, քանի որ նրա հետագա գործունեության մեջ չի նկատվում Հայոց Մայր Աթոռին հակադրվելու որևէ քայլ կամ ձեռնարկում:

Սամվել եպիսկոպոսի ինքնուրույն ձեռնադրությունը չընդունեցին Հայոց արևելից աշխարհիկ տերերը, որոնք քաղաքական հանգամանքների բերումով չեն կարողացել մասնակցելու նոր հայրապետի ընտրությանը: Այդ մասին բավական հստակ ներկայացնում է մատենագիրը. «Լուրս այս եհաս ի բանակն. և բազում եղև խռովութիւն իշխանացն Աղուանից»[255], և այդ մասին նրանք զեկուցում են Ամենայն Հայոց հայրապետին:

Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսը պահանջում է օրինական կարգով վերականգնել խաղաղությունը, որին և ձեռնամուխ է լինում հենց Սամ-

253. Մ.Կաղանկատվացի, էջ 346: Կ.Գանձակեցի, էջ 198:
254. Մ.Կաղանկատվացի, էջ 334:
255. Նույն տեղում:

վել եպիսկոպոսը, քանի որ նա ինքը որևէ այլ նպատակներ չուներ. «Եւ նորա իմաստաբար ածեալ ի հաւան զպետս և զիշխանս Աղուանիս՝ խաղաղութիւն ի մէջ նոցա առնէր»[256]: Իսկ խաղաղասեր Աշոտ Բագրատունու հորդորմամբ Հայ Աղվանից Սամվել ինքնակոչ կաթողիկոսը մեկնում է Դվին և կաթողիկոսական օրինավոր օծման կարգ ստանում Ամենայն Հայոց Գևորգ Բ Գառնեցի հայրապետից[257]: «...Սա անձամբ առեալ զպատիւն՝ լուծաւ ի Գէորգ Բ կաթողիկոսէ Հայոց. այլ զկնի գնացեալ ի Դուին առ նա՝ անդրէն հաստատեցաւ յաթոռն»[258]: Օծման արարողությունը տեղի է ունեցել 876 թվականին[259], որ և պետք է ընդունել Տեր Սամվելի աթոռակալության սկիզբը:

IX դարի երկրորդ կեսին Հայաստանի քաղաքական կյանքում տեղի ունեցած խոշոր իրադարձությունը պետք է համարել արաբական խալիֆայության կողմից Հայաստանի ինքնուրույնության ճանաչումը: 862 թվականին Աշոտ Բագրատունուն շնորհվեց իշխանաց իշխանի տիտղոսը: Ժամանակի պատմիչ Թովմա Արծրունին հիշյալի կապակցությամբ հետևյալն է նշել. «Բայց քանզի հաւատացեալ էր վերակացութիւն աշխարհիս Հայոց Աշոտի, որ իշխանաց իշխան՝ ձեռն ի գործ արկեալ նուաճել զիշխանս Հայոց, զՎրաց և զԱղուանից, որ եղև իսկ»[260]: Այսպես, Աշոտ Բագրատունու կառավարման իրավունքը տարածվում էր Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի վրա, իսկ 885թ. դրվում է հայկական ինքնուրույն պետականության հիմքը, հանձինս Բագրատունյաց թագավորության:

Քաղաքական այս փոփոխությունները, բնականաբար, իրենց բարերար ազդեցությունն ունեցան Հայոց արևելից կողմերի քաղաքական ու հոգևոր կյանքի վրա: IX դարի վերջին նկատելի հզորացում են ապրում նաև Հայոց արևելից իշխանական տոհմերը, նույնիսկ ձեռք բերելով թագ.կրելու իրավունք, հանձինս Բագրատունի Համամ Արևելցու:

256. Նույն տեղում, էջ 334-335:
257. Կ.Գանձակեցի, էջ 198: Տես նաև՝ Մ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, էջ 159:
258. Հովհ.Շահխաթունյանց, էջ 338:
259. Մ.Կաղանկատվացի, էջ 335:
260. Թ.Արծրունի, էջ 322:

Հայկական աղբյուրների հաղորդման համաձայն Հայ Աղվանից կամ Հայոց արևելից թագավորության վերականգնողը հանդիսացել է Բագրատունի Համամ իշխանը[261]: Այդ առիթով Մովսես Դասխուրանցին հետևյալն է գրել. «Ապա բարեպաշտն Համամ, որ և Աղուանից եղև թագաւոր, նոյնպէս զկործանեալ թագաւորութիւն տանս Աղուանից նորոգեաց, որպէս Աշոտ Բագրատունի՝ զՀայոց թագաւորութիւնն... Եւ նոյն ինքն Համամ սակս առ Աստուած մեծապէս յանցանացն, որ վասն սնոտի այս կենացս զպարտ արեալ եղբօրն ժողովեալ յանձին իւրում մեծագոյն բարեգործութիւնս առ եկեղեցիս և առ ամենայն կարօտեալս և չքաւորս առատագուարթ անսպառ կատարէր, որ և զմեծ հայրապետն Հայոց Գէորգ յանօրէն Տաճկաց կապարանէն բազմաբաշխ գանձիւք տայր արձակել և յոգնամեծար զնա արարեալ՝ առողջ առ Հայաստանեայս առաքէր»[262]: Այսպիսով, Հայ Աղվանից կամ Հայոց Արևելից նոր թագավորության հիմնադիրն է եղել Համամ Բագրատունին և պատմիչների մոտ հիշատակված «արևելից թագաւոր Համամ»-ը, ինչպես օրինակ Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսն է նշել. «Մեծ իշխանն Արևելից Համամ»[263], վերոհիշյալ Համամն է:

893 թվականին իր մահկանացուն է կնքում Հայ Աղվանից Սամվել կաթողիկոսը: Դա մի ժամանակահատված էր, երբ արաբները կրկին ներխուժել էին Հայաստան: Ամենայն Հայոց Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսը, հանդես գալով հաշտարարի դերում, փորձում է Հայոց Սմբատ թագավորին համոզել ներկայանալու արաբ ոստիկան Ափշինին, սակայն թագավորը, հասկանալով ոստիկանի նենգ մտադրությունը, մերժում է կաթողիկոսի խնդիրը, և կաթողիկոսը ինքն է վերադառնում արաբների կողմից գրավված Դվին ու ներկայանում ոստիկանին: Վերջինիս հրամանով կաթողիկոսը ձերբակալվում, տեղափոխվում է Պարտավ ու շղթայակապ նետվում բանտ: Կաթողիկոսի գերության մեջ գտնվելու ժամանակ Հայոց կաթողիկոսարանի Հովնան եպիսկոպոսը գալով Հայոց արևելից կողմերը, ինքնակոչ կերպով, առանց Ամենայն

261. Մ.Կաղանկատվացի, էջ 335:
262. Նույն տեղում, էջ 335-336:
263. Հովհ.Դրասխանակերտցի, էջ 174:

Հայոց կաթողիկոսի համաձայնության, ձեռնադրվում է Հայ Աղվանից կաթողիկոս[264]:

Ամենայն Հայոց կաթողիկոսին գերությունից ազատելու մտադրությամբ հայ իշխանները գումար են հավաքում և ուղարկում Հայ Աղվանից Համամ իշխանին, որպեսզի նա բանակցություններ վարի Ափշինի հետ: Հայոց Համամ իշխանն իր կողմից նույնպես որոշակի գումար ավելացնելով, կարողացավ ազատել կաթողիկոսին ու պատվով վերադարձնել իր աթոռը[265]:

Գերությունից ազատվելուց հետո հայոց հայրապետը կաթողիկոսությունից զրկում է Հայոց արևելից ինքնակոչ կաթողիկոս Հովնանին: Սակայն Համամ իշխանի խնդրանքը հարգելով, ներում է շնորհում և օրինական կարգով օծում նրան Աղվանքի կաթողիկոս:

Այստեղ վերստին ստիպված ենք անդրադառնալու IX դարի վերջին և X դարի սկզբին Հայաստանում տիրող քաղաքական իրադրությանը, քանի որ վերջինս բնականորեն իր ուղղակի անդրադարձներն է ունեցել Հայոց հոգևոր հաստատության վրա: Ինչպես նշվել է, երկրում վերականգնվել էր ինքնուրույն պետականությունը, որ սակայն, արաբբյուզանդական թշնամականորեն տրամադրված պետությունների միջև գոյություն ունեցող քաղաքական մրցակցության պայմաններում, չէր կարող կայուն լինել, քանի որ այն ուղղված էր նաև հայ իշխանների քաղաքական միության դեմ: Արդյունքում՝ պետականության գլուխ կանգնած Բագրատունյաց հարստության թագավորները ստիպված էին պարբերաբար պայքարել Հայաստանի հզորացմանը խոչընդոտող և թշնամական տերությունների կողմից հովանավորվող կենտրոնախույս ուժերի դեմ: Այնուհանդերձ, ստեղծվեցին հայկական մի շարք իշխանություններ, որոնք աստիճանաբար ձեռք էին բերում թագավորության կարգավիճակ: Դրանց շարքին էր պատկանում Աղվանքի կամ Հայոց արևելից կողմանց իշխանությունը, որի գլուխ կանգնած Բագրատունիները ևս ձեռք էին բերել թագ կրելու իրավունք, հանձին Բագ-

264. Տես՝ Կ.Գանձակեցի, էջ 198: Մ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, էջ 160:
265. Տես՝ Լեո, հ.2, էջ 516:

ռատունի Համամ Արևելցու[266]:

Քաղաքական այս մասնատումը, բնականաբար, լուրջ վտանգ էր ներկայացնում նաև եկեղեցական հաստատության մասնատման համար: IX դարի վերջին արդեն հիշատակված Հայ Աղվանից «ինքնակոչ» կաթողիկոսների հայտնվելը հոգևոր առաջնորդության գլուխ, թվում է հենց ասվածի վկայություններից մեկն է: Սակայն, ինչպես վկայում են պահպանված փաստերը և որոնց մասին արդեն իսկ նշվել է, Հայոց կաթողիկոսությունը իր բոլոր կարելիություններով շարունակում էր պայքարել Հայոց եկեղեցու ներսում երբեմն դրսևորվող մասնատողական փորձերի դեմ: Եվ հիմք ընդունելով աղբյուրների հաղորդած տեղեկությունները, հարկ է նկատել, որ Հայոց եկեղեցու հիշյալ քաղաքականությունը ունեցավ իր դրական արդյունքները, ընդ որում նաև Հայ Աղվանից եկեղեցու հարաբերությամբ: Հայ Աղվանից եկեղեցին շարունակում էր մնալ որպես Հայոց եկեղեցուն ենթակա արքեպիսկոպոսություն: Այդ մասին բավական հստակ վկայում է Ստ.Օրբելյանը. «կրկին ձեռնադրէ զՅօնան արքեպիսկոպոս Աղվանից»[267]:

902 թվականին վախճանվում է Հովհանը, և կաթողիկոս է ձեռնադրվում Սիմեոն Բ-ն՝ Հայ Աղվանից կաթողիկոսարանի եպիսկոպոսը: Առկա բոլոր աղբյուրները դրականորեն են խոսում Սիմեոն Բ կաթողիկոսի գործունեության վերաբերյալ: Մ.Դասխուրանցին համառոտակի հետևյալն է նշել. «...առաւել զարդարեաց սպասիւք զՍուրբ խաչն»[268]:

Ստ.Օրբելյանը Տեր Սիմեոնի մասին հիշատակում է «Գիր վճռի շրջակայ սահմանին Տաթեւոյ» մասին վավերագրի կազմման հետ կապված, որ տեղի է ունեցել «ի թուականութեանս Հայոց 355»[269]: Այնուհանդերձ, հոգևոր թեմի համար պատմական նշանակություն ունեցող այդ փաստաթղթի տակ ստորագրել են. «Ես՝ Յովհաննէս, շնորհիւն Աստծոյ կաթողիկոս Հայոց, վկայ եմ այսմ անխախտ և անխափան վճռոյս որ ավանդեցաւ ի մեծ իշխանացս Սիւնեաց. և կնքեցի իմով սովորական

266. Տես՝ Հ.Ա.Հարությունյան, Հայաստանը 9-11-րդ դարերում, Եր., 1959, էջ 31:
267. Ստ.Օրբելյան, էջ 281:
268. Մ.Կաղանկատվացի, էջ 346:
269. Ստ.Օրբելյան, գլ. Խ, էջ 234:

մատանեավս: Ես Սմբատ Բագրատունի՝ թագաւոր Հայոց, հաստատեցի իմով ձեռամբս զայս վճիռս...»[270]: Այնուհետև հիշատակվում են Վասպուրականի Արծրունյաց իշխանների անունները և «Ես՝ նուաստ ծառայ Աստուծոյ և Աղվանից արքեպիսկոպոս Տէր Սիմէոն, վկայ եմ այսմ վճռիս և իմով մատանեաւ կնքեցի զսա»[271]: Ինքն իրեն «արքեպիսկոպոս» ձևով հիշատակող կաթողիկոսի վկայությունը, կարծում ենք, ևս բավարար փաստ պետք է ընդունել Հայ Աղվանից կաթողիկոսությունը հիշյալ ժամանակաշրջանում Հայոց եկեղեցու ենթակայության տակ ճանաչվելու և գտնվելու մասին:

Սակայն Հայ Աղվանից Սիմեոն Բ-ի կաթողիկոսությունը նսեմացնող մեկ հանգամանք գոյություն ուներ. նա ձեռնադրությունը ստացել էր իր միայն ենթակա եպիսկոպոսներից և ոչ, ընդունված կարգի համաձայն, Հայոց կաթողիկոսից: Դա էլ, թերևս, պետք է բացատրել երկրում տիրող քաղաքական անբարենպաստ պայմանների թելադրանքով կատարված հարկադրական քայլ, բայց ոչ անջատողական միտում:

Սիմեոն Բ-ն 21 տարի առաջնորդեց կաթողիկոսական աթոռը և 923 թվականին կնքեց իր մահկանացուն: Հայ Աղվանից կաթողիկոսական աթոռին տիրացավ Փառիսոսի առաջնորդարանի Տեր Դավիթը (923-930թթ.), որին էլ հաջորդեց Մեծ Կողմանքի եպիսկոպոս Տեր Սահակը (930-948թթ.):

930 թվականից Հայ Աղվանից կաթողիկոսական աթոռը առաջնորդած Տեր Սահակի մասին և Մ. Դասխուրանցին և Կ. Գանձակեցին որևէ այլ տեղեկություն չեն հաղորդում: Ստ. Օրբելյանը, խոսելով Սյունյաց և Հայ Աղվանից եկեղեցական թեմերի հիշյալ շրջանում գոյություն ունեցող հարաբերությունների մասին, նշում է, որ «էր կաթողիկոս յԱղվանս Սահակ անուն, որ հոգևորական սիրոյ կապակցութեամբ յարակցեալ էր Տեառն Յակոբայ. և էին միմեանց համախոհ և յոյժ մերձաւոր»[272]: Պատմիչը միանշանակորեն դրական է գնահատում երկու հոգևոր թեմերի «խիստ մոտ» հարաբերությունը, ու միաժամանակ ներկայացնելով դրա օբյեկտիվ պատճառները, որևէ ակնարկ չի կատարում հիշյալ թեմերի մերձեցումը վերագրելու որպես Ամենայն Հայոց Աթոռից անջատվելուն ուղղված ձեռնարկում:

Սահակ կաթողիկոսի անունը այնուհետև աղբյուրներում հիշատակվում է՝ կապված Անանիա Մոկացու հայրապետական գործունեության հետ. «Տէր Անանի Մոկացին ամս ԻԲ: Ե ում յԱղթամար և ժէ ում ի Վարագ եկաց: Իւր Թղթերում չեն յիշում ոչ Աղթամարը ոչ Վարագը և ոչ Արգինան, միայն այսչափն է երևում, որ իւր առաջին հրովարտակը (=կոնդակ), ուղղուած Աղուանից Սահակ կաթողիկոսին, գրել է Գագիկ Արծրունի թագաւորի հաւանութեամբ և խորհրդով, ուրեմն և Վասպուրականում: Յաջորդ տարին մեռնում է Գագիկը (943թ.)...»[273]: Ուրեմն Հայոց հայրապետի առաջին հրովարտակը ուղղված էր Հայ Աղվանից Սահակ կաթողիկոսին և գրվել է 942 թվականին:

948 թվականին Սահակ կաթողիկոսին հաջորդեց Գարդման գավառի եպիսկոպոս Տեր Գագիկը, որ աթոռակալեց «ամս չորեքտասան. ի սորա չորրորդ ամին լցաւ թուականն հայոց չորեք հարիւր»[274]: Ինչպես Մ. Դասխուրանցին, այնպես և Կ. Գանձակեցին տարաբախտաբար, Տեր Գագիկի գործունեության վերաբերյալ առանձին տեղեկություններ չեն հաղորդում, որի պատճառով և ստիպված ենք բավարարվել միայն Ստ. Օրբելյանի հաղորդած տեղեկություններով, որոնք պահանջում են քննական մոտեցում ունենալ խնդրո առարկա հանդիսացող հարցի կապակցությամբ, քանի որ նույն աղբյուրի մեջ կան հակասական տեսակետներ:

Պատմագիրը նշում է, որ «Եւ յետ Սահակայ առաջնորդէր Գագիկ՝ եղբայր նորին. և սա առաւել համարձակեալ էր ի սէր միաբանութեան ընդ Յակոբայ՝ Սիւնեաց եպիսկոպոսի»[275]: Իսկ Ամենայն Հայոց Անանիա Մոկացի կաթողիկոսը գրել է. «...վախճանէր ապա կարծեալ հայրապետն Աղուանից՝ Սահակն կոչեցեալ, և թողոյր փոխանակ ինքեան զհարազատ իւր՝ զԳագիկ՝ նովին թերակատար ձեռնադրութեամբն, զոր

270. Նույն տեղում, էջ 233:
271. Նույն տեղում, էջ 233-234:
272. Ստ.Օրբելյան, էջ 274:

273. Յավելուած Արարատի, 1897, փետրուար, էջ 91:
274. Կ.Գանձակեցի, էջ 198:
275. Ստ Օրբելյան, էջ 274:

ինքն ունէր առանց սրբոյ Լուսաւորչին և մերոյ աթոռակալացն. այր համեստ և գեղեցկադէմ և չափաւոր հասակաւ»[276]: Կարելի է նկատել, որ հայոց հայրապետը, այնուամենայնիվ, չէր թաքցնում իր համակրանքը Հայ Աղվանից Գագիկ կաթողիկոսի նկատմամբ, որ նույնպես անօրինական ձեռնադրություն ընդունած կաթողիկոսների թվին էր պատկանում:

Ահա այսպես, տակավին Հովնան եպիսկոպոսից սկսած Աղվանից կաթողիկոսական աթոռին մեկը մյուսի ետևից բազմեցին կաթողիկոսներ, որոնք իրենց օրինական ձեռնադրությունը չէին ստացել հայոց հայրապետից: Պահպանված աղբյուրներում Հայոց արևելից հիշյալ կաթողիկոսների ձեռնադրությունը իրենց ենթակա եպիսկոպոսներից գնահատվում է որպես Հայոց եկեղեցական ընդհանուր օրենքին հակասող երևույթ, քանի որ ընդունված կարգի համաձայն նրանք պետք է ձեռնադրություն ստանային հայոց հայրապետներից, մի կարգ, որ գոյություն ուներ եկեղեցական հաստատության հիմնադրման պահից ի վեր:

Արդարև, առաջին իսկ պահից Հայ Աղվանից հիշատակված կաթողիկոսների ընդունված կարգին հակասող ձեռնադրությունը պետք է համարել անընդունելի, անգամ դատապարտելի քայլ, քանի որ այն իր հերթին կդառնար արաբա-բյուզանդական կողմերի Հայաստանը քաղաքականապես մասնատելուն ուղղված քաղաքականության իրագործման համար լուրջ խթան:

Հայ ժողովրդի պատմությունը շարահարող հայ վարդապետ-պատմիչները միանշանակորեն սերունդներին ավանդել են այն պարզ ճշմարտությունը, որ ազգի հզորության աղբյուրը նրա հոգևոր ու բարոյական միասնության մեջ է: Եվ այդ գիտակցությամբ էլ մեր հոգևոր նվիրապետները մշտապես աշխատել են հնարավորինս կայուն պահել ժողովրդի հոգևոր-բարոյական միասնությունն անգամ քաղաքական մասնատվածության պայմաններում, հիշյալ ասպարեզում ամեն մի, թեկուզ աննշան խախտում որակելով որպես դավաճանության համա-

276. Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից որ ընդ ժամանակս լեալ իցե ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ լուսավորչի աթոռոյն, Յավելուած Արարատի, 1897, մարտ, էջ 133:

հավասար արարք, որ և դատապարտվել է Հայոց Մայր եկեղեցու նվիրապետների կողմից: Բայց միաժամանակ պետք է նշել, որ նրանք թերևս երբեմն անտեսում էին երկրում տիրող քաղաքական իրավիճակը, և բավական անզիջում կեցվածք ընդունում եկեղեցական թեմերի ինքնուրույն գործունեության նկատմամբ:

Այս տեսանկյունով կարելի է մեկնաբանել նաև X դարի սկզբին ստեղծված կացությունը, երբ Հայոց արևելից կաթողիկոսները պարզապես ստիպված էին ձեռնադրություն ընդունել միայն իրենց ենթակա եպիսկոպոսներից, քանի որ նույն ժամանակներում աստանդական վիճակում էին հայտնվել նաև Ամենայն Հայոց հայրապետները Մայր Աթոռին սպառնացող քաղաքական արհավիրքների պատճառով: Այդպես էին Գևորգ Բ Գառնեցու, Մաշտոց Եղվարդեցու, Հովհաննես Դրասխանակերտցու, Ստեփանոս Բ Ռշտունու, Թեոդորոս Ա Ռշտունու ժամանակներում[277]:

Իսկ Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը իր աշխատության մեջ տվել է հանգամանալից ու հավաստի նկարագրությունը այն ժամանակների վերաբերյալ, երբ աստանդական վիճակում հայտնված կաթողիկոսն ստիպված էր շրջագայել նաև Արցախ-Ուտիքյան հայաշխարհի և Անդրկուրյան հայկական գավառների մենաստաններում:

Թերևս նշված և տվյալ ժամանակների հետ առնչվող նաև մի շարք ուրիշ փաստարկներից պետք է նկատել, որ Հայոց եկեղեցու Արևելյան թևի կաթողիկոսների ընդունված կարգին հակառակ ձեռնադրությունը բացատրվում է լոկ քաղաքական աննպաստ պայմաններով. աստանդական վիճակում հայտնված Ամենայն Հայոց կաթողիկոսության կողմից ձեռնադրություն ընդունելու անհնարինության և կամ, երբեմն մեծ դժվարությունների հետ կապված լինելով, բայց ոչ Հայոց եկեղեցուց անջատվելու միտումով: Իսկ եթե քննարկման նյութ դարձնենք Ստ. Օրբելյանի հիշյալ փաստի կապակցությամբ գրառումը. «Եւ զի կաթողիկոսքն Հայոց հեռացեալ էին յայնմ ժամանակի զի վասն հանապազորդեան հինահարութեանցն Իսմայէլացւոց թողեալ էին զաթոռն որ ի Դվին և շրջէին այսր և անդր ընդ թագաւորացն Հայոց: Երբեմն բնակէին

277. Տես Բ.Ուլուբաբյան, Հայոց Արևելից եկեղեցին և մշակույթը, էջ 165:

առ Գագկայ թագաւորին ի Վասպուրական աշխարհի, ի վանս Ձորոյ, ուր կայր սեղանն և աթոռն և գաւազան սրբոյն Գրիգորի. երբեմն՝ բնակէին ի Շիրակ գավառի Առ Շիրակավանին ի վանսն Արգինայի. և այսպէս տարաբերեալք լինեին»[278]: Ահա այսպես, նկարագրելով Հայոց կաթողիկոսների աստանդական վիճակը, Ստ.Օրբելյանը մի կողմից կարծես փորձում է արդարացնել Սյունյաց Հակոբ եպիսկոպոսի Հայ Աղվանից կաթողիկոսից մեռոն ընդունելու հանգամանքը, սակայն մյուս կողմից այն համարում է «մեծ գայթակղութիւն և անկանգնելի գլորումն»[279]:

Եվ անդրադառնալով Հայ Աղվանից հոգևոր առաջնորդության կողմից Սյունիքի եպիսկոպոսի խնդրանքը անմիջապես իրագործելու, ինչպես նաև, հենց իրենց ձեռնադրության ընդունման հանգամանքին, պատմագիրը իրավացիորեն նշել է. «արքեպիսկոպոսքն Աղվանից ի Հայոց կաթողիկոսացն առնուին ձեռնադրութիւն. և սակաւ մի ամօք յառաջ քան զայս ետս էին կացեալ՝ ի վախճանէն Գէորգեայ կաթողիկոսին մինչ ի ժամանակս այս Անանիայի»[280]: Այնուհետև Օրբելյանը, կարծես ինքն իրեն լրացնելու, թերևս նաև, ուղղելու մտայնությամբ, հետևյալն է գրել. «... Իսկ ի վախճանելն Գէորգայ, վասն դառն և ազգի ազգի անցից աշխարհիս յԻսմայէլականացն, ոչ կարացին հասանել առ հայրապետքն Հայոց յԱղվանից. նմանապէս և անփոյթ լինէր ի Հայոց կաթողիկոսացն. զի ամենայն ոք միայն զանձին հնարս հայթհայթէր զերծման յիսմայէլական սրոյն: Ձեռնադրեն ապա կաթողիկոս Աղվանից յետ Յօնանու զնորին հարազատն Սիմէոն անուն, ապա զԴավիթ, ապա զՍահակ, ապա զԳագիկս զայս, որ լինէր ամք 69 ինքնաձեռն և անձնիշխան թերակատար օծման նոցա»[281]:

Ուրեմն պատմիչը քաղաքական պատճառներով է բացատրում Աղվանից կաթողիկոսների «ինքնաձեռնադրական թերակատար օծումը»: Միաժամանակ չարդարացնելով այն, սակայն չի համարում Ամենայն Հայոց կաթողիկոսությունից երես դարձնելու կամ լրիվությամբ ան-

278. Ստ.Օրբելյան, էջ 274-275:
279. Նույն տեղում, էջ 275:
280. Նույն տեղում, էջ 276:
281. Նույն տեղում, էջ 281-282:

ջատվելու միտում, որպիսին ներկայացված է Աբրահամ Ձամինեանի «Հայոց եկեղեցու պատմութիւն» աշխատության մեջ. «Իսկ Աղուանք մօտ 70 տարի արդէն դադարել էին Հայոց կաթողիկոսներից ձեռնադրութիւն առնել... Արդ Անանիա կաթողիկոսը Գագիկ ու Աբաս թագաւորների յորդորներից քաջալերուած՝ վճռում է ս. Լուսաւորչի հօտից բաժանուած ու օտարացած ժողովրդին կրկին միացնել Հայոց եկեղեցու հետ և նրա նախնական միութիւնը անխախտ պահպանել»[282]: Հետաքրքիր է, որ «օտարացած ժողովրդի» մասին է խոսքը և կամ ուրիշ ինչ փաստարկներ կան այդ «օտարանալու» վերաբերյալ: Երկիրը կարող է ենթարկվել քաղաքական մասնատման, օտարի տիրապետության, բայց ժողովուրդը «օտարանալ» ինքն իրենից՝ թերևս անգամ տրամաբանական չէ, որովհետև այդ նույն ժողովուրդը մշտապես հավատարիմ է մնացել իր հավատքին, հետևաբար նաև իր արմատներին:

Այդպիսի հակասական տեսակետ զարմանալիորեն արտահայտել է նաև Մաղաքիա Օրմայանը, գրելով. «Շատոնց ծանոթ էր Աղվանից աթոռին հակամիտութիւնը, որ Հայոց հայրապետութեան հետ ունեցած կապակցութիւնը խզէ և ինքնագլուխ կաթողիկոս ըլլա և ոչ թէ Հայոց աթոռին ներքև՝ իբրև լոկ արքեպիսկոպոսութիւն սեպուի»[283]:

Հարցի քննությունը պահպանված աղբյուրների հիման վրա, սակայն, երբեք այդպիսի լուծման չի հանգեցնում: Համենայնդեպս, եթե երբեմն Աղվանից աթոռի կողմից դրսևորվել են որոշակի շեղումներ (դրանց մասին արդեն հիշատակվել են մեր կողմից-Մ.Բ.), ապա երբեք համընդհանուր ու նպատակային անջատողական միտումներ չեն եղել:

Աղբյուրների հաղորդման համաձայն ինքը՝ Հայոց Մայր Աթոռը, երբեմն որոշ կաթողիկոսների ազդեցության տակ, կարծես դեպի քաղկեդոնականությունը թեքվելու, բայց ոչ լրիվությամբ ընկրկելու փորձության է ենթարկվել, որ համենայնդեպս հիմք չի տալիս պնդելու, թե Հայոց եկեղեցին հակվել է դեպի քաղկեդոնականությունը: Նույն դրությունն էր նաև Հայոց արևելից եկեղեցու համար և դա հիմնավորել ու ներկայացնել, թե Աղվանից կաթողիկոսությունը միշտ էլ փորձում էր

282. Աբր.Ձամինեան, Հայոց եկեղեցու պատմութիւն, էջ 167:
283. Մ.Օրմանյան, Ազգապատում, հ.Ա, մաս , էջ 1088:

դուրս գալ Ամենայն Հայոց նվիրապետության ենթակայությունից, կարծում ենք այնքան էլ չի համապատասխանում իրականությանը: Հայ Աղվանից եկեղեցին Հայոց եկեղեցական հաստատությունից անջատվելու վերաբերյալ ունեցած մտադրությունների վերաբերյալ որևէ արժանահավատ աղբյուր չի հանդիպել, հավանաբար, գոյություն էլ չունի: Ինքը Մաղաքիա Օրմանյանը, այդ տեսակետը արտահայտել է լոկ ընդհանուր երևույթների ազդեցության տակ, առանց վկայակոչելու որևէ հիմնավոր աղբյուր:

Չպետք է մոռանալ նաև մեկ այլ հանգամանք, որ եթե Հայոց Արևելից կաթողիկոսությունը որևէ կերպ անջատողական ձգտում ունենար, ապա դրան նպաստող քաղաքական պայմանները թերևս առկա էին. նախ և առաջ երկրի քաղաքական մասնատվածության հետևանքով ստեղծված ինքնուրույն թագավորություններից էր Հայոց արևելից Համամ-Բագրատունու իշխանությունը, որ ինքնուրույն կաթողիկոսության հիմնավոր պատվարներից էր և, որը, սակայն, պատմագրի վկայությամբ, երբևէ չի ընդունել Հայոց եկեղեցական հաստատությունից որևէ կերպ անջատվելու և ինքնուրույնություն ունենալու տարբերակը:

Ասվածի վկայություններից պետք է ընդունել վերը նշված մեջբերումը՝ կապված Սամվել եպիսկոպոսի ինքնուրույն ձեռնադրության հետ, որի դեմ ըմբոստացել էին Աղվանից աշխարհիկ տերերը: Պակաս համոզիչ վկայություն չէ նաև հենց ինքնուրույն թագավորության հիմնադիր Համամ Բարեպաշտի վերաբերմունքը հիշյալ խնդրի առնչությամբ, երբ Հայոց արևելից իշխանի թախանձանքի շնորհիվ Գևորգ Բ Գառնեցին վերահաստատեց ինքնուրույն կաթողիկոս հռչակված Հովնանին: Եվ երկրորդ, ինչպես Ստ. Օրբելյանն է իրավացիորեն նշել, որ Աղվանքն անփութորեն անտեսվում էր հայոց կաթողիկոսների կողմից, քանի որ յուրաքանչյուր ոք միայն իր անձի համար էր հնարներ փնտրում՝ իսմայելական սրից ազատ մնալու համար[284]:

Իր տեսակետը կարծես հիմնավորելու միտումով, Մ.Օրմանյանը այնուհետև շարունակել է. «Հայաստանի շփոթ և ընկճեալ վիճակը և կաթողիկոսներուն տարտամ և թափառական աստանդականութիւնը, և

284. Տես Ստ.Օրբելյան, էջ 281:

իրենց ազդեցութեան նուազիլը նոր պատեհ ընծայեցին աղուաններուն՝ իրենց հնամենի ջանքը վերսկսելու, և Սահակ Աղուանից կաթողիկոս նորէն ոյժ տուաւ այդ նպատակին: Որպէսզի ավելի զօրաւոր ընէ իր գործը, իրեն օգնականներ ալ սկսաւ որսալ, և Հայաստանի հիւսիսային կողմերը իր ազդեցութեան ներքեւ առնել»[285]: Ակնհայտ է, որ «Հայաստանի հյուսիսային կողմերը» ասելով նա ի նկատի ուներ Սյունյաց թեմի առաջնորդ Հակոբի ձեռնադրությունը Հայ Աղվանից կաթողիկոսից, որի նկատմամբ, թեկուզ քննական մոտեցում է ունեցել նաև Սյունիքի պատմության շարահարողը, սակայն ճշմարտացիորեն ներկայացրել է նաև արդարացուցիչ հանգամանքներ պարունակող քաղաքական կացությունը:

Հիշյալի կապակցությամբ շատ բնորոշ ու արտահայտիչ ձևակերպում է կատարել Բ.Ուլուբաբյանը, որ նշել է. «Այդ կաթողիկոսները բառացիորեն թափառական էին, գավառից գավառ էին փախչում, վանքիցվանք և իրենք իսկ չգիտեին, թե որտեղ են գլուխ դնելու հաջորդ օրը... Այս դեպքում նրանց որտե՞ղ այցելեին այս Արցախի ու Սյունիքի ամբարտավանացած առաջնորդները»[286]:

Ինչ վերաբերում է Մ.Օրմանյանին, ապա, ինչպես նշեցինք, այս վերջին միտքը նա նորից շարադրել է՝ կրկին իր տեսակետը հիմնավորելու միտումով. «Միւս կողմէն այդ կողմի իշխանները, ամենքն ալ Բագրատունի սերունդէ, չէին սիրէր անուղղակի կերպով Արծրունի իշխաններու ազդեցութեան ներքև ըլլալ, որոնց հովանավորութեան ենթարկեալ էին Աղթամար նստող վերջին կաթողիկոսները»[287]: Բնականաբար խոսքը վերաբերում է Հայոց արևելից կողմանց իշխաններին, սակայն պարզ չէ, թե կոնկրետ ո՞ր աղբյուրն է հաղորդում նրանց ու Արծրունիների միջև գոյություն ունեցող որևէ հակասության մասին: Իսկ ինչ վերաբերում է նրանց կողմից տեղի հոգևոր նվիրապետներին Ամենայն Հայոց Մայր Աթոռին հակադրելու միտումներին, ապա այստեղ փաս-

285. Մ.Օրմանյան, էջ 431:
286. Բ.Ուլուբաբյան, Հայոց Արևելից եկեղեցին և մշակույթը, էջ 164: Մ.Օրմանյան, էջ 431:
287. Մ.Օրմանյան, էջ 431:

տերը բոլորովին հակառակն են հաղորդում: Հայոց արևելից Համամ Բագրատունի իշխանի արարքը, կապված Ամենայն Հայոց Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսին գերությունից ազատելու հետ, արժանի է միայն գովեստի ու մեծարման, վկայություն է Ամենայն Հայոց հայրապետի նկատմամբ տածած անսահման նվիրվածության ու խոնարհումի: Իսկ նրա հաջորդ և նույնպես աստանդական վիճակում հայտնված ու Հայոց արևելից կողմերում որոշ ժամանակ ապրած Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը որևէ ակնարկ անգամ չի կատարել հիշյալ երկրամասի աշխարհիկ տերերի կողմից հանդես բերած անբարյացկամ վերաբերմունքի մասին: «Եւ վասնզի չարացն գերչաց չար հէնք սաստկապէս դեռևս մածեալ ունէր զաշխարհս մեր. սակս այնորիկ և ես ըստ տէրունեանն հրամանի հալածեալ շրջեցայ ի քաղաքէ ի քաղաք ի կողմանս արևելեայ Աղուանից առ մեծ իշխանն Սահակ երթեալ և առ թագաւորն նոցունց Ատրներսեհ, որ ըստ արևելից հիւսիսոյ Կովկասու. զի և նոքա ի ժողովրդենէն մերմէ և խաշն արօտի մերոյ էին: Եւ ի նոցանէն ոչ ինչ սակաւ ծախս ռոճկաց ըստ իւրաքանչիւրումն սակի կարգէր մեզ պարտապանաբար վճարելով զպէտս ամենեցունց»[288]:

Կարծում ենք հիշյալից դժվար չէ ենթադրել, որ հայոց հայրապետը անգամ իր գոհունակությունն է հայտնում Հայոց արևելից աշխարհիկ տերերին, որոնք չէին խնայում իրենց միջոցները ներդնելու աստանդական վիճակում հայտնված հոգևոր առաջնորդարանի կարիքների համար: Ինչ վերաբերում է Հայ Աղվանից եկեղեցու հիշյալ շրջանում ունեցած անջատական ձգտումներին, ապա դրանց փաստացի առկայության պայմաններում անհնար էր, որ պատմիչ կաթողիկոսը որևէ ակնարկ չկատարեր այդ մասին:

Հիշյալ տեսակետը հիմնավորող վկայություն, բարեբախտաբար, հանդիպում ենք նաև հենց քննարկվող ժամանակաշրջանում Հայոց Մայր Աթոռը առաջնորդած Անանիա Մոկացու մոտ. «Իսկ մեք՝ վասնզի ոչ էր ըստ հրամանի աստուծոյ և ոչ ունէր ծեռնադրութիւն ի մէնջ՝ ոչ ընկալաք զնա և ոչ հրաման տուաք ուրուք յիշխանաց ընդունել զնա: Իսկ զնախնեացն բարեմտութիւն և զհարցն դաւանութիւն, որ կայր յԱղուանից Պատմութեանն, գիտելով իշխանացն Աղուանից, որ լիեալ էր առ նախնեօք ընդ այլ սրբոյ Լուսաւորչին աթո(Բ)ռակալաց, ոչ ընկալան զնա»[289]: Իսկ ինչ վերաբերում է Հայ Աղվանքի աշխարհիկ տերերի ու Արծրունիների միջև գոյություն ունեցած հակակրանքին կամ հակասությանը, ապա ժամանակակից պատմիչները այն հաստատող որևէ ակնարկ անգամ չեն կատարել, դեռ ավելին. Արծրունիների տան պատմիչ Թովմա Արծրունին մեծագույն հիացմունքով ու գովեստով է նկարագրում Հայոց արևելից կողմանց իշխանների մղած հերոսական պայքարը արաբների դեմ[290]:

Այսպիսով, կարելի է միանշանակորեն եզրակացնել, որ 9-րդ դարի երկրորդ կեսից սկսած, քաղաքական հանգամանքների թելադրանքով, թուլացել էին կապերը մի կողմից՝ Ամենայն Հայոց կաթողիկոսության, մյուս կողմից՝ ծայրամասային թեմերի միջև: Արդյունքում. ծայրամասային որոշ թեմեր, այդ թվում Արևելից կողմանց կամ Հայ Աղվանից և Սյունյաց թեմերը ձեռք էին բերել որոշակի ինքնուրույնություն, որը սակայն երբեք չի հասցրել ամբողջական մեկուսացման կամ անջատման: Եվ X դարում, կապված Բագրատունյաց հայկական թագավորական իշխանության հզորացման հետ, վերստին կանոնակարգվեց Հայոց Մայր Աթոռի գործունեությունը:

946 թվականին Ամենայն Հայոց հայրապետ ընտրված Անանիա Մոկացի կաթողիկոսն (943-967թթ.) իր ողջ գործունեության ընթացքում ջանք ու եռանդ չի խնայել վերստին վերականգնելու Հայոց եկեղեցու Մայր Աթոռի ու նրա ծայրամասային թեմերի միջև գոյություն ունեցող նախկին հարաբերություններն ու միասնությունը: Նախապես նշենք նաև, որ այդ նպատակին ուղղված միջոցառումները ամբողջությամբ բարեհաջող ավարտ ունեցան, քանի որ դրանց դիմակայող լուրջ խոչընդոտներ և կամ ընդվզումներ ամենևին չհանդիպեցին: Երևի թե այս հանգամանքն էլ պետք է վկայություն ընդունել այն տեսակետի, որի համաձայն Հայոց եկեղեցուց ամբողջությամբ առանձնացած թեմեր թերևս գոյություն էլ չունեին: Այստեղ տեղին է մեջ բերել հայ պատմագ-

288. Հովհ.Դրասխանակերտցի, էջ 220:

289. Անանիա Մոկացի, էջ 133:
290. Թովմա Արծրունի, էջ 276-279:

ության կարկառուն ներկայացուցիչներից Մատթեոս Ուռհայեցի վարդապետի հայտնի աշխատության այն տողերը, որոնք ուղղված էին Հովհաննես վարդապետի (մականունը Կոզեռն) այն խոսքերին, «սորա խօսեցեալ բազում բանս որպէս զմարգարէութիւնս ի վերայ այսմ ժամանակիս և խափանելոյ աստուածապաշտութեանս յամենայն մտաց. և թուլանան ի հաւատոց. զայս ասաց ի նոյն գիրքս յառաջ ժամանակաց: Արդ այս ամենայն խռովութեանցս և հանդէս բարկութեանս ոչ կարաց մտանել յաշխարհն Աղուանից, որ ասի խորին աշխարհ Հայոց, որ է աթոռ սրբոյ առաքելոյն Թադէոսի: Արդ այս ամենայն յայնմ աշխարհի ոչ եղև բաժանումն սրբոյ աթոռոյն, այլ մնաց անշարժ հաստատութեամբ, հայրապետութեամբ և թագաւորութեամբ»[291]:

XI-XII դարերի սահմանագծում ապրած և գործած վարդապետը, բնականաբար, այդ տողերը շարադրել է՝ քաջատեղյակ լինելով այն ժամանակների կաթողիկոսական դիվանի փաստաթղթերին: Իսկ եթե հաշվի առնենք նաև պատմական այն իրողությունը, որ վարդապետի ապրած ժամանակահատվածը համարվում է հայ ժողովրդի պատմության ամենամռայլ ժամանակաշրջաններից մեկը, երբ գոյություն չուներ հայոց պետականությունը և ազգի գոյության միակ պատվարը վերստին մնացել էր Հայոց եկեղեցին, որի ջերմ պաշտպանն էր նաև պատմիչ-վարդապետը, և ինչպես նշել է Հ. Բարթիկյանը աշխատության ներածականում. «...նա ատում էր այն հայերին, ովքեր հրաժարվում էին հայադավանությունից»[292]: Ուրեմն հազիվ թե նման վերաբերմունքով նա արտահայտվեր Հայ Աղվանից կաթողիկոսության վերաբերյալ՝ վերջինիս կողմից անջատողական որևէ միտում նկատելուց հետո:

Քննարկվող հարցի հստակեցման նկատառումով, անդրադառնալով հայ պատմագրության մեկ այլ ականավոր ներկայացուցչի՝ Կիրակոս Գանձակեցուն, կրկին կարող ենք համոզվել վերոհիշյալ տեսակետի հավաստիության մեջ: Պատմիչը իր հայտնի աշխատության ժ գլուխը, որ վերնագրված է «Համառօտ հիւսուածք պատմութեանց կողմանցն Աղուանից ընդ ներքոյս զրուցատրաբար»[293], ամբողջությամբ նվիրել է

291. Մատթեոս Ուռհայեցի, էջ 230-231:
292. Նույն տեղում, էջ XXII:
293. Կ.Գանձակեցի, էջ 192-201:

Հայ Աղվանից կաթողիկոսության պատմությանը՝ սկսած Թադևոս ու Բարդուղիմեոս առաքյալների գործունեությունից մինչև իր ապրած ժամանակները (XIII դարը):

Կ.Մ.Օհանջանյանը գրել է. «Մեր բանասերները ըստ արժանվույն մեծ կարևորություն են տվել Կիրակոսի պատմության մեջ տեղ գտած զանազան կրոնադավանաբանական թղթերին, կանոնադրություններին և շրջաբերականներին որպես պատմական վավերագրերի: Բացի վերոհիշյալ վավերագրերից, Կիրակոս Գանձակեցու պատմությունը, անշուշտ, շատ արժեքավոր է հայ-աղվանական եկեղեցու ներքին կյանքի, եկեղեցական նվիրապետության, ծիսական խնդիրների, վանական դպրոցների և դպրության... պատմության համար»[294]: Եվ ընդհանրապես, Կ.Գանձակեցու աշխատությունը հետագա բոլոր ժամանակների պատմիչների կողմից ընդունվել է որպես ստուգապատում պատմություն: Ուրեմն վարդապետ-պատմիչի հաղորդած հավաստի տեղեկություններից պետք է ընդունել նաև վերոհիշյալ՝ Հայ Աղվանից եկեղեցու պատմությանը նվիրված գլուխը, որտեղ հաջորդական կարգով նշված են Հայ Աղվանից եկեղեցու կաթողիկոսները, ընդ որում, ընդգծված են նաև այն կաթողիկոսները, որոնք ձեռնադրություն են ստացել Ամենայն Հայոց կաթողիկոսներից, իսկ հիշյալ ձեռնադրությունը չստացած կաթողիկոսների վերաբերյալ որևէ ակնարկ անգամ չկա Հայոց կաթողիկոսությանը նրանց չենթարկվելու և, կամ, հակադրվելու վերաբերյալ: Եվ սա այն դեպքում, երբ պատմիչը առանձնակի ուշադրություն է դարձրել նաև գոյություն ունեցող ձեռնադրություն ընդունելու եկեղեցակարգի վրա, հավանաբար դրան կարևորագույն նշանակություն վերագրելու տեսանկյունով: «Եւ մինչդեռ ի գերութեան էր Գէորգ, սա (եպիսկոպոս Տեր Հովնանը-Մ.Բ.) գայ յԱղուանս և անդէն ձեռնադրի առանց կամաց տեառն Գեորգայ. և իբրև գնեցին զտէր Գէորգ իշխանքն Աղուանից, լուծանէ զՅովնան ի պատուոյն, բայց աղաչեալ զնա իշխանացն Աղուանից վասն երախտեացն, որ առ նա, կրկին ձեռնադրէ զնա ևս»[295]: Կարծում ենք պատմիչը շատ պարզ ու իրական է ներկա-

294. Տես՝ Նույն տեղում, էջ ՁԴ - ՁԵ:
295. Կ.Գանձակեցի, էջ 198:

յացրել իրականությունը, առանց ուռճացնելու և անհիմն եզրակացությունների:

Այսպիսով, անկարելի է, որ Հայոց եկեղեցու նկատմամբ Հայ Աղվանից թևի կողմից դրսևորած ինքնուրույնության, առավել ևս, անջատողական ձեռնարկումը անուշադրության մատնվեր այն հայրենասեր վարդապետի կողմից, որ անզիջող կեցվածք է ունեցել դավանաբանական ու Հայոց եկեղեցու մասնատման բոլոր տեսակի դրսևորումների նկատմամբ:

Եվ այսպես, 949 թվականին (Հայոց ՅՂԸ)[296] Անանիա կաթողիկոսը հովվապետական առաքելությամբ մի խումբ եպիսկոպոսների ու հոգևոր այլ գործիչների ուղեկցությամբ այցելում է Սյունիք, իսկ այնուհետև պետք է գնար Հայոց արևելից կողմերը: Ստ. Օրբելյանի նկարագրությամբ Հայոց հայրապետը արժանանում է Սյունյաց աշխարհիկ ու հոգևոր տերերի ամենաջերմ ընդունելությանը: Սյունիքի Հակոբ եպիսկոպոսը խոնարհվում ու մեղքերի թողություն է խնդրում Հայոց հայրապետից. «ո՞վ մեծապատիւ Տէր կաթողիկոս՝ որովհետև աստուածաբար ի մեզ խոնարհեցար և զմեր յանդգնութիւնս անտես արարեր. հնազանդիմք ձեզ և սուրբ աթոռոյն Գրիգորի լուսաւորչին իբրև Աստուծոյ, մեղաք յերկինս և առաջի քո. և դու ներելով թող մեզ զյանցանս մեր»: Տեսեալ զայն կաթողիկոսին և մեծապէս օրհնէր զնա և շնորհակալէր և կամէր երթալ յԱղվանս»[297]:

Սյունյաց եպիսկոպոսի կողմից արտահայտած ներողամտական խոսքը, բնականաբար, վերաբերում էր օրինական օծման արարողությանը և հասկանալի է, որ անկախ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ բոլոր հանգամանքներից, կատարվածը իրոք «հանդգնություն» էր, բայց ոչ միտումնավոր, այլապես այդքան դյուրին լուծում չէր գտնի այն: Մյուս կողմից, եթե կատարվածը լիներ միտումնավոր «հանդգնություն», ապա այն գոնե կհանդիմանվեր հայոց հայրապետի կողմից և ոչ թե «շնորհակալ եղավ և ուզեց գնալ Աղվանք»: Կարծում ենք անջատողական միտումներ նկատելու դեպքում, տրամաբանորեն, Հայոց հայրապետը չէր կարող «շնորհակալ լինել»:

296. Բ.Ուլուբաբյան, Հայոց Արևելից եկեղեցին ու մշակույթը, էջ 165:
297. Ստ.Օրբելյան, էջ 276:

Կաթողիկոսի այցելությունը Արցախ, սակայն, հետաձգվեց, կապված Հայոց Աբաս Բագրատունի թագավորի տիկնոջ մահվան հետ: Ստ. Օրբելյանը այնուհետև շատ հետաքրքիր տեղեկություն է հաղորդում, որն էլ ավելի է օգնում առաջադրված տեսակետի հավաստիությունը ընդունելու խնդրում. «Իսկ ամենաչարն, որ հանապազ խանդայ ընդ բարին և գրգռէ զմարդիկ ի խռովարար չարութիւն, ոչ ետ թոյլ այսմ արարուածոյ... սկսան քսել վերստին զՅակոբ առ կաթողիկոսն, եթէ կրկին ապստամբեաց ի ձէնջ. և նա չտայ թոյլ հնազանդել Աղվանից ընդ ձեռամբ քով... և այնպէս խռովութիւն և պատերազմ մեծ զարթուցին ի մեջ եկեղեցւոյ: Զոր և ես իսկ զրպարտանք հարիմ զայսպիսի բանս և ոչ ճշմարտութիւն զրադատ եպիսկոպոսին Յակոբայ, զի զի՛նչ փառք էր և պարծանք նմա թողուլ զմեծ աթոռն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին և ծառայել իւրում ծառայակցին որք և անկատար և թերի ունէին զօծումն շնորհին»[298]:

Ահա այսպես, պատմագիրը շատ հստակ ու իրականությանը համապատասխան ներկայացնում է Հայոց եկեղեցու հոգևոր-քաղաքական կացությունը: Եվ իրոք, Ստ.Օրբելյանի խոսքերով «պաշտոնական օծությամբ անկատար ու թերի» Հայոց եկեղեցու երկու թեմերի տարանջատման գաղափարը որևէ կերպ չի արդարացվում ու, որ ամենակարևորն է, չի ապացուցվում: Ավելին, Ստ.Օրբելյանը այն ընդունում է պարզապես որպես «զրպարտանք» ու «ոչ ճշմարտութիւն»: Իսկ ինչ վերաբերում է նրանց մերձեցմանը, ապա այն պետք է ընդունել միայն որպես դրական նախաձեռնություն՝ ստեղծված քաղաքական իրավիճակում միասնականորեն ավելի կայուն ու արդյունավետ գործելու մտայնությամբ:

Հիշյալ իրադարձությունների անմիջական ժամանակակից հոգևոր առաջնորդը՝ Անանիա Մոկացին հետևյալն է գրել. «...և ոչ հաւանէին գալ ի միութիւն ժողովոյն, այլ միայն իւրաքանչիւր ձեռնագրով գրէին, թէ Հաւանեալ եմ՝ ես Սահակ Աղուանից կաթողիկոս և սա՝ Յակովբ Սիւնեաց եպիսկոպոս՝ զով և դուք քրիստոսապսակեալ թագաւորքդ և

298. Նույն տեղում, էջ 277:

սուրբ Լուսաւորչին՝ ծառայել: Եւ այ բարուրս ստայօդ զօդակապութեամբ»[299]: Կարծում ենք այստեղից տրամաբանական եզրակացությունը կլիներ այն, որ Աղվանից և Սյունյաց թեմերը անջատական միտումներ ունենալու դեպքում կարող էին և հրավերները անպատասխան թողնել պարզապես, և ոչ թե գրավոր հիմնավորել չներկայանալու պատճառները, որոնք էլ հավանաբար ճշտելու մտայնությամբ Ամենայն Հայոց հայրապետը որոշում է անձամբ շրջագայել հիշյալ թեմերն ու որոշակի պարզորոշություն մտցնել իր իսկ համար կասկածելի հարցերի շուրջը: Պետք է նկատել նաև, որ հայրապետի կասկածները, հավանաբար, հենց առաջացել են Ստ.Օրբելյանի վկայակոչած պատճառով. «սկսեցին կաթողիկոսի մոտ վերստին չարախոսել Հակոբի մասին, թե կրկին ապստամբեց ձեր դեմ ու նա թույլ չի տալիս Աղվանքին քեզ ենթարկվելու...»: Մանավանդ որ, դժբախտաբար, Հայոց եկեղեցու ներսում ևս երբեմն տեղ էին գտնում Սուրբ Հավատքին անհարիր նախանձն ու «բանսարկությունը». «դարձեալ նախանձ, դարձեալ բարկութիւն և քսութիւն, դարձեալ որոշումն յաստուածային միաբանութենէն. ...»[300]:

Առկա աղբյուրների համադրությունից կարելի է նկատել, որ իրոք, երկու թեմերում, և հատկապես Հայոց արևելից եկեղեցական թեմում երբեմն հակասություններ նկատվել են կաթողիկոսական աթոռի թեկնածուի առաջադրման ու օրինական հաստատման շուրջը, որն էլ բնականաբար, չի կարելի տարածել ողջ թեմի վրա ու բնորոշել որպես անջատողական քայլ: Այսպես, Ստ. Օրբելյանի հաղորդմամբ Հայ Աղվանից կաթողիկոս Սահակին հաջորդել է «ի տեղին հարազատ նորին Գագիկ նովին անկատար օծմամբ. զոր և լուեալ Տեառն Անանիայի՝ գրէ թուղթ առ իշխանսն Աղվանից ըստ իւրում իմաստայեղց բանից, և հրամայէ ի բաց կալ յանուանեալ և ի նանրափառ կաթողիկոսէն Գագկայ: Որք և արարին իսկ»[301]:

Հայ Աղվանից իշխանների վերաբերմունքի մասին արդեն նշվել է,

299. Անանիա Մոկացի, էջ 131:
300. Ստ.Օրբելյան, էջ 132:
301. Նույն տեղում, էջ 277-278:

իսկ ինչ վերաբերում է Հայոց արևելից եպիսկոպոսներին, ապա նրանք նույնպես միաբանորեն կատարեցին Հայոց հայրապետի հրահանգը, միաժամանակ Հովնան անունով մեկ ուրիշ հոգևորականի ուղարկեցին նրա մոտ՝ խնդրելով ձեռնադրելու «նոցա արքեպիսկոպոս»[302]:

Հայոց արևելից եպիսկոպոսների խնդրանքը հարգելով, Անանիա կաթողիկոսը Հովնանին ձեռնադրեց կաթողիկոս և ուղարկեց Արցախ: «Իսկ մեր, որպէս վայել էր, հայրական գթով և եղբայրական բագորդութեամբ գերապատիւ քան զարժանն պատուեցաք: ...Եւ ձեռնադրեալ մեր՝ յուղարկեցաք, տուեալ և հրովարտակ հրամանաց և պատասխանի աւետատար, զորոյ եբերն տուեալ զխնդիրս իշխանացն»[303]:

Սակայն Հովնանի ձեռնադրումով խնդիրը չփակվեց, քանի որ բավականին սուր բնույթ ընդունեցին հատկապես մերժում ստացած Գագիկի ու օրինական ձեռնադրություն ստացած Հովնանի հարաբերությունները: «Լուեալ զայս ամենայն Անանիայի՝ վարանեալ ի մտի իւրում վասն գունակ գունակ բաժանմանց և ապստամբութեանց եկեղեցւոյ և ժողովեալ բազմութիւն եպիսկոպոսաց և գլխաւոր հարց... երթայր յԱղվանս»[304]: Այստեղ կարելի է նկատել, որ Հայոց հայրապետի «տարակուսելը» «եկեղեցու տեսակ-տեսակ պառակտումների ու ապստամբությունների պատճառով» ասելով Սյունյաց պատմիչը ի նկատի է ունեցել ոչ միայն Հայ Աղվանքի, այլև հենց Սյունյաց եպիսկոպոսական թեմի «ըմբոստ» վիճակը: Այդ մասին վկայություն կա ոչ միայն Ստ.Օրբելյանի, այլև Կ.Գանձակեցու մոտ. «Եւ ապա գնաց տէր Անանիա յաշխարհն Սիւնեաց՝ հնազանդել զապստամբն: Եւ իբրև լուան իշխանքն Սիւնեաց զգալուստ հայրապետին, ելին ընդ առաջ նորա՝ զմեղանս յանձն առեալ, և ետուն նմա ձեռագիր երդմամբ՝ այլ ո՛չ ևս ապստամբել յաթոռոյ սրբոյն Գրիգորի յազգէ մինչև յազգ: Եւ ապա ձեռնադրեաց յազգէ նոցա զմի ոմն արքեպիսկոպոս»[305]:

Ուրեմն Ամենայն Հայոց կաթողիկոսը եկեղեցու պառակտման վտանգ կանխազգալով՝ կապված Հայոց եկեղեցու որոշ թեմերում

302. Նույն տեղում, էջ 278:
303. Անանիա Մոկացի, էջ 133:
304. Ստ.Օրբելյան, էջ 278:
305. Կ.Գանձակեցի, էջ 86:

նկատված ինքնուրույնության խորացման հետ, ձեռնամուխ էր եղել նրա նախկին միասնական կապերի ու հաստատված հարաբերությունների վերականգնմանը: Այդ նպատակի իրագործմանն էր ուղղված նաև նրա հովվապետական այցը Արցախ: Հասնելով Խաչեն, Անանիա կաթողիկոսն արժանանում է երկրամասի գլխավոր իշխան Գրիգորի կողմից մեծաշուք ընդունելությանն ու հյուրընկալությանը: Այդ մասին վկայում է հայոց հայրապետը. «ընդ առաջ եղև մեզ մեծ և փառաւոր աստուածապահ և բարէպաշտ տէր Գրիգոր իշխան»[306]:

Իշխանը հատուկ հրովարտակով դիմում է բոլոր գավառների վանական համալիրներին, որպեսզի շուտափույթ հավաքվեն Գանձասարի իր ապարանքը: Անանիա Մոկացու հավաստմամբ հավաքվել էին Աղվանից աշխարհի «բազում հարք և սուրբ եպիսկոպոսունք, և այլ գիտնական քահանայք...: Ընդ որս էր՝ Գագիկ կարծեալ կաթողիկոսն, եւ Պետրոս՝ (որ) ի նմանէ ձեռնադրեալն էր Գարդմանայ (Ա) եպիսկոպոս, եւ վանական՝ էր որ յայնմ կողմանէ. Հայր Դավիթ, Փառիսոսայ վանական, Հայր Պետրոս՝ Կովախեղդի վանական, Հայր Մանաճիրի՝ Յուսէփու վանից վանական, Հայր Գրիգորէս՝ Նորավանից վանական, Հայր Սիմէովն՝ Խանդոնկան վանից վանական, եւ Սամուէլ երէց՝ Սենեքերիմայ դրան քահանայ, եւ Սուփան՝ Յողջագուրայ սուրբ Անանիանց քահանայ, եւ Գրիգոր իշխանի կողմանէն. Տէր Յովհաննէս, Աթախա(յ) եպիսկոպոս, եւ տէր Յովհաննէս՝ Մաքենոցաց եպիսկոպոս, Հայր Միսայել՝ Շիկաքարի վանական, Հայր Սարգիս՝ Գանձասարու վանական, Հայր Մանուշակ՝ Խաչինայ վանական, Հայր Պօղոս՝ Խանդին վանից վանական, Հայր Գէորգ Ոսկէվանից վանական, Հայր Արտաւազդ՝ Այծաքարայ վանական, եւ Սահակ քահանայ գիտնական, որ կոչի Դարբնորդի, եւ Վարդան քահանայ. Տիրանուն և Պետրոս և Պօղոս՝ դրան քահանայք: Հայր Ստեփաննոս, որ կոչէր Քէրական»[307]:

Մեջբերված ցուցակից կարելի է նկատել, որ Հայոց հայրապետի անմիջական նախաձեռնությամբ տեղի ունեցած հավաքույթին մասնակցել է հիմնականում Արցախի հոգևորականությունը: Այդ նույնն է

306. Անանիա Մոկացի, էջ 134:
307. Նույն տեղում:

վկայում նաև Ստ. Օրբելյանը. «Եւ ժողովէ զամենայն իշխանս աշխարհիս և զեպիսկոպոսունս և զվանականս ի տեղին որ Ադախն կոչի»[308]: Նույն տեսակետն է արտահայտել նաև Բ.Ուլուբաբյանը, ավելացնելով, որ «Ընդգծված անունները «Յուսեփու վանք՝» Սուրբ Հովսեփի վանքն է Խաչենում, Քոլատակ գյուղի մոտ, «Խանդոկան»՝ երևի Խադարի կամ Խաթրա վանքը, «Խանդին»՝ Խութավանքը...»[309]:

Ժողովին ներկա էին նաև Գագիկ ու Հովնան եպիսկոպոսները, որոնց ընտրության շուրջն առաջացել էին տարակարծիքներ: Հովնան եպիսկոպոսը օրինական ձեռնադրություն էր ստացել հայոց հայրապետից, սակայն ժողովականների մեծ մասը չէր ընդունում նրա թեկնածությունը: Հայրապետը, համոզվելով, որ Հովնանը ոչ միայն պատշաճ հեղինակություն չէր վայելում, այլև ընդհանրապես չէր ընդունվում իրեն ենթակա հոգևոր ու աշխարհիկ տերերի կողմից, «Իսկ նորա քննեալ զարժանն, նախ՝ ելոյծ ի պատուոյն զՅօնան իւր ձեռնադեալն վասն բամբասանացն զոր յօդեալ էին, և ապա զԳագիկն»[310]:

Գագիկի թեկնածության շուրջը ևս տարակարծություններ էին ծագել, սակայն առկա փաստերի համաձայն, ժողովականների մեծ մասը կողմ էր նրան: Գագիկի թեկնածությունը պաշտպանում էր նաև Խաչենի Գրիգոր իշխանը, որը խնդրում է կրկին ձեռնադրել Գագիկին, որ սակայն, ուղղադատ ու ճշմարտաքննին հայրապետը «զոր ոչ պատշաճ համարեալ»[311]: Նույնն է հաղորդում նաև հենց ինքը՝ Ամենայն հայոց հայրապետը[312]: Իսկ Աբրահամ Ջամինեանը, առանց ստույգ ու համոզիչ հիմնավորման, ուղղակիորեն նշելէ, թե «Գագիկն էլ կամովին հրաժարվում է»[313]: Եվ այսպես, երկու թեկնածուներն էլ մերժվում են ու, նախքան նոր թեկնածուի առաջադրումը և հաստատումը, Անանիա կաթողիկոսը Հայոց արևելից հոգևոր ու աշխարհիկ տերերից պահանջում է իրեն ներկայացնել պատմության այն մատյանը, որում ներկայաց-

308. Ստ.Օրբելյան, էջ 278:
309. Բ.Ուլուբաբյան, Հայոց Արևելից եկեղեցին և մշակույթը, էջ 167:
310. Ստ.Օրբելյան, էջ 282:
311. Նույն տեղում:
312 Տես՝ Անանիա Մոկացի, էջ 135
313. Աբր.Ջամինեան, Հայոց եկեղեցու պատմութիւն, էջ 168:

ված է Աղվանից աթոռի սկզբնավորության պատմությունը[314]:

Ակնհայտ է, որ խոսքը Մ.Կաղանկատվացու «Աղվանքի պատմության» մասին էր, իսկ աշխատությանը ծանոթանալու հիմնական դրդապատճառը ժողովի ընթացքում ծավալված այն վիճաբանությունն էր, որ ոմանք պնդում էին, թե Հայոց արևելից կողմերում քրիստոնեական լուսավորությունն ավելի վաղ է սկզբնավորվել և տարածվել, քան Հայաստանի մյուս նահանգներում և որ այդ մասին վկայություն կա հիշյալ մատյանում: Անհասկանալի պատճառով մերժում է ստանում Հայոց հայրապետը: Սակայն երբ գիշերն անց էր կացնում Գանձասարում, եկեղեցապանը կաթողիկոսին է տալիս մի ձեռագիր, այն ներկայացնելով որպես Հովհան Ոսկեբերանի մատյան, և կաթողիկոսին մեծարանքով հրավիրում են կարդալու: «Զոր և բացեալ եգիտ զոր խնդրէրն, զի էր պատմութիւն Աղվանից»[315]:

Ամենայն Հայոց կաթողիկոսը կարդալով «Պատմութիւն Աղվանից»-ը համոզվեց, որ այնտեղ ճշտությամբ գրված է այն, ինչ-որ ընդհանրապես, հայոց մատենագրության մեջ է, մասնավորապես այն..., որ Հայաստանում քրիստոնեության տարածողներն են եղել Բարդուղիմեոս ու Թադևոս առաքյալները, և որ Ս. Եղիշան եղել է Ս.Թադևոս առաքյալի աշակերտներից մեկն ու Հայոց արևելից կողմերում քրիստոնեական հավատքի տարածողը: Նրանց առաքելությունը շարունակել է Գրիգոր Լուսավորիչը՝ հայոց առաջին հայրապետը, որն Աղվանից արքա Ուռնայրի խնդրանքով ձեռնադրել է Աղվանքի առաջին կաթողիկոսին՝ Ս.Գրիգորիսին և «և կացեալ ի հնազանդութեան Հայոց աթոռակալացն զամս 440, ի Հայոց առին ձեռնադրութիւն Աղվանից կաթողիկոսքն, զի Հայոցն պատրիարք էր. և Աղվանիցն՝ արք եպիսկոպոս»[316]: Իսկ Մ. Բարխուտարյանցը նույնը վկայակոչելով նշել է. «Ս.Լուսաւորչի օրից սկսեալ Աղուանից կաթողիկոսների օծումը միշտ ստացած են հայոց հայրապետներից, և ոչ թե «անձամբ եղել են կաթողիկոս» որպիսին են Յունան, Սիմէօն, Դավիթ, Սահակ և Գագիկ... Ս.Լուսաւորչի հետևող կաթողիկոսներն միշտ հսկած են և արմատախիլ արած Աղվանքում երևան ելած աղանդները և անկարգութիւնները, ինչպես են Հայոց Եղիա, Գէորգ և Սիօն»[317]:

314. Անանիա Մոկացի, էջ 135:
315. Ստ.Օրբելյան, էջ 279:
316. Նույն տեղում:

Ի դեպ, այստեղ էլ պետք է նկատել, որ հիշյալ «անկարգությունները» կապված էին զուտ առանձին կաթողիկոսական թեկնածուների «ինքնուրույն» օծման հետ և բոլորովին չի ակնարկված եկեղեցական թեմի տարանջատման մասին: Անդրադառնալով Ստ. Օրբելյանին, նշենք, որ այնուհետ նա ներկայացնում է Հայոց եկեղեցին ենթարկեցնելու նպատակով քաղկեդոնականությունը տարածելուն ուղղված բյուզանդական քաղաքականության հետևանքով Հայոց եկեղեցում առաջացած խառնակչությունը, որ հատկապես նկատելի դարձավ Աբրահամ կաթողիկոսի հայրապետության շրջանում, և որը, սակայն, շտկվեց նրա հաջորդ Կոմիտաս կաթողիկոսի գործադրած ջանքերի շնորհիվ. «ապա դարձեալ հնազանդին Աղվանք Հայոց և խնդրեն կաթողիկոս ի Կոմիտասայ զոր և ձեռնադրեացն իսկ յերկրորդ ամի հայրապետութեան իւրոյ» [318]:

Սակայն քաղկեդոնականության կողմից գերիշխող դառնալու ձգտումները շարունակվեցին և երբեմն իրենց արձագանքները գտան քաղաքական հեղհեղուկ վիճակում հայտնված Հայոց եկեղեցու ներսում: Հայոց եկեղեցին ստիպված էր պայքարել քաղկեդոնականությանը հարողների դեմ, որպեսզի այն չվարակեր և չարատավորեր նրա հետագա դավանական ընթացը: Հայ Աղվանից եկեղեցու առաջնորդ Ներսես Բակուր եպիսկոպոսը, իշխանուհի Սպրամի ազդեցությամբ ու հորդորներով, գաղտնաբար թեքվեց դեպի քաղկեդոնականությունը, արժանանալով Հայոց արևելից և ընդհանրապես Հայոց եկեղեցու հոգևոր գործիչների, ինչպես նաև աշխարհիկ տերերի թշնամանքին:

Հայոց արևելից եկեղեցու ներսում քաղկեդոնականության ներթափանցման բոլոր փորձերը կասեցվում էին Հայոց հայրապետների անմիջական աջակցության շնորհիվ, որ վկայություն է Հայոց եկեղեցական հաստատության մշտապես միասնական գործելակերպի ու դա-

317. Մ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ.Ա, էջ 168:
318. Ստ.Օրբելյան, էջ 280:

վանական միասնության պահպանման: «Ահա զայս ամենայն ընթերցեալ և իմացեալ և ծանուցեալ կաթողիկոսին Անանիայի, և այսու բանիւք սա լռեցուցեալ զզրաբան բերանս խոտորախօս արանց. և պապանձեցուցեալ զլեզու փառորսակ և անձնահաճ մարդկան՝ յամօթ արար զամենեսեան: Եւ ծանեան իշխանքն զհաստատութիւն իրին, և ամենայնիւ հաւանեալ հնազանդեցան նմա»[319]:

Հոգևոր պետը, ըստ Ստ. Օրբելյանի, անմիջապես չի ծեռնադրում Հայոց արևելից կամ Հայ Աղվանից աթոռի առաջնորդ, քանի որ տեղի հոգևոր ու աշխարհիկ տերերը նրան հավաստիացնում են, որ շուտով իրենք կընտրեն մի արժանավայել այրի ու կուղարկեն հայոց հայրապետի մոտ՝ օրինական ծեռնադրություն ստանալու խնդրանքով:

Անանիա Մոկացի կաթողիկոսը ճանապարհվում է Սյունիք ու այնտեղից էլ վերադառնում իր աթոռը: Հավանաբար այս իրադարձությունները տեղի են ունեցել 949 թվականին[320]: «949 թուին (ՅՂԲ) արդէն վերջացրած է լինում նա իր երկրորդ ճանապարհորդութիւնը Շիրակից դեպի Աղուանք, և այնտեղից Սիւնիք, և Սիւնիքից՝ ձիով ձմեռ ժամանակ վերադառնում է Շիրակ»[321]:

Հայրապետի վերադարձից հետո, ինչպես վկայում են աղբյուրները և մասնավորապես Ստ.Օրբելյանը, նրա ուշադրության կենտրոնում է մնացել հիշյալ երկու թեմերի շարունակվող գործելակերպը: Այդ մասին են վկայում նաև կաթողիկոսի «գրագրությունները»[322]: «Ի 407 թուականին Հայոց, իբրվերին ակնարկմամբն, վախճանեալ լինին երկոքինքն՝ Յակոբ՝ Սիւնեաց մետրապօլիտ և գլուխ ամենայն եպիսկոպոսաց Հայոց, և Գագիկ՝ Աղվանից արքեպիսկոպոս»[323]: Այս դեպքերին հաջորդում է Անանիա կաթողիկոսի հաջորդական այցը Սյունիք 958 թվականին[324]: Մահացած Հակոբ եպիսկոպոսի փոխարեն Սյունյաց

319. Նույն տեղում, էջ 282:
320. Աբր.Զամինեան, Հայոց եկեղեցու պատմութիւն, էջ 168:
321. Յավելուած Արարատի, 1897, փետրուար, էջ 91:
322. Աբր.Զամինեան, Հայոց եկեղեցու պատմութիւն, էջ 168:
323. Ստ.Օրբելյան, էջ 283:
324. Մ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ.Ա, էջ 168: Տես նաև՝ Բ.Ուլուբաբյան, Հայոց Արևելից եկեղեցին և մշակույթը, էջ 171:

Աթոռին ծեռնադրելով Բաղքի Ջիվանշիրի որդի Վահանին, ապա հայոց հայրապետը փորձում է գնալ Հայոց Աղվանք, սակայն հայոց արքունիքից շտապ վերադարձի հրավեր ստանալու պատճառով կրկին վերադառնում է Շիրակ:

Ամենայն հայոց հայրապետի վկայությամբ, նույն ժամանակներում «ծագեաց ի սիրտս հզօրացն Աղուանից, ի թագաւորն, որ կոչէր Իշխանակ՝ որդի տեառն Ատրներսեհի, և Սենեքերիմայ Աղուանից իշխանաց իշխանի, և նորին ամուսնոյ, և քեռ նորին, և տեառն Սենեքերիմայ՝ որդոյ Գրիգորի Խաչեան իշխանի, և տեառն Վաչագանայ Գորոզուաց իշխանին, և տեառն Գուրգենայ Արևելեաց իշխանի, և այլ բազում մեծամեծաց միանգամայն և աշխատրոյժ ամբոխից: Եվ միաբանեալ ի հոգւոյն շնորհած՝ ի նոյն ամի, ի նմին ամսեանն երկրորդի առաջնոյ և ընտրեալ զայր մի հոգևոր և առաքելաջան և ծերական ալեոք պատուեալ՝ Դաւիթ անուն՝ Խոտակերից վանական, և առաքեն ի Շիրակ գաւառ»[325]: Նշված իրադարձությունը տեղի է ունեցել 958 թվականին և օծումը կատարվել է Շիրակում[326]:

Հայոց աշխարհիկ տերերը, այդ թվում և թագավորը նույնպես ոգևորությամբ ընդունեցին Հայոց եկեղեցում օրինականության վերահաստատման առիթով. «Եւ լուեալ թագաւորն Հայոց Աշոտ և նորին եղբարց Մուշեղայ և Ատրներսեհի՝ ուրախ եղեն յոյժ և մեծապարգև շքեղութեամբն տային ծեռնադրել զնա մերում նուաստութեանս կաթողիկոս Աղուանից նահանգին»[327]: Ստ.Օրբելյանը հիշյալի վերաբերյալ իր խոսքը ավարտելով նշում է, որ «այսպէս խափանեաց զմեծ պատերազմն եկեղեցւոյ, և արար խաղաղութիւն կեղեքեալ և տառապեալ ազգիս Հայոց. և զպատուական անդամսն եկեղեցւոյ որ օծտեալ էին վերստին միացոյց ի գլուխն գովելի ի մեծ պատրիարքսն Հայոց, որ սրբոյն Գրիգորի են աթոռակալք»[328]:

Անանիա կաթողիկոսից օրինական ծեռնադրություն ընդունելուց

325. Անանիա Մոկացի, էջ 144:
326. Բ.Ուլուբաբյան, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, էջ 172:
327. Անանիա Մոկացի, էջ 144:
328. Ստ.Օրբելյան, էջ 286:

հետո Հայ Աղվանից Տեր Դավիթը վերադառնում է Արցախ և, Մ.Դասխուրանցու վկայությամբ, 6 տարի հայրապետություն անելուց հետո կնքում է իր մահկանացուն[329]:

Ա.Հակոբյանի կողմից ճշտված VI-X դարերի Աղվանից կաթողիկոսաշարքում ևս հիշատակված է Փառիսոսի Տեր Դավիթ կաթողիկոսը, որի աթոռակալության ժամանակահատվածը ճշգրտված է մի շարք աղբյուրների համադրությամբ՝ 958-964թթ.[330]: Հիմք ընդունելով առկա աղբյուրները և համապատասխան ուսումնասիրությունները, մենք ևս հակված ենք այն ընդունել որպես ճշգրիտ եզրակացություն:

Հայտնի է, որ 961 թվականին Անին հռչակվեց Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք, և նույն թվականին էլ կատարվեց Աշոտ Գ Բագրատունու օծման արարողությունը[331]: Հիշյալ արարողության հանգամանալից նկարագրությունը հասկանալի ոգևորությամբ տվել է Մ.Ուռհայեցին, «Ժողովեցան ամենայն իշխանքն աշխարհաց տանն Հայոց առ սուրբ հայրապետն Անանիա, վասն զի տացեն զօծումն թագաւորութեան որդւոյն Աշոտի Գագկայ ըստ առաջին օծման հարցն իւրոց...»[332]: Այնուհետև, խոսելով օծման հանդիսավոր արարողությանը ներկա իշխանների ու հոգևոր գործիչների մասին, հեղինակը գովեստով է ներկայացնում «զամենագովելին զՏէր Յովհաննէս կաթուղիկոսն Աղուանից աշխարհին, և քառասուն եպիսկոպոսունք ընդ նմա»[333]:

Մ.Ուռհայեցու հիշյալ հրատարակության հեղինակ Հ. Բարթիկյանը ծանոթագրության կարգով Հովհաննես կաթողիկոսին ներկայացնում է որպես Հովհաննես Ե կամ Հովնան: Սակայն Մ.Դասխուրանցու շարադրած կաթողիկոսաշարքում քննարկվող ժամանակահատվածում նշված է Տեր Պետրոսը՝ Գարդմանքի եպիսկոպոսը[334], որը ըստ նրա աթոռակալել է 964-982թթ:

Կ.Գանձակեցու մոտ ևս հիշատակված է Տեր Պետրոսը, որ աթոռակալել է 16 տարի[335]: Իսկ Հովհաննես Շահխաթունյանցի մոտ, որն էլ համակարծիք լինելով Միքայել Չամչյանի տեսակետին, նշված է. «տր՝ Հովհանէս Դ, զսա... գտաւ յԱնի՛ի ժողովի անդ որ վասն օծման Աշոտոյ թագաւորի.ևս անդ յընտրութեանն Վահանայ ՝ի կաթուղիկոսութիւն՝ յամսն 961.965»[336]:

Ահա այսպես, տարբեր աղբյուրներ հակասական տվյալներ են հաղորդում նույն ժամանակահատվածում Հայոց արևելից հոգևոր առաջնորդարանում աթոռակալած կաթողիկոսի անձի վերաբերյալ: Եթե հետևելու լինենք Մ. Ուռհայեցուն, ապա պատմության իր շարադրանքի մեջ նա՝ անդրադառնալով Աղվանքի կաթողիկոսին, կրկին հիշատակել է նույն Հովհաննես կաթողիկոսին՝ այս անգամ արդեն շարադրելով 965 թվականին տեղի ունեցած իրադարձությունը: «Իսկ ի շարժել յաւելմամբ թուականս Հայկազունեաց ազգիս ի յամս ՆԻԵ եղեւ կոչումն յԱստուծոյ սրբոյ հայրապետին Հայոց Անանիայի. և ձեռնադրեցին հանդերձ բազմութեամբ յաթոռ կաթուղիկոսութեան Հայոց զլաւն ի բնաւիցս զերանելին զՎահան. որ էր գլուխ ժողովոյն կաթուղիկոսն Աղուանից տէր Յովհաննէս»[337]:

Դժվար չէ նկատել, որ Մ.Ուռհայեցին, ու նաև, նրա վրա հենվելով Հովի. Շահխաթունյանցը Ամենայն Հայոց Անանիա կաթողիկոսի կողմից Հայոց Աշոտ Բագրատունի թագավորի օծման արարողությանը մասնակից են համարում Հովհաննես կաթողիկոսին, միայն առաջին դեպքում Հովհաննես Ե, որը սակայն, ինչպես արդեն նշել ենք, Հ.Բարթիկյանի տեսակետն է, քանի որ Մ. Ուռհայեցին չի հիշատակում անվան հետ կապված թվական որևէ այլ տվյալ, իսկ երկրորդ դեպքում՝ Հովհաննես Դ, որի վկայությունը կա նաև Միքայել Չամչյանի մոտ: Սույն տեսակետն է արտահայտել նաև Մ.Բարխուտարյանցը[338]: Եզրակացությունը մեկն է. տվյալ ժամանակաշրջանում Հայ Աղվանից կաթողիկոսն էր Տեր Հովհաննեսը:

Այդ մասին հիշատակված է նաև Աբր. Զամինյանի նշված աշխատու-

329. Մ.Կաղանկատվացի, էջ 347:
330. Ал.Акопян, стр.277.
331. Տես՝ Հ.Ա. Հարությունյան, Հայաստանը 9-11-րդ դարերում, էջ 96:
332. Մ.Ուռհայեցի, էջ 8:
333. Նույն տեղում:
334. Մ.Կաղանկատվացի, էջ 347:

335. Կ.Գանձակեցի, էջ 199:
336. Մ.Չամչյան, Պատմութիւն Հայոց, հ.Բ, Վենետիկ, 1785, էջ 837-840:
337. Մ.Ուռհայեցի, էջ 38:
338. Տես՝ Մ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, էջ 170-171:

թյան մեջ[339]: Միայն պետք է նկատել, որ Մ.Ուռհայեցու մոտ Անանիա Մոկացի կաթողիկոսի մահվան տարեթվի վերաբերյալ կա որոշակի թյուրիմացություն. Ամենայն հայոց հայրապետը իր մահկանացուն կնքել է 968 թվականին և հենց նույն տարեթվին էլ Անիում կայացել է նոր կաթողիկոսի ընտրության համար ժողով, որտեղ և Հայրապետ է ընտրվել Սյունյաց եպիսկոպոս Վահանը[340]:

Աղվանքի Փիլիպոս իշխանի և Տեր Հովհաննեսի գործունեության վերաբերյալ գովեստով են արտահայտվում հայ մատենագիրները: Նրանք հոգևոր քաղաքական ասպարեզ եկան այնպիսի ժամանակաշրջանում, երբ վերջապես երկրամասը ազատագրվել էր արաբական լծից, սակայն տակավին թարմ էին նրանց թողած ավերիչ հետքերը: Եվ «խաղաղանում են բնակիչներն շնորհիւ անխոնջ ջանից Յովհաննէս կաթողիկոսի, Փիլիպոս թագավորի և Սենեքերիմ իշխանաց իշխանի, շինուում և նորոգուում են եկեղեցիներն և բերդերն, դառնում են ս. եկեղեցու ծոցն բռնի մահմետականացեալներից ամենամեծ մասն... ամրապնդուում են Քրիստոնեության հաւատն, յոյսն և սէրն. շինութիւն է առնում երկիրն և օրաւուր շատանում է ուսումնականաց թիւն»[341]:

Հայոց Արևելից Գրիգոր Բ Մեծ իշխանի որդի Փիլիպպեի իշխանապետության շրջանում Փառիսոսի սահմանները ձգվում էր Շամքոր գետակի վերին ավազանում, Արցախյան լեռնաշղթայի փեշերով դեպի հյուսիս ու արևմուտք մինչև Շամքոր, հյուսիսում սահման ունենալով Կուր գետը[342]: Հայ ժողովրդի արևելյան հատվածի համար ինքնուրույն իշխանության գոյությամբ ստեղծվում են հոգևոր-քաղաքական ու տնտեսական առաջընթացի պայմաններ, որոնք հնարավորություն են տալիս վերանորոգել մահմեդական տիրապետության հետևանքով երկրին հասցված «վերքերը»:

Ադրբեջանցի հեղինակ Դ.Ախունդովը հետևյալն է գրել. «Այն բանից

339. Աբր.Զամինեան, Հայոց եկեղեցու պատմութիւն, էջ 170:
340. Եզն.քհն. Պետրոսյան, Հայ եկեղեցու պատմություն, մաս Ա, էջ 78:
335. Կ.Գանձակեցի, էջ 199:
336. Մ.Չամչյան, Պատմութիւն Հայոց, հ.Բ, Վենետիկ, 1785, էջ 837-840:
341. Մ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ.Ա, էջ 170:
342. Վ.Բալայան, Արցախի պատմություն, Եր., 2002, էջ 109:

հետո, երբ Այսկովկաս խուժեց իր ճանապարհին ամեն ինչ ոտնակոխ անող իսլամը, Վրաստանում և Հայաստանում, չնայած դժվարությամբ, այնուամենայնիվ հաջողվեց պահպանել քրիստոնեական հավատքը... Եվ կրկին սկսեց զարգանալ քրիստոնեական ճարտարապետությունը»[343]: Այս վերջին միտքը հեղինակն արտահայտել է IX-Xդդ. հարաբերությամբ, վկայակոչելով նաև Կովկասյան Աղվանքը, որի քրիստոնյա մասում ևս զարգանում էր այն: Եվ դժվար չէ շարադրանքից հասկանալ, որ խոսքը վերաբերում է հենց Հայոց Աղվանքին, քանի որ, շարունակելով իր միտքը, վկայակոչում է հիմնականում Արցախ-Խաչենի քրիստոնեական կոթողները[344]:

Մատթեոս Ուռհայեցու հավաստմամբ Հայոց Անանիա հայրապետի ցանկությունն էր իրեն հաջորդ ձեռնադրել Սյունիքի Վահան եպիսկոպոսին, որ և, ինչպես նշեցինք, իրականացվեց: Սակայն Վահանի կաթողիկոսությունը «մի ներքին խռովութիւն առաջ բերեց»[345], որի պատճառը նրա «հուանսիրությունն» էր, ուստի հայ հոգևոր խավը, չհանդուրժելով Վահանի գործունեությունը, ժողով գումարեց՝ եկեղեցում տիրող իրավիճակը քննարկելու նպատակով:

Վահանի «հունասիրության» մասին վկայություն կա Ստ. Օրբելյանի[346] և Կ.Գանձակեցու մոտ[347]: 970 թվականին գումարված ժողովը քննեց ու դատապարտեց Վահանի ընթացքը և «միաբանեալ նստուցին յաթոռ սրբոյ Լուսաւորչին զՍտեփանոս..., որ ի Սևան կղզւոջ»[348]: Մատթեոս Ուռհայեցու հավաստմամբ, ժողովը վերստին գլխավորում էր Աղվանից Հովհաննես կաթողիկոսը: Պետք է նկատել, որ հիշյալ ժամանակահատվածում Հայոց հոգևոր-եկեղեցական ժողովների վարումը Հայ Աղվանից հոգևոր առաջնորդի կողմից, ևս մեկ պարզորոշ վկայություն է այն իրողության, որ Հայ Աղվանից կաթողիկոսությունը շա-

343. Д.А.Ахундов, Архитектура древнего и ранне-среднего Азербайджана, Б.1986, стр.236.
344. Տես՝ նույն տեղում, էջ 236-252
345. Աբր.Զամինեան, Հայոց եկեղեցու պատմութիւն, էջ 170:
346. Տես՝ Ստ.Օրբելյան, էջ 287-290:
347. Տես՝ Կ.Գանձակեցի, էջ 87:
348. Նույն տեղում:

ռունակում էր մնալ որպես Հայոց եկեղեցական հաստատության ամենահզոր նվիրապետական աթոռներից մեկը:

Ստեփանոս Սնանեցու ձեռնադրությամբ, սակայն, եկեղեցու ներսում նկատված խնդիրները չհարթվեցին, քանի որ այն տարակարծությունների տեղիք տվեց, նախ և առաջ այն պատճառով, որ տակավին կենդանի էր Վահան կաթողիկոսը: Անդրադառնալով պատմիչների թողած վկայություններին, որ վերաբերում է «ի հրամանէն աստուծոյ» մեկ տարում երկու կաթողիկոսների մահվանը[349], շուտով հարթվեցին Հայոց եկեղեցու ներսում ծագած խնդիրները: 972 թվականին Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվեց Արշարունիքի Խաչիկ եպիսկոպոսը, որ «բանիւ վարդապետութեան սանձեաց զբերանս հերձուածողաց, սրբասէր և քրիստոսասէր գոլով»[350]:

Հայկական որոշ աղբյուրների և, մասնավորապես, Մատթեոս Ուռհայեցու հաղորդած տեղեկությունների համաձայն, խնդրո առարկա հարցի տեսանկյունից կարևորն այստեղ այն է, որ հիշյալ դեպքերի առնչությամբ մշտապես հիշատակվում է Հայ Աղվանից Հովհաննես կաթողիկոսի անունը: Հովհաննեսից հետո Աղվանից կաթողիկոսական աթոռը անցավ Տեր-Պետրոսին, որը Գարդմանի եպիսկոպոսն էր և որը աթոռակալեց մինչև 982 թվականը[351]:

X դարի երկրորդ կեսին Հայաստանում իշխանական տների ինքնուրույնության ուժեղացմանը զուգընթաց սկսված կենտրոնացված պետության մասնատվածության պրոցեսը գնալով ավելի վտանգավոր բնույթ էր ստանում և որն, ի վերջո, հանգեցրեց Բագրատունյաց թագավորության ներսում տեղական թագավորությունների առաջացմանը: Նշվածների շարքին էին պատկանում նաև Հայոց արևելից կողմերում Խաչենի և Փառիսոսի թագավորությունները[352]:

Ըստ Մ.Դասխուրանցու, 982 թվականին իր մահկանացուն է կնքում Տեր Պետրոս Աղվանից կաթողիկոսը և նրան հաջորդում է Փառիսոսի վանքի առաջնորդ Մովսես Գ-ն, որն աթոռակալեց շուրջ 6 տարի՝ 982-988թթ.[353]: Ա.Հակոբյանի հավաստմամբ Մովսես Աղվանից կաթողիկոսի օրոք էլ հենց շարահարվել է Մ. Դասխուրանցու «Աղվանից պատմությունը»[354]: Հայ Աղվանից հոգևոր թեմի Մովսես Գ-ի աթոռակալության ժամանակահատվածի վերաբերյալ տարաբախտաբար այլ տեղեկություններ չկան արձանագրված և կամ չեն պահպանվել: Մովսես Գ կաթողիկոսին հաջորդած հոգևոր առաջնորդների մասին տեղեկություններ հաղորդում են Մխիթար Գոշը, Կ.Գանձակեցին: Ըստ այդ տեղեկությունների Մովսես Գ-ին հաջորդել են «Աստուծո այր Մարկոս Ա-ն, ապա Հովսեփ Գ-ն»[355]:

349. Նույն տեղում:
350. Նույն տեղում, էջ 88:
351. Մակ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, էջ 172:
352. Տես՝ Հ.Ա.Հարությունյան, Հայաստանը 9-11-րդ դարերում, էջ 118:
353. Մ.Կաղանկատվացի, էջ 347:

354. Ա.Հակոբյան, Մ.Կաղանկատվացու «Աղվանից պատմության ձեռագրերը», ԲՄ, էջ 142-143: Տես նաև՝ Ал.Акопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, стр.223.
355. Կ.Գանձակեցի, էջ 199: Տես նաև՝ Ղ.Ալիշան, Հայապատում, հ.Բ, էջ 386:

Հայ Աղվանից կաթողիկոսությունը XI-XII դարերում

Գագիկ Ա Բագրատունի հայոց թագավորի ներքին քաղաքականությունը ամբողջությամբ նպատակաուղղված էր երկրի միավորմանը, որի ընթացքում նա գործադրում էր նաև զինական ուժ: Ստեփաննոս Տարոնեցու վկայությամբ Գագիկ Բագրատունին գրավում է մի շարք բերդեր ու ամրոցներ նաև Սյունիքում, Խաչենում ու Փառիսոսում. «Եւ տիրեաց նա յոլով բերդից և գաւառաց ի սահմանացն Վայոց ձորոյ, Խաչենոյ և Փառիսոսոյ՝ առաւել քան զեղբայր իւր»[356]: 1003թ. մահանում են Փառիսոսի Սենեքերիմ և Գրիգոր թագավորները և «այսպիսով սպառվում է այս հին հայկական իշխանությունը»[357]: Հիշյալի առթիվ Բ.Ուլուբաբյանը իրավացիորեն նշել է. «Փաղլունյան տոհմի Գանձակի ճյուղն առաջին մահմեդական վարչական ինքնուրույն միավորն է, որ հաստատվելով Ուտիքի կենտրոնում, սեպի պես խրվեց Հայոց արևելից կողմանց միասնության մեջ և դարձավ տեղական հինավուրց իշխանությունների ախոյանն ու նրանց մի մասի ոչնչացման պատճառը»[358]:

Ինչպես արդեն նշվել է, Աղվանից կաթողիկոսական աթոռը Պարտավից տեղափոխվել էր Բերդակուր ամրոցը, որ գտնվում էր Տրտու-Թարթառ գետի աջ ափին, ներկայիս Մարտակերտի շրջանի տարածքում և այնտեղ մնաց մինչև IX դարի առաջին կեսը: Եվ քանի որ քաղաքական ու վարչական կենտրոնի դերը IX դարում անցել էր Գանձակին, ապա Հայ Աղվանից հոգևոր առաջնորդությունը նշված ժամանակահատվածում տեղափոխվեց ու հաստատվեց այնտեղ: Սակայն վերը հիշատակված քաղաքական հանգամանքներից դրդված «Աղվանից կաթողիկոսները, երբեմն հեռանալով Գանձակից, նստում էին նաև շրջակա վանքերում՝ Դասնո անապատում, Ուտիքի Միափոր գավառի Խամշի վանքում, վերստին Գանձակում... Եվ այս բոլոր դեպքերում Աղվանքի կաթողիկոսությանը ենթակա էին ինչպես Հայոց արևելից կողմանց բոլոր հոգևոր թեմերը, այնպես էլ անդրկուրյան կամ նախկին բուն Աղվանքի (հետագայի Շաքի, Շիրվան, Դերբենդ) հայկական ու աղվանական հոգևոր կենտրոնները»[359]:

Եվ այսպես, քաղաքական իշխանության թուլացման պայմաններում Աղվանից հոգևոր առաջնորդությունը շարունակում էր տեղից տեղ դեգերելով ոչ միայն պարզապես պահպանել իր գոյությունը, այլև օգտագործում էր հնարավոր միջոցները՝ ժողովրդին համախմբելու, հուսադրելու, անհրաժեշտության դեպքում ծավալելու նաև քաղաքական գործունեություն: Աղվանից հոգևոր նվիրապետությունը Հովսեփի կաթողիկոսության ժամանակահատվածում ևս շարունակում էր մեծ հեղինակություն վայելել ինչպես հայ հոգևոր, այնպես էլ քաղաքական իրականության մեջ: Հիշյալը փաստող վկայություններ արձանագրվել են հայ պատմիչների կողմից:

Մ.Ուռհայեցու հավաստմամբ 1038 թվականին Հայոց կաթողիկոսական աթոռի շուրջը ծագած խնդիրները լուծելու համար քաղաքամայր Անիում կայացավ եպիսկոպոսների, հայրապետների, վանականների, վարդապետների, ինչպես նաև աշխարհիկ տերերի ժողով, որը գլխավորում էր Աղվանից կաթողիկոս ծերունի Հովսեփը[360]: Ժողովի կողմից բանադրանքի ենթարկվեց կաթողիկոսական աթոռին ապօրինի բազմած Դիոսկորոսը և հայրապետական աթոռին վերստին հաստատվեց Պետրոս Գետադարձը: Այս նույնն է վկայում նաև Կ.Գանձակեցին. «Ապա եկեալ Յովսէփ կաթողիկոսն Աղուանից, հաշտութիւն արարեալ ի մէջ թագաւորին և հայրապետին հանէ զկաթողիկոսին ի բանտէ»[361]:

Հայ Աղվանից Հովսեփ կաթողիկոսի հեղինակության մասին է վկայում նաև Կ.Գանձակեցու մոտ նշված այն փաստը, որի համաձայն Հաղպատի վանքի եպիսկոպոսի ձեռնադրության համար հրավիրվել էր Հայ Աղվանից հոգևոր առաջնորդը և հենց հիշյալ ձեռնադրությամբ էլ սկզբնավորվեց Հաղպատի եպիսկոպոսական աթոռանիստը[362]:

1040 թվականին թուրք-սելջուկները, գրավելով Պարտավ և Գան-

356. Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, Ս.Պետերբուրգ, 1885, էջ 256:
357. Լեո, Երկերի ժողովածու, հ.3, Եր., 1973, էջ 617:
358. Բ.Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Եր., 1975, էջ 95:

359. Նույն տեղում, էջ 371:
360. Մ.Ուռհայեցի, էջ 86:
361. Կ.Գանձակեցի, էջ 90:
362. Նույն տեղում, էջ 98:

ձակ քաղաքները, պատրաստվում էին արշավել Հայաստանի մնացյալ տարածքների վրա: Լոռու Դավիթ-Անհողին թագավորը հավաքելով իր բանակը և, միաժամանակ ստանալով օժանդակ ուժեր հարևան թագավորներից, պատրաստվում էր դիմակայել թշնամուն: Եվ որպեսզի «Աստծու Արդար Աջը» հովանի լինի իր բանակին, Դավիթ Անհողինը հրավիրում է իր մոտ Հովսեփ կաթողիկոսին իր շքախմբով, խաչվառներով, ավետարաններով ու խաչերով. «Այս ազգ անօրինացն վասն քրիստոսական հաւատոցն գան ի վերայ մեր և կամին զօրէնս խաչապաշտացս խափանել և զհաւատս հաւատացելոցն Քրիստոսի ջնջել. և ահա արժան է և իրաւունս ամենայն հաւատացելոց ընդդէմ սրոյ երթալ և մեռանիլ ի վերայ քրիստոսական հաւատոցն: Արդ ժողովեա զամենայն եպիսկոպոսունսդ Հայոց աշխարհիդ որ յԱղուանսն են և ի բանակ այսր հասիր»[363]:

Հայ Աղվանից հոգևոր առաջնորդը, առանց հապաղելու, իր շուրջն է համախմբում հոգևոր թեմի ներկայացուցիչներին ու միանում հայոց զորքին: Թշնամին չարաչար պարտվում ու փախուստի է դիմում: Հիշյալ դեպքերից քիչ հետո, մոտավորապես 1040 թվականին մահանում է Հայ Աղվանից Հովսեփ Գ կաթողիկոսը և նրան հաջորդում է Մարկոս Բ(մոտավորապես 1040-1077թթ.)[364]:

1045թ. Բագրատունյաց թագավորության անկումից հետո հայ ժողովուրդը հայտնվեց առավել վատթար իրավիճակում: Բյուզանդական կայսրության կողմից տարվող քաղաքականության արդյունքում նախ և առաջ կործանվեց Հայաստանի քաղաքական իշխանությունն ու զինական ուժը: Եվ կայսրության վարած այս անհեռատես քաղաքականությունը ծանր հետևանքներ ունեցավ ոչ միայն ժողովրդի, այլև իրենց բյուզանդացիների համար, քանի որ Հայաստանում առկա ռազմական ուժերը նաև իրենց պատվարն էին հանդիսանում Արևելքից սպառնացող մահմեդական վտանգների առաջ: Եվ հիշյալ քաղաքականությունն էլ իրագործվում էր մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ սելջուկ-թուրքերի աշխարհավեր արշավանքները բախում էին Հայաստանի դռները:

363. Մ.Ուռհայեցի, էջ 90:
364. Կ.Գանձակեցի, էջ 199: Ղ.Ալիշան, Հայապատում, հ.Բ, էջ 386:

1048-1071թթ. ընթացքում սելջուկ-թուրքերը, ներխուժելով Հայաստան, ավերեցին ու ամայացրին նրա բնակավայրերն ու դաշտերը: Դեպքերի ականատես ու նկարագիր Արիստակես Լաստիվերցին խորը կսկիծով նշել է. «աշխարհ ամենայն ի խաղաղութեան բնակէ, և մեք գերիք և կալանաւորք, սրակոտորք և տնաւերք, և յընչից կողոպտածք: ...Ո՞ր թագաւորացն աթոռք, ահա ոչ երևի. ուր զօրացն բազմութիւն... ու՞ր հայրապետական աթոռն մեծ և հրաշալին»[365]:

Հայոց երկրի համար այսպիսի դառը ժամանակներում Հայոց արևելից հոգևոր նվիրապետությունը առաջնորդում էր Մարկոս Բ կաթողիկոսը, որի հոգևոր գործունեության վերաբերյալ տեղեկություններ չունենք: Նրանից հետո Աղվանից կաթողիկոսական աթոռը անցավ Տեր Ստեփանոս Ա-ին: Հայ Աղվանից հոգևոր առաջնորդի ձեռնադրությունը կատարվել է 1077 թվականին Հաղբատի վանքում[366]:

Պատմական աղբյուրները, մասնավորապես Մ.Ուռհայեցին, Կ.Գանձակեցին միաբերան հաստատում են Հայ Աղվանից Տեր-Ստեփանոս Ա կաթողիկոսի կողմից Հայոց Բարսեղ կաթողիկոսի ձեռնադրման փաստը, որ տեղի է ունեցել 1081թ. «Զոր ժողովեալ թագաւորն Կիւրիկէ զեպիսկոպոսունս Աղուանից աշխարհին և բերեալ զՏէր Ստեփանոս կաթուղիկոսն Աղուանից ի վանքն, որ կոչի Հաղբաթ, ձեռնադրեցին զՏէր Բարսեղ կաթուղիկոս յաթոռն սրբոյն Գրիգորի՝ ի վերայ ամենայն աշխարհին Հայոց հրամանաւ Կիւրիկէ թագաւորին և Տեառն Ստեփանոսի՝. որ ունէր զաթոռ սրբոյ առաքելոցն Թադէոսի: Յայսմ ժամանակի նորոգեալ եղև աթոռ սրբոյն Գրիգորի ի քաղաքն Անի...»[367]:

Սելջուկյան տիրապետության շրջանի միակ լուսավոր ժամանակահատվածը հայ պատմագիտության մեջ ընդունված է Մելիքշահի (1072-1092թթ.) գահակալության շրջանը, քանի որ երկարատև անկարգություններից ու անօրինություններից հետո հաստատվեց որոշակի կարգ ու կանոն: Նրա վարած քաղաքականությունից գոհ էր նաև հայ-

365. Պատմութիւն Արիստակեայ Վարդապետի Լաստիվերցիոյ, Վենետիկ, 1844, էջ 75:
366. Մակ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ.Ա, էջ 180:
367. Մ.Ուռհայեցի, էջ 236-238: Տես նաև Հովհ.Շահխաթունյանց, էջ 340:

հոգևորականությունը, քանի որ եկեղեցին հիմնականում ազատվել էր տուրքերից, հատուկ հրովարտակներով նրան տրվել էր բավական արտոնյալ վիճակ[368]:

Մ.Ուռհայեցին հաղորդում է, որ 1088-1089թթ. Մելիքշահի հրամանով սելջուկ զորավար Պուզա ամիրան հարձակվում և այնտեղ իշխող Փաղլունյաններից գրավում է Գանձակը: Պուզան Մելիքշահից հատուկ հրաման ուներ՝ քաղաքում բնակչության կոտորած չկատարելու կապակցությամբ: Աղվանից կաթողիկոս տեր Ստեփանոսը, որն այդ ժամանակ գտնվում էր քաղաքում, «զերծաւ խաղաղութեամբ օգնականութեամբ Աստուծոյ, վասն զի պահեալ եղև ի Հայոց զօրացն, որք էին զհետ Պուզանին»[369]:

1103 թվականին Մեծ Սյունիքում վախճանվում է Ստեփանոս Ա կաթողիկոսը և թաղվում Վահանավանքում: Նույն վանքի մի շիրմաքարի վրա պահպանվել է Հայ Աղվանից կաթողիկոսի անթվական տապանագիրը. «Ես տէր Ստեփանոս՝ Աղվանից կաթողիկոս, նեղեալ ի տաճկաց եկա հանգեայ աւծաստր թագուհեայ Շահանդուխտին և Կատային շինած եկեղեցոյս գաւթիս...»[370]:

Ստ.Օրբելյանը ևս վկայում է Վահանավանքում Հայ Աղվանից կաթողիկոսի մահվան փաստը. «յորոց աւուրս և եկն երջանիկ կաթողիկոսն Աղվանից Տէր Ստեփաննոս և անդէն բնակեալ աւուրս ինչ՝ հանգեաւ ի տեղւոջն, և եդաւ ի նմին սրբարանի»[371]: Սակայն, պատմիչը մահվան տարեթվի վերաբերյալ տեղեկություն չի հաղորդում: Ստեփանոս կաթողիկոսի մահվան տարեթվի վերաբերյալ տեղեկություն հաղորդում է Մատթեոս Ուռհայեցին: Ներկայացնելով 1103 թվականի դեպքերը, հեղինակը հետևյալն է արձանագրել. «Յայսմ ամի մեռաւ կաթուղիկոսն Աղուանից Տէր Ստեփաննոս»[372]: Հովհ. Շահխաթունյանցի մոտ նույնպես Ստեփանոս կաթողիկոսի մահվան տարին նույնպես նշված է 1103

368. Մ.Ուռհայեցի, էջ 258:
369. Նույն տեղում, էջ 254:
370. Դիվան հայ վիմագրության, պրակ Բ, էջ 89:
371. Ստ.Օրբելյան, էջ 241:
372. Մ.Ուռհայեցի, էջ 320:

թվականը[373]:

Հայ Աղվանից նոր կաթողիկոսի ընտրության համար Հայոց Բարսեղ կաթողիկոսի նախաձեռնությամբ Աղվանից եպիսկոպոսների ժողով է հրավիրվում Գանձակում, ուր Հայ Աղվանից կաթողիկոս է ընտրվում հանգուցյալի եղբայր տեր Հովհաննեսը (Հովհաննես Ե) (1103-1130թթ.)[374]:

Տեր Հովհաննեսի կաթողիկոսության շուրջ աղբյուրները առանձնակի տեղեկություններ չեն հաղորդում: Մ.Ուռհայեցին միայն մեկ նախադասությամբ նշում է, որ «զոր և ետոյ անարժան գտին զնա աթոռոյ հայրապետութեանն, ընդ բանադրանօք փակեաց զնա Տէր Բարսեղն կաթուղիկոսն Հայոց, և յաթոռոյ և ի պատուոյ հայրապետութեանն արտաքս ընկեցին զնա. զայս արարին վասն խոտոր վարուց իւրոց»[375]: Կ.Գանձակեցին, թվարկելով Աղվանից կաթողիկոսներին, Ստեփանոս Ա-ից հետո միայն հիշատակում է Հովհաննեսի անունը, նշելով, որ վերջինս աթոռակալել է 50 տարի ու նրան փոխարինել է տեր Ստեփանոս Բ-ն, որն էլ աթոռակալել է ընդամենը տարի ու կես, քանի որ մահացել է երիտասարդ հասակում[376]: Մ.Բարխուտարյանցի տեսակետը հարցի առնչությամբ առավել հիմնավոր է, քանի որ հենված է համոզիչ փաստարկների վրա, որոնց համաձայն Հովհաննես կաթողիկոսը աթոռակալել է ոչ թե 50 տարի, այլև 1103-1130 թվականներին, այսինքն 27 տարի[377]:

Հովհաննես Ե կաթողիկոսին հաջորդեց Ստեփանոս Բ-ն, որը «ամ մի և կէս, 'ի տիս պատանեկության վախճանեալ»[378]: Այսինքն Ստեփանոս Բ-ն աթոռակալել է մեկ և կես տարի՝ մոտավորապես 1130-1132թթ.: Մ.Բարխուտարյանցը, հենվելով Մխիթար Գոշի հաղորդած տեղեկությունների վրա, նշել է հետևյալը. «Ապա յետ վախճանելոյ նորա (Տէր

373. Հովհ.Շահխաթունյանց, էջ 340:
374. Մ.Ուռհայեցի, էջ 320: Մակ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ.Ա, էջ 182:
375. Մ.Ուռհայեցի, էջ 320:
376. Կ.Գանձակեցի, էջ 199:
377. Մակ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ.Ա, էջ 182:
378. Կ.Գանձակեցի, էջ 199:

Ստեփանոս Բ-ի) զամս ը. (8) առանց հայրապետի եկաց նահանգս Աղուանից, յորում և ոչ գոյր ի սմա եպիսկոպոս, մինչ զի զնուիրեալսն ի քահանայութիւն յայլ գաւառ տանէին առ ձեռնադրութիւն...»[379]: Այսինքն Հայ Աղվանից եկեղեցին առանց կաթողիկոս է մնում 8 տարի:

XII դարի առաջին կեսին սելջուկյան կենտրոնական պետության խարխլման հետևանքով աննկարագրելի ծանր վիճակ էր ստեղծվել բովանդակ Հայաստանում, այդ թվում և Հայոց արևելից կողմերում: Անտանելի էին դարձել տեղական ինքնագլուխ դարձած իշխանավորների կամայականություններն ու պարբերական ասպատակությունները: Հիշյալ չարիքներին գումարվեց նաև 1139 թվականի ահավոր երկրաշարժը, որի սրտաճմլիկ նկարագրությունն են տվել Մխիթար Գոշն ու Կիրակոս Գանձակեցին: Մխիթար Գոշը թվարկել է նաև այն գավառներն ու նահանգները, որոնք վեր էին ածվել ավերակույտերի. «Ո հայի յերկիր եւ տա դողալ սմա», որով շարժմամբ բազում աւերումն լինէր ընդ բազում տեղիս ի գաւառիս Փառիսոսոյ եւ Խաչինոյ, առ հասարակ ի դաշտս եւ ի լերինս, յորում եւ մայրաքաղաք Գանձակ առ հասարակ յանդունդս կործանիւր...»[380]:

Քաղաքական անկայուն իրավիճակի և դրան ավելացած բնական աննկարագրելի աղետի պատճառով ծանր իրավիճակ էր ստեղծվել ոչ միայն աշխարհիկ իշխանավորների, այլև երկրամասի հոգևոր հաստատության համար, որն իր վրա կրելով կրոնական ու քաղաքական զանազան հարվածներ, մեծապես տուժեց նաև բնական աղետից: Երկրաշարժի հետևանքով ավերվեցին երկրամասի մեծ թվով եկեղեցիներ ու վանքեր:

Քաղաքական անկայուն իրավիճակը, հավանաբար, պատճառներից մեկն էր այն հանգամանքի, որ Հայաստանյաց Առաքելական եկեղեցու հայրապետները հիշյալ ժամանակաշրջանում ի վիճակի չեղան հետևողականորեն հսկել Հայ Աղվանից կաթողիկոսարանի անցուդարձը և, ինչպես արդեն նշվել է, Հայ Աղվանից կաթողիկոսական աթոռը

379. Մ.Կաղանկատվացի, էջ 352:
380. Ղ.Ալիշան, Հայապատում, էջ 365: Բ.Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը., էջ 114:

առժամանակ մնաց թափուր: Այստեղ հարկ է նաև նշել, որ Հայ Աղվանից կաթողիկոսական աթոռի թափուր մնալու ժամանակի վերաբերյալ հայկական աղբյուրները հաղորդում են ոչ միատեսակ տեղեկություններ, եթե օրինակ բերենք հենց թեկուզ միայն այն, որ Մխիթար Գոշը այդ ժամանակահատվածը հաշվում է 8 տարի, իսկ Կ.Գանձակեցին՝ 25 տարի[381]:

Կ.Գանձակեցու մոտ նշվածն է ընդունել նաև Հովհ. Շահխաթունյանցը[382]: Սակայն Հովհ. Շահխաթունյանցի արձանագրած թվական տվյալները թեկուզ և պարզագույն հաշվումներով չեն համապատասխանում հեղինակի իսկ հաղորդած վկայություններին: Ըստ նրա նոր կաթողիկոսի ընտրության ժողովը կայացել է 1140 թվականին, Ստեփանոս Ա կաթողիկոսը իր մահկանացուն կնքել է 1103 թվականին և նրան փոխարինել են Հովհաննես Ե-ն, այնուհետև Ստեփանոս Բ-ն՝ մեկ և կես տարի, որից հետո. «ոչ ունէք յաջորդեալ՝ անցանէ միջոց պարապոյ Իե ամաց»[383]:

Հովհաննես Ե կաթողիկոսի աթոռակալության վերաբերյալ աղբյուրները թվական տվյալներ չեն հաղորդում, բացառությամբ նրա, որ Կ.Գանձակեցին նրա աթոռակալության ժամանակը հաշվում է 50 տարի[384]: Այսպիսով, առկա աղբյուրների համադրությամբ տրամաբանորեն ճշգրիտը պետք է համարել Մխիթար Գոշի արձանագրած տեղեկությունները, որոնք հիմք են հանդիսացել նաև Մ.Բարխուտարյանցի հիշյալ հարցի առնչությամբ շարադրած տեսակետի համար[385]:

Եվ այսպես, Հայոց Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսը (1113-1166թթ.)[386], տեսնելով, որ առանց գահակալի է մնացել Աղվանից կաթողիկոսական աթոռը, Հայ Աղվանից կաթողիկոս ձեռնադրելու, հայոց հայրապետական իշխանության միասնությունը պահպանելու, ինչպես նաև Հայոց եկեղեցական հաստատության բարեկարգման նպատակով Հայոց արևելից կողմերն է ուղարկում Կարինի Սահակ եպիսկոպոսին:

381. Կ.Գանձակեցի, էջ 199:
382. Հովհ.Շահխաթունյանց, էջ 340:
383. Նույն տեղում:
384. Կ.Գանձակեցի, էջ 199:
385. Մակ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ.Ա, էջ 184-186:
386. Մաղ.արք.Օրմանեան, Հայոց եկեղեցին, էջ 254:

Լոռու Կյուրիկյանների Դավիթ թագավորը, համախմբելով բոլոր եպիսկոպոսներին 1139 թվականի Հոգեգալստյան տոնին ժողով է գումարում հայոց կաթողիկոսի կողմից լիազորված Սահակ եպիսկոպոսի նախագահությամբ, որտեղ Հայ Աղվանից կաթողիկոս են ձեռնադրում Գագիկ եպիսկոպոսին՝ վերանվանելով Գրիգորիս. «ապա ձեռնադրեցին զԳագիկն կաթողիկոս, և անուանեցին Գրիգորէս՝ ըստ անուան կաթողիկոսին Հայոց»[387]:

Կ.Գանձակեցու վկայությամբ Հայ Աղվանից նորընտիր առաջնորդը կաթողիկոսների տոհմից էր, որի համապատասխան կրթություն ստանալուց հետո ժամանակի մի խումբ հեղինակավոր հոգևորականների հետ միասին, որոնց թվում էին Թոքակերի որդի Գրիգոր վարդապետը, Դավիթ Ալավկաորդին, «մաղթանքի թուղթ» գրեցին Հայոց մեծ հայրապետ Գրիգորիսին. «...և այր մի ընդ թղթոյն առաքեցին, զի ձեռնադրեսցէ զնա եպիսկոպոս, առաքեսցէ և ինքն եպիսկոպոս մի յիւրոցն, և տացէ հրաման ձեռնադրել զմանուկն Գագիկ յաթոռն Աղուանից, զի մի առաջնորդ կորիցէ աշխարհն»[388]:

Նամակի բովանդակությունից դժվար չէ նկատել, որ ոչ միայն հայոց հայրապետն էր միայնակ ջանքեր թափում Հայոց Առաքելական աթոռի միասնության ու հաստատունության համար, այլև ենթակա թեմերը իրենց հերթին ևս ձգտում էին ստանալ հայոց հոգևոր նվիրապետի աջակցությունն ու հովանավորությունը:

Կ.Գանձակեցու մեջբերված տողերի մեջ, մեր կարծիքով, ուշադրության արժանի է նաև վերջին միտքը՝ «զի մի առաջնորդ կորիցէ աշխարհն»: Պատմիչը, անշուշտ, ի նկատի ուներ երկրամասում ստեղծված օրհասական վիճակը, և միաժամանակ, դրանով մատնանշում էր հոգևոր առաջնորդարանի դերը պետականությունից զրկված ժողովրդի համար: Ուրեմն, Հայ Աղվանից հոգևոր առաջնորդի ձեռնադրությունը թելադրված էր նաև քաղաքական պայմաններով:

Հայ Աղվանից կաթողիկոսի ձեռնադրության հետ մեկտեղ ձեռնադրվում են նաև 12 եպիսկոպոս՝ ընդունված կանոնների համաձայն[389]:

387. Կ.Գանձակեցի, էջ 200:
388. Նույն տեղում:
389. Նույն տեղում:

Մխիթար Գոշը, նշելով, որ հիշյալ ժողովը գումարվել է Տավուշի բերդում, թվարկում է նաև ժողովի մասնակիցներին. «թագաւորն Դաւիթ՝ եղբայր Աբասայ թագաւորի: Տէր Ստեփաննոս՝ որդի Կիւրիկէի նոցունց եղբայր, Սարգիս վարդապետ՝ աշակերտ Դաւթի վարդապետի (խոսքը կրկին Դավիթ Ալավկաորդու մասին է-Մ.Բ.), Գրիգոր արհիեպիսկոպոս Գանձակա, Սահակ եպիսկոպոս՝ աշակերտ Սարգսի վարդապետի, Ստեփաննոս եպիսկոպոս Կողթա գաւառին եւ քաղաքին Շամքորոյ, Սարգիս եպիսկոպոս Շամիրամածորոյ, Սամուէլ եպիսկոպոս Կաբրոյ (Կապաղակայ), Հայր Սարգիս Խամշիվանից»[390]:

Կ.Գանձակեցու հաղորդած տեղեկության համաձայն, հենց նշված իրադարձությունից անմիջապես հետո էլ տեղի է ունեցել բնական մեծ աղետը՝ երկրաշարժը. «Եւ շնորհօքն աստուծոյ ապրեալ եղև նորընծայ կաթողիկոսն, բայց մեռաւ ի շարժմանէն մեծ վարդապետն Գրիգոր՝ հանդերձ այլ բազմութեամբ արանց և կանանց և մանկտոց, որոց ոչ գոյ թիւ, զոր սպանին շինուածքն՝ անկեալ ի վերայ»[391]:

1140-1160-ական թվականներին քաղաքական իրավիճակը Հայոց արևելից կողմերում շարունակում էր մնալ անկայուն: Իշխանական տները համախմբված չէին կենտրոնական իշխանության ներքո, քանի որ իրականության մեջ այն գոյություն էլ չուներ: Ամեն մի իշխան իր պարտականությունն էր համարում պաշտպանել միմիայն իր սեփական տիրույթները: Օգտվելով այս ամենից եկվոր մահմեդական տարրերը, կաշառելով կամ խաբելով, ավերում ու սրի էին մատնում Հայոց արևելից կողմերի քաղաքները, բերդերն ու գավառները:

1142 թվականին Գանձակի Խուհտուղտի շահապը, ապստամբելով իր սուլթանի դեմ, «և հասեալ ի բերդն, որ կոչի Կաթողիկոսի քար, և որ մերձն է առ նմին, որ անուանի Կարապետանց քար. և բազում աւուրս պաշարեալ զերկոսին և ջանիւ մեծաւ առեալ՝ աւերեաց զերկոսին քակմամբ և հրկիզութեամբ. և եկեղեցիք սրբութեան կոխան եղեն անօրինացն, մինչ զի իսպառ ջնջել և աւերիլ Կաթողիկոսի քարին ի ՇՂԱ(1142

390. Մ .Կաղանկատվացի, էջ 351:
391. Կ.Գանձակեցի, էջ 200:

թվակ Հայոց)»[392*]:

Պատմիչի հիշատակած «Կաթողիկոսի քար» կոչված վայրը գտնվում է Թարթառի ափին, Մարտակերտի շրջանի Լյուլասազ գյուղի մոտ: Ավելի վաղ ժամանակներում, և որի մասին արդեն հիշատակվել է, այն եղել է Աղվանից կաթողիկոսների ամառանոցը՝ հայտնի Բերդակուր անունով:

IX դարում աստանդական վիճակում հայտնված Հայ Աղվանից կաթողիկոսների համար կաթողիկոսական հիշյալ ամառանոցը վեր էր ածվել կաթողիկոսների աթոռանիստի: Խուիտուղտի հրոսակները, ինչպես վկայում է Մխիթար Գոշը, Կաթողիկոսի քարը այնպես էին հիմնովին ավերել, որ դրանից հետո այն այլևս չի հիշատակվել հետագա աղբյուրներում[393]:

Խուիտուղտի ապստամբությունը ճնշելու նպատակով 1143 թվականին Պարսկաստանից դեպի Գանձակ է շարժվում Չոլի զորապետը: Գանձակը գրավելուց հետո վերջինս դիմում է Խաչեն և, Գոշի վկայությամբ, «էառ զամենայն ամրոցս նոցա, քակեաց զեկեղեցիսն և այրեաց զվանորեայսն, կոտորեաց զազատսն...»[394]: Սյունի մասին է վկայում նաև Սամվել Անեցին. «...սովով և սրով և գերութեամբ, ընդ որս քահանայք և սուրբ կտակարանք և կրոնաւորք առ ոտս ընկան անօրինաց»[395]:

Սակայն ավերածություններն ու կոտորածը հիշյալով չի ավարտվում, քանի որ երկու տարի անց՝ 1145-1146թթ., Չոլի զորապետը կրկին արշավում է Խաչեն: Խաչենցիների անհնազանդությունը վերջնականապես վերացնելու նպատակով գազազած բռնակալը, չկարողանալով նվաճել ամրոցները, իր ողջ զայրույթը թափում է անպաշտպան բնակավայրերի վրա՝ հրի մատնելով նաև վանքերն ու եկեղեցիները: «Այրեաց և զառաքելադիր ուխտ սրբութեան, որ կոչուի Դադուի

392. Մխիթար Գոշ, ժամ Գանձակայ: Ղ.Ալիշան, Հայապատում, էջ 386:
*Ըստ Հ.Մանանդյանի «Կաթողիկոսի քար»-ը և «Կարապետանց քար»-ը գտնվում էին Չարեքի բերդի մոտ՝ Գարդման գավառում: Տես՝ Հ.Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ., Եր., 1977, էջ 108-109:
393. Ղ.Ալիշան, Հայապատում, էջ 386:
395. Սամուէլ Անեցի, Հավաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 132:

վանք»,- արձանագրել է Մխիթար Գոշը[396]:

Ահա այսպես, մահմեդական վրանաբնակ ցեղերը առանց վարանելու այրում ու ավերում էին հայ ժողովրդի հոգևոր հարստությունը կազմող հոգևոր մասունքները՝ հայոց վանքերն ու եկեղեցիները, որոնցում մարմնավորված էր հայի հավատքը հանդեպ ճշմարտության ու հավերժականության: Եվ այդ հավատքն էր, որ կարողացավ դիմակայել ու հաղթել, ժողովրդին առաջնորդել դեպի հավերժություն:

XII դարի երկրորդ կեսին Հայ Աղվանից աստանդական կաթողիկոսները շարունակում էին ղեկավարել իրենց «հոտը»՝ տեղից տեղ տեղափոխվելով: Կաթողիկոսական աթոռը որոշ ժամանակ հաստատվել էր Չարեք կոչված բերդի սահմաններում[397], որի մասին Մ.Բարխուտարյանցը հետևյալն է գրել. «Քարայրներս բոլորն ևս եկեղեցի չեն, այլ միայն երկուսն, որոնց մէջ մնում են վէմ եւ սեղան քարերն ցարդ...: Ուղիղ Չարէք բերդի հարաւային հանդէպ են քարայրներս, որոց արեւելեան կողմում կայ պատուական աղբիւր, որից խմած եւ գործածած են այրերումս նստող կաթուղիկոսներն»[398]:

Հայ Աղվանից Գրիգորիս Բ կաթողիկոսի հոգևոր գործունեության և առանձնապես մահվան տարեթվի վերաբերյալ արձանագիր կոնկրետ տեղեկություններ չեն հանդիպել: Կ.Գանձակեցին պարզապես նշել է. «յորժամ եղև այր կատարեալ կաթողիկոսն Գագիկ լի իմաստիւք աստուածայնովք, փոխեցաւ յաշխարհէս. և դարձեալ խաւար եղև կողմանցն այնոցիկ»[399]:

Ուսումնասիրելով Գրիգորիսին հաջորդած հոգևոր առաջնորդների գահակալության ժամանակահատվածները, կարելի է թերևս ենթադրել, որ Գրիգորիսը աթոռակալել է մինչև 1145 թվականը, որ համընկնում է նաև Չոլի զորապետի երկրորդ արշավանքին, ինչն էլ, հավանաբար, ի նկատի ուներ Կ.Գանձակեցին հիշյալ տողերում. «դարձեալ խաւար եղև կողմանցն այնոցիկ»:

396. Ղ.Ալիշան, Հայապատում, էջ 386 բ.: Տես նաև՝ Ղ.Ալիշան, Արցախ, Եր., 1993, էջ 53:
397. Կ.Գանձակեցի, էջ 178:
398. Մակ.Բարխուտարեանց, Արցախ, էջ 314:
399. Կ.Գանձակեցի, էջ 201:

Եվ այսպես, Աղվանից Գրիգորիս Բ կաթողիկոսին հաջորդում է, ինչպես նշվեց, Բեժգենը, որը, սակայն, շատ կարճաժամկետ աթոռակալություն ունեցավ, քանի որ, խախտելով ընդունված կարգը, ամուսնացավ, որի պատճառով նա կարգալույծ արվեց ու նրա փոխարեն ձեռնադրվեց Ստեփանոսը[400]:

Հավանաբար, հենվելով Կ.Գանձակեցու հիշյալ վկայության վրա, Մակ. Բարխուտարյանցը նույնպես Ստեփանոս Գ կաթողիկոսին հիշատակում է Բեժգենից հետո, իսկ Հովհ.Շահխաթունյանցը Բեժգենից հետո հիշատակում է Ներսես Բ կաթողիկոսին, որը սակայն չի հաստատվում աղբյուրներով: Այս թյուրիմացության պատճառը, մեր կարծիքով, այն է, որ Հայոց Աղվանից կաթողիկոսության պատմության ընթացքում Ստեփանոս անվամբ թվով 5 կաթողիկոսներ էին հայտնի՝ Ստեփանոս Ա(1077-1103թթ), Ստեփանոս Բ(1130-1132թթ.), Ստեփանոս Գ(1155-1195թթ.), Ստեփանոս Դ(1263-1323թթ.), Ստեփանոս Ե(հիշ. 1476թ.): Եվ նշված նույնանուն կաթողիկոսներից Ներսես Բ-ին հաջորդողը ոչ թե Ստեփանոս Գ-ն էր, այլ Ստեփանոս Դ-ն[401]:

Եվ այսպես, Հայոց արևելից հոգևոր առաջնորդները, կարգալույծ անելով Բեժգենին, նոր կաթողիկոս են ձեռնադրում Ստեփանոս Գ-ին, որը աթոռակալեց 40 տարի (1155-1195թթ.)[402]:

Քննարկվող ժամանակաշրջանում Հայոց արևելից կաթողիկոսական աթոռը շարունակում էր գտնվել Չարեքի բերդում, քանի որ Գանձակում բնավորված մահմեդական ամիրայությունը իսկական չարիք էր դարձել քրիստոնեության համար: Չարեքը, կառուցված լինելով Շամքոր գետակի ձախ ափին, Արևելից կողմանց եկեղեցու կյանքում կարևոր դեր է խաղացել ոչ միայն հիշյալ ժամանակաշրջանում, այլև հետագա դարերում:

Գանձակից հալածված Հայ Աղվանից կաթողիկոսները զրկված էին անգամ Գանձակ մտնելու իրավունքից: Գանձակում գտնվող քրիստոնյաներից ու քահանաներից եկեղեցական տուրքերը հավաքելու նպատակով Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի կողմից այնտեղ է ուղարկվում Սարկավագ անունով քորեպիսկոպոսը[403]: Գանձակի ամիրա Գուրջի Բատրադին իմանալով, որ քրիստոնյաների համար ջրօրհնեքը եկեղեցական մեծ տոն է, քորեպիսկոպոսին առաջարկում է կաթողիկոսին հայտնել, որ ինքը՝ ամիրան, իմացել է, թե քրիստոնյաների համար ինչպիսի մեծ տոն է ջուրն օրհնելը և ուզում է, որ Աղվանից կաթողիկոսը անձամբ ներկայանա՝ Գանձակի ջուրը օրհնելու համար, որպեսզի քաղաքի մահմեդականները ևս ապրեն ջրօրհնեքի բերկրանքը:

Անսպասելի այս հրավերը ուրախությամբ է ընդունում Ստեփանոս Գ կաթողիկոսը և իր շքախմբով մեկնում է Գանձակ: Քաղաքի քրիստոնյա ու մահմեդական բնակչությունը ամիրայի հետ հասնում են գետի ափ, որտեղ պետք է կատարվեր հանդիսավոր արարողությունը: Երբ կաթողիկոսը օրհնում է ջուրը՝ մեռոնը լցնելով նրա մեջ, մոլեռանդ մահմեդականները ընդվզում են իրենց ամիրայի ու հայ կաթողիկոսի դեմ: Գազազած մահմեդական ամբոխը հարձակվում է ամիրայի ու կաթողիկոսի վրա ու կալանավորում նրանց: Սպահանում նստող փոխարքայի հրամանով ամիրային իշխանազրկում և ուղարկում են Սպահան, իսկ կաթողիկոսին ազատում են, առնելով նրանից մեծ քանակությամբ փրկագին: Այս դեպքից հետո Աղվանից Ստեփանոս կաթողիկոսը, Կ.Գանձակեցու վկայությամբ, այլևս չի մնում Գանձակում, այլ գնում և ապաստան է գտնում Խաչենի կողմերում:

Ստեփանոս Գ կաթողիկոսի Գանձակից հեռանալուց հետո Գանձակի ու շրջակաների հայ հոգևորականները կարգաթող արված Բեժգենին, քահանայության կարգ տալով, վերստին կարգում են իրենց առաջնորդ[404]: Ստեփանոս կաթողիկոսը այս արարքը ընդունելով որպես ոտնձգություն Հայոց եկեղեցու դեմ, բանադրանքի ենթարկեց մեղավորներին ու Բեժգենին[405]:

Խաչենում գտնված տարիներին աստանդական պայմաններում հայտնված Հայ Աղվանից Ստեփանոս Գ կաթողիկոսը շարունակում է

400. Նույն տեղում:
401. Ստ.Օրբելյան, Սյունիքի պատմություն, Եր., 1986, ծանոթագրություններ, հմ.1146, էջ 140:
402. Կ.Գանձակեցի, էջ 201:

403. Նույն տեղում, էջ 179:
404. Կ.Գանձակեցի, էջ 181:
405. Նույն տեղում:

իր հովվապետական ծառայությունը: Նրա անվան հիշատակությամբ առայսօր հայտնի վիմագիր արձանագրությունների մեջ ամենահինը թվագրվում է 1167 թվականով. «Ի թվ. ՈԺԶ(1167)... յիշխանապետութեանն Հասանայ որդւոյ Վախտանգայ, ի հայրապետութեանն տեառն Գրիգորիսի և Ներսիսի հարազատ եղբարց Հայոց Մեծաց և տան Աղուանից տեառն Ստեփաննոսի... և յիշխանապետութեանն Արևելից Ելտկուզին...»[406]: Մեկ այլ արձանագրության մեջ, թվագրված 1173 թվականով, նշված է. «Ի թվիս ՈՒԲ(1173) ի հայրապետութեան Տեառն Ստեփանոսի և ի թագաւորութեան... Սրահանգ, որդի առջա... կանգնեցի զխաչս ի տապանի ...»[407]:

Առաջին արձանագրության մեջ հիշատակված Ելտկուզը եղել է Ատրպատականի Գանձակի ամիրան, որի իշխանապետության ժամանակակից հայ մատենագիրները գովեստով են խոսում նրա մասին: «Ելտկուզի մասին Մխիթար Գոշը վկայում է, որ սա «խաղաղացոյց զխռովութիւն աշխարհին Առանայ. և վայրենամիտ ազգն Իսմայելացւոց ընդանացան, և կապուտ կողոպուտն դադարեաց ի նոցանէ, զոր առնէին յաճախ աշխարհիս Աղուանից»[408]: Ակնհայտ է, սակայն, որ քրիստոնյաների հովանավորումը մահմեդական ամիրայի կողմից հետապնդում էր զուտ քաղաքական նպատակներ և ենթակա էր կտրուկ փոփոխության ցանկացած պահին:

Ստեփանոս Գ կաթողիկոսը, ըստ Կ.Գանձակեցու, վախճանվել է Հեր գավառում 1195 թվականին[409]: Հենվելով Գանձակեցու հիշյալ վկայության վրա, այդ դեպքն այսպես է արձանագրել Մակ. Բարխուտարյանցը. «աստանդական մնալով ողորմելի հայրապետն վախճանում է Հեր գավառում»[410]:

Բ.Ուլուբաբյանը հարցի առնչությամբ հետևյալն է գրել, որ Ստեփանոս կաթողիկոսը իր մահկանացուն է կնքել «հավանաբար հենց այս-

406. Հ.Մանանդյան և Հր.Աճառյան, Հայոց նոր վկաներ, Վաղարշապատ, 1903, էջ 31:
407. Դիվան հայ վիմագրության, Պրակ V, էջ 74:
408. Հ.Մանանդյան, հ.Գ, էջ 113-114:
409. Կ.Գանձակեցի, էջ 181:
410. Մակ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ.Ա, էջ 189-190:

տեղ՝ Խամշի վանքում, որը գտնվում էր Չարեքի հարևանությամբ: Իսկ Չարեքը, կառուցված լինելով Շամքոր գետակի ձախ ափին, Արևելից կողմանց եկեղեցու կյանքում կարևոր դեր է խաղացել ոչ միայն այս ժամանակ, այլև հետագա դարերում»[411]: Ասվածը, իհարկե, միայն ենթադրություն է և այն վկայող որևէ փաստարկ առ այսօր գոյություն չունի: Անժխտելի է, որ քննարկվող ժամանակաշրջանի ամենավստահելի աղբյուրներից մեկը հանդիսանում է Կ.Գանձակեցին, որն էլ, Գանձակ քաղաքում ջրօրհնեքի միջադեպի առնչությամբ հայտնում է, որ Ստեփանոս կաթողիկոսը հեռացավ Խաչեն ու այլևս չվերադարձավ[412]: Սակայն Կ.Գանձակեցու՝ Ստեփանոս Գ կաթողիկոսի անվան հետ կապված մեկ այլ վկայության համաձայն, Մխիթար Գոշը, որի «ել համբաւ իմաստութեան նորա ընդ ամենայն աշխարհ. և բազումք աշակերտէին նմա յուսումն վարդապետութեան: Եւ ապա նեղեալ ի տաճկաց՝ ի սադրելոյ կաթողիկոսին Աղուանից Ստեփաննոսի, և եկեալ յաշխարհն Խաչենոյ առ Վախթանկ, իշխանն Հաթերքոյ և առ եղբարս նորա»[413]:

Այս վկայությունը հերքող տեսակետ է արձանագրված Մ.Բարխուտարյանցի մոտ. «Գոշ-Մխիթար Գանձակեցի վարդապետս թողած է դատաստանագիրք, որ երկասիրած է Աղուանից Ստեփանոս կաթուղիկոսի և Վախթանգ թագաւորազնի խնդրանօք»[414]: Մ.Օրմանյանը ևս նույն տեսակետն է հաստատել, նշելով, որ «Մխիթար... իր ուսումը լրացնելու համար թե Արեւելեան եւ թե Արեւմտեան վանքերը շրջեցաւ, երկար ատեն Կիլիկիոյ Սեաւ-Լեռն ալ մնաց, եւ նորէն Արեւելք դառնալով Կարնոյ Քուրդ եւ Խաչէնի Վախթանկ իշխաններու պաշտպանութիւնը վայելեց, Աղուանից Ստեփանոս կաթողիկոսէն հուանավորուեցաւ, եւ վերջին երկուքին խնդրանօք 1184-ին ձեռնարկեց պատրաստել դատաստանագիրքը...»[415]:

Վերջապես, և որն ամենակարևորն ու արժանահավատն է. հիշյալ տեսակետը փաստող վկայություն կա հենց իր՝ Մխիթար Գոշի մոտ.

411. Բ.Ուլուբաբյան, Հայոց Արևելից եկեղեցին և մշակույթը, էջ 201:
412. Կ.Գանձակեցի, էջ 181:
413. Նույն տեղում, էջ 209:
414. Մակ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ.Ա, էջ 195:
415. Մ.Օրմանյան, Ազգապատում, հ.Ա, մաս Գ, էջ 1571:

«Բայց եղև պատճառ գրելոյ զսա ի հարկելոյ զմեզ տեառն Ստեփանոսի Աղուանից կաթողիկոսի, մի անգամ և երկիցս, և ես պատ(ճ)առեցի զանձինս տկարութիւն և զտգիտութիւն, իսկ իբրև առաւել ստիպեաց, յանձն առի՝ մոռացեալ զիմ զտկարութիւնս, գիտելով պարտ է հնազանդ լինել հոգևոր հրամանի, զի թէ յԱստուծոյ իցէ խորհուրդս, և կատարեցի նորին հանճարով»[416]:

Հանգամանքների քննությունից կարելի է եզրակացնել հետևյալը. նախ Հայ Աղվանից Ստեփանոս կաթողիկոսը ինքն էր Գանձակում իշխող մահմեդականներից հալածվել ու եկել հաստատվել Խաչենում և, ինչպես հենց ինքը՝ Գանձակեցին է նշել. «Եւ նա զերծեալ ի վտանգէն՝ չոգաւ ի կողմանս Խաչենոյ, և այլ ոչ իշխէր մտանել ի սահմանս Գանձակայ»[417]: Այստեղից էլ, կարծում ենք հետևությունը միայն մեկն է. և Ստեփանոս Գ կաթողիկոսը, և Մխիթար Գոշը, հալածվելով Գանձակի մահմեդական տերերի կողմից, ստիպված էին հեռանալ ու ապաստանել Խաչենի իշխանությունում:

Վերջին տարիներին Ս.Կարապետյանի կողմից իրականացվող ուսումնասիրությունների ընթացքում Քարվաճառի Հանդաբերդ ամրոցի տարածքում պահպանված վիմագրերի թվում հայտնաբերվել է պատմագիտական արժեք ներկայացնող և ուսումնասիրվող հիմնախնդրին անմիջապես առնչվող մի կարևոր տապանաքար(132x54x15սմ), որի հնգատող անթվակիր արձանագրությունը փաստում է, որ տեղում հանգչում է Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի մարմինը. «ԱՅՍ Է ՀԱՆԻԳԱՍ Տ(Է)Ր ՍՏԵՓԱՆՈՍԻ՝ ԱՂՈՒԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ»[418]:

Սակայն Ս.Կարապետյանը այն կարծիքն է հայտնել, ըստ որի «հաշվի առնելով տապանագրի գրչության առանձնահատկությունները, կարծում ենք, որ տվյալ շիրմաքարը պատկանում է 1262-1323թթ. գահակալած Ստեփանոս Դ-ին»[419]: Հեղինակը սույն տեսակետն արտահայտել է՝ հիմնավորելով այն փաստով, որ Հայ Աղվանից կաթողիկոսության պատմության ընթացքում, ինչպես նշվել է, հայտնի են Ստեփանոս անվամբ 5 կաթողիկոսներ: Կարծում ենք սույն տեսակետի հիմնավորումը՝ հաշվի առնելով միայն տապանագրի գրչության առանձնահատկությունները, այնքան էլ համոզիչ չէ նախ և առաջ այն պատճառով, որ Ստեփանոս Գ և Ստեփանոս Դ կաթողիկոսների միջև ընկած ժամանակահատվածը, ընդհանրապես միջնադարյան ժամանակաշրջանի առումով այնքան մեծ փոփոխություններ չէր կարող ունենալ, քանի որ խոսքը իրարից այնքան էլ հեռու ժամանակահատվածների մասին չէ. Ստեփանոս Գ կաթողիկոսը, աղբյուրների մատնանշմամբ, իր մահկանացուն կնքել է 1195 թվականին, իսկ Ստեփանոս Դ-ն՝ 1323 թվականին: Ավելացնենք նաև, որ հիշյալ տարածքում Ստեփանոս Դ կաթողիկոսին հիշատակող որևէ այլ արձանագրություն նույնպես տակավին չի հայտնաբերված, որպեսզի օգներ հարցի հստակ պարզաբանմանը: Ավելին, Ստ.Օրբելյանի մոտ վկայություն կա այն մասին, որ Հայոց Աղվանից Ստեփանոս կաթողիկոսը՝ նեղվելով մոնղոլների հալածանքներից, անցնում է Սյունիք ու բնակվում «Ելիկումի եղբայր Տեր Ստեփանոսի մոտ», որի մասին առավել հանգամանալից կշարադրվի Ստեփանոս Դ-ի առաջնորդության ժամանակահատվածը ներկայացնող համապատասխան բաժնում:

Մեր կարծիքով կարևոր է այստեղ նշել նաև այն փաստը, որ Ստեփանոս Գ կաթողիկոսը մասնակցել է Կիլիկիայում (Հռոմկլայում) կայացած ժողովին. «տէր Ստեփանոս գ. սա գտաւ յբ, ժողովն Հռոմկլայի»[420]: Նույնն է վկայում նաև Աբր. Զամինեանը. «Հռոմկլայի ժողովը գումարուեցաւ 1179 թուի ապրիլին: Ժողովին ներկայ էին նաև 33 հոգի... ներկայ էին նաև Աղուանից կաթուղիկոսը...»[421]:

Մ.Օրմանյանը հիշյալ փաստի առնչությամբ հետևյալ մեկնաբանությունն է տվել. «Գրիգոր կաթողիկոս ժողովին գլուխն էր, եւ իրեն հետ էր Ստեփանոս Աղուանից կաթողիկոս... պետք է Գրիգորիսի յաջորդը

416. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, աշխատասիրությամբ Ա.Ս.Մաթևոսյանի, Եր., 1988, էջ 243:
417. Կ.Գանձակեցի, էջ 181:
418. Ս.Կարապետյան, Ադրբեջանին բռնակցված շրջանների պատմաճարտարապետական հուշարձանները, էջ 28:
419. Նույն տեղում, էջ 29:

420. Հովհ.Շահխաթունյանց, էջ 341:
421. Աբր.Զամինեան, Հայոց եկեղեցու պատմութիւն, էջ 226:

եղած ըլլայ»[422]: Հետևաբար, կասկածից դուրս է, որ Հայ Աղվանից Գրիգորիս կաթողիկոսին հաջորդած Աղվանից Ստեփանոս Գ կաթողիկոսը ևս մասնակցել է 1179 թվականին Հռոմկլայում[423] կայացած հոգևոր ժողովին:

Այստեղ հարկ է հիշել, որ քննարկվող ժամանակաշրջանում Բյուզանդական կայսրության կողմից նոր սրությամբ էր դրված դավանաբանային խնդիրը և խոսքը վերաբերում էր մեր ժողովրդի ինքնության պահպանման համար կարևոր գործոնի, այն է հավատքին, ապա Հայոց եկեղեցու հզոր ծյուղերից մեկը հանդիսացող Հայ Աղվանից հոգևոր առաջնորդի մասնակցությունը նրա քննարկմանը, բնականաբար, չէր կարող անտեսվել: Եվ Հայ Աղվանից կաթողիկոսը, որը տվյալ պարագայում գտնվում էր Խաչենում, հրավիրվեց ու մասնակցեց հիշյալ ժողովին:

Այսպիսով, Հայ Աղվանից Գ Ստեփանոս կաթողիկոսը, նեղվելով Գանձակի նորահայտ մահմեդական տերերից, բնակություն էր հաստատել Խաչենի կողմերում, որտեղ էլ կնքել է իր մահկանացուն:

422. Մ.Օրմանյան, Ազգապատում, հ.Ա, մաս Գ, էջ 1467:
423. Նույն տեղում, էջ 1466:

Հայ Աղվանից կաթողիկոսությունը XIII-XIV դարերում

XII դարի երկրորդ կեսից և, գլխավորապես, XIII դարի առաջին տասնամյակներում՝ Զաքարյան հայկական կենտրոնացված իշխանության պայմաններում Հայաստանի զանազան մասերում մեծ թափով սկսել էր վերակենդանանալ ու զարգանալ հոգևոր-մշակութային կյանքն ու ընդհատված շինարարությունը: Բացառիկ նպաստավոր պայմաններ էին ստեղծվել նաև Հայոց արևելից կողմերի հոգևոր ու քաղաքական կյանքի զարթոնքի համար, քանի որ Զաքարյան իշխանապետության հովանու տակ վերակենդանացել ու նշանակալից հզորության էին հասել նաև Հայոց արևելից իշխանությունները, մասնավորապես Խաչենի իշխանությունը, որի մասին արժանահավատ ու ուշագրավ տեղեկություններ են հաղորդում պահպանված վիմագիր արձանագրությունները:

Զաքարյանների ժամանակ, ինչպես նշվեց, վերանորոգվեցին ու կառուցվեցին բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր, որի արդյունքում Հայոց եկեղեցին վերստին ստանձնել էր իր երբեմնի դիրքն ու իրավունքները:

Հայ Աղվանից Ստեփանոս Գ կաթողիկոսի մահվանից հետո Հայ Աղվանից հոգևորականները կաթողիկոս են ձեռնադրում Հովհաննեսին՝ նախապես ստանալով Գանձակի Օմար ամիրայի համաձայնությունը:

Հովհաննես Զ-ն (1195-1235թթ.), նախքան կաթողիկոս ձեռնադրվելը, եղել է սարկավագ, այնուհետև Բջնիում Վրթանես եպիսկոպոսի կողմից ձեռնադրվել է վարդապետ, որից հետո էլ կաթողիկոս: Նա Աղվանից կաթողիկոսական աթոռը վերստին տեղափոխում է Չարեք[424]: Սակայն մահմեդականներից նեղվելու պատճառով դիմում է Իվանե և Զաքարե իշխաններին, որոնք խորին հարգանքով են վերաբերում Հայոց արևելից հոգևոր առաջնորդին: Իվանե իշխանի կողմից բնակության համար նրան է տրամադրվում Միափոր գավառը, որտեղ հոգևոր առաջնորդի կողմից ձեռնարկված առաջին քայլն է հանդիսանում մի

424. Կ.Գանձակեցի, էջ 182:

նոր Խամշի* վանքի կառուցումը, որն էլ դարձավ Հայ Աղվանից կաթողիկոսանիստը:

Հայ Աղվանից Հովհաննես Զ կաթողիկոսի Միափոր գավառում հաստատվելու վկայությունների շարքին է պատկանում Մատենադարանում պահպանված հետևյալ հիշատակարան-ձեռագիրը. «Արդ գրեցաւ և աւարտեցաւ սուրբ Աւետարանս ի գաւառիս Կաենն, ի ձորս, որ կոչի Միափոր, ի վանս Զարմազանից, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփաննոսի, յառաջնորդութեանն տեառն Յովհաննիսի Աղուանից կաթուղիկոսի սրբո եւ բարեսիրի...»[425]:

Չնայած մահմեդական զանազան հրոսակների կողմից Հայոց արևելից բնակավայրերին հասցրած սահմռկեցուցիչ հարվածներին, հայ իշխանական տոհմերի կողմից կառուցվում են հավատքի ու լուսավորության այնպիսի նշանավոր կենտրոններ, ինչպիսիք էին Դադի վանքը, Գտչավանքը, Գանձասարը, Հավապտուկն ու Կոշիկ անապատը, Ս.Հակոբա և բազում այլ վանքեր ու եկեղեցիներ: «Այդ վանքերից շատերն իւրեանց ժամանակին եղած են լուսաւորութեան բով, Քրիստոնեության ջեռուցիկ վառարան, աստուածապաշտութեան խնկելի բնակարան, հաւատոյ, յուսոյ և սիրոյ պաշտպան, ազգութիւնը, լեզուն գրականութիւն պահպանող, և միանգամայն Հայաստանեայց եկեղեցու ինքնուրոյնութիւնը և ուղղափառ դաւանութիւնը անխախտ և անխառն պաշտպանող սրբավայրեր»[426]:

Այստեղ հարկ է նշել նաև, որ XI-XIII դարերում Հայոց արևելից կողմերում հոգևոր գործունեության անմնացորդ նվիրյալների անունները և նրանց թողած հոգևոր ժառանգությունը այնքան բազմիմաստ ու բազմաշերտ է, որ նկատելիորեն հարստացրել է մեր միջնադարյան մշակույթի ու գիտության ամենատարբեր ոլորտները: Հովհաննես Սարկավագ Իմաստասեր, Դավիթ Ալավկաորդի, Մխիթար Գոշ, Վանական վարդապետ, Գրիգոր Տուտեորդի, Կիրակոս Գանձակեցի, Վարդան

* Խամշի վանքի ուշ շրջանում կառուցված եկեղեցին և զանգակատունը, որ գտնվում էր Ադրբեջանի Գետաբեկի շրջանի Մեծ Ղարամուրադ գյուղի մոտակայքում, մինչև 1980-ական թվականները կանգուն են եղել:

425. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, էջ 340:

426. Մակ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ.Ա, էջ 194:

Արևելցի. ժամանակի հայ հեղինակավոր հիշյալ վարդապետները ցայսօր դասվում են մեր ազգային մեծությունների շարքը՝ իրենց թողած հիմնարար ու ազգապահապան գործերի համար:

Գիտնական, փիլիսոփա, բանաստեղծ, մատենագիր Հովհաննես Իմաստասերի հռչակը տարածված էր բովանդակ Հայաստանում ու նաև նրա սահմաններից դուրս: Իսկ Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» մեր միջնադարյան մատենագրության այն կոթողն է, «որի հետ դժվար է համեմատել ուրիշ որևէ մատյան»[427]: Կենտրոնական ազգային իշխանության բացակայության պայմաններում այն անգնահատելի դեր է կատարել երկրի ներքին կյանքում հասարակական կարգ ու կանոն մտցնելու, հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական, մշակութային ու հոգևոր վիճակը կարգավորելու գործում:

Հայոց արևելից եկեղեցու X-XII դարերի պատմության ուսումնասիրման տեսանկյունից անգնահատելի արժեք ունի Մխիթար Գոշի «Շարք հայրապետացն Աղուանից» համառոտ ժամանակագրական աշխատությունը: Այն այսօր էլ աղբյուրագիտական արժեք է ներկայացնում Հայոց եկեղեցու Աղվանից թևի կաթողիկոսաշարքը ճշգրիտ ներկայացնելու տեսանկյունից:

Հայ հոգևոր կյանքի ականավոր ներկայացուցիչներից Վանական Վարդապետը հեղինակ է աստվածաբանական բազմաթիվ գործերի, որոնցից հիշատակության արժանի են «Մեկնութիւն Յովբայ», «Բացատրութիւն աղօթից Ամբակումայ մարգարէի», «Համեմատութիւն Հին կտակարանաց ի Նորս», «Խրատ դավանութեան», «Հարցմունք և պատասխանիւք» և այլն: «Վանական Վարդապետը XIII դարի առաջին կեսի Հայաստանի ամենաեռանդուն հոգևորական գործիչն է եղել, հայոց եկեղեցուն վերաբերող բոլոր հարցերի կիզակետը, ժամանակի հասարակականքաղաքական կյանքն առաջ տանողների համար հեղինակավոր մարդ և խորհրդատու ուսուցիչ»[428]:

Քննարկվող ժամանակահատվածում, ավելի քան երբևէ, հոգևոր սերտ հարաբերություններ էին ստեղծվել հատկապես Արցախի և Լոռու

427. Բ.Ուլուբաբյան, Հայոց արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, էջ 307:

428. Նույն տեղում, էջ 314:

միջև: Սույնի մասին վկայություններ են պարունակում Հաղպատի և Սանահինի արձանագրությունները: Փաստորեն Լոռու երկու հռչակավոր համահայկական նշանակության այս հոգևոր կենտրոններում «յաճախ են երևան եկել խաչէնցիք»[429]:

Չնայած քաղաքական աննպաստ իրադրությանը, Հայոց արևելից կողմերի հոգևոր հաստատությունը բազում թելերով կապված մնաց նաև Հայոց մյուս հոգևոր թեմերին ու քաղաքական միավորներին, ընդհուպ նաև Կիլիկյան թագավորությանը: Մ.Օրմանյանը հետևյալն է նշել. «Վարդապետներու ուրիշ ընտիր խումբ մըն ալ կը ծաղկէր Արեւելեան գաւառներուն մէջ, կեդրոն ունենալով Ջորագետի Հաղբատ եւ Սանահին վանքերը, եւ իրեն ասպարէզ նկատելով Վրաց թագաւորութիւնը եւ Անի քաղաքը»[430]:

Հայոց արևելից հոգևոր գործիչների ծավալած ազգային ու ազգապահապան գործունեության արդյունքում Հայոց արևելից եկեղեցին ավելի ամրապնդվեց, իր շուրջը համախմբելով այլադավան օտարի տիրապետության տակ հայտնված հայ ժողովրդին ու առաջնորդեց նրան քրիստոնեական օրենքներով ու կարգերով և, որ ամենակարևորն է, հավատքով:

Քննարկվող ժամանակաշրջանում Հայոց արևելից կողմանց գլխավոր ուսումնական կենտրոններն են հանդիսացել. «Գտիչ, Ս.Յակովբ, Գանձասար, Դադի և Խաթրայ վանքերն, Ծար գիւղաքաղաքն, Ջրվշտիկ վանք, Փառիսոսի և Խորանաշատի, Վարագայ և Գօշ-Մխիթարայ, Մեծ-Իրանաց Ս.Յակովբայ...»[431]: Հոգևոր այդ կենտրոններում կրթություն ստացած եկեղեցական գործիչները մեծ հեղինակություն էին վայելում ինչպես Արևելյան Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Ըստ Մակ.Բարխուտարյանցի, Հայ Աղվանից եկեղեցու ենթակայության տակ գործող հոգևոր կենտրոններում ստեղծվել են ձեռագիր մատյանների հրաշալի օրինակներ, որոնք, որպես սրբություններ,

429. Լեո, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգեւոր Դպրոցի, էջ 50:
430. Մ.Օրմանյան, Ազգապատում, հ.Ա, էջ 1392:
431. Մակ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, էջ 195:

պահպանվում էին հիշյալ վանքերի կողմից: «Բայց հարազատ մելիքներն, բոլոր ձեռագրերը և թղթերը ...թագցրած էին, յորոց առաջին մասը անձասարի և Խոթայ վանքի մէջ տեղում մի քարայրում և բերանը ամրացրած քարուկիր պատով և անյայտացրած. երկրորդ մասը Ջրաբերդի մի ստորերկրեայ և անյայտ քարայրում. իսկ երրորդը Կիւլիստան աւառի Հոռեկայ վանքի մօտերքում»[432]:

Տարաբախտաբար, նույն տողերի հեղինակը դառը կսկիծով նշում է նաև, որ սույն ձեռագրերի միայն առաջին մասն է գտնված, մնացած երկու մասերը տակավին անհայտության մեջ է: Սակայն անհայտության մեջ գտնվելը, թերևս, լավագույն տարբերակ պետք է ընդունել, եթե Հայաստանի ասպատակիչները չլինեին Մուհամեդի դրոշակակիրները:

XII դարի առաջին քառորդում Մոնղոլիայի տարածքում ապրող քոչվոր ցեղերը, համախմբվելով Չինգիզ խանի իշխանության տակ, կարճ ժամանակում իրենց հաղթական արշավներով գրավեցին Միջին Ասիան ու Պարսկաստանի հյուսիսային մասերը: 1220 թվականի ձմռանը նրանք Ատրպատականի վրայով մտան նաև Աղվանք: Մոնղոլական հաջորդ արշավանքը տեղի է ունեցել 1236թ.: Այս անգամ արդեն, հիմնավորվելով Մուղանի դաշտում, հետագա տարիներին իսկական չարիք դարձան շրջակա քրիստոնյաների համար[433]:

Հայոց արևելից կողմանց իշխանական տների մի մասը ամրացավ սեփական բերդերում ապավինելով բերդերի ամրություններին: Սակայն որոշ դիմադրությունից հետո, այնուամենայնիվ, ստիպված էին անձնատուր լինել և ընդունել մոնղոլական գերիշխանությունը: Իսկ Խաչենի Հասան-Ջալալ Դոլա իշխանը, մոնղոլական գերիշխանությունն ընդունելով հանդերձ, կարողացավ պահպանել իշխանության ներքին ինքնուրույնությունը: «զԲարեպաշտ և զառաքինի իշխանն»[434] Հասան-Ջալալը ջանք ու եռանդ չի խնայել՝ ամրապնդելու համար թե աշխարհիկ իշխանությունը և թե հոգևոր առաջնորդությունը:

432. Նույն տեղում, էջ 197:
433. Կ.Գանձակեցի, էջ 170: Տես նաև՝ Մաղաքիայ Աբեղայի պատմութիւն վասն Ազգին Նետողաց, Ս.Պետերբուրգ, 1870, էջ 8:
434. Նույն տեղում, էջ 289(գլ. ԿԳ) և էջ 269-270 (գլ. ԼԱ):

Հայոց արևելից իշխանը հիմնարկել ու կառուցել է Գանձասարի վանական համալիրը, կառուցել ու վերականգնել է վանական շատ համալիրներ իր իշխանության տարբեր ծայրերում: Հասան-Ջալալի հոգևոր կառուցողական գործունեության մասին վկայող առաջին արձանագրությունը, որ պահպանվել է Վաճառ ավանի ավերակներում (ներկայիս Մարտակերտի շրջանի Ծմակահող գյուղի տարածքում), հետևյալն է. «Շնորհիւն Աստուծոյ Հասան որդի Վախտանկայ եւ Խորիշահի, տէր Խաչենու, շինեցի զսուրբ եկեղեցիս... ՈՀԸ(1229)»[435]:

Գանձասարի վանքի շինարարական աշխատանքները սկսվեցին 1216 թվականին Հայ Աղվանից Հովհաննես Ջ կաթողիկոսի հովվապետության շրջանում: Սակայն 1235 թվականին իր մահկանացուն է կնքում Հովհաննես Ջ կաթողիկոսը և նոր կաթողիկոս է ընտրվում նախորդի եղբայր Ներսեսը(1235-1263թթ.)[436], որի օրոք էլ կատարվեց եկեղեցու օծման արարողությունը:

Չարմաղանի կին էլթինա խաթունի* պահանջով, ինչպես հաղորդում են աղբյուրները, Աղվանից նորընտիր կաթողիկոսը պետք է ներկայանար մոնղոլական խաքանի մոտ՝ իր հաստատման թուղթը՝ «էլտամղա», ստանալու համար[437]: Եվ քանի որ այդ ժամանակ Չարմաղանը հիվանդ էր, նրան փոխարինում էր կինը՝ էլթինա խաթունը, որի մոտ էլ գնաց Ներսես կաթողիկոսը: Թուղթը ստանալուց հետո Ներսես Բ կաթողիկոսը սկսում է հովվապետական իր առաքելությունը՝ այցելելով Հայ Աղվանից հոգևոր կենտրոնները, մի բան, որ իր նախորդ մի շարք կաթողիկոսներ չէին համարձակվում կատարել՝ երկրամասին տիրություն անող մահմեդականների կողմից սպառնացող վտանգի

435. Մակ.Բարխուտարեանց, Արցախ, էջ 256:
436. Կ.Գանձակեցի, էջ 201: Տես նաև՝ Վ.Ա.Հակոբյան, Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դդ., Եր., 1956, էջ 144:
* Մոնղոլների մոտ գոյություն ուներ հատուկ սովորույթ. կանայք, որոնք կարևոր ու մեծ աշխատանք էին կատարում քոչվորական տնտեսության մեջ՝ որոշ դեր էին կատարում նաև հասարակական և քաղաքական կյանքում: Ամուսինների մահից հետո այրի կանայք սովորաբար ստանձնում էին նրանց իրավունքները և իշխանությունը՝ մինչև իրենց որդիների չափահաս դառնալը: Տես Հ.Մանանդյան, հ.Գ, էջ 224:
437. Կ.Գանձակեցի, էջ 201:

պատճառով[438]:

Ներսես Բ կաթողիկոսի անվտանգ շրջագայության համար էլթինա խաթունի հատուկ հրամանով նրան ուղեկցում էր մոնղոլ զորապետներից մեկը իր ջոկատով: Շրջելով ենթակա թեմերը, Հայ Աղվանից կաթողիկոսը ամենուրեք հուսադրում ու մխիթարում էր ժողովրդին՝ միաժամանակ մոտիկից տեղեկանալով նրանց մոտ տիրող իրավիճակին: Մանրակրկիտ շրջագայությունից հետո նա վերստին վերադառնում է Խամշի վանքի իր աթոռանիստը:

1240 թվականի Վարդավառի տոնին Ներսես Բ կաթողիկոսը մեծ հանդիսությամբ կատարում է Գանձասարի Սուրբ Հովհաննես եկեղեցու օծման արարողությունը. «և օրհնեցին զեկեղեցին բազում քահանայիւք, որ ասէին զթիւ երիցանցն եօթն հարիւր»[439]:

Վանքի միաբանների կարիքները հոգալու համար Հասան-Ջալալը վանքին է նվիրում մի քանի գյուղեր, իսկ իր իշխանության տարածքում գտնվող եկեղեցիները, որոնք մեծ դժվարություններ էին կրում մահմեդականների անընդհատ կրկնվող ասպատակությունների ու կողոպուտի հետևանքով, ընդհանրապես ազատեց բոլոր տեսակի հարկերից:

Հասան-Ջալալ իշխանի թողած հոգևոր մեծարժեք գործերից է նաև ծնողների պատվերով ընդօրինակված հայտնի Ավետարան-հիշատակարանը, որը գրել է 1261 թվականին՝ Կարակորումից վերադառնալուց անմիջապես հետո: Հիշատակարանում հիշատակված է նաև Հայ Աղվանից Ներսես Բ կաթողիկոսի անունը. «Ես Հասան Ջալալ Դաւլոյ-...Արդ, ի թւին Հայոց ՉԺ(1261) տուի զսուրբ Աւետարանս ծաղկազարդ, յիշատակ աստուածասէր տիկնոջն Մամքանի մեր Լուսաւորիչ սուրբ աթոռն Աղուանից, ի հոգևոր տէրն Ներսէս, որ այժմ բարեհամբաւ... լրիւ ունի զաթոռն սուրբն, և առաւել քան զսուրբս»[440]:

Արդունի հրամանով 1261 թվականին նահատակված Հասան Ջալալ իշխանին փոխարինում է որդին՝ Աթաբակը: Արժանի ժառանգորդը շարունակում է իր հոր հայրենանվեր ու եկեղեցաշեն գործունեությունը:

438. Նույն տեղում, էջ 290:
439. Նույն տեղում, էջ 270:
440. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 311:

Եվ հատկանշական է, որ XIII դարը Հայոց արևելից կողմանց համար եղավ ընդհանրապես հոգևոր կառույցների՝ եկեղեցաշինության բուռն ծաղկման շրջան: Այդ մասին բազում վիմագիր վկայություններ կան պահպանված ներկայիս ԼՂՀ տարածքում գտնվող եկեղեցիների պատերին ու խաչքարերի վրա:

Քննարկվող ժամանակահատվածում Հայոց արևելից եկեղեցու հոգևոր առաջնորդ Ներսես Բ-ի կաթողիկոսության վերաբերյալ կան բավարար թվով նաև վիմագիր արձանագրություններ, որոնք լույս են սփռում Հայ Աղվանից թեմի պատմության տվյալ շրջանի կարևոր իրադարձությունների բացահայտման վրա, քանի որ պատմագիտական մյուս աղբյուրներում առանձին մանրամասնություններ չեն պահպանվել:

Հայ Աղվանից Ներսես Բ կաթողիկոսի անվան հիշատակությամբ առաջին արձանագրությունը՝ թվագրված 1240-ին, գտնվում է Գանձասարի վանքի հյուսիսային պատին՝ պատուհանի երկու կողմերում: 27 տողից բաղկացած վիմագիր արձանագրության մեջ հետևյալն է նշված «...ԱԻՐՀՆԵՑԱԻ ԵԿԵՂԵՑԻՍ: ՈՉԹ: (1240) ԹՈՒԻՆ, Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵ ՏՆ. ՆԵՐՍԻՍԻ ԱՂՈՒԱՆԻՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ...»[441]:

Ներկայիս ԼՂՀ Մարտակերտի շրջանի Մեհմանա գյուղի Ս.Աստվածածին եկեղեցու արևմտյան մուտքի մոտ գտնվող կոթողանման, նեղ ու բարձր խաչքարի թիկունքին պահպանվել է 18 տողից բաղկացած հետևյալ արձանագրությունը. «ԹԻՒ: ՈՂԹ:(1250). Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԹԱԹԱՐԻՆ ԳԼԽԱՒՈՐ ՉԱՐՄԱՂԱՆ ՉԱՂԱՏԱՅ. ԵՍ ՏՐ. ՆԵՐՍԱՅՍ ՅԱՋԳԵ ՊԱՅՏԿԱՆԱԿԱՆՑ ԵՒ ՄԱՐԵՄԱՆՑ, ՇԻՆԵՑԻ ՁԵԿԵՂԵՑԻՔՍ, ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆՆ ԵՒ ՄԱՍՐՈՅ ԵՒ ԿԱՆԳՆԵՑԻ ՁԽԱՉՍ...»[442]:

Արձանագրությունը վկայում է Ներսես Բ-ի հայրապետության շրջանում ծավալված եկեղեցաշինության մասին. «շինեցի զեկե(ղեց)իքս»: Հարկ է նկատել, որ արձանագրության մեջ վկայություն կա նաև «կաթողիկոսարանի» կառուցման մասին, որից էլ պետք է ենթադրել, որ Հայոց արևելից կաթողիկոսները տակավին հիմնական աթոռ չունեին ու, քաղաքական պայմաններից դրդված, ստիպված էին հանգրվանել,

441. Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 40:
442. Նույն տեղում, էջ 92: Տես նաև՝ Ս.Կարապետյան, նշվ աշխ., էջ 14:

համեմատաբար ապահով վայրում, կառուցելով նոր կաթողիկոսարան: Ինչ վերաբերում է Մեհմանայի Ս.Աստվածածին եկեղեցու շինարարությանը, ապա այդ մասին վկայող առանձին արձանագրություն է պահպանվել եկեղեցու արևմտյան պատի հյուսիսային վերին մասում, երկու քարերի վրա: 9 տողից բաղկացած արձանագրությունը հետևյալն է. «ԹԻԻՆ: ՈՂԸ: (1249) Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԹԱԹԱՐԻՆ, Ի ՏԻՐՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԽԱՂԱՂԱՐԱՐ ԱԻԱԳԻՆ, Ի ՊԱՐՈՆՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐՈՅ, ԵՍ ՏԷՐ. ՆԵՐՍԱՅՍ ԵԻ ԱԿՈԲ ԵԻ ՓԱԽՉԱՆ ՇԻՆԵՑԱՔ ՁԵԿԵՂԵՑԻՍ, ՅԻՇԱՏԱԿ ՄԵՋ ԵԻ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ. ՈՎ ԱՇԽԱՏԵԱԼ Ե ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ»[443]:

Այսպիսով, հիշյալ երկու արձանագրությունները կարևոր տեղեկություններ են պարունակում Ներսես Բ Հայ Աղվանից կաթողիկոսի ծավալած եկեղեցաշինարարական բուռն գործունեության վերաբերյալ:

1257-ի թվագրությամբ և Ներսես Բ-ի անունը հիշատակող մեկ այլ խաչքար պահպանվել է Մարտակերտի շրջանի Տոնաշեն գյուղի «Ամառվա եղցի» եկեղեցու բակում: 6 տողից բաղկացած արձանագրությունը հետևյալն է. «Ի ԹՎ: ՉԶ: (1257). ԼԵՍ ՏՐ ՆԵՐՍԷՍ ԿԱՆԳՆԵՑԻ ՁԽԱՉՍ ՏԷՐ ԱՆԴՐԻԱՍԻՆ»[444]:

Ներսես Բ-ի մասին հիշատակություն կա նաև ժամանակի ձեռագիր հիշատակարաններում: 1252 թվականին Խորանաշատում գրված ձեռագիրը հետևյալն է հիշատակում. «Գրեցաւ լուսաշաւեղ և աստվածաշունչ գիրքս այս ի թուաբեր ամանակաց Հայկազնեան ի Չ և ի Ա համարին (1252):... արդ գրեցաւ երկակ բաներս առաքելական և մարգարէական ի տանս Աղուանից, ի գաւառիս Երգևանք կոչեցեալ, ի վանս Խորանաշատո Սուրբ Աստվածածնիս, ի գլուխ իշխանութեան երկրիս այսմ պարոն Աղպուղային... ի հայրապետութեան տեառն Ներսիսի Աղուանից կաթողիկոսի»[445]: Ներսես Բ կաթողիկոսին հիշատակող և պահպանված հաջորդ ձեռագիրը թվագրված է 1261[446]:

1263 թվականին հիվանդության պատճառով Հայ Աղվանից Ներսես

443.Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 93: Տես նաև Ս.Կարապետյան, նշվ աշխ., էջ 14:
444. Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 100:
445. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 264:
446. Նույն տեղում, էջ 311:

Բ հայրապետը կնքել է իր մահկանացուն. «Ի թուին ՉԺԲ(1263) վախճանի կաթողիկոսն Աղուանից տէր Ներսէս»[447]:

Աղբյուրների հաղորդման համաձայն նոր կաթողիկոս է ձեռնադրվում Ստեփանոս Դ-ն(1263-1323թթ)՝ «պատանի հասակաւ, որի անունն յիշուած է Հոռեկայ վանքի և Դասդակիւլի արձանագրութեանց մէջ»[448]:

ԼՂՀ Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի մերձակայքում գտնվող Հոռեկավանքի դռան վրա փորագրված արձանագրությունը վկայում է, որ վանքը կառուցվել է Հայ Աղվանից Ստեփանոս Դ կաթողիկոսի գահակալության շրջանում. «Ի ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՈՒԹԵ. ՏՐ. ՍՏԵՓԱՆՆՈՍԻ, ՁՇԻՆՈՂ ԵԿԵՂԵՑՈՅՍ ՁՏԵՐ. ՅՈՀԱՆՆԷՍ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ. ՆԱ ԵՒ ՁԾՆՈՂՍ ԵՒ ՁԵՂԲԱՐՍՆ ԻՒՐ. ԹԻՒ. ՉԻԸ:(1279)[449]: Նույն եկեղեցու գավթի վրա պահպանված մեկ այլ արձանագրության մեջ հետևյալն է նշված. «ՅԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՏԵՐՈՒԹԵԱՆ ԱՊԱՂԱ ԽԱՆԻՆ ԵՒ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԷՐ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ԵՒ ՊԱՐՈՆՈՒԹԵԱՆ ՆՈՐԱԴԻՆԻՆ ԵՒ ՍՐԱՁԱԴԻՆԻՆ ԵՒ ԳՈՒՐՁԱԴԻՆԻՆ. ... :ՁԼ:(1284):[450]:

1265 թվականին աշխարհակալ թաթար զորավարների միջև սկսվել էր մի հակամարտություն, որի հետևանքով առավել շատ տուժում էր հպատակ հայ ժողովուրդը: Հայոց արևելից կողմերում իրավիճակը այնքան էր անտանելի, որ ժողովուրդը դաշտային մասերից հեռանում և ապաստանում էր Արցախի լեռնոտ վայրերում: Դժվար կացություն էր ստեղծված նաև Հայոց արևելից թեմի համար:

«Դիվան հայ վիմագրության» V պրակում զետեղված Տեր Աթանասի անվան հիշատակությամբ արձանագրությունները[451] հիմք ընդունելով Մակ.Բարխուտարյանցը Ստեփանոս Դ կաթողիկոսի առաջնորդության ժամանակահատվածում մատնանշում է Հայ Աղվանից մեկ այլ՝ Տեր Աթանաս կաթողիկոսին: Քարվաճառի Ծար գյուղի Ս.Սարգիս եկեղեցում պահպանված արձանագրություններից մեկը հետևյալն է հաղորդում. «ԹՎԻՆ: ՉԻԸ: (1279) Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ. ՏԷՐ. ԱԹԱՆԱՍԻ. Ի

447. Վ.Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դ., էջ 144:
448. Մակ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ.Ա, էջ 203:
449. Դիվան Հայ վիմագրության, պրակ V, էջ 102:
450. Նույն տեղում:
451. Նույն տեղում, էջ 215, 218:

ՊԱՐՈՆՈՒԹԻՒՆ ԴՈՒՓԻՆ ՈՐԴՈՅՆ, ՈՀԱՆ ԵՐԷՑ ՈՒ ՈՀԱՆԷՍ ՇԻՆԵՑԱՔ ՁՍՈՒՐԲ. ՍԱՐԳԻՍՍ...»[452]: Իսկ Սոդքում պահպանված վիմագիր արձանագրություններից մեկում հիշատակված է Ստեփանոս կաթողիկոսը. «ՉԻԵ (1276) Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՊԱՂԻՆ, ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՏՐ. ՍՏԵՓԱՆՈՍԻ, ՊԱՐՈՆՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՆԱ...»[453]:

Սակայն նույն ժամանակաշրջանին պատկանող և ցայսօր պահպանվող այլ արձանագրություններ հիմնականում որպես Հայ Աղվանից կաթողիկոս հիշատակում են Ստեփանոսին[454]:

Այսպիսով, պահպանված արձանագրություններում, ինչպես նաև առ այսօր կատարված պատմագիտական ուսումնասիրություններում քննարկվող ժամանակահատվածում Հայոց Արևելից կողմերի կաթողիկոս մշտապես հիշատակված է Ստեփանոս Դ-ն: Իսկ ինչ վերաբերում է Տեր Աթանասի «հայրապետությունը» հիշատակող արձանագրությանը, ապա «Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻ ՏՐ ԱԹԱՆԱՍԻ» Մ.Օրմանյանի բնորոշմամբ հետևյալն է նշանակում. «Հայրապետ եւ հայրապետութիւն կոչուածը հիներուն սովորութեամբ միայն կաթողիկոս եւ կաթողիկոսութիւն իմաստով գործածուած չէ, այլ վանքերու մէջ, ինչպես վանական վարդապետները Հայր կը կոչուին, վանահայրն ալ Հայրապետ կը կոչուէր»[455]:

Ստ. Օրբելյանը, նկարագրելով երկրում ստեղծված քաղաքական կացությունը նշել է. «Յայսմ ժամանակի երկպառակեցան զօրքն դան Արղունի. և անկաւ շփոթումն մեծ ի մէջ մեծամեծացն գլխաւորաց, և հանին բազում արեան ճապաղիս»[456]: Հավանաբար քաղաքական իրավիճակից դրդված Հայ Աղվանից Ստեփանոս Դ կաթողիկոսը ստիպված էր անցնել Սյունիք, որտեղ, Սյունյաց պատմիչի վկայությամբ, իշխանությունը ստանձնած Ելիկում իշխանը նահանգը կառավարում էր շքեղաշուք արժանապատվությամբ՝ աշխարհակալների և

452. Նույն տեղում, էջ 218:
453. Նույն տեղում, էջ 102:
454. Դիվան Հայ վիմագրության, պրակ V, էջ 99(315), էջ 100(316), էջ 102(322, 323), էջ 155(529), էջ 156(534):
455. Մ.Օրմանյան, Ազգապատում, հ.Բ, մաս Ա, էջ 1971:
456. Ստ.Օրբելյան, էջ 430:

մեծամեծերի կողմից պատվի ու փառքի արժանանալով, և դա այն ժամանակներում էր, երբ աշխարհն ավերված ու ապականված էր, վանքերը՝ խափանված պաշտամունքային արարողություններից. «և ամենեքեան առ հասարակ դիմեալ ի տերութիւն սորա, աստ զհանգիստ առեալ զետեղէին, որպէս և եկն կաթողիկոսն Աղվանից Տէր Ստեփաննոս, և բնակէր առ Տեառն Ստեփաննոսի՝ եղբօր սորա»[457]:

Տալով երկրում տիրող իրավիճակի նկարագրությունը, իրավիճակ, որից դրդված Հայ Աղվանից կաթողիկոսը հարկադրված անցնում է Սյունիք, Ստ.Օրբելյանը նրա այնտեղ գտնվելու ժամանակահատվածի վերաբերյալ կոնկրետ տվյալ չի հաղորդում: Միայն վերջաբանում, նկարագրելով աշխատության շարադրման ժամանակահատվածը, հետևյալն է գրել. «Արդ, յարմարեալ այս հանդէսք բանի շարագրեցաւ մեծի և ինքնակալ արքայի դան Ղազանին, որդոյ Արղունին... յամս աստուածապատիւ և հոգևոր տեառն Գրիգորի՝ ինքնագլուխ պատրիարգի, և տեառն Ստեփաննոսի՝ Աղուանից կաթողիկոսի, ի թվաբերութեան ժամանակ բանին ՌՄՂԹ (1299), և ըստ Հայումս ի ԺԴ յոբելինին և ԽՋ (1297) համարին»[458]:

Պատմական սկզբնաղբյուրների հաղորդման համաձայն Աթանասը եղել է Հասան Բ-ի որդին, Դադի վանքի առաջնորդը 1260-80-ական թվականներին: Սույնը վկայող արձանագրություններ են պահպանվել Դադի վանքում: Վանական համալիրի կենտրոնում բարձրացած զանգակատան արևմտյան որմնախորշին գրված է. «ՋՏ(Է)Ր. ԱԹԱՆԱՍ ՅԻՇԵՍՋԻՔ Ի Ք(ՐԻՍՏՈ)Ս: ԷԻՆ Ա(ՍՏՈՒՇՈ)Յ ՋԱՒՐՈՒԹ(ԵԱՄ)ԲՆ ԵՍ Տ(Է)Ր ԱԹԱՆԱՍ, ՈՐԴԻ՝ ՀԱՍԱՆԱ, ԱՌԱՋՆՈՐԴ Ս(ՈՒՐ)Բ ՈՒԽՏԻՍ ԿԱՆԳՆԵՑԻ ՋՍ(ՈՒՐ)Բ ՆՇԱՆՍ ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳՈՒՄ, ԹԻՎՆ ՀԱ(Յ)ՈՑ: ՉԼԲ: (1283)»[459]: Արժանահիշատակ հոգևոր առաջնորդի անվան հետ են կապվում նաև Դադի վանքի երկու զարմանահրաշ գեղաքանդակ խաչքարերը:

Արձանագրությունների ու պատմիչների հիշատակած թեկուզ և կցկտուր տեղեկություններից կարելի է նկատել, որ Ստեփանոս Դ կաթողիկոսը հավանաբար այլևս չի վերադարձել իր աթոռը: Այդ մասին, ինչպես նշվել է, վկայություն կա Ստ. Օրբելյանի մոտ. «եկն կաթողիկոսն Աղվանից Տէր Ստեփաննոս, և բնակէր»[460]: Ուրեմն եկավ և բնակվեց Սյունիքում: Հավանաբար հենց այստեղ էլ Հայ Աղվանից կաթողիկոսը 1323 թվականին կնքել է իր մահկանացուն:

1323 թվականից մինչև 1402 թվականը ժամանակահատվածում Հայ Աղվանից կաթողիկոսներին հիշատակող ձեռագրական ու վիմագրական ստույգ տեղեկությունների բացակայության պատճառով, հավանաբար, հետազոտողները պարզապես հիշատակել են երկու կաթողիկոսների անունները՝ Տեր Սուքիաս ու Տեր Պետրոս Բ. «Այս միջոցս երկու կաթողիկոսք եղեալ. անուանքն Սուքիաս և Պետրոս, չկարացաք զկարգն իմանալ, զկնի միմիանց»[461]: Նույն տեսակետն է հայտնել նաև Հովհաննես Շահխաթունյանցը. «ի չիբ, թուականէն հայոց մինչև ցայժե, թիւն երկու կաթուղիկոսունք յիշատակին նստեալ յաթոռ՝ որոց անուանք Սուքիաս և Պետրոս»[462]:

Ուսումնասիրողները փաստորեն միայն հիշատակում են կաթողիկոսների անունները, քանի որ անհայտ է նրանց գործունեությունն ու կաթողիկոսության կոնկրետ ժամանակահատվածը. «ամք որոշ տեղեկութեամբ իշխանութեան նոցին անյայտ»[463]: Եվ, հավանաբար, պատճառը կրկին քաղաքական իրավիճակի բարդացումն էր:

XIV դարի առաջին կեսին մոնղոլական իլխանության ներսում առավել վտանգավոր բնույթ էին ընդունել գահակալական կռիվները, որոնք, բնականաբար, աղետաբեր էին նաև հայ ժողովրդի համար: Մոնղոլ ցեղապետերն ու կուսակալները դարձել էին անկախ ու միահեծան տեր՝ և իրենց ռազմաքաղաքական նպատակներին հասնելու համար հաճախակի էին ծառանում կենտրոնական իշխանության դեմ: Վիճակն առավել անտանելի դարձավ նրանց կողմից մահմեդականու-

457. Նույն տեղում, էջ 431:
458. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դարի, էջ 793:
459.Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 213: Տես նաև՝ Ս.Կարապետյան. Նշվ.աշխ., էջ 120:

460. Ստ. Օրբելյան, էջ 316:
461. Յակոբ Յ.Թոփճյան, Ցուցակ ժողովածուաց Դաղեան վարդապետի, մասն Ա, Վաղարշապատ, 1900, էջ 89 բ:
462. Հովհ.Շահխաթունյանց, էջ 342-343:
463. Նույն տեղում, էջ 343:

թյունը ընդունելուց հետո: Ղազան խանը, իլխանական իշխանությունը պահպանելու ու ամրապնդելու նպատակով մերձեցավ տեղական (պարսկական) ավատական վերնախավին և ընդունեց մահմեդականություն[464]:

Քրիստոնյա ժողովուրդների հանդեպ կրոնական հալածանքները ավելի սաստկացան նրա հաջորդ՝ Ուլջեյթու (1204-1316թթ.) խանի օրոք, որը հայտնի էր Մուհամմեդ Խուդաբանդա մահմեդական անունով[465]:

Ինչպես պարզորոշ մատնանշում են մատենագրական նյութերն ու վիմագիր արձանագրությունները, կողոպտվում ու կործանվում էին եկեղեցիներն ու վանքերը, իսկ հոգևոր գործիչներն ու հպատակ քրիստոնյա ժողովուրդը ենթարկվում էր կրոնական դաժան հալածանքների[466]:

Հայոց արևելից կողմերի իշխանությունները XIII դարի վերջերին ու XIV դարի սկզբներին կորցրել էին իրենց վաղեմի զորությունն ու անկարող էին այլևս դիմակայելու թաթարմոնղոլական նորահավատ մահմեդական բռնագրավիչների կամայականություններին: Կիսաավեր վիճակում էին հայտնվել երկրամասի երբեմնի բարեշեն բնակավայրերն ու բերդերը, եկեղեցիներն ու վանքերը: Նման ողբերգական իրավիճակում հայտնված երկրամասում, բնականաբար, դժվար է սպասել կամ փնտրել վիմագրական հարուստ նյութ, քանի որ այն սովորաբար արվում էր շինարարական նոր կառույցների և կամ հիշարժան իրադարձությունների կապակցությամբ:

Խաթարված էր Հայոց արևելից կողմերի հոգևոր կենտրոնների բնականոն գործունեության ընթացքը, որի արդյունքում՝ բացակայում են երկրամասի քաղաքական, տնտեսական ու հոգևոր կյանքի մասին արժանահավատ տեղեկություններ պարունակող ձեռագիր մատյանները:

Այսպիսով, արժանահավատ ու ստույգ տեղեկությունների բացակայության պատճառով դժվար է ճշգրտել Հայոց արևելից միաժամանակ հիշատակված երկու կարևոր առաջնորդների՝ Սուքիասի և Պետրոս Բ-ի կաթողիկոսության ճշգրիտ ժամանակն ու նրանց հոգևոր գործունեությունը: Նշենք, որ հիշյալ շրջանի առանձին վանքերի ու եկեղեցիների, նրանց առաջնորդների, վարդապետների գործունեության մասին պահպանվել են բավարար թվով տեղեկություններ վիմագիր արձանագրություններում ու ձեռագիր հիշատակարաններում, իսկ ինչ վերաբերում է կաթողիկոսությանն ու հատկապես առանձին կաթողիկոսների հոգևոր գործունեությանը, ապա այդ մասին տեղեկությունները կամ բացակայում են, կամ էլ շատ սուղ են:

464. Հ.Ստեփանյան, Հայ ժողովրդի պայքարը թաթարմոնղոլական լծի դեմ, Եր., 1990թ., էջ 117:
465. Նույն տեղում, էջ 117-118:
466. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԴ դարի, կազմեց Լ.Խաչիկյանը, Եր., 1950, էջ 46:

ՀԱՅ ԱՂՎԱՆԻՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՆՁԱՍԱՐՅԱՆ ՇՐՋԱՆԸ (XV-XIX դարեր)

Հայ Աղվանից կաթողիկոսությունը XV դարում

XIV դարը ընդհանուր առմամբ աղետաբեր եղավ հայ ժողովրդի համար: Դարասկզբից սկսված կրոնական հալածանքներին հաջորդեցին մահմեդական նոր բռնակալների ասպատակությունները: XIV դարի 80-ական թվականներին Թոխթամիշ խանի, իսկ այնուհետև Լենկ-Թեմուրի զարհուրելի կոտորածներին ու ավերածություններին ենթարկվեցին նաև Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանները: «Լէնկ Թիմուրի արշաւանքները ոչ միայն աւերած եւ կոտորած կը սփռէին, այլ հաւատուրացութիւնը իբր ազատութեան պայման առաջարկելով, պատճառ կ'ըլլային, որ բազումք նահատակութեան հասին եւ պսակաց արժանացան»[467]:

Վանի Հայկավանք եկեղեցու ճաշոցի հիշատակարանի վկայությամբ Լենկ-Թեմուրի հրոսակները գրավել էին նաև Փոքր Սյունիքը, այդ թվում նաև Ծարը, ուր «սրախողող կոտորվել ու արյունաներկ դիաթավալ նահատակներ էին» Դոփյան իշխան Հասանը, նրա կինն ու որդիները[468]:

Բանակելով Արցախյան (Մուղանի) դաշտում, Լենկ-Թեմուրի հրոսակները իրենց բնորոշ կնիքը թողեցին նաև Հայոց արևելից մյուս բնակավայրերում՝ հիմնահատակ ավերելով եկեղեցիների ու վանքերի մի զգալի մասը և որոնց թվում էր նաև Հայոց արևելից հոգևոր առաջին կենտրոններից մեկը՝ Ամարասը. «1387 թուին Ամարասն էլ, Արցախի և ուրիշ նահանգների հետ ենթարկուել է Լանգ-Թամուրի աւերումներին: Ժողովուրդը այժմս էլ պատմում է, թե Լանկ Թամուրը իւր զօրքերը շարել է Ամարասից մինչև Արաքսը և հրամայել Ամարասի վանքի քարերը միմեանց տալով թափել Արաքսը»[469]:

467. Մ.Օրմանյան, Ազգապատում, հ.Բ, մաս Ա, էջ 1971:
468. Հ.Մանանդյան, հ., Եր., 1977, էջ 361-362:
469. Ազգագրական հանդէս, Բ գիրք, Թիֆլիս, 1897, էջ 7:

Լենկ Թեմուրի մահից հետո շարունակվում են արյունահեղ կռիվները Թեմուրյանների միջև: 1437 թվականին կարակոյունլուներին հաջողվեց իրենց տիրապետությունը հաստատել Հայաստանում, Վրաստանում, Աղվանքում և Ատրպատականում:

Այսպիսով, իրար հաջորդած միջինասիական հրոսակների արշավանքները զարհուրելի կոտորածների և ավերածությունների ենթարկեցին նաև Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանները և որոնց հետևանքով վերստին խաթարվեց Հայոց արևելից կողմերի հոգևոր առաջնորդության բնականոն գործունեությունը: Հայ Աղվանից հոգևոր առաջնորդները ստիպված էին կաթողիկոսական աթոռը տեղից տեղ տեղափոխել:

1402 թվականից, ըստ Ծար գավառի Քարվաճառ գյուղում ստեղծված ձեռագիր հիշատակարանի, Հայ Աղվանից հայրապետական աթոռը առաջնորդում էր տեր Կարապետը. «Եւ կատարեցաւ սայ ի թուականութեանս հայկազեան տաւմարի՝ ութհարիւրերորդի յիսներորդի առաջներորդի ամի (1402), ի հայրապետութեանն Հայոց և Աղուանից երկուցունց տէրանց Կարապետք կոչեցելոց, զոր այսպէս պատահեցան ի մերումս ժամանակի՝ անուանակիցք գոլ միմիանց...»[470], որը հավանաբար, ստեղծված քաղաքական դժվարին կացության պատճառով Հայ Աղվանից կաթողիկոսական աթոռը փոխադրում է ճալեթ գյուղը և այնտեղ կառուցում ս.Աստվածածին վանքը: Այդ մասին վկայված է եկեղեցու ավագ խորանից դեպի արևելք բացվող լուսամուտի ստորին մասում ագուցված քարին վեց տողով փորագրված արձանագրության մեջ. «ՅԱՆՈՒՆ Ա(ՍՏՈՒ ԾՈ) 3 ԵՍ Տ(ԷԼ)Ր ԿԱՐԱՊԵՏ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ՇԻՆԵՑ[Ի] ՁԵԿԵՂԵՑԻՍ Ի ԹՎ (Ի)Ս ՊԿ(1411), ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳՈ ԻՄՈ, ՈՐՔ ԿԱՐԴԱՅՔ ՅԱՂԱՎԹՍ ՅԻՇԵՑԵՔ»[471]:

Ճալեթում Հայ Աղվանից աթոռի հիմնավորմանը պատմագիտության

470 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԵ դարի, մաս Ա (1401-1450թթ.), Երևան, 1955, էջ 24:
471. Հովհ.Շահխաթունյանց, Ստորագրութիւն Կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Վաղարշապատ, 1842, էջ 379: Մ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 249: Ս.Կարապետյան, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, Երևան, 1997, էջ 89:

մեջ տրվել է տարբեր որակումներ: Մասնավորապես, ուսումնասիրողներից Բ.Ուլուբաբյանը չի արդարացնում քննարկվող ժամանակահատվածում Հայ Աղվանից հոգևոր առաջնորդների Ճալեթում հաստատվելու հանգամանքը. «...հայրենի հողը, թողել, փախել են Կովկասյան լեռնաշղթայի ծերպերը...», իսկ հետո էլ ավելացրել, թե «այս ավելի քան մեկ դարը բուն երկրում եկեղեցին ապրում էր այնպես, իբր ոչ մի կաթողիկոսություն ու կաթողիկոս էլ գոյություն չունի»[472]: Սույն տեսակետը, սակայն, հերքվում է պատմական համապատասխան վավերագիր փաստերի համադրությամբ:

Մ.Բարխուտարյանցը Ճալեթում հաստատված կաթողիկոսների հոգևոր գործունեության մասին ընդհանրապես տեղեկություն չի հաղորդում, բացառությամբ նրանց տապանագրերի արձանագրությունների և ս.Աստվածածին եկեղեցու կառուցման մասին պահպանված արձանագրության մեջբերման: Հոգևորական պատմիչը հավանաբար ևս բացասական դիրքորոշում ուներ կաթողիկոսական աթոռի վերոհիշյալ տեղափոխության առնչությամբ. «չգիտենք թէ սա ինչ դիպուածով հայրապետական աթոռը Գանձասարից փոխադրում է Ճալէթ գիւղի կողմն...»[473]: Իսկ այնուհետև ուղղակիորեն թվարկում է 1406-1442թթ. գահակալած Հայ Աղվանից կաթողիկոսների անունները հաջորդաբար[474]:

Մ.Բարխուտարյանցի կարծիքով Ճալեթի վանքը իր գոյության սկզբից, այսինքն տեր Կարապետի այստեղ հաստատվելուց սկսած մինչև 1510 թվականը եղել է Հայ Աղվանից կաթողիկոսների նստավայրը: Հիշյալ տեսակետը հաստատում է նաև Հ. Կարապետյանը[475], որպես ապացույց նշելով Եղունդի գյուղում ընդօրինակված մի ավետարանում տեղ գտած հետևյալ արտահայտությունը. «յառաջնորդութեան տեառն Մատթէոսի Աղուանից կաթողիկոսի... ի մենաստանիս Ճալէթոյ»[476]: Սույն տեսակետի հիմնավորման հաջորդ ապացույցը հեղինակը համարում է Ճալեթի ս.Աստվածածին եկեղեցու բակում թաղված երեք կաթողիկոսների (Կարապետի, Թովմայի, Առաքելի) տապանաքարերը: Ավելացնենք նաև, որ Ս.Կարապետյանի ուսումնասիրություններում այս երեքի հետ միասին նշված է նաև Հայ Աղվանից Արիստակես կաթողիկոսի (հշվ. 1511-1516թթ.) խաչաքանդակներով տապանաքարը, որը գտնվում է Ճալեթի գյուղամիջի գերեզմանոցում. «ԹՎ...-ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ Է ԸՐՍՏԱԿԷՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՆ Է»[477]:

Մեր կարծիքով, այնուամենայնիվ, այստեղ որոշակի թյուրիմացություն կա այն իմաստով, որ քննարկվող ժամանակաշրջանին վերաբերող պատմական աղբյուրները միաժամանակ մատնանշում են երկու հայրապետական աթոռների առկայություն, ընդ որում, երկուսն էլ «Աղվանից կաթողիկոսություն» անվան տակ:

Հիշյալ տեսակետի հիմնավորման տեսանկյունից կարևոր է ստույգ փաստերի հիման վրա ներկայացնել մասնավորապես 15-րդ դարում Հայ Աղվանից կաթողիկոսների աթոռակալության ժամանակահատվածներն ու նրանց հոգևոր գործունեության վայրը:

Ինչպես նշվել է, ուսումնասիրողներից Մ.Բարխուտարյանցը պարզապես հիշատակել է տեր Կարապետին հաջորդած կաթողիկոսների անունները[478]: Նույն կերպ է վարվել նաև Հովհ. Շահխաթունյանցը[479]: Երկու հեղինակներն էլ տեր Կարապետից հետո հիշատակել են Դավիթ անունով կաթողիկոսին, որպես փաստ ընդունելով նրա տապանագիրը, սակայն առանց ուշադրություն դարձնելու նրա աթոռակալության ժամանակին ու վայրին: Մեր կարծիքով սա որպես թյուրիմացություն պետք է ընդունել, քանի որ պահպանված ձեռագրերը մատնանշում են, որ 1402-1423թթ. Հայ Աղվանից կաթողիկոսական աթոռը առաջնորդել է տեր Կարապետը[480], որին էլ հաջորդել է տեր Մատթեոսը, որի մասին պահպանված ձեռագիր հիշատակությունները թվագրված են 1423,

472. Նույն տեղում, էջ 203:
473. Մակ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, էջ 210:
474. Նույն տեղում, էջ 212:
475. Հ.Վ.Կարապետյան, Պատմա-բանասիրական հանդես, Եր., 1982, հ.2, էջ 158:
476. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա., էջ 241:

477. Ս.Կարապետյան, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 93:
478. Մակ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ.Ա, էջ 212:
479. Հովհ.Շահխաթունյանց, էջ 343:
480. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Գ, էջ 24, 122, 194, 240, 307:

1432, 1434, 1436[481]: Մասնավորապես, այս մասին պարզորոշ հիշատակված է 1423 թվագրությամբ ձեռագիր-ավետարանում «...Եւ ի հայրապետութեան տեառն Կարապետի և յաջորդի նորին տեառն Մատթեոսի... Եւ ես հողոյ հաւասար Մովսէս եպիսկոպոս, որ զգիրս գրեցի առաջի տեառն Մաթէոսի կաթողիկոսի Հայոց և Աղաւնից, վկա եմ այս բանիս. ի թվաբերութեանս Հայոց ՊՀԲ.(1423), ի փառս աստուծոյ, ամէն»[482]: Տեր Մատթեոսի անվան հիշատակությամբ հաջորդ ձեռագիրը՝ թվագրված 1432, կրկին մատնանշում է նրա աթոռակալությունը Ճալեթում. «յառաջնորդութեան տեառն Մատթէոսի Աղուանից կաթողիկոսի ... ի մենաստանիս Ճալեթոյ, ընդ հովանեաւ սուրբ Աստվածածնի և սուրբ աջերուն Գրիգորի և Աթանագինի, և նոցին սպասաւորի տէր Կարապետի փակակալի, որ զաւրինակն շնորհեաց...»[483]: Ինչ վերաբերում է կաթողիկոսաշարքում հիշատակված Տեր Դավիթին, ապա նույն ժամանակահատվածում նա աթոռակալել է Գանձասարում:

Այսպիսով, Տեր Մատթեոսի աթոռակալության սկիզբը պետք է ընդունել 1423 թվականը և, հավանաբար, ավարտն էլ 1436 թվականը, քանի որ հիշյալ թվականից հետո նրա մասին ձեռագրերում այլևս հիշատակություն չկա: Զուգահեռաբար Գանձասարում Հովհաննես կաթողիկոսի առաջնորդությունը փաստող առաջին վկայությունը թվագրված է 1428՝ «Արդ, գրեցավ աստուածագիծ սուրբ ավետարանս ... ի թուականութեանս Հայոց ՊՀէ. (1428), ի յաշխարհիս Աղուանից, ի վիճակս Ամարասայ, ի գեղս Շուշու կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, ի կաթողիկոսութեան տէր Յոհանիսի...»[484]:

Տարակարծությունները դրանով սակայն չեն ավարտված. Մ. Բարխուտարյանցը և Հովհ. Շահխաթունյանցը Մատթեոսից հետո հիշատակում են ևս երկու կաթողիկոսների՝ Աթանաս Գ և Գրիգոր Ա[485]:

Այսպիսով, Աղվանից Կարապետ կաթողիկոսի անվան հիշատակությամբ պահպանված աղբյուրները թույլ են տալիս եզրակացնելու, որ

481. Նույն տեղում, էջ 732:
482. Նույն տեղում, էջ 307:
483. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Գ, էջ 425:
484. Նույն տեղում, մաս Ա, էջ 384:
485. Մակ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, մաս Ա, էջ 213:

նա աթոռակալել է մինչև 1423 թվականը: Բայց և նույն ժամանակաշրջանի այլ վավերագրեր փաստում են Գանձասարում Աղվանից Դավիթ կաթողիկոսի աթոռակալության մասին: Գանձասարի ս.Հովհաննես եկեղեցու մուտքի առջև, գավթի ներսում պահպանվել է տապանաքար հետևյալ արձանագրությամբ. «Այս է հա/ ն/ գ/ ի/ ստ Դա/ ւի/ թ կ/ ա/ թ/ ո/ ղ/ իկո/ սին, որդի՝ Բաղտա/ սա/ ր/ ի/, ՊԿէ /1418/»: Տարաբախտաբար Դավիթ կաթողիկոսի հիշատակությամբ այլ փաստեր տակավին չեն հանդիպել և նշյալ արձանագրությունն էլ վկայում է, որ աթոռակալել է մինչև 1418թ.: Նկատենք, քանի որ տեր Կարապետը աթոռակալել է 1402-1423թթ., ուրեմն Ճալեթում հաստատված կաթողիկոսին զուգահեռաբար բուն Արցախում, որպես Աղվանից կաթողիկոս, հիշատակված է Տեր Դավիթը: Նրանից հետո հաջորդ հիշատակությունը վերաբերում է նույնպես Գանձասարում աթոռակալած Հովհաննես Աղվանից կաթողիկոսին, որն էլ հիմք է տալիս եզրակացնելու, որ Տեր Դավթին հաջորդել է տեր Հովհաննեսը:

Համաձայն Մ.Բարխուտարյանցի մի ձեռագրի, որ հրապարակել է Հայկունին, 1441-1470թթ., Հայ Աղվանից կաթողիկոս է հիշատակված նույնպես Հովհաննես անունով հոգևոր գործիչը, որը շարունակաբար աթոռակալել է Գանձասարում. «Յովհաննէս՝ որդի Զալալի. ՊՂ /1441/»[486]: Այստեղ հատկանշական է այն հանգամանքը, որ հատկապես հիշյալ Տեր Հովհաննեսի Աղվանից կաթողիկոս լինելու փաստի մասին վկայությունները բազմաթիվ են, վերաբերում են բուն Արցախին և թվագրված են 1456, 1462, 1464, 1466, 1468, 1470 թվականներով: Անդրադառնանք միայն ամենակարևորներին. 1456 թվականին վերագրվող Ծարի Գետամիջո վանքում կատարված ձեռագրում մասնավորապես նշված է. «...ի հայրապետութեան Աղուանից նահանգի տեառն Յոհանիսի որդոյ մեծի իշխանին Հայոց պարոն Զալալին»[487]:

Մատենադարանի պարսկերեն հրովարտակների շարքում պահպանվել է կարա-կոյունլու Սուլթան Ջահանշահի կնոջ՝ Բեգում Խաթունի 1462

486. Հայկունի, Ուղեգնացական ակնարկներ, «Մեղու Հայաստանի», 1885, հմ. 80, էջ 3:
487. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դար, մաս Բ, էջ 66:

թվականի հրովարտակը, տրված Գանձասարի Հովհաննես է կաթողիկոսին, որով հաստատում է նրա կաթողիկոսական իրավունքները[488]:

Մեծիրանից Ս.Հակոբա վանքի պատին գրված է. «Կամաւն Աստուծոյ ես տէր Յոհանէս կաթողիկոս, որդի Ջալալին մեծ իշխանի, կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգոյ իմոյ, որք երկրպագեք աղաւթս յիշեցեք»[489]: Նույն վանքի հարավային պատի տակ գտնվող տապանաքարի վրա արձանագրված է. «ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՏՐ ՈՎՀԱՆԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՂՎԱՆԻՑ. ԹՎ: Ջ ԺԹ: (1470)[490], ինչն էլ բնականաբար վկայում է բուն Արցախում նրա աթոռակալության և հուղարկավորման մասին:

Ս.Հակոբա վանքի հիշյալ երկու վիմագրերը, մեր կարծիքով, առաջադրված տեսակետը հիմնավորող լուրջ փաստեր են և պետք է հաշվի առնվի այն հանգամանքը, որ վանքը գտնվում է Գանձասարի հարևանությամբ, ճալեթը՝ համեմատաբար ավելի հեռու, իսկ Հովհաննես կաթողիկոսին շնորհված հրովարտակը լուրջ վկայություն պետք է ընդունել այն իրողության, որ իշխողների կողմից որպես Աղվանից եկեղեցու առաջնորդ արդեն ընդունվում ու ճանաչվում էր Գանձասարում նստող կաթողիկոսը:

Հայտնի է, որ 1441 թվականին Հայոց կաթողիկոսական աթոռը, դարավոր դեգերումներից հետո, վերահաստատվեց Հայաստանի կենտրոնում՝ Վաղարշապատ (Էջմիածին) քաղաքում: Հայրապետական աթոռը Հռոմկլայից Հայաստան տեղափոխելու նպատակով որոշակի քայլեր են կատարվում դեռևս Հովհան Որոտնեցու կողմից, որը «Գրիգոր Տաթեվացու հաղորդմամբ, ծրագրել էր Գանձասարը դարձնել հայոց կաթողիկոսության կենտրոն, հաշվի առնելով, անշուշտ, այն հանգամանքը, որ վանքը հնավանդ կաթողիկոսական իր աթոռով, համեմատաբար ապահով պայմանների մեջ էր Հասան-Ջալալյան գերդաստանի իշխանության ներքո»[491]: Բնականաբար եթե ընդունելու լինենք

488. Նույն տեղում, էջ 473:
489. Դիվան հայ վիմագրության, Պրակ V, կազմեց Ս.Բարխուդարյան, եր., 1982, էջ 18: Տես նաև՝ «Բանասէր», 1901, հ.3, պրակ Բ և Գ, էջ 138:
490. Դիվան հայ վիմագրության, Պրակ V, էջ 17:
491. Տես՝ ՀԺՊ, հ. IV, Եր., 1972, էջ 39: Տես նաև՝ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Ա, էջ XXXIV:

Բ.Ուլուբաբյանի և մյուսների տեսակետը Աղվանից կաթողիկոսական աթոռը տվյալ ժամանակաշրջանում ճալեթում գտնվելու մասին և բուն Արցախում, ինչպես Բ.Ուլուբաբյանն է նշել. «այս ավելի քան մեկ դարը բուն երկրում եկեղեցին ապրում էր այնպես, իբր ոչ մի կաթողիկոսություն ու կաթողիկոս էլ գոյություն չունի», ապա թեկուզ և միայն վերոնշյալ առաջարկությունը, կապված Հայոց մայր աթոռը Գանձասարում հաստատելուն հետ, կդառնա անհիմն ու անտրամաբանական:

Ուրեմն մինչև 1440-ական թվականները Գանձասարը հիշատակված է որպես «հնավանդ կաթողիկոսական կենտրոն»[492] և 1440-ականներից հետո էլ շարունակում էր մնալ այդպիսին: Հիշյալ տեսակետը հիմնավորող փաստարկներից պետք է ընդունել նաև աղ-կոյունլու Յաղուբ Փաղիշահի 1487թ. հրովարտակը՝ տրված Գանձասարի Շմավոն կաթողիկոսին, որով հաստատում է վերջինիս կաթողիկոսական իրավունքները և նրան ենթակա հայ հոգևորականությանը ազատում զանազան հարկերից[493]:

Մ.Բարխուտարյանցը մի ավետարանից հետևյալ մեջբերումն է գրառել. «Ի թուականութեան Հայոց ՋՂ=1455 ի կաթողիկոսութեան տեառն Գրիգորի (Աղուանից) ի ղանութեան Տաճկաց (Պարսից) Ջիհան Շահի...»[494]: Ըստ Մ.Բարխուտարյանցի, նրան էլ հաջորդել և 1481-1482թթ. աթոռակալել է Շմավոն Ա Գանձասարի առաջնորդը[495]: Սակայն պահպանված Յաղուբ Փաղիշահի հրովարտակը, որի մասին նշվել է, և որով հաստատվում է Շմավոն Ա-ի կաթողիկոսական իրավունքները, ինչպես նաև ձեռագիր ավետարանները, ինքնստինքյան, վերոհիշյալ տեսակետը հերքող փաստարկներ են հանդիսանում: Այսպես, ըստ Ա.Հախումյանի, Տեր Շմավոնի կաթողիկոսական իրավունքների ընդունումը և հաստատումը պարսկական արքունիքի կողմից տեղի է ունեցել 1476թ.[496] և նա էլ հաջորդն է եղել իր հորեղբայր Տեր Մատթե-

492. Տես՝ Գր.Տաթևացի, Բանք գեղեցիկ և յոյժ պիտանի աթոռոյն Աղթամարայ, Մատենադարան, ձեռագիր N 4669, էջ 199բ-200բ:
493. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Գ,Եր.,1967,էջ 236-237:
494. Մակ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, մաս Ա, էջ 214:
495. Մակ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, մաս Բ, էջ 18:
496.Հախումեան Աշոտ,Ուրվագծեր Ղարաբաղի անցեալից.«Արարատ»,1915,էջ 642:

ոսի /1470-1476թթ./[497]:

Շմավոն Ա-ի աթոռակալությունը փաստող առաջին ձեռագիրը թվագրված է 1486՝ «... ի թագաւորութեանս Եաղուբ պեկին, ի կաթողիկոսութիւնն տէր Շմաւոնին, ի թվականիս Հայոց ՉԼԵ»(1486)[498]: Ձեռագրից դժվար չէ նկատել, որ Հայ Աղվանից կաթողիկոսի հաստատման հրովարտակը նրան աթոռակալության սկզբում չի շնորհվել: Շմավոն Ա կաթողիկոսի անվան հիշատակությամբ հաջորդ ձեռագիրը թվագրված է 1498 թվականով[499]:

Քննարկվող ժամանակահատվածին վերագրվող վիմագիր ու ձեռագիր աղբյուրներում զետեղված տեղեկությունները տարակարծիքների տեղիք են տվել. Ճալեթում մինչև վերջին ժամանակներս պահպանված տապանաքարերից մեկը ունի հետևյալ արձանագրությունը. «Ի թվ ՉԻԴ (1475) հանգիստ Թովմայ կաթողիկոսին»[500]:

Մակ.Բարխուտարյանցը սույն տապանագիրը ներկայացրել է աղավաղված թվականով՝ ՉԽԴ(1495)[501]: Ուրեմն, 1475թ. Ճալեթում իր մահկանացուն է կնքել Թովմա անունով կաթողիկոսը, որի մասին միակ վկայությունը հիշյալ տապանաքարն է, իսկ նույն ժամանակահատվածում, ինչպես նշվել է, Գանձասարում Հայ Աղվանից կաթողիկոսությունը առաջնորդում էր Տեր Մատթեոսը, 1476 թվականից՝ Շմավոն Ա-ն: Վերջինիս մահվան ժամանակի վերաբերյալ առայսօր ստույգ տեղեկություն չի հայտնաբերված, սակայն նրա անվան հիշատակությամբ 1498 թվագրությամբ ձեռագիրը փաստում է թեկուզ և մինչև հիշյալ թվականը տակավին նրա աթոռակալության մասին, իսկ Ճալեթում պահպանված համաժամանակյա աղբյուրները վկայակոչում են Առաքել կաթողիկոսին՝ «տէր Առաքեալ՝ ևս սօկութլուեցի. յիշատակի սա ի յիշատակարանի աւետարանի միոյ եղելոյ ի թուին ԻՉՈ/1479թ./, ՉՕ /1504թ./. իսկ արձանագրութիւն տապանին՝ որ ի վանս Ճալեթու, հասուցանէ ցՉԿ /1511թ./[502]:

Այսպիսով, ևս անառարկելի փաստ առ այն, որ նույն ժամանակահատվածում Ճալեթում շարունակում էր իր առաքելությունը նաև համանուն կաթողիկոսությունը: Վիմագիր ու ձեռագիր աղբյուրների հաղորդման համաձայն 1497-1511թթ. այստեղ աթոռակալել է Առաքել կաթողիկոսը[503]: Ճալեթում. «Տէր Առաքել կաթուղիկոս Աղուանից... ետ գրել զԱւետարանս ի հալալ ընչից իւրոց, յիշատակ հոգւոյ իւր և ծնողաց իւր... ի յաթոռն Ճալէթոյ, ի յաշխարհն Աղուանից, ... ի թվականիս Հայոց ՉԽԸ(1499)»[504]: Մինչև 1980-ական թվականները Ճալեթում պահպանվում էին Առաքել կաթողիկոսի գործունեության մասին վկայող նաև վիմագիր արձանագրությունները, որոնք արձանագրվել ու նկարահանվել են Սամվել Կարապետյանի կողմից[505]: Ըստ Հովհ.Շահխաթունյանցի, Ճալեթի Առաքել կաթողիկոսին հաջորդել է Արիստակեսը /1511-1516թթ./[506]: Ի դեպ, հիշյալ Արիստակես կաթողիկոսի անվան շուրջը ևս սխալ տեսակետներ կան, մասնավորապես այն, որ նա կաթողիկոսական աթոռը տեղափոխել և աթոռակալել է Գանձասարում: Սակայն այստեղ նույնպես հարկ է նկատել, որ Մ.Բարխուտարյանցը ժամանակին տեսել և արձանագրել է նրա տապանաքարը, որի համաձայն հուղարկավորված է պատմական Կապաղակ գավառի Յաղուբլու գյուղի գերեզմանոցում[507], այսինքն իր ծննդավայրում: Հավանաբար հենց նրանից հետո էլ Ճալեթի կաթողիկոսությունը դադարեցրել է իր հայրապետական գործունեությունը, վերստին միանալով և ընդունելով Գանձասարի հոգևոր առաջնորդությանը, որը այդ նույն շրջանում առաջնորդում էր Արիստակես անունով կաթողիկոսը՝ «Արիստակէս կաթողիկոսն վախճանեցաւ ի ՉՀԵ թուին Հայոց ի 1521 ամի Տեառն»[508]:

497. Նույն տեղում:
498. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս , էջ 84:
499. Նույն տեղում, էջ 261:
500. Ս.Կարապետյան, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 90:
501. Մակ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, մաս Բ, էջ 18:

502. Հովհ.Շահխաթունյանց, էջ 344:
503. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Գ, էջ 236, 237, 281:
504. Նույն տեղում, էջ 281:
505. Ս.Կարապետյան, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 90:
506. Հովհ.Շահխաթունյանց, էջ 344:
507. Մակ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, մաս Բ, էջ 222-223: Ս.Կարապետյան, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 93:
508. Ռաֆֆի, «Գաղտնիք Ղարաբաղի», «Արձագանք», 1886, հմ. 45, էջ 591:

Ահա այս փաստարկներից կարելի է եզրակացնել, որ 15-րդ դարում, երկրում քաղաքական աննպաստ իրավիճակի պատճառով Աղվանից եկեղեցու ներսում տեղի է ունենում մասնատում, որի արդյունքում Ճալեթում ևս հաստատվում է Աղվանից անվանված կաթողիկոսական աթոռ, որը, սակայն հաստատուն չէր և երկարատև գոյություն ու էական դերակատարություն չկարողացավ ունենալ: Իսկ Գանձասարը, որպես Հայ Աղվանից կաթողիկոսանիստ, սկսել է իր գործունեությունը ոչ թե, ինչպես ընդունված էր մինչև հիմա, 1516 թվականից, այլև XIV դարի վերջերից և XV դարի սկզբներից, ընդ որում ոչ ընդհատումներով, այլ մշտական:

Այսպիսով, պահպանված աղբյուրները միանշանակորեն փաստում են քննարկվող ժամանակաշրջանում միաժամանակ երկու կաթողիկոսությունների գոյության մասին, ընդ որում, Ճալեթի կաթողիկոսների մասին հանդիպող բոլոր հիշատակություններում Աղվանից անվան հետ գործածված է նաև «ի յաթոռն Ճալեթոյ» արտահայտությունը, ինչը հավանաբար կատարված է երկու Աղվանից աթոռները տարբերակելու նպատակով: XIV-XV դարերում բուն Արցախում Հայ Աղվանից կաթողիկոսական գահին տիրանում էին մեծամասամբ Հասան-Ջալալյան իշխանական գերդաստանի ներկայացուցիչները, որոնք էլ հիմնականում գահանիստը տեղափոխել էին Խաչեն և նստում էին՝ սկզբում Ս.Հակոբա վանքում, ապա Գանձասարում:

XV դարի վերջերին և XVI դարի սկզբներին՝ Մերձավոր Արևելքում քաղաքական նոր ուժեր ասպարեզ եկան: Այդ ուժերից մեկը Օսմանյան սուլթանությունն էր, մյուսը Սեֆևյան Պարսկաստանը: Պարսկական արքունիքի հրամանով Հայոց արևելից կողմերում ստեղծվում են մելիքություններ, որոնք պետք է ճանաչեին Պարսկաստանի գերիշխանությունն ու հաստատվեին շահերի կողմից: Նրանց միաժամանակ շնորհվում էին որոշ իրավունքներ, որոնց թվում՝ նաև սեփական զինական ուժ ունենալու[509]: Պարսկական արքունիքի կողմից համեմատաբար ավելի մեղմ ու սիրաշահողական քաղաքականություն տարվում էր Հայոց եկեղեցու նկատմամբ:

Պարսկաստանի գերակայության ներքո Հայոց արևելից հոգևոր առաջնորդությանը վերապահված էին որոշ արտոնություններ, որոնց մասին վկայում են շահերի կողմից Գանձասարի կաթողիկոսներին շնորհված հրովարտակները: Պարսից արքունիքի կողմից նման հարգալից վերաբերմունքը Հայ Աղվանից կաթողիկոսության նկատմամբ, բնականաբար, արվում էր քաղաքական նկատառումներից դրդված: «Ժողովրդին հպատակության մեջ պահելու գործում հայ եկեղեցու կատարած կարևոր դերը քաջ գիտակցում էին նվաճողները և երբեմն նույնիսկ նպաստում էին վանքերի ու եկեղեցիների վերանորոգման ու տնտեսապես ապահովման գործին»[510]: Եվ, չնայած որ «թվացյալ» մեղմ քաղաքականություն էր տարվում նաև աշխարհիկ իշխանությունների նկատմամբ, այնուամենայնիվ, պարզորոշ նկատելի է պարսկական արքունիքի կողմից տարվող քաղաքականության իրական ուղղվածությունը՝ տնտեսապես ու քաղաքականապես հնարավորինս թուլացնել իշխանական տները, որոնց նկատմամբ կիրառվում էին տարատեսակ բռնություններ ու կեղեքումներ՝ ճանաչելով միայն հոգևոր առաջնորդությունը:

Հրովարտակներից մեկում, մատնանշելով Գանձասարի Հայ Աղվանից հոգևոր առաջնորդի իրավունքները նշված է նաև, որ «ոչ մի արարած նրա գործերին չխառնվի ու չմիջամտի, նրան ենթակա հոգևորականների ու մերձավորների նկատմամբ. հանցանք չգործեն, նրանցից ոչինչ չպահանջեն և որևէ ցանկություն ու ակնկալություն չունենան»[511]:

Փաստորեն, պարսկական արքունիքի կողմից Գանձասարի կաթողիկոսությանը շնորհված էր բավական արտոնյալ վիճակ, նրան ենթակա թեմերն ու եկեղեցիները ազատված էին հարկերից, որի պատճառով աշխարհիկ իշխանավորները իրենց տիրույթներում գտնվող վանքերին նվիրատվություններ էին կատարում, դրանով ազատվելով իրենց վրա դրված տարատեսակ հարկերից ու տուրքերից: Հիշյալի

509. Լեո, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգեւոր դպրոցի,Թիֆլիզ, 1914, էջ 54:

510. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Ա, էջ XLIV:
511. ՄՊՎՀ, Ա, էջ 46:

մասին հարուստ տեղեկություններ են արձանագրված ձեռագրերում ու վիմագրերում[512]:

Սակայն Արցախի իշխանական տների մնացորդները, այնուհանդերձ, համեմատաբար կենսունակ գտնվեցին ու պահպանեցին իրենց վարչա-քաղաքական գոյությունը և հետագայում, Գանձասարի հոգևոր առաջնորդության շուրջը միավորվելով, շարունակեցին ազգային-ազատագրական ոգորումները: Իսկ Գանձասարի հոգևոր առաջնորդությունն իր հերթին, օգտվելով կաթողիկոսությանը շնորհված քաղաքական ու տնտեսական հնարավորություններից, իր շուրջը համախմբեց հոգևոր առաջնորդության ենթակայության տակ գտնվող հայերին, և ինչպես Լեոն է իրավացիորեն նշել. «Հասան-Ջալալյան կաթողիկոսները անհամեմատ աւելի լաւ էին գործում, աւելի խոշոր դեր էին կատարում, քան նույն տոհմանունը կրող մելիքները... ահա մի հոգևորականութիւն, որ ծուլուած է իր ժողովրդի հետ, որ տանում է նրան դէպի կռիւ, դէպի տանջանքներ և հերոսութիւններ՝ լեռնային ոգին, լեռնային կեանքի ազատութիւնը սիրելու և պահպանելու համար»[513]:

Եվ այսպես, Գանձասարում վերջնականապես հաստատված Հայոց արևելից կողմանց կամ Հայ Աղվանից հոգևոր առաջնորդության համար սկսվում է մի ուրույն փուլ:

512. Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 13, 21, 24, 28...: Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ, մաս Ա, Բ, Գ:
513. Լեո, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգեւոր դպրոցի, էջ 56:

Հայ Աղվանից եկեղեցու Գանձասարյան շրջանը (XVI-XIX դարեր)

XVI-XVII դարերում Գանձասարում հաստատված Հայ Աղվանից կաթողիկոսությունը հայկական աշխարհիկ իշխանությունների՝ մելիքությունների հովանու ներքո գտնվում էր քաղաքական համեմատաբար ապահով պայմաններում: Հայ Աղվանից կաթողիկոսության ենթակայության տակ շարունակում էին մնալ Ղարաբաղի հինգ մելիքությունների եպիսկոպոսությունները, Գանձակի խանության տարածքում գոյություն ունեցող յոթ եպիսկոպոսական թեմերը՝ Խորանաշատի, Թարգմանչաց, Փառիսոսի, Ամենափրկիչ վանքերի, Գետաշենի, Գետաբակի և Գանձակի, նաև Շիրվանի թեմը, որի կազմում էին Շաքիի, Շամախու, Ղուբայի, Բաքվի և Դերբենդի խանությունների տարածքում գտնվող հոգևոր կենտրոնները[514]:

Պահպանված աղբյուրներում 1546 թվականից Գանձասարի Հայ Աղվանից կաթողիկոս է հիշատակվում Տեր Սարգիսը[515], որին 1555 թվականին հաջորդել է Տեր Գրիգորիսը: Ի դեպ հիշյալ ժամանակաշրջանում Գանձասարի կաթողիկոսների հաջորդականության, աթոռակալության, ինչպես նաև հոգևոր առաջնորդության աշխարհագրական սահմանների մասին կարևոր փաստեր են արձանագրված պարսկական հրովարտակներում: Մասնավորապես 1570թ. պարսից շահ Թահմազ Ա-ի շնորհած հրովարտակը փաստում է, որ «Խաչենի և Բարդայի, Աղվանքի բոլոր մահալների ու վայրերի առաջնորդությունն ու գլխավորությունը հանձնված էր Արիստակես կաթողիկոսին և որովհետև վերջինս վախճանվել էր այդ պաշտոնը մենք հանձնել էինք նրա եղբոր որդուն՝ Սարգսին: Այն բանից հետո, երբ սա ևս վախճանվեց ... 962 թվականի շաաբան ամսին /1555թ. հունիս 21- հուլիս 20/ վերոհիշյալ

514. Լ.Մկրտումյան, Աղվանից /Գանձասարի/ կաթողիկոսությունը 17-19-րդ դարերում, ատենախոս. սեղմագիր, , Եր., 2001, էջ 8:
515. Շահխաթունեանց Յովհ., էջ 344:

մահալների ու վայրերի առաջնորդությունն ու գլխավորությունը հանձնեցինք նրան»[516]: Գանձասարի վանքի գավթում պահպանված է Աղվանից Գրիգորիս կաթողիկոսի կանգնեցրած խաչքարը հետևյալ արձանագրությամբ՝ «Կամաւն Ա/ստուծո/յ ես Գրիգորիս կաթուղիկոս կանգ/նեցի զս/ուր/բ խաչս փրկութի/ւն/ հաւր իմոյ...Թվ/ին/ ՌԺԲ/ 1563»[517]: Ռաֆֆու կողմից արձանագրված մի ձեռագրի վկայությամբ Գրիգորիս կաթողիկոսը իր մահկանացուն կնքել է .«ի ՌԻԲ թուին Հայոց, ի 1573 ամի Տեառն»[518]:

Համաձայն որոշ վիմագիր արձանագրությունների, Աղվանից Գրիգորիս կաթողիկոսին հաջորդել է Տեր Հովհաննես Ա-ն, որի մասին առաջին հիշատակությունը թվագրված է. «Թվին ՌԻԵ /1576/ ի հայրապետութիւն տր Յովհանիսի...»[519]: Հիշյալ արձանագրությամբ խաչքարը գտնվում է ԼՂՀ Մարտունու շրջանի Ծովատեղ գյուղի Կարմիր եղցու մոտ: Ըստ Հովհ. Շահխաթունյանցի, Աղվանից Հովհաննես կաթողիկոսը «...վախճան սորին եղև ի թուին ՌԼԵ /1586/[520]:

Տեր Հովհաննես Ա-ին հաջորդած կաթողիկոսների մասին կան առանձին, սակայն և շատ սուղ հիշատակություններ: Հիշատակարաններում բազմաթիվ հետաքրքիր տեղեկություններ կան պահպանված Աղվանից Հովհաննես Բ կաթողիկոսի աթոռակալության վերաբերյալ: Նրան կաթողիկոսական հաստատման հրովարտակը շնորհվել է պարսից Շահ Աբաս Ա-ի կողմից 1606թ.[521]: Կաթողիկոսի արժանահիշատակ ձեռնարկումներից էր Գանձակի եկեղեցու կառուցումը. «սա շինեաց զեկեղեցին Գանձակայ՝ էլիսավետապօլսոյ»[522]: Վախճանվել է 1633թ Գանձասարում և հուղարկավորված է նույն վանքի գավթում: Տապանաքարի վրա արձանագրված է. «Յ/ո/հաննէս կ/ա/թ/ո/ղ/ի/կ/ո/ս»: 1634-1653 թթ. Գանձասարի Հայ Աղվանից կաթողիկոսությունը առաջնորդում էր Տեր Գրիգորը, որի աթոռակալության վերաբերյալ ևս հիշատակությունները բազմաթիվ են: Ինչպես Տեր Գրիգորի, այնպես էլ Տեր Հովհաննես Բ-ի Գանձակի մահմեդական խաների կողմից հալածանքների ենթարկվելու մասին կան բազմաթիվ վկայություններ:

Գտնվելով մահմեդական խանություններով շրջափակման մեջ, նրանց կողմից պարբերաբար հասցվող հալածանքներին ու բռնություններին դիմակայելու նպատակով, Հայ Աղվանից կաթողիկոսների, հանուն ազգային ինքնության անաղարտ գոյատևումի, քաղաքական ակտիվ նախաձեռնությունների արդյունքում Գանձասարը, հոգևոր կենտրոնի հետ մեկտեղ, աստիճանաբար վեր էր ածվում ազգային ազատագրական շարժման կենտրոնի, մի իրողություն, որի նախասկիզբը դրվեց Պետրոս Խանձկեցի կաթողիկոսի կողմից/1653-1676թթ./:

Լինելով իր ժամանակի կրթված հոգևորական գործիչներից մեկը, նրա առաջին ձեռնարկումը դարձավ հենց կաթողիկոսության վարչական գործերի բարեկարգումն ու նրա հեղինակության վերականգնումը: Այս ամենով հանդերձ հոգևոր առաջնորդը մեծապես անհանգստացած էր մահմեդականների տիրապետության հետևանքով ժողովրդի քաղաքական ծայրահեղ ծանր իրավիճակով և, որ ամենակարևորն է, ազգային ինքնության պահպանման վտանգով: Հավանաբար հենց այս հանգամանքն էլ ստիպել է նրան, հոգևոր գործերից զատ, ջանադրաբար զբաղվել նաև քաղաքական գործունեությամբ:

1670-71թթ. Հայ Աղվանից Պետրոս Խանձկեցի կաթողիկոսի կողմից առաջին ուղերձը ուղարկվեց Ռուսական կայսրություն՝ խնդրելով ցարին իր՝ հովանավորության տակ առնելու քրիստոնյա հայ ժողովրդին[523]: Պետրոս Խանձկեցի կաթողիկոսի անվան բազմաթիվ հիշատակումներ կան Արցախի ամենատարբեր վայրերում գտնվող բազմաթիվ եկեղեցիների շինարարական արձանագրություններում, ինչպես նաև «Ավետարան-հիշատակարաններում»: Փաստերի համադրությունից կարելի է եզրակացնել, որ աթոռակալել է մինչև 1676 թվականը:

Պահպանված փաստերի ու արձանագրությունների քննությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ սկսած 16-րդ դարից Աղվանից կաթո-

516. ՄՊՎՀ, պրակ Ա, էջ 65:
517. Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 67:
518. Ռաֆֆի, «Գաղտնիք Ղարաբաղի», «Արձագանք», 1886, հմ. 45, էջ 591:
519. Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 160:
520. Շահխաթունեանց Յովհ., էջ 344:
521. ՄՊՎՀ, պրակ Բ, Երևան, 1959, էջ 84:
522. Շահխաթունեանց Յովհ., էջ 345:

523. Վ.Բալայան, Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 184:

ղիկոսության ներսում առաջ եկած անմիաբանության արդյունքում ստեղծվել էր հակաաթոռ կաթողիկոսություն, որի պատճառով աթոռակալական վեճերը գնալով երբեմն ավելի սուր բնույթ են կրել՝ լարված իրադրություն ստեղծելով քաղաքական առանց այն էլ ծայրահեղ ծանր իրավիճակում գտնվող երկրամասի հայության համար: Աթոռակալական վեճերը ավելի սուր բնույթ են կրել 17-18-րդ դարերում և, հատկապես Երեմիա Հասան-Ջալալյանցի աթոռակալության շրջանում, երբ կաթողիկոսական աթոռը վիճարկվում էր նրա ու Սիմեոն Խոտորաշենցու միջև:

Ինչպես Վարդան Օձնեցին, այնպես էլ Բ.Ուլուբաբյանը Սիմեոն Խոտորաշենցուն համարում են «ինքնակոչ» կաթողիկոս[524]: Թերևս տեսակետը կարելի է հիմնավորել Հովհ. Շահխաթունյանցի հետևյալ տողերով. «սա անձամբ առեալ զպատիւն առանց հաւանութեան կաթուղիկոսի Հայոց և բնակի ի գեղջ իւրում յենլով յայլազգի իշխանն...»[525]: Սակայն որոշ արձանագրություններ տակավին մտորումների տեղիք են տալիս ու նաև մատնանշում հակաաթոռության հիմնախնդրի բավական լուրջ և մանրակրկիտ քննության անհրաժեշտությունը: Այս հանգամանքը ավելի համոզիչ է դառնում թեկուզև հետևյալ փաստերի հակասականության պատճառով. Սիմեոն կաթողիկոսը 1677թ. հատուկ հավատարմագիր է ուղարկել Գանձասարի Երեմիա կաթողիկոսին, նշելով, որ. «... Զայս թուղթս այսու պայմանաւ տուի մեր սիրելի եղբայր Երեմիայ կաթուղիկոսին, ... զոր ինչ առնեմ առանց հրամանի քո չառնեմ, որքան կենդանի իցես...: Այլ և զայս հաստատաբար գրեմ Սիմեօն կաթուղիկոս, որ ամենևին իմ մարմնաւոր ազգականացն կաթուղիկոսութեան անուն չլինի...»[526]: Սակայն չնայած այս փաստին, կա նաև 1691թ. Շամախու գավառի Ս.Աստվածածին վանքում գրված «Թուղթ դաշնադրութեան» փաստաթուղթը, որով մեկընդմիշտ մերժվում է Սիմեոնը և որպես Հայ Աղվանից կաթողիկոս է ճանաչվում Տեր Երեմիան. «այսուհետև մեր հայրապետն Երեմիա կաթողիկոսն է, այլ սիմոնին

524. Մատենադարան, ձեռ. հմ. 4331, էջ 12ա: Տես նաև՝ Բ.Ուլուբաբյան, Հայոց արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, էջ 207:
525. Շահխաթունեանց Յովհ., էջ 345:
526. «Արարատ», 1900, էջ 318:

հետ բան չունիմք, զկնի այսորիկ ով ոք զսիմոնն ուզէ և կաթողիկոսի տեղ դնէ՝ թէ վարդապետ, թէ եպիսկոպոս, թէ քահանայ և թէ աշխարհական սևերես լինի և պարտական առաջի աստուծոյ և սուրբ Գանձասարայ աթոռոյն և սուրբ աջոյն Գրիգորիսի...»[527]: Սույն փաստաթուղթը կարևորվում է նաև նրանով, որ այն վավերացված էր Աղվանից կաթողիկոսության 14 եպիսկոպոսների, 20 իշխանների, 2 վարդապետների և հոգևոր ու աշխարհիկ իշխանության բազմաթիվ այլ ներկայացուցիչների ստորագրություններով:

Մակ. Բարխուտարյանցը, վկայակոչելով Երից Մանկանց վանքի ճակատային մասի արձանագրությունը. «Ի թվին ՌՃԽ.ին (1691թ.) ի ժամանակս Շահ Սուլէյմանին մեծի արքային Պարսից ես Սիմէոն շնորհիւն Աստուծոյ կաթուղիկոս Աղուանից շինեցի զեկեղեցիս ընդ հարազատ եղբաւր իմոյ Իգնատիոս վարդապետին, որ եմք որդիք Սարգիս քահանային Մեծ Շինացւոյ...» , դատապարտում է Սիմեոնին, նշելով «ինքնակոչ կաթուղիկոսն, որ շինած է տաճարս ոչ ի փառս Աստուծոյ, այլ ի յագուրդ իւր անարգ փառասիրութեան, ի դաւաճանութիւն Աղուանից հարազատ կաթուղիկոսութեան, հակաթոռ Գանձասարի...»[528]:

Այս ամենից կարելի է ենթադրել, որ հիմնախնդիրը տակավին լուրջ քննության կարիքը ունի: Այդ ուղղությամբ նշանակալից ներդրում պետք է համարել Լեռնիկ Մկրտումյանի «Աղվանից կաթողիկոսությունը 17-19-րդ դարերում» ատենախոսությունը, որտեղ տեղ են գտել հիմնախնդրի քննության համար արժեքավոր փաստեր, բայց և որոնք վերստին մատնացույց են անում նրա նոր ու ավելի հիմնավոր պարզաբանումների անհրաժեշտությունը: Այսպես, վերոնշյալ փաստարկների կողքին կարող ենք մեջբերել նաև Լ.Մկրտումյանի աշխատանքում ներառված հետևյալ արձանագրությունը, համաձայն որի. «Մատենադարանի N 8965 Ավետարանի հիշատակարանի, Պետրոս Խանձքեցին մահից առաջ՝ 1675թ. կաթողիկոս է օծել իր աշակերտ Սիմեոն Խոտորաշենցուն, որը նույն թվականին մեկնելով Ղազվին՝ հաստատվում է Աղվանից կաթողիկոս և Սուլեյման շահի հրովարտակով և այդ ժամա-

527. Նույն տեղում, էջ 319:
528. Մակ.Բարխուտարեանց, Արցախ, էջ 280:

նակ Պարսկաստանում գտնվող Ամենայն Հայոց Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի կոնդակով»[529]:

Հեղինակի ներկայացմամբ, համաձայն 18-րդ դարում կազմված Աղվանից կաթողիկոսացանկի, Երեմիա Հասան-Ջալալյանին անօրինական կաթողիկոս է օծել ոմն Եղիա եպիսկոպոս[530]: Իսկ Բ.Ուլուբաբյանը նույն հիմնախնդրի առնչությամբ գրել է. «Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին/1655-1680/ բանադրում է Սիմեոնին, ապա էջմիածին հրավիրելով Հասան-Ջալալյան տոհմից Երեմիա անունով մի աբեղայի, նրան միաժամանակ ձեռնադրում է եպիսկոպոս և կարգում կաթողիկոս, ուղարկում Գանձասար»[531]: Մեջբերումը ակամայից հաստատում է Լ.Մկրտումյանի վերոնշյալ փաստարկների վրա հիմնված տեսակետը. որ «Պետրոս Խանձքեցին մահից առաջ՝ 1675թ. կաթողիկոս է օծել իր աշակերտ Սիմեոն Խոտորաշենցուն», իսկ Երեմիան տակավին աբեղա լինելով, բնականաբար չէր կարող անմիջականորեն հաջորդել Պետրոս Խանձկեցուն և, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տեր Երեմիան որպես Աղվանից կաթողիկոս, առաջին անգամ հիշատակված է 1682թ Ծակուռի գյուղի եկեղեցու շինարարական արձանագրության մեջ[532], պետք է ենթադրել, որ Սիմեոն Խոտորաշենցին որոշ ժամանակ իրոք առաջնորդել է կաթողիկոսական աթոռը և այն էլ հոժարակամ զիջել է Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից օրինական օծում ստացած Երեմիային: Այս փաստերը, համենայնդեպս, մեր կարծիքով, ավելի են շատացնում հարցականները և միաժամանակ հրատապ դարձնում հիմնախնդրի նորովի ուսումնասիրման անհրաժեշտությունը:

Գանձասարում պահպանված շինարարական արձանագրությունը վկայում է, որ 1689թ. Երեմիա կաթողիկոսի նախաձեռնությամբ է կառուցվել վանքի սեղանատունը. «Երեմիա կ/ա/թ/ո/ղ/ի/կ/ո/ս շ/ի/ն/ե/գ/ի, թվ/ին/ ՌԵԼԸ /1689/[533]:

529. Լ.Մկրտումյան, Աղվանից /Գանձասարի/ կաթողիկոսությունը 17-19-րդ դարերում, էջ 11:
530. Նույն տեղում:
531. Բ.Ուլուբաբյան, Հայոց արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, էջ 208:
532. Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 172-173:
533. Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 70:

Հայ Աղվանից Երեմիա կաթողիկոսը վախճանվել է 1700թ. և հուղարկավորվել Գանձասարի վանքի գավթում: Պահպանված է տապանաքարը, որի վրա արձանագրված է. «Այս է տապան Երեմիա կ/ա/թ/ո/ղ/ի/կ/ո/սին Աղուանից, որ է յազգէն Ջալալ Դօլին, ՌԵԽԹ /1700/ թուին»[534]:

1702 թվականից Հայ Աղվանից կաթողիկոսական աթոռը անցավ Հասան-Ջալալյան տոհմի թերևս ամենանշանավոր ներկայացուցիչներից մեկին՝ Եսայի Հասան-Ջալալյանին, որի անունը իր պատվավոր տեղն ունի ոչ միայն Հայ եկեղեցու, այլև ընդհանրապես հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի պատմության մեջ:

Ակնհայտ փաստ է, որ 18-րդ դարի սկզբներից հայ ժողովրդի ազատագրական շարժումը թևակոխել է նոր փուլ և հատկանշական է այն իրողությունը, որ այս անգամ շարժման իսկական կենտրոնը Գանձասարն էր: Այդ առթիվ շատ բնորոշ է արտահայտվել Լեոն, գրելով, որ «Գանձասարը ղեկավարում էր, ներշնչում էր, բանակցություններ էր վարում ռուսաց կառավարության հետ...: Գանձասարի մեծ ջանքերով էր, որ կազմակերպուեց հայ զինուորութիւն Ղարաբաղում, Եսայի և Յովհաննէս կաթողիկոսները շարժման հոգին էին... և ահա մի հոգևորականութիւն, որ ծուլուած էր իր ժողովրդի հետ, որ տանում էր նրան դէպի կռիւ, դէպի տանջանքներ և հերոսութիւններ՝ լեռնային ոգին, լեռնային կեանքի ազատութիւնը սիրելու և պահպանելու համար»[535]:

Կաթողիկոս օծվելու պահից ի վեր Եսայի Հասան-Ջալալյանը դարձավ ազգային ազատագրական պայքարի ոգեշնչողն ու կազմակերպիչը: Նա ուներ քաղաքական շեշտված հակում, այն է քրիստոնյա Ռուսաստանի օգնությամբ ազատագրել Հայաստանը և նրա ամբողջ գործունեությունը նպատակաուղղված էր դրան: Նրա անմիջական ղեկավարությամբ կազմվել և ռուսական ցարին են ուղարկվել նամակ-խնդրագրեր: 1720-ական թվականներին արցախահայության ազատագրական մարտերը թուրքական բռնատիրության դեմ նույնպես անմիջականորեն ղեկավարում էր Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսը: Սակայն

534. Նույն տեղում, էջ 65:
535. Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց հոգևոր դպրոցի, էջ 56:

մեր հիմնական թշնամին՝ անմիաբանությունը այս ծայրահեղ ժամանակներում էլ իրեն զգացնել տվեց: Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսին միանգամայն հակառակ գործում էր իրեն ինքնակոչ Աղվանից կաթողիկոս հռչակած Երից Մանկանց վանքի Ներսես եպիսկոպոսը. «...օծանի հակառակ Եսայեայ ի ՌՃՕԵ, թուին յամի 1706»[536]: Այլ կերպ ասած, հակաթոռությունը շարունակում էր գործել և, անշուշտ, իր բացասական հետևանքներն ունենալ ժողովրդի թե հոգևոր և թե քաղաքական կյանքում:

1724թ. կնքված Կ.Պոլսի պայմանագրով Ռուսաստանը և Թուրքիան համաձայնության եկան Կովկասում ազդեցության գոտիների վերաբերյալ, համաձայն որի Ռուսաստանին անցան Կասպից ծովի առափնյա շրջանները, իսկ ռուսները իրենց հերթին ճանաչեցին թուրքերի իրավունքները Իրանի այսրկովկասյան տիրույթների նկատմամբ, ներառյալ Գանձակի, Ղարաբաղի ու Ղափանի մարզերը[537]:

Սակայն Ղարաբաղի սղնախականների ազգային ազատագրական պայքարը դրանով չմարեց և շարունակվեց նաև հետագայում: Թուրքական հրամանատարության պահանջով ու ճնշմամբ Ամենայն Հայոց Աստվածատուր կաթողիկոսը ստիպված էր հատուկ նամակով դիմել Եսայի կաթողիկոսին, որպեսզի վերջինս կարողանա համոզել նաև Արցախի մելիքներին՝ դադարեցնելու պայքարն ու հպատակվել թուրքական հրամանատարությանը, ինչը, սակայն չընդունվեց ոչ մելիքների և ոչ էլ Աղվանից կաթողիկոսի կողմից:

Սղնախականներին 1726թ. հաջողվեց թուրքական հրոսակախմբերին վտարել Ղարաբաղի սահմաններից: Սակայն արտաքին թշնամու դեմ ձեռք բերված այս հաղթանակի պտուղները չվայելեց ժողովուրդը՝ վերստին ներքին անմիաբանության հետևանքով, որը թերևս ավելի վնասակար հետևանքներ ունեցավ: Մի խումբ մելիքներ անիմաստ համարելով հետագա դիմադրությունը, որոշեցին վայր դնել զենքը, իսկ մյուս խմբավորումը պնդում էր պայքարի շարունակման անհրաժեշտության վրա: Դժբախտաբար երկու կողմերն էլ սկսեցին մեղադրել

536. Շահխաթունեանց Յովհ., էջ 347:
537. Վ.Բալայան, Արցախի պատմություն, էջ 157:

Եսայի Հասան-Ջալալյանին՝ ստեղծված անելանելի իրավիճակի համար:

Արցախի ազգային-ազատագրական պայքարի եռանդուն կազմակերպիչ ու առաջնորդ Եսայի Հասան-Ջալալյանը, գտնվելով հոգեկան ծանր ապրումների մեջ, 1728թ. կնքել է իր մահկանացուն և հուղարկավորվել Գանձասարի վանքի գավթում: Տապանաքարին արձանագրված է. «Այս է տապան Եսաի կ/ա/թ/ո/ղ/ի/կ/ո/սին Աղուանից, որ է ազգէն Ջալալ Դօլին, ՌՃՀԷ /1728/ թուին»[538]:

Եսայի Հասան-Ջալալյանի մահից հետո Ներսես եպիսկոպոսը, ըստ տարբեր աղբյուրների, բավական ջանքեր գործադրեց՝ էջմիածնի կողմից Աղվանից օրինավոր կաթողիկոս օծվելու կապակցությամբ: Ամենայն Հայոց Աբրահամ կաթողիկոսի կողմից օծվելով Աղվանից կաթողիկոս, նա աթոռակալեց բավական երկար ժամանակ և վախճանվեց 1763թ. «...Ներսէս կաթուղիկոսը, որ հասակաւոր և հինաւուրց ծերունի մարդ էր»[539]: Հուղարկավորված է Գանձակի Ս.Հովհաննես-Մկրտիչ եկեղեցու գավթում և տապանաքարի վրա արձանագրված էր. «այս է տապան սուրբ Ներսէսի / եւ Աղուանից կաթուղիկոսի...»[540]:

1750-ական թվականներին Ղարաբաղը հայտնվեց քաղաքական միանգամայն նոր պայմաններում, կապված երկրամասում հաստատված խանական կարգերի հետ: Ազգային ազատագրական երկարատև պայքարից հետո, այնուամենայնիվ, Ղարաբաղը հայտնվեց մահմեդական օտար տիրապետության տակ: Փանահ խանին ի վերջո հաջողվեց հաստատվել Ղարաբաղի կենտրոն Շուշիում, իսկ որոշ ժամանակ հետո էլ իրեն հռչակեց Ղարաբաղի խան: Երկարատև ու համառ պայքարից հետո, այն էլ հիմնականում դավադրական ճանապարհով, Փանահը կարողացավ մասամբ իրեն ենթարկել Խամսայի մելիքությունները: Փանահ խանի դեմ մղվող պայքարին մեծ օժանդակություն էր ցույց տվել նաև Աղվանից Ներսես կաթողիկոսը և Ղարաբաղում խանի վերջնական հաստատումից հետո նա ստիպված էր հեռանալ երկրամասից

538. Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 64:
539. Ա.Հախումեան, Ուրուագծեր Ղարաբաղի անցեալից, «Արարատ,», 1915, էջ 643:
540. Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 227: Տես նաև՝ Ս.Կարապետյան, Հյուսիսային Արցախ, Եր., 2004, էջ 50:

ու հաստատվել Գանձակում, որտեղ էլ մնաց մինչև իր կյանքի վերջը:

Իրավիճակը առավել անտանելի էր Փանահի հաջորդ Իբրահիմ խանի կառավարման շրջանում: Վերջինս այլևս չէր հանդուրժում հպատակ հայ ժողովրդի հավատքն ու առանձնակի դաժան վերաբերմունք դրսևորեց ինչպես հպատակ քրիստոնյա ժողովրդի, այնպես էլ Աղվանից կաթողիկոսության նկատմամբ: Սակայն մահմեդական բռնակալի այդ վերաբերմունքը երբեմն նաև քողարկված բնույթ էր կրում:

Ներսես կաթողիկոսի մահվանից հետո կաթողիկոսական աթոռը վերստին անցավ Հասան-Ջալալյան տոհմին և 1763թ. Աղվանից կաթողիկոս օծվեց Հովհաննես Թ Հասան-Ջալալյանը /1763-1786թթ./, որի նստավայրն էր Գանձասարի վանքը: Հատկանշական է, որ վերջինս իր կաթողիկոսական իրավունքների ճանաչումն ու հաստատումը ստացել էր Ղարաբաղի Իբրահիմ խանից: Մ.Օրմանյանի վկայությամբ, Հովհաննես Հասան-Ջալալյանը մեկնել էր էջմիածին՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Ե Շամախեցուց օրինական օծում ստանալու ակնկալիքով, սակայն մերժում ստանալու պատճառով, անմիջապես վերադարձել ու 1763թ. մարտին կաթողիկոս է օծվել Ղարաբաղի եպիսկոպոսներից և դրանում նրան մեծ աջակցություն է ցույց տվել Իբրահիմ խանը[541]:

Հովհաննես Հասան-Ջալալյանի Ամենայն Հայոց կաթողիկոսից մերժում ստանալու հիմնական պատճառը կրկին կաթողիկոսական աթոռի շուրջ ծագած տարաձայնությունն էր և երկփեղկվածության փաստը, որն այս անգամ հարուցվել էր ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ուժերի կողմից: Գանձակում հաստատված Ներսես Աղվանից կաթողիկոսը իրեն հաջորդ էր կարգել Իսրայել անունով եպիսկոպոսին, որի համար միջնորդել էին նույն ժամանակ նույնպես Գանձակում գտնվող Զրաբերդի ու Գյուլիստանի մելիքները: Խնդրի նկատմամբ, բնականաբար, միանգամայն տարբեր վերաբերմունք դրսևորեցին Գանձակի ու Ղարաբաղի խաները, որոնցից յուրաքանչյուրը ձգտում էր իր ազդեցության տակ առնել հոգևոր իշխանությունը:

Եվ այսպես, երկու կողմերն էլ միաժամանակ սկսեցին ջանքեր գործադրել՝ էջմիածնի կողմից օրինավոր օծում ստանալու ուղղությամբ: Հակոբ Ե Շամախեցուն հաջորդած Սիմեոն Երևանցի Ամենայն Հայոց կաթողիկոսը, որ սկզբնապես հակված էր Իսրայել եպիսկոպոսի կողմը, պահանջեց նրանից, որ օծում ստանալուց հետո պետք է վերադառնա Գանձասար: Սակայն Գանձակի խանի կողմից այս պահանջը միանշանակորեն չընդունելու պատճառով Իսրայելը ստիպված էր հրաժարվել օրինական օծում ստանալուց: 1765թ. դեկտեմբերի 25-ին էջմիածնի կողմից Աղվանից կաթողիկոս հաստատվեց Հովհաննես Հասան-Ջալալյանը[542]:

Հովհաննես Հասան-Ջալալյանի ամբողջ մտահոգությունը մահմեդական տիրակալության տակ հայտնված ժողովրդի անտանելի վիճակն էր և, արհամարհելով իրեն ամեն ժամ սպառնացող վտանգը, նա անմնացորդ նվիրվեց ժողովրդի ազատագրության գործին ու, Լեոյի բնորոշմամբ «Հովհաննես կաթողիկոսը հայոց հարցի այս երկրորդ շրջանում Եսայի կաթողիկոսի արժանավոր ժառանգը հանդիսացավ: Թեև Իբրահիմ խանը խիստ հսկողություն ուներ նրա վրա, թեև Գանձասարը շրջապատված էր նրա լրտեսներով և շարունակ զգում էր իր վրա ասիական բռնավորի երկաթե ձեռքը, բայց երբ նորից վերակենդանացավ վերահաս ազատության հույսը, Հասան-Ջալալյան տոհմի ներկայացուցիչն այլևս ավելորդ համարեց թաքնվել»[543]:

Գանձասարը վերստին դարձել էր ազգային ազատագրական շարժման հզոր ու ավանդական օջախը: Աղվանից Հովհաննես կաթողիկոսի նամակագրական կապերը Շահամիր Շահամիրյանի, Հովսեփ Արղությանի, Հովսեփ Էմինի և հայ ազատագրության այլ նվիրյալների հետ փայլուն վկայություն են նրա ծավալած անմնացորդ ազգանվեր գործունեության, ինչն էլ, սակայն չվրիպեց հակառակորդների ուշադրությունից ու ի վերջո պատճառ հանդիսացավ նրա եղերական մահվան: Իբրահիմ խանի հրամանով 1786թ. կալանավորվեց և Շուշիի չարաբաստիկ բանտը նետվեց Աղվանից հոգևոր առաջնորդը, որտեղ էլ դա-

541. Մ.Օրմանյան, Ազգապատում, հ.Բ, էջ 3052: Տես նաև Լեո, Երկերի ժողովածու, հ.3, գիրք 2-րդ, էջ 299:

542. Դիվան Հայոց պատմության, իրք , Թիֆլիս, 1894, էջ 365-367: Տես նաև Լ.Մկրտումյան, Աղվանից /Գանձասարի/ կաթողիկոսությունը 17-19-րդ դարերում, էջ 17:

543. Լեո, Երկերի ժողովածու, հ.3, գիրք 2-րդ, էջ 343:

ժանաբար մահվան դատապարտվեց: Գանձասարի վանքի գավթում հուղարկավորված կաթողիկոսի տապանաքարի վրա արձանագրված է «Այս է տապան Յոհաննէս Աղուանից կ/ա/թ/ո/ղ/ի/կ/ո/սին, որ է յազգէն Ջալալ Դօլին, թվի/ն/ ՌՄԼԵ /1786/»[544]:

Հովհաննես կաթողիկոսի մահից հետո հավանաբար որոշ ժամանակ Աղվանից կաթողիկոսական աթոռը մնացել էր թափուր, որի հիմնական պատճառը թե՛ երկրամասում և թե՛ ընդհանրապես ողջ Հայաստանում ստեղծված ծանր քաղաքական իրավիճակն էր:

18-րդ դարի վերջն ու 19-րդ դարի սկիզբը, շուրջ մեկ քառասնամյակ, դարձավ քաղաքական վայրիվերումներով հարուստ մի շրջան, որ բացատրվում է մի կողմից՝ Այսրկովկասի նկատմամբ Ռուսական կայսրության աճող հետաքրքրությամբ, մյուս կողմից՝ Իրանի արտաքին քաղաքականության ակտիվացմամբ, որի հիմնական նպատակը Այսրկովկասում իր երբեմնի գերիշխանության վերականգնումն էր: Քաղաքական այս մրցավազքից դուրս չէր, նաև Թուրքիան: Նման պայմաններում կողմերից յուրաքանչյուրը փորձում էր աջակցություն ստանալ նաև տեղական ուժերի կողմից: Իսկ եթե այս ամենին էլ ավելացնենք, որ Այսրկովկասում ստեղծվել էին մահմեդական մի շարք խանություններ, որոնք էլ իրենց հերթին էին ձգտում գերիշխանության հասնել մեկը մյուսի նկատմամբ, ապա իրավիճակը ավելի հասկանալի կարող է դառնալ: Քաղաքական միանգամայն տարբեր կողմերի բացահայտ թշնամական դիրքորոշումները գրեթե անելանելի վիճակ էին ստեղծել թե՛ հոգևոր, և թե՛ տակավին գոյապայքարի մեջ գտնվող հայկական առանձին աշխարհիկ իշխանությունների՝ մելիքությունների համար:

Ինչ վերաբերում է կոնկրետ Ղարաբաղում տիրող իրավիճակին, ապա այստեղ իշխող Իբրահիմ խանը իր պահանջներում դարձել էր ավելի անսանձ: Հովհաննես կաթողիկոսի նկատմամբ գործադրած դաժան սպանությունից հետո նրա հիմնական նպատակն էր կաթողիկոս դարձնել այնպիսի հոգևորականի, որը հնազանդորեն կկատարեր իր բոլոր պահանջները: Առանձնակի ատելություն ունենալով Հասան-Ջալալյան տոհմի նկատմամբ, Իբրահիմ խանը անգամ համաձայն էր Աղ-

544. Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 65:

վանից կաթողիկոս ճանաչելու Գանձակի խանության հովանու տակ գտնվող Գանձասարի հակաթոռ ճանաչված Տեր Իսրայելին, որը մինչ այդ նույնպես պայքարում էր Աղվանից կաթողիկոսական աթոռի համար: Իսկ Ամենայն Հայոց Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը 1787թ. կոնդակով արդեն հաստատել էր Իսրայելին որպես Աղվանից կաթողիկոս[545]:

Հովհաննես Հասան-Ջալալյանի սպանությունից հետո, նաև զգալով Ղարաբաղի Իբրահիմ խանի թշնամական վերաբերմունքը ընդհանրապես Հասան-Ջալալյան տոհմի նկատմամբ, սպանված կաթողիկոսի եղբայր Սարգիս Հասան-Ջալալյանը ստիպված էր հեռանալ Ղարաբաղից ու հաստատվել Գանձակում: Հովհ.Շահխաթունյանցի վկայությամբ նա Գանձակում բավական մեծ աջակցություն էր ստանում Ջավադ խանի ու այնտեղ ապաստանած մելիք Մեժլումի կողմից և նրանց կողմից էլ. «ձեռնադրեցաւ կաթուղիկոս ի Գանձակ՝ ի յէլիսավէտապօլ ի թուին ՌՄԽԳ. /1794թ./»[546]: Իսկ 1795-96թթ. պարսից Աղա-Մահմադ շահի ավերիչ ու մահաստիյուռ արշավանքների ժամանակ Սարգիս Հասան-Ջալալյանը ստիպված էր հեռանալ Վրաստան, իսկ 1798թ. Ամենայն Հայոց Ղուկաս կաթողիկոսի կողմից նշանակվեց Հաղպատի վանքի ու Վրաստանի թեմի առաջնորդ:

17-18-րդ դարերը արցախահայության կյանքում ընդհանուր առմամբ բնորոշվում են նաև որպես ակտիվ եկեղեցաշինության դարաշրջաններ: Արցախում, թեկուզ և Պարսկաստանի գերիշխանության տակ, բայց և այնպես ներքին որոշակի ինքնուրույնություն ունեցող և ազգային պետականության դրսևորումը հանդիսացող մելիքությունները ծավալված եկեղեցաշինության համար կարևոր երաշխիքն էին: Եվ պատահական չէ, որ այս ժամանակներում են կառուցվել կամ վերակառուցվել մեր այնպիսի նշանավոր հոգևոր կենտրոններ, ինչպիսիք են Երից Մանկանց վանքը/1690-ական թվականներ/, Վարանդայի Ավետարանոց գյուղի Կուսանաց անապատը /1616թ/, ս.Աստվածածին եկեղե-

545. Մատենադարան Կթղկ. դիվան, թղթ. 241, վավ. 205բ, էջ 14-16:
546. Շահխաթունեանց Յովհ., էջ 348-349:

ցին /1651թ./, Հերհեր գյուղի ս.Գրիգորիսի վանքը /1667թ./, Տողի ս.Ստեփանոս /1747թ./ և ս.Հովհաննես /1736թ./ եկեղեցիները, Ցորի ս.Ամենափրկիչ /1749թ./ եկեղեցին և այլն: Նույն ժամանակշրջանում բազմաթիվ եկեղեցիներ են կառուցվել նաև Հյուսիսային Արցախում, որոնցից հիշատակության արժանի են Գանձակի ս.Հովհաննես Մայր եկեղեցին /1633թ./, ս.Աստվածածին /1713թ./, Գետաշենի Ավագ Նշան /1677թ./, Կուսանաց անապատ եկեղեցիները և այլն:

Աղվանից կաթողիկոսական աթոռի շուրջը բավական լուրջ տարաձայնություններ են առաջացել նաև 18-րդ դարի վերջին ու 19-րդ դարի առաջին տասնամյակներում: Եվ այս տարաձայնությունների հիմնական պատճառը տվյալ շրջանում արդեն պետք է որոնել բացառապես արտաքին հանգամանքներում: Այսպես, եթե Սարգիս Հասան-Ջալալյանը արդեն աջակցություն էր ստացել Գանձակի խանի կողմից, ապա բնականաբար, նա միաժամանակ թշնամական վերաբերմունքին էր արժանանում խանի հակառակորդների կողմից: Քաղաքական այս հակասությունների մեջ ներքաշված էր նաև էջմիածինը: Եվ քանի որ Եփրեմ Ջորագեղցի Ամենայն Հայոց կաթողիկոսը, ինչպես կարելի է եզրակացնել ժամանակի տարաբնույթ աղբյուրներից, հատուկ համակրանք չէր տածում Սարգիս Հասան-Ջալալյանցի նկատմամբ, ուստի և ամեն կերպ խոչընդոտում էր, որպեսզի Աղվանից կաթողիկոսական աթոռը չանցնի նրան: Ամենայն Հայոց կաթողիկոսը անգամ բանադրեց Սարգսին, որի պատճառով նկատելիորեն թուլացավ վերջինիս դիրքերը անգամ իր կողմնակիցների շրջանում: Բավական երկարատև այս պայքարի արդյունքում, ինչպես նաև էջմիածնի հետ հարաբերությունները կարգավորելու նպատակով ի վերջո Սարգիս Հասան-Ջալալյանցը հրաժարվում է կաթողիկոսությունից:

Եփրեմ Ջորագեղցի Ամենայն Հայոց կաթողիկոսի հատուկ շրջաբերական կոնդակով 1815թ. Աղվանից կաթողիկոսությունը վերացվում է և նույն կոնդակով նախկինում Աղվանից կաթողիկոսության մեջ ընդգրկված թեմերը միավորվում են կազմելով Ամենայն Հայոց կաթողիկոսության ենթակայության տակ գտնվող մետրապոլտություն, իսկ մետրապոլիտի աստիճան շնորհելով Սարգիս Հասան-Ջալալյանցին, նա միաժամանակ նշանակվում է թեմի առաջնորդ[547]: Եվ այսպես, 1815-28թթ. Արցախի հոգևոր թեմը առաջնորդեց Սարգիս Ջալալյանցը. «... ձեռնատուութեան աշխարհական իշխանութեան օրինաբանեալ Տէրութեանն Ռուսաց վեր առաւ պատիւ և կոչումն կաթողիկոսական, և տուաւ միևնոյն անձին փոխան այնր կորման պատիւն մետրապօլտութեան յԱրքեպիսկոպոսական պաշտաման»[548]:

Երկրամասում 19-րդ դարի սկիզբը նշանավորվեց քաղաքական նոր իրադարձություններով: 1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո, որն ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով, հոկտեմբերի 12-ին Արցախի Գյուլիստան բերդավանում կնքված հաշտության պայմանագրով Ռուսաստանի տիրապետության տակ անցան նաև Ղարաբաղի, Գանձակի և հարակից մի շարք այլ խանություններ: Փաստացիորեն այս պայմանագիրը հայ ժողովրդի համար ընդհանուր առմամբ, իր դրական կողմերով հանդերձ, նաև բացասական որոշ հետևանքներ ուներ, թեկուզ և այն պարզ պատճառով, որ հայ ժողովուրդը միաժամանակ հայտնվել էր երեք առանձին տիրակալությունների տիրապետության տակ: Ինչ վերաբերում է հայոց եկեղեցուն, ապա արտաքին քաղաքական այս բաժանումները, անշուշտ, շարունակաբար ավելի էին նպաստում ներեկեղեցական հակասությունների սրմանը: Տվյալ պարագայում Հայ Աղվանից հոգևոր թեմը, գտնվելով ռուսական կայսրության տիրապետության տակ, իսկ Հայոց Մայր Աթոռը պարսկական, բավական լուրջ արգելքներ էին հարուցում նրանց միասնական գործելակերպի վրա:

Սարգիս Ջալալյանցի աթոռակալության շրջանում, չնայած այն ամենին, որ նրա նկատմամբ Ամենայն Հայոց Եփրեմ կաթողիկոսի կողմից բազմաթիվ խոչընդոտներ են հարուցվել իր իսկ թեմում հոգևոր պարտականությունների իրականացման բնագավառում, բայց և այնպես նա մշտապես հնազանդորեն է կատարել էջմիածնի կողմից տրվող պատվիրանները: Դրա մասին հստակ վկայված է Մատենադարա-

547. Տես Լ.Մկրտումյան, Աղվանից /Գանձասարի/ կաթողիկոսությունը 17-19-րդ դարերում, էջ 20:
548. Շահխաթունեանց Յովհ., էջ 349:

նում պահվող նրա նամակում[549]: Վավերագրերի կազմող Ս.Բեհբուդյանի վկայությամբ «Արցախի թեմի առաջնորդ Ջալալեան արքեպիսկոպոսը հոգևոր ջերմեռանդ ծառայութեան համար Ալեքսանդր Երկրորդ կայսեր կողմից պարգևատրուել է սուրբ Վլադիմիրի երկրորդ աստիճանի շքանշանով /1820, 30 օգոստոսի, Ցարսկոյէ սէլօ/[550]:

Չնայած Պարսկաստանի կողմից հարուցվող արգելքներին, 1821թ. Շուշի այցելեց Ամենայն Հայոց Եփրեմ կաթողիկոսը, որը մեծաշուք ընդունելության արժանացավ թե ժողովուրդի, և թե անգամ Ղարաբաղի Մեհտի-ղուլի խանի կողմից: Ամենայն Հայոց կաթողիկոսը որոշ ժամանակ մնաց Շուշիում՝ միջոցներ ձեռնարկելով հենց այստեղ էլ Ներսես Աշտարակեցուն հանդիպելու համար: 1822թ. Շուշիում կայացած հանդիպումից հետո Եփրեմ կաթողիկոսն ու Ներսես Աշտարակեցին այցելեցին նաև Գանձասար, որտեղ նրանց մեծ շուքով դիմավորեցին Արցախի թեմի առաջնորդ Սարգիս Ջալալյանցն ու Արցախի հոգևորական բարձր խավը: Գանձասարում կայացած այս հանդիպումը ևս մեկ վկայություն է Արցախի թեմի առաջնորդի անհատական վեհության ու մեծահոգության, քանի որ անտեսելով տվյալ ժամանակաշրջանում Հայ եկեղեցու երկու մեծությունների անբարեհաճ վերաբերմունքն իր անձի նկատմամբ, որի արդյունքում նա ենթարկվել էր թե եկեղեցում ընդունված դաժան պատժին՝ բանադրանքին և թե զրկվել կաթողիկոսական կոչումից, նա արժանավայել ընդունելություն կազմակերպեց և մեծագույն պատվով էլ ճանապարհեց: Այդ մասին բոլոր մանրամասները ներկայացրել է դեպքերի անմիջական մասնակից Մեսրոպ Թաղիադյանը[551]:

Առանց խորանալու քննարկվող ժամանակաշրջանում տեղի ունեցած հոգևոր ու քաղաքական տարաձայնությունների մեջ, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինչպես Լեոն, այնպես և Բ.Ուլուբաբյանը, հնարավոր մանրամասնությամբ ներկայացրել են Սարգիս

549. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը /1813-1933թթ./, Երևան, 2001, էջ 9-10:
550. Նույն տեղում, էջ 11:
551. Մ.Թաղիադեանց, Ճանապարհորդութիւն ի Հայս, Կալկաթա, 1847, էջ 270-330:

Ջալալյանցի անձի հետ կապված ռուսական բարձրաստիճան հրամանատարության կողմից հարուցված միանգամայն կեղծ մեղադրանքները, իսկ ավելի ճիշտ հերյուրանքները[552], այնուամենայնիվ, տարաբնույթ փաստերի քննության արդյունքում միայն կարող ենք ավելացնել, որ թեկուզև այն օրհասական պահերին, երբ հոգևոր առաջնորդը կալանավորված վիճակում հայտնվել էր Աբաս Միրզայի մոտ, ապա կրկին նրան մտահոգողը ժողովրդի վիճակն էր, ինչի մասին հստակորեն վկայված է Ներսես Աշտարակեցու 1827թ. Պասկևիչին գրած բացատրական նամակում[553]:

Այսպիսով, տարաբնույթ փաստերի համադրությունը ինքնաբերաբար մատնանշում է Սարգիս Հասան-Ջալալյանցի ազգանվեր ծառայություններն ու հատկապես նրա դերակատարությունը Հայ եկեղեցու և, մասնավորապես նրա կարևորագույն ճյուղերից մեկը հանդիսացող Աղվանից եկեղեցու հեղինակության, ժողովրդի հոգևոր կյանքում նրա կատարած դերի բարձրացման գործում: Նաև առանձնակի հիշատակության է արժանի նրա «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» մեծարժեք աշխատությունը, որի մասին դեռևս 1858թ. «Մեղու Հայաստանի»-ն իր էջերում արձանագրել է. «Սրբազան առաջնորդն Վրաստանի Հայոց Սարգիս Արքեպիսկոպոսն Ջալալեանց իւր ճանապարհորդութեան ժամանակն ի Ռուսաստան և ի Հայաստան գործով հոգևոր ծառայութեան բացի կատարելոյ ինքեան տուած յանձնարարութիւններն կատարել է և ազգաշահ գործքեր, ստորագրելով Հայաստանի քաղաքներն և գիւղերն, վանօրէից, եկեղեցեաց, բերդօրէից, խաչքարերի և գերեզմանաքարերի արձանագրութիւններն...»[554]: Հոգևոր առաջնորդը հոգ է տարել նաև Գանձասարի վանքի բարեկարգման ուղղությամբ՝ իրականացնելով վերանորոգումներ, որի մասին վկայված է վանքի տարածքում պահպանված արձանագրության մեջ:

Հայ Աղվանից հոգևոր առաջնորդ Սարգիս Հասան-Ջալալյանցը վախճանվել է 1828թ. և հուղարկավորվել Գանձասարի վանքի գավ-

552. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 39: Տես նաև Լեո, Երկերի ժողովածու, հ.4, էջ 410-412:
553. Բ.Ուլուբաբյան, Հայոց արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, էջ 251-255:
554. «Մեղու Հայաստանի», 1858թ, հմ.15, էջ 115:

թում. «Այս է տապան Սարգիս Աղուանից կ/ա/թ/ո/ղ/ի/կ/ո/սին, որ է յազգէն Ջալալ Դօլին, թվի/ն/ ՌՄՀԷ /1828/»[555]:

Աղվանից կաթողիկոսության վերացումը, անշուշտ, իր բացասական հետևանքներն ունեցավ ազգային պետականությունից զրկված Հայոց արևելից կողմանց հայության համար, քանի որ նման պայմաններում հայությունը զրկվեց իրեն միավորող ու, ինչու չէ, նաև պաշտպանող ու ոգեշնչող միակ ազգային հաստատությունից: «Աղուանից կաթուղիկոսութեան մահից յետոյ, այս է՝ 1828 թուականից յետոյ վանքերն հետզհետէ սկսած են զրկուիլ եւ անզաւականալ միաբանական խմբերից եւ անխնամ մնալով՝ քայքայուիլ մեծ մասամբ»[556]:

555. Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 66:
556. Մ.Բարխուտարյանց, Արցախ, էջ 156:

ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ԵԿԵՂԵՑԻՆ XIX-XX ԴԱՐԵՐՈՒՄ
Ղարաբաղի թեմը

Սարգիս Հասան-Ջալալյանի մահից միայն երկու տարի հետո՝ 1830թ. նոյեմբերի 13-ին Ամենայն Հայոց Եփրեմ կաթողիկոսի կոնդակով Ղարաբաղի թեմի մետրապոլիտ կարգվեց նրա եղբայր Բաղդասար Հասան Ջալալյանցը[557]:

1836թ. մարտի 11-ի Ռուսական կայսրության կողմից հաստատված «Յաղագս կառավարութեան գործոց Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ ի Ռուսաստան» հատուկ կանոնադրությամբ՝ հայտնի «Պոլոժենիե» անվամբ, կայսրության տիրապետության տակ գտնվող հայ եկեղեցին բաժանվում է 6 թեմերի՝ Նոր Նախիջևանի, Աստրախանի, Վրաստանի, Շիրվանի, Երևանի և Ղարաբաղի[558]: Կանոնադրության մեջ հատուկ կետով նշված է նաև առանձին թեմերի աշխարհագրական սահմանները: Ղարաբաղի թեմի մեջ ներառված էին նաև Շաքի և Թալիշ գավառները: Այս հանգամանքը շեշտված է նաև Ղարաբաղի թեմի առաջնորդի տիտղոսներում. «Արքեպիսկոպոս Աղուանից», «Արքեպիսկոպոս Արցախայ և Շաքուայ և Թալիշի»[559]:

Էջմիածնի սինոդի հրամանով 1837թ. կազմված «Հայ եկեղեցու վիճակագրութիւնը Կովկասում» օրագրության տվյալների համաձայն Ղարաբաղի թեմի մեջ ընդգրկված էին՝ «3 վանք, 53 եկեղեցի, 32 ժամատուն, 1 եպիսկոպոս, 6 վարդապետ, 2 աբեղայ, 117 ավագ քահանայ և քահանայ, 10 սարկավագ, 98 դպիր, 6 կոյս և 3 դպրոց»[560]: Իսկ 1840թ. կազմված վիճակագրության համաձայն նրանում մասնավորապես ներառված էին երեք քաղաքներ՝ Շուշի, Նուխի, Լենքորան և 156 գյուղ,

557. ՀԱԱ, ֆ. Պ56, ց.12, գ. 532:
558. Աղ.Երիցյան, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք 19-րդ դարում, մաս Բ, Թիֆլիս, 1895, էջ 557:
559. Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 164:
560. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 14:

որոնք բոլորը միասին ունեին 7167 տուն հայ ազգաբնակչություն[561]:

1839թ. Ղարաբաղում ստեղծվել է վանքական կառավարություն, որի հիմնական խնդիրներն էին.

«Ա. կառավարել զգործս, ... զի կատարեսցին իսկութեամբ ամենայն եկեղեցական կանոնք և կարգադրութիւնք ի վանս իւրեանց: Բ. պահպանել յամենայն ողջութեամբ զշարժական և զանշարժ կայս ընդ տեսչութեամբ նոցունց եղեալ վանիցն և ունել զմշտնջեանական հոգացողութիւն վասն կանոնաւոր կիրառութեան եկամտից և բարեկարգութիւն նոցին: Գ. պահպանել զճիշտ հաշիվս ամենայն եկամտից և ծախուց վանիցն, զոր ի միասին ըստ ցուցակացն ամենայն շարժական և անշարժ գոյից նոցին առաջ առնել ի վախճան իւրաքանչիւր ամի ի վերահաստատութիւն կոնսիստորէիս...»[562]: Մի շարք վավերագրեր փաստում են, որ վանական կառավարության մեջ նախ և առաջ ընդգրկվում էին հեղինակություն վայելող հոգևորականներ, որոնք պատասխանատու էին եկեղեցական կանոնների, ժամերգությունների, կարգադրությունների ճշտորեն կատարման համար:

Ղարաբաղի թեմի հոգևոր կենտրոնը նոր կանոնադրությամբ դարձավ Շուշին, որտեղ էլ տեղակայվեց առաջնորդարանը: 1837թ. հուլիսի 1-ին Ռուսական կայսերական հրամանով թեմի առաջնորդ և հոգևոր վարչության նախագահ նշանակվեց Բաղդասար Հասան Ջալալյանցը[563]: Ղարաբաղի թեմի առաջնորդը նույն թվականին իր օրինական օծումը ընդունեց նաև էջմիածնում:

Հատկանշական է, որ Բաղդասար Հասան Ջալալյանցի կյանքի ու գործունեության բոլոր ուսումնասիրողները, ժամանակի բոլոր վավերագրերը, միանշանակորեն հիմնավոր կերպով և հատուկ պատկառանքով են խոսում հոգևորական գործչի մասին, նրան ներկայացնելով նախ և առաջ որպես ազգանվեր գործիչ ու մեծ ժողովրդականություն վայելող առաջնորդ: «Արդէն այն հանգամանքը, որ մի անդամալոյծ եկեղեցական ծէսերը կատարում էր յատուկ բազկաթոռի մեջ նստած և որին ձեռքերի վրա էին այս ու այն կողմ տանում, ցոյց էր տալիս, թե որ-

561. Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 7:
562. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 14:
563. Նույն տեղում, էջ 116:

քան կարևոր նշանակություն ունէր մետրապոլիտը ժողովրդի և հոգևոր իշխանության աչքում: ... Նա մի ստեղծագործող ոյժ էլ էր, որ ուղղություն էր տալիս, որին նայում էին պատկառանքով... Անդամալոյծ առաջնորդը հարկաւոր դէպքերում այցելութիւններ էր անում իր ժողովրդի անդամներին, երբ հարկաւոր էր ազդու միջամտութիւն գործել զանազան առիթներով»[564]: Եվ ընդհանրապես, պահպանված բազմաթիվ փաստագրական նյութեր վկայում են, որ Բաղդասար մետրապոլիտը մշտապես եղել է ժողովրդի կողքին ու իր ողջ հնարավորություններով պաշտպանել է նրա շահերը:

Տնտեսական ծանր իրավիճակ էր ինչպես ժողովրդի, այնպես էլ հոգևոր հաստատության համար: Եվ այս ամենի հիմնական պատճառներից մեկը տիրող անօրինականությունն ու առանձին անհատների կողմից ցուցաբերվող կամայականությունն էր, հիմնախնդիր, որի դեմ անմիջականորեն պայքար ծավալեց թեմական առաջնորդը: Թեմի մեջ ներառված եկեղեցիների մեծ մասը տարբեր պատճառներով զրկվել էին վանքապատկան իրենց կալվածքներից, իսկ դրանք ետ վերադարձնելը բավական լուրջ հիմնախնդիր էր, որն էլ անմիջականորեն դարձավ Բաղդասար մետրապոլիտի հիմնական մտահոգություններից մեկը: Վանքապատկան կալվածքների վերադարձման, ինչպես նաև երբեմնի մեծաշուք վանքերի ու եկեղեցիների վերանորոգման հիմնահարցը, որից կախված էր վանքերի ու եկեղեցիների հետագա գոյությունը, նրա իսկ ներկայացմամբ, բազմաթիվ անգամ քննարկման է դրվել նաև Մայր Աթոռում:

«Վավերագրերում» զետեղված են Բաղդասար մետրապոլիտի բազում գրությունները թեմի մեջ ընդգրկված բազմաթիվ եկեղեցիների ու վանքերի վերանորոգման կապակցությամբ: «Շինարարական եռանդը Բաղդասար մետրապոլտի գործունեության պատուաւոր կողմն է կազմում: Մենք տեսանք, որ նա երիտասարդութիւնից աշխատում էր Խաչէնի աւերուած վանքերի և մանաւանդ Գանձասարի վերաշինութեան վրայ: Այդ հոգատարութիւնը նրա մէջ անշէջ մնաց և առաջնորդական պաշտօն ստանալուց յետոյ, չը նայած որ անդամալուծութիւնը, ըստ երևոյթին, չը պիտի թոյլ տար նրան հաջողութեամբ գլուխ հանել խոշ-

564. Նույն տեղում, էջ 118:

որ շինարարական ձեռնարկութիւնները»[565]:

Գանձասարում ու Հակոբավանքում տիրող մռայլ իրավիճակը կարգավորելու մտահոգությամբ Բաղդասար մետրապոլիտը 1844թ. նրանց համար ստեղծում է հատուկ վանական կազմակերպություններ, ինչը, սակայն ամենևին էլ դրական ազդեցություն չունեցավ և հիմնահարցը կրկին մնաց չլուծված վիճակում: Ամարասի ու Գանձասարի վերանորոգման, ինչպես նաև հիշյալ ու այլ վանքերից ապորինաբար խլված վանքապատկան կալվածքները վերստին նրանց վերադարձնելու համար հոգևոր առաջնորդը ներդրել է իր բոլոր հնարավորությունները, հատուկ խնդրանքով դիմելով ինչպես բոլոր բարեգութ մարդկանց, այնպես էլ կոնկրետ վճռական, անգամ բարդ ու դժվարին միջոցառումներ ձեռնարկելով այդ ուղղությամբ: Պահպանվել են Ամենայն Հայոց կաթողիկոսին ուղղված վերոհիշյալ բովանդակությամբ գրությունները. «Ղարաբաղի վիճակի առաջնորդ Բաղդասար արքեպիսկոպոսի գրութիւնը Ներսէս Կաթողիկոսին՝ Ամարասի վանական կալուածների առնչութեամբ առաջացած վէճի հանգամանքների և այդ ուղղութեամբ ձեռք առնուած միջոցառումների մասին» /4 ապրիլի 1853թ./[566], «Գանձասարի վանքի միաբանութեան դիմումը Տ.Տ. Ներսէս Ե Աշտարակեցի Կաթողիկոսին՝ վանքի նիւթական ծանր կացութեան և այն վերստին շենացնելու խնդրանքով» /5 դեկտեմբերի, 1854թ., Գանձասար/ և այլն[567]:

Տնտեսական ծանր կացության հետևանքով վտանգված էր նաև տակավին 5-րդ դարից Արցախի նշանավոր հոգևոր կենտրոններից մեկը հանդիսացող Դադիվանքի հետագա գոյությունը, քանի որ այն ոչ միայն զրկված էր իր կալվածքներից, այլև ընդհանրապես դարձել էր անբնակ: Բաղդասար մետրապոլիտը «չը խնայելով ոչ մի ջանք եւ նիւթական զոհաբերութիւն, Մեհտի Ղուլի խանի աղջկանից եւ ուրիշ բէգերից խլում է իր իշխանական կալուածները, որ ընդհանուր առմամբ Դուտխու Քեալբաջար է կոչւում...»[568]: Հոգևոր առաջնորդի համառ

565. Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 127:
566. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 227-229:
567. Նույն տեղում, էջ 241-243:
568. «Տարազ», 1913, հմ.7-8, էջ 90:

ջանքերի արդյունքում Կովկասի փոխարքա Մ.Վորոնցովի կարգադրությամբ իրականացված քննության շնորհիվ պարզվում և Դադիվանքին է վերադարձվում վանքապատկան կալվածքների հիմնական մասը:

Բաղդասար մետրապոլիտի արժանահիշատակ ձեռնարկումներից է հանդիսանում նաև նրա ծավալած կրթալուսավորական գործունեությունը, որի առաջին քայլերից մեկն էլ հանդիսանում է տպագրական գործը: Բազելցի քարոզիչներից գնելով Շուշիում նրանց հիմնած տպարանը, հոգևոր առաջնորդը մեծ ջանքեր է գործադրում տեղում հրատարակչական գործը պատշաճ մակարդակին հասցնելու ուղղությամբ: Անշուշտ, տպագրվող հիմնական նյութը հիմնավոր պատճառներով եկեղեցական բովանդակություն ուներ: Բայց և, Լեոյի խոսքերով ասած. «Մենք չը պիտի մոռանանք ոչ մի դէպքում, որ տպարանը իւրաքանչիւր տեղում յայտնագործում է եղած գրական ոյժերը և նպաստաւոր մթնոլորտ է պատրաստում՝ նոր ոյժեր առաջ բերելու համար: Միևնույն դերը ճշտութեամբ կատարում էր տպարանը և Շուշում»[569]: Մեր կարծիքով տրված բնորոշումը միանգամայն հատկանշական ու իրական է: Տպագրված գրքերի շարքում հիշատակման արժանի գործ էր Եսայի Հասան-Ջալալյանի «Պատմութիւն կամ յիշատակ ինչ ինչ անցից դիպելոց յաշխարհին Աղուանից» պատմագրական մեծարժեք երկը՝ տպագրված 1839թ.: Տպագրական գործը, անշուշտ, նույնպես իրականացվում էր ծանր պայմաններում, քանի որ գտնվում էր ռուս չինովնիկների խիստ հսկողության տակ: Մետրապոլիտը մեծ պատասխանատվություն էր կրում հրատարակած գրքերի բովանդակության համար, ուստի և ստիպված էր գավառապետի հարցումներին պատասխանել, որ տպարանում հրատարակվում են միայն հոգևոր բնույթի գործեր, այն էլ էջմիածնի սինոդի թույլատվությամբ:

1838թ Շուշիում բացվել է Ղարաբաղի թեմական դպրոցը, որի հիմնադրման մասին մանրամասն տեղեկություններ չէն պահպանվել, «գիտենք միայն, որ դա աղքատության մէջ ծնուած մի փոքրիկ հիմնարկութիւն էր»[570]: Սակայն հոգևոր առաջնորդի գործադրած բացառիկ ջան-

569. Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 124:
570. Նույն տեղում, էջ 183:

քերի շնորհիվ հետագայում հոգևոր այս դպրոցը կարողացավ ոչ միայն գոյատևել, այլև մինչև իր գոյության ավարտը՝ 1920թ. դարձավ հայ կրթամշակութային կյանքի կարևորագույն օջախներից մեկը և որի 75-ամյա հոբելյանին է նվիրված Լեոյի մեծարժեք աշխատություններից մեկը՝ «Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի»:

1854թ. հունիսի 27-ին իր մահկանացուն կնքեց Ղարաբաղի թեմի առաջնորդ 80-ամյա Բաղդասար Հասան-Ջալալյանը: Լեոյի վկայությամբ նրա մահը մեծ սուգ էր ոչ միայն արցախահայության համար, այլև նույնիսկ ռուսների ու թուրքերի[571]: Համաձայն իր կտակի, հոգևոր առաջնորդը հուղարկավորվել է Գանձասարում:

Սակայն վայելելով ժողովրդի հարգանքն ու սերը, Ղարաբաղի թեմի առաջնորդի հիշատակի նկատմամբ անարժան վերաբերմունք ցուցաբերվեց: Անտեսելով մետրապոլիտի կտակը, Ամենայն Հայոց Ներսես կաթողիկոսի հրահանգով, նրա անձնական օգտագործման բոլոր իրերը տեղափոխեցին էջմիածին, իսկ մնացածն էլ աճուրդի հանվեց Շուշիում: Այդ մասին փաստացի վկայություններ կան «Վավերագրերում»՝ «Յայտարարութիւն և ցանկ հանգուցեալ Բաղդասար մետրապօլիտի իրերը Մ.Աթոռ ուղարկելու վերաբերեալ»[572]: Այսպիսի վերաբերմունք դրսևորվեց Ղարաբաղի թեմի թերևս վերջին ամենահեղինակավոր առաջնորդի նկատմամբ, որ օրինապահության իսկական կերպար էր և ողջ գործունեության ընթացքում ամենայն պատասխանատվությամբ ու նվիրումով է վերաբերվել Մայր Աթոռին:

Մետրապոլիտի մահից հետո որոշ ժամանակ Ղարաբաղի թեմը մնաց առանց հոգևոր առաջնորդի: Ըստ Լեոյի, նույնպիսի վիճակ էր նաև հայոց մյուս թեմերում, քանի որ Ամենայն Հայոց Ներսես կաթողիկոսը դրանով ցանկանում էր ավելի հաստատուն դարձնել նրանց ենթակայությունը Մ.Աթոռին: Սակայն նրա մահից հետո «...կաթողիկոսական տեղապահը Անդրկովկասի երեք թեմերի համար նշանակեց ժամանակավոր կառավարիչներ, որոնք պիտի կառավարէին թեմերը մինչև նոր կաթողիկոսի ընտրութիւնն ու հաստատութիւնը»[573]:

571. Նույն տեղում, էջ 177:
572. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 245:
573. Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 218:

1857թ. Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ է նշանակվում Գևորգ Վեհապետյանը, որի գործունեության մասին սակայն «Վավերագրերում» բավարար հիշատակություններ չկան: Հայտնի է միայն, որ հոգևոր առաջնորդը տվել է Ղարաղշլաղ /ներկայումս Բերդաձոր/ գյուղի եկեղեցու օծման թույլտվությունը[574], նաև քայլեր է ձեռնարկել ինչպես Շուշիի հոգևոր դպրոցի, այնպես էլ ողջ Ղարաբաղում գոյություն ունեցող ծխական դպրոցների բարեկարգման, ինչպես նաև նորերի բացման ուղղությամբ:

1864-78թթ Ղարաբաղի թեմը առաջնորդել է Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցը: Պահպանվել են նրա նշանակման առթիվ Ամենայն Հայոց Մատթեոս կաթողիկոսին 1864թ. գրված շնորհակալագիրը, ինչպես նաև «Սարգիս արքեպիսկոպոսի գրութիւնը Կաթողիկոսին՝ Արցախի թեմի առաջնորդի պաշտօնն ընդունելու և շուտով Վեհափառին ներկայանալու մասին»[575]:

Պահպանված վավերագրերը փաստում են, որ Սարգիս արքեպիսկոպոսի առաջնորդության շրջանում ներեկեղեցական հակասությունները թեմի ներսում նույնպես առկա էին և դա հատկապես սուր արտահայտություն էր ստացել կրթական բնագավառում: Հատկանշական է, որ այս բնագավառում հակասությունները խորացել էին նաև մյուս հայկական թեմերում: Առկա դրությունից դուրս գալու ելքը ընդհանուր բարեփոխումների իրականացումն էր, որին էլ նպատակաուղղված էր Ամենայն Հայոց Գևորգ Դ կաթողիկոսի գործունեությունը: «Գևորգ Դ. կաթողիկոսը 1867-1868 թուականներին ձեռնարկեց մի շարք վարչական և կրթական բարեկարգումների, որոնք գալիս էին որոշ չափով բաւարարութիւն տալու հայ ժողովրդի հասարակական կեանքի զարգացումից առաջ եկող պահանջներին»[576]:

Սարգիս Ջալալյանցը 1867-1870թթ., Ամենայն Հայոց կաթողիկոսի հրահանգով ու քաղաքական հանձնարարությամբ, գտնվում էր Կոստանդնուպոլսում, իսկ հետո էլ, վերադառնալով Թիֆլիս, հավանաբար

574. ՀՀՊՊԿԱ, ֆ.56, g.1, գ.8088, թ.5:
575. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 283-285:
576. Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 355-356:

երկար ժամանակ էլ Թիֆլիսում է անցկացրել: Երկրամասից նրա երկարատև բացակայության պատճառով բնակչությունը հատուկ գրությամբ դիմել է Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ Սարգիս արքեպիսկոպոսին Արցախի թեմ վերադարձնելու կապակցությամբ[577]: Ընդհանուր առմամբ, պահպանված վավերագրերում մեծ տեղ ունեն Ամենայն Հայոց կաթողիկոսին ուղղված այն գրությունները, իսկ ավելի ճիշտ խնդրագրերը, որտեղ, լսելով Սարգիս արքեպիսկոպոսին այլ թեմ ուղարկելու կաթողիկոսի որոշման մասին, Ղարաբաղի թե հոգևոր և թե աշխարհիկ գործիչները, խնդրելով Սարգիս արքեպիսկոպոսին վերադարձնել Ղարաբաղ, միաժամանակ նրան ներկայացնում են, որպես «ժողովրդին սիրելի» առաջնորդ, որի ներկայությունը ժողովրդի համար անչափ կարևոր է. «...արդարև յօրէ անտի լսելոյն մեր զայս ցաւալի համբաւ զգալի ցավ պատճառեաց ի սիրտս մեր ի մասին մեկնելոյն ի վիճակէն մեր մի այնպիսի ազգասէր և արթուն հոգատար Հովուի: Ուստի որդիական սիրոյ համբուրիւ համբուրելով զՀայրական սուրբ գարշապար գթած և խնամառատ Հայրութեանդ, ամենախոնարհաբար խնդրեմք չզրկել զմեզ ի մարդասիրական և յԱզգասիրական խնամառատ գթոյն վիճակաւոր Հօր, որպէս վայելեալ եմք մինչ ցարդ զազգասիրական աշխատանս նորա ի վաղուց անտի...»[578]: Հավանաբար այդ խնդրագրերը հաշվի առնելով է, որ Ղարաբաղի հոգևոր առաջնորդի Բեսարաբիայի թեմ ուղարկելը բեկանվեց Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից ու նա կրկին վերադարձավ Շուշի:

Շուշի վերադառնալուն պես Սարգիս Ջալալյանցը ակտիվորեն ձեռնամուխ եղավ կրթական կյանքի բարեկարգմանը: Առաջին հերթին կանոնակարգվեց աշակերտների ընդունելության համակարգը: Հասարակական կյանքի բարեկարգմանն էր ուղղված արքեպիսկոպոսի կողմից 1872թ հրատարակված «Բարեկարգութիւնք, տնօրինեալք ի վիճակաւոր առաջնորդէն հայոց թեմին Ղարաբաղու ի Սարգիս արքեպիսկոպոսէն Հասան-Ջալալեանց յաղագս կարգի կատարման ինչ-ինչ հոգևոր ծիսից հայոց ժողովրդականաց ի նմին վիճակի», որով վերացվում էր

577. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 307:
578. Նույն տեղում, էջ 326:

նշանադրության, պսակի և հուղարկավորման ծեսերի հետ կապված զանազան շռայլ սովորույթները, այդ թվում «կերուխումները» և հաստատվում են շատ պարզ ու վայելուչ կանոններ[579]:

1876թ. Սարգիս Հասան-Ջալալյանցը հատուկ խնդրագրով դիմում է Ամենայն Հայոց Գևորգ Դ կաթողիկոսին՝ Ղարաբաղի հոգևոր առաջնորդի պաշտոնից իրեն ազատելու կապակցությամբ, հիմնավորելով, որ պատկառելի տարիքն ու հիվանդությունը այլևս թույլ չեն տալիս ժողովրդին ու եկեղեցուն օգտակար ծառայություն կատարելու համար: Եվ իրոք, Լեոյի վկայությամբ, Սարգիս Ջալալյանցը հիվանդության պատճառով 1875 թվականից բնակվելով Թիֆլիսում, «այնտեղից էր ուղղություն տալիս թեմի գործերին, և ինքն էլ զգում էր, որ դա լավագույն կարգաւորում չէ»[580], ինչն էլ, հավանաբար, դրդել էր նրան այդ քայլին: 1876 թվականին Շուշիի հասարակության կողմից նույնպես համապատասխան խնդրագիր է ուղարկվել Ամենայն Հայոց կաթողիկոսին, որում, ներկայացնելով Սարգիս Հասան-Ջալալյանցի ազգանպաստ գործունեությունը, միաժամանակ նշվում է, որ «ցաւօք սրտի ասեմք՝ երբ ի 1875 ամի նա իւր անձնական տկարութեանց պատճառաւ բացակայեցաւ աստի առողջութիւն գտնելու համար, դարձեալ մեր ժողովրդականաց մէջ սկսաւ ի վեր երևիլ նոր ի նորոյ անխաղաղութիւնք, անմիաբանութիւնք»[581]: Սակայն այս խնդրագրերին էջմիածնի կողմից մասնակի լուծում է տրվել և 1876թ., հաշվի առնելով Սարգիս Հասան-Ջալալյանցի հիվանդությունը, թեմական փոխանորդ է նշանակվել Արիստակես վարդապետ Սեդրակյանը, որն էլ մինչև 1881 թվականը առաջնորդեց Ղարաբաղի թեմը՝ փոխանորդի կարգավիճակով:

«Վավերագրերում» նշված է Ամենայն Հայոց Գևորգ Դ կաթողիկոսի 1878թ. հոկտեմբերի 3-ի կոնդակը, ուղղված «Արցախեան վիճակի առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոսին»[582], ինչը ևս փաստում է, որ Սարգիս արքեպիսկոպոսը շարունակում էր մնալ որպես Արցախի թեմական առաջնորդը և այդ պաշտոնում հավանաբար մնացել է մինչև

579. Տես Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 374:
580. Նույն տեղում, էջ 376:
581. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 334:
582. Նույն տեղում, էջ 338:

1879 թվականը, երբ կնքեց իր մահկանացուն:

Ընդհանուր առմամբ տնտեսական դժվարին կացության մեջ էին շարունակում մնալ Ղարաբաղի թեմի գրեթե բոլոր հոգևոր կենտրոնները: Տնտեսական դժվարությունները, բնականաբար բացասաբար են անդրադարձել նաև կրթական համակարգի վրա և որի արդյունքում մի շարք դպրոցներ են փակվել: Ղարաբաղի թեմում տիրող այս իրավիճակը քննարկվել է սինոդում 1843թ., 1845թ., 1888թ.[583]: Ղարաբաղի թեմի հոգևոր կառույցներում տիրող այդ մռայլ վիճակի հիմնական պատճառներից մեկը թուրքերի կողմից պարբերաբար կրկնվող ավարառությունն ու թալանն էր, ինչի մասին բազմաթիվ վկայություններ են պահպանվել վավերագրերում: Այսպես, 1866թ. սեպտեմբերի 8-ին Ղարաբաղի հոգևոր կառավարությունը ս.Էջմիածնի սինոդին է փոխանցել Մկրտիչ քահանա Տեր-Աստվածատրյանի նամակը՝ Երից Մանկանց վանքը թուրքերի կողմից թալանելու կապակցությամբ[584]: Մինչ այդ քննարկվել էր նաև Գանձասարի վանքի միանգամայն անմխիթար ու մռայլ վիճակը: Սակայն այդպիսի քննարկումները ավարտվում էին սոսկ համապատասխան վարչական, այն է ցարական մարմիններին կատարվածի վերաբերյալ տեղեկություններ հաղորդելով, որոնք էլ երբևէ որևէ գործնական քայլ չեն ձեռնարկել՝ կասեցնելու մահմեդական մոլեռանդների վայրագությունները:

1887թ. օգոստոսի 23-ին Գրիգոր արքեպիսկոպոսի Շուշիից հեռանալուց հետո, Ղարաբաղի առաջնորդական գահը թափուր էր մնացել: Ժողովրդի շրջանում մեծագույն ոգևորություն է առաջացրել Կարապետ եպիսկոպոս Այվազյանցի հոգևոր առաջնորդ նշանակելու մասին լուրը, ինչի մասին շատ հստակ վկայված է կաթողիկոսական դիվանի վավերագրերից մեկում. «Ահա այսպէս Կարապետ Սրբազանը փառաւորապէս և շքեղապէս ընդունվեցաւ Շուշւոյ հայ հասարակութիւնից, որը առաջին անգամն է, որ ժողովուրդը այսպիսի համակրական ցոյցերով է ընդունում իւր հովուին...»[585]: Սակայն թեմական առաջնորդի նկատմամբ շուտով ծայր առավ անվստահության, առավել ևս ատելության զգացում հոգևորականության, նաև ժողովրդի շրջանում, որի պատճառով սկսվեցին բողոքները նրա գործունեության նկատմամբ:

583. Մաթենադարան, Կ.դ., թղթ. 165, վաւ. 306, թ.14-16: Կ.դ., թղթ. 165, վաւ.306, թ.12-13: Կ.դ., թղթ. 165, վաւ.306, թ.7-9:
584. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 16-17:
585. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 348-352:

1889թ Ամենայն Հայոց Հայրապետին ուղարկվեց բողոքագիր, որում զգուշացվում էր, որ «եթէ իրերի դրութիւնը այս կերպ շարունակուելու լինի և սորա առաջը չառնուի, բոլոր մեր եկեղեցիների դռներն էլ պէտք է ընդմիշտ փակուին ոչ հեռուում: ... Նա եկել է կարծես միմիայն այն դիտաւորութեամբ, որ հիմնովին կործանէ մեր այս դարաւոր՝ արիւն քրտինքով ծեռք բերած ազգային գանձերը և հէնց այս պատճառաւ էլ իւր դէմ է զինել թէ կին և թէ մարդ, թէ ծեր և թէ երեխայ»[586]: Մի շարք փաստերի քննության արդյունքում պարզապես դժվար չէ եզրակացնել, որ վերստին սրվել էր ներկեղեցական պայքարը, որի հիմքում, սակայն, առաջին հերթին փոխադարձ անձնական ատելությունն էր, իսկ այդ ամենից էլ մեծապես տուժում էր ինչպես ամբողջ եկեղեցական հաստատությունը, այնպես էլ ինքնուրույն պետականությունից զրկված ժողովուրդը: Իրավիճակի սրման հիմնավոր պատճառներից էր նաև ռուս չինովնիկների միջամտությունները հայոց ներեկեղեցական հարաբերություններում, որի մասին վկայություններ կան Ամենայն Հայոց կաթողիկոսների ռուս չինովնիկներին ուղղված նամակ-բողոքագրերում: Ասվածը փաստենք թեկուզև մեկ օրինակով. 1897թ. Ամենայն Հայոց Մկրտիչ կաթողիկոսը հատուկ նամակով դիմել է իշխան Գոլիցինին, բողոքելով նրան թեմերում իր կատարած նշանակումները չհաստատելու վերաբերյալ[587]: Փաստերն ավելի քան համոզիչ են, որ ռուսական քաղաքականությունը հայ եկեղեցու նկատմամբ նրան հնարավորինս թուլացնելու իրական նպատակ էր հետապնդում:

1895թ. հունվարի 27-ին Ամենայն Հայոց Մկրտիչ կաթողիկոսի կոնդակով Ղարաբաղի թեմի առաջնորդ է հաստատվում Գարեգին արքեպիսկոպոս Սաթունյանը և պաշտոնավարում մինչև 1897թ.[588]: Ըստ երևույթին, ռուս չինովնիկների ակտիվ միջամտությունների պայման-

586. Նույն տեղում, էջ 357:
587. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 385-386:
588. Արարատ, 1897, էջ 377:

ներում որոշակի ձգձգվել է նոր առաջնորդի նշանակման խնդիրը: 1898թ. մարտի 7-ին Կովկասի կառավարչապետին ուղղված նամակով Ամենայն Հայոց Մկրտիչ կաթողիկոսը ժամանակավորապես Ղարաբաղի թեմի առաջնորդի պաշտոնում առաջարկում էր հաստատել Անանիա եպիսկոպոս Համազասպյանին, իսկ Շամախու թեմի առաջնորդ՝ Գրիգոր Գառնակերյանցին, և չսպասելով պատասխանին, անմիջապես նրանց հատուկ կոնդակով հաստատում է համապատասխան թեմերի առաջնորդներ: Սակայն 1898 թվականին, Պետերբուրգից ստանալով մերժողական պատասխան, Ամենայն Հայոց կաթողիկոսը ստիպված էր այս անգամ արդեն հատուկ գրություն ուղարկել Շուշի՝ Անանիա եպիսկոպոսին ետ կանչելու մասին[589]: Անշուշտ, նման քաղաքականությունը չէր կարող բացասական հետևանքներ չունենալ տեղում և այն ժողովրդի շրջանում նոր դժգոհությունների տեղիք տվեց: 1898թ. մայիսի 8-ին Շուշիի քաղաքացիների կողմից խնդրագիր ուղարկվեց Մայր Աթոռ՝ Անանիա եպիսկոպոս Համազասպյանին թեմի առաջնորդ հաստատելու և ետ ուղարկելու վերաբերյալ[590]: Սակայն այդպես էլ հարցը դրական լուծման չարժանացավ և 1898թ. հունիսին Ամենայն Հայոց Խրիմյան Հայրիկ կաթողիկոսը հանդես եկավ նոր միջնորդագրով, որով խնդրում էր իշխան Գ.Ս.Գոլիցինին՝ Ղարաբաղի և Շամախու թեմերի առաջնորդներ հաստատել համապատասխանաբար Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյանցին ու Ներսես արքեպիսկոպոս Խուդավերդյանին:

Ընդհանրապես Հայոց եկեղեցում և մասնավորապես Ղարաբաղի թեմում տիրող այս անկայուն իրավիճակը, բնականաբար, ունեցավ իր բացասական հետևանքները: Իսկ 1903թ. Ռուսական կառավարության հայոց եկեղեցական կալվածքների առգրավման վերաբերյալ հրամանագիրը ըստ էության մեծագույն հարված հասցրեց հայոց եկեղեցուն: Զրկվելով նյութական առանց այդ էլ սուղ հնարավորություններից, եկեղեցին ի զորու չեղավ պահպանելու թեմական ու ծխական դպրոցները, որոնք ծառայում էին նաև մատաղ սերնդի ազգային դաստիարակու-

589. Տես Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 387-390:
590. Նույն տեղում, էջ 393:

թյանը: Այսպիսով, Հայոց եկեղեցու նկատմամբ իրականացված վերոնշյալ քաղաքականության արդյունքում փակվեցին բազմաթիվ կրթօջախներ, որոնց թվում էր և ողջ արևելահայության շրջանում մեծ հեղինակություն վաստակած Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցը: Եվ միայն էջմիածնի հովանավորության ու Արցախի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսի մեծ ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ երկու տարվա դադարից հետո թեմական դպրոցում կրիկին վերսկսել պարապմունքները:

Այս ամենին էլ հաջորդեցին թուրք-թաթարական վայրագությունները, որոնց դիմակայելը գնալով աստիճանաբար արդեն իսկ դառնում էր անհնարին: Թուրքական օրեցօր աճող հայասպան քաղաքականության դրսևորումները մատնանշում էին միայն մեկ ճանապարհ. անհրաժեշտ էր անցնել ինքնապաշտպանության և ազգային անկախություն ձեռք բերելով պահպանել գոյությունը:

1905-7թթ. Անդրկովկասում տեղի ունեցած ազգամիջյան ընդհարումները ավելի սաստիկ էին Ղարաբաղում, որի արդյունքում ավելի շատ տուժեցին հայերը, քանի որ թուրքերն ավելի լավ էին զինված և նախապատրաստվելով հարձակման, նրանց հաջողվեց ավերել ու թալանել Ղարաբաղի բազմաթիվ բնակավայրեր, այդ թվում և եկեղեցիներ: 1906թ. օգոստոսին թուրքական հրոսակախմբերից մեկը, ներխուժելով Ամարասի վանքը, այն ամբողջապես թալանեց, մեծագույն ավերածություն պատճառելով նաև եկեղեցուն: «Վավերագրեր»-ում փաստացի տեղեկություններ կան 1905-1906թթ. մասնավորապես հայոց եկեղեցուն հասցված վնասների մասին. «Կողոպտուած են և հրդեհուած ... 1 վանք և 11 եկեղեցի»[591]:

Այս դժնդակ ժամանակներում Ղարաբաղի թեմը առաջնորդում էր Աշոտ եպիսկոպոս Շախյանը/1905-1909թթ./: Ամենայն Հայոց Հայրապետի 1905թ. ապրիլի 8-ի կոնդակով նշանակվելով Արցախի թեմի կառավարիչ[592], առաջին իսկ օրվանից նա ձեռնամուխ է եղել թեմում առկա մի շարք անհետաձգելի միջոցառումների իրականացմանը, այդ

591. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 466:
592. «Արարատ», 1905, էջ 320:

թվում Շուշիի թեմական դպրոցի վերաբացմանը: 1905թ. հիշյալ հիմնախնդրի կապակցությամբ թեմական առաջնորդը տեսակցել է Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով-Դաշկովին և անձամբ ստացել թեմական դպրոցի վերաբացման թույլտվությունը:

1905թ. օգոստոսի 1-ին Ռուսական կայսրության հրամանով թույլատրվեց վերաբացելու նաև հայոց եկեղեցական մյուս դպրոցները: Ավելին, հրամանով նրանց էր վերադարձվում նաև նախկինում խլված կալվածքները, որը նյութական լուրջ հնարավորություններ պիտի ընձեռեր վերաբացված դպրոցների լիարժեք գործունեության համար: Սակայն տարաբախտաբար, Ղարաբաղում այդ առիթով սկսված ոգևորությունը երկար չտևեց, քանի որ հենց օգոստոսին էլ նոր թափով բռնկվեցին հայ-թաթարական ընդհարումները: Նման մղձավանջային պայմաններում թեմական առաջնորդը այնուամենայնիվ փորձ կատարեց թեմական դպրոցի հոգաբարձուների նոր կազմ ընտրելու, որ սակայն անհնարին լինելու պատճառով, ձախողվեց: Դպրոցի հետագա գոյությունը ևս վտանգված էր՝ միջոցների սղության պատճառով: Սակայն հոգևոր առաջնորդը նման պայմաններում ոչ միայն հուսահատության մեջ ընկավ, այլև մեծագույն ջանքեր էր գործադրում դիմումներ հղելով նաև ազգային հաստատություններին ու ունևոր մարդկանց, քանզի խնդիրը սոսկ դպրոցի վերաբացումը չէր, այլ Լեոյի բնորոշմամբ. «Դա մի ահագին խորհուրդ էր ներկայացնում: Յաղթանակում էր կեանքի գաղափարը: Նոյն այն միջոցին, երբ աղէտը մի ժողովրդի գոյութիւնն էր վտանգել, հինաւուրց կրթարանը գալիս էր այդ իսկ րոպէին բաց անելու իր փակված դռները, որպէս զի կեանքի և առաջադիմութեան յաղթանակը տնկէ ապաժոյժ աւերակների ապականութեան մէջ»[593]: Աշոտ եպիսկոպոսի դիմումները արձագանքներ ունեցան և արդեն 1906թ. ստացվեցին առաջին նպաստները Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի հոգաբարձության և «Արամազդ» ընկերության կողմից: Սակայն, չբավարարվելով դրանով, նա խնդրեց և իրավունք ստացավ Ամենայն Հայոց կաթողիկոսից՝ շրջագայելու Ռուսաստանի հայաբնակ վայրերը՝ թեմական դպրոցի հետագա գոյությունը ապահովելու նպատակով:

593. Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 585:

1909թ. Աշոտ եպիսկոպոսի Ամենայն Հայոց հայրապետին հղված տեղեկագրում հիշարժան փաստեր կան Արցախի թեմի կազմության, ինչպես նաև հոգևոր առաջնորդարանի հոգածության շնորհիվ կրթական կյանքի աշխուժացման մասին: Այն մասնավորապես կրկին փաստում է, որ «Ղարաբաղի Հայոց թեմը պարունակում է իր մէջ Շուշու, Ջիւանշիրի, Կարիագինի/Ջիբրայիլ/, Նուխու և Արեշի ամբողջ գաւառները, Գանձակի և Զանգեզուրի գաւառների մասերը, Լանքարան քաղաքը և Զաքաթալայի շրջանից Կախ աւանը: Ամբողջ թեմում կայ ըստ շրջագայութեան 26.364 ծուխ, արական սեռի 101.143 շունչ, իգական սեռի 88.857 - ընդամենը 190.000: ... Թեմն ունի 221 եկեղեցի, 9 վանք, որոնցից 3 շեն և 6 անմարդաբնակ: Եկեղեցիները ընդհանրապէս դրամագլուխ չունին, իսկ տարեկան եկամուտը այնքան քիչ է, որ չեն կարողանում անհրաժեշտ ծախքերն անգամ հոգալ»[594]: Անշուշտ, մատնանշված են նաև բազում հիմնախնդիրների մասին, որոնց իրագործման համար մտահոգ էր թեմական առաջնորդը:

Սակայն, այս ամենով հանդերձ, թեմի ներսում շարունակում էր տիրել անհամերաշխ մթնոլորտ, որի վկայություններից են Ամենայն Հայոց կաթողիկոսին ուղղված բողոքագրերը:

1910թ. Հայոց հայրապետի կոնդակով Ղարաբաղի թեմական առաջնորդի պաշտոնից ազատվում է Աշոտ եպիսկոպոս Շախյանը և թեմական առաջնորդ է հաստատվում Բենիկ վարդապետը: Սակայն ներեկեղեցական հակասությունները թեմի ներսում շարունակվում էին: Փաստի պարզ վկայություն են հանդիսանում այն բողոքագրերը, որոնց մի մասում սուր քննադատության է ենթարկված թեմական առաջնորդը, իսկ մեկ այլ մասում այդ բողոքագրերը ներկայացվում են որպես իրականությանը չհամապատասխանող և «միայն ու միայն նպատակ ունենալով փութացնելու եպիսկոպոսի հեռացումն...»[595]: Անկախ ամեն տեսակի և շատ դեպքերում իրար հակասող վավերագրերի, այնուհանդերձ, Բենիկ վարդապետի, որպես թեմական առաջնորդի, թեկուզև

594. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 465-466:
595. Նույն տեղում, էջ 479:

կարճատև գործունեությունը թույլ է տալիս ենթադրելու, որ նրա նկատմամբ ժողովուրդը հատուկ համակրանք ուներ: Բայց և այնպես նրա դեմ կազմակերպված դավադիր քայլերի արդյունքը եղավ այն, որ նա շուտով զրկվեց հոգևոր առաջնորդի պաշտոնից:

1911թ. Ամենայն Հայոց Մատթեոս Բ կաթողիկոսի կողմից Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարչի պաշտոնում նշանակվեց Զավեն եպիսկոպոս Բաբայանը[596]: Նրա առաջնորդության շրջանում թեմի ընդհանուր վիճակը բավական ընդգրկուն ձևով արտացոլված է «Համառօտ տեղեկագիր Ղարաբաղի թեմի հայ ազգաբնակութեան հոգեւոր-վարչական, դպրոցական եւ կալուածական դրութեան մասին»[597] զեկուցագրում: Ներկայացնելով թեմում տիրող ընդհանուր իրավիճակը, թեմական առաջնորդը իր մտահոգությունն էր արտահայտում հատկապես պատմական նշանակության վանքերի ավերման և քայքայման փաստի կապակցությամբ. «ամբողջ Ղարաբաղը զարդարող և պատմական նշանակութիւն ունեցող, իւր ժամանակին հայ ժողովրդի քաղաքակրթութեան նկատմամբ որոշ դեր կատարած վանքերն, այժմ ըստ մեծի մասին ոչ միայն պատմութեան սեփականութիւն են դարձել, այլև դատապարտուել են յաւիտենական մոռացութեան, ենթարկուելով աւերման, քայքայման և ամայութեան»[598]:

Ինչպես բխում է զեկուցագրի բովանդակությունից, քաղաքական ծանր իրավիճակում էր հայտնվել դարեր շարունակ ժողովրդին ոգեշնչող և համախմբող մեր հոգևոր հաստատությունը և այդ վիճակով էլ մտահոգ Զավեն եպիսկոպոսը նախ կատարում է իր առաջարկությունները՝ ստեղծված իրավիճակից դուրս գալու նպատակով, միաժամանակ հույս հայտնելով, որ «ժամանակի պահանջ հանդիսացող վերոյիշեալ պայմաններն ի կատար ածելով, մենք կարող կը լինենք քիչ թե շատ բարեկարգել, ինչպես մեր վարչական, կրթական և այլ հաստատութիւնները, այնպես էլ մեր հարուստ կալուածները և շահագործել նրանց մէջ թագնուած հարստութիւնները յօգուտ և ի պայծառութիւն

596. Նույն տեղում, էջ 527-528:
597 Նույն տեղում, էջ 544-562:
598. Նույն տեղում, էջ 548:

ս.Էջմիածնի, ինչպես Ղարաբաղի, այնպես և ընդհանուր հայ ժողովրդի և մեր ազգային կրթական և կուլտուրական հաստատութիւնների»[599]:

Ռուսական իշխանությունները 1912թ. Զավեն եպիսկոպոսին թույլատրեցին կազմակերպելու հանգանակություն՝ Ղարաբաղի սահմաններից դուրս նույնպես մեծ հեղինակություն վայելող Շուշիի թեմական դպրոցի հոբելյանական 75-ամյակը նշելու, միաժամանակ և կրթօջախի նյութական պայմանները բարելավելու նպատակով: Ձեռնարկված միջոցառումները իրավամբ, շուտով տվեցին իրենց դրական արդյունքները:

1916թ. մայիսի 20-ի Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսի հայրապետական կոնդակով Զավեն եպիսկոպոսը ազատվեց Ղարաբաղի թեմական առաջնորդի պաշտոնից և նրա փոխարեն նշանակվեց Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը[600]: Նրա եռանդուն գործունեության մասին մի շարք վկայություններ կան «Վավերագրերում»: Սակայն սկսված համաշխարհային պատերազմն ու թուրքական իրար հաջորդող արշավանքները այլևս անհանրին են դարձնում առաջնորդարանի բնականոն գործունեությունը:

Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով երկրամասում տիրող քաղաքական կացությունը, բնականաբար, ավելի էր լարված, մանավանդ, որ Կովկասյան ճակատում ռուս-թուրքական պատերազմի թատերաբեմը վերստին Հայաստանն էր: Համաշխարհային պատերազմի արհավիրքին ավելացավ 1917թ. հոկտեմբերին Ռուսաստանում սկսված սոցիալիստական հեղափոխությունը, որի հետևանքով Ռուսաստանում ստեղծվեց քաղաքական խառնակ իրավիճակ, ինչն էլ իր անմիջական անդրադարձներն ունեցավ կայսրության տիրապետության տակ գտնվող ժողովուրդների և մասնավորապես հայ ժողովրդի վրա: Օգտվելով հարմար քաղաքական իրավիճակից, Թուրքիան շտապեց հաշվեհարդար տեսնել հայ ժողովրդի հետ:

1918թ. մայիսին արևմտահայության եղեռնով չկշտացած Թուրքիան ռազմական նոր արշավանք սկսեց Արևելյան Հայաստանի դեմ: Սա-

599. Նույն տեղում, էջ 562:
600. Նույն տեղում, էջ 618:

կայն հայ ժողովրդին հաջողվեց արժանի հակահարված տալ և վտարել թուրքական զորքը Հայաստանից, որին էլ հաջորդեց Անդրկովկասյան երեք Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի հանրապետությունների հռչակումը: 1918թ. մայիսի 27-ին Բաքվի և Ելիզավետպոլի նահանգները հռչակվեցին որպես Ադրբեջանական հանրապետություն, որով էլ աշխարհի քաղաքական քարտեզի վրա սկիզբ դրվեց մի նոր մահմեդական պետության: Այն ստեղծման պահից ի վեր հավակնում էր յուրացնելու նաև Արևելյան Հայաստանի մնացած նահանգները և, առաջին հերթին, Ղարաբաղն ու Զանգեզուրը: Նորաստեղծ Ադրբեջանի իշխանությունները հենց նույն 1918 թվականից ի վեր պահանջում էին արցախահայությանը ընդունել Ադրբեջանի հպատակությունը: Այդ նպատակին հասնելու նրանց առաջին քայլը հանդիսացավ մուսավաթական Խոսրով Բեկ Սուլթանովին Ղարաբաղի գեներալ-նահանգապետի պաշտոնում նշանակելը և հատուկ հանձնարարությամբ Ղարաբաղ ուղարկելը:

Ի պատասխան արցախահայության՝ Ադրբեջանի գերիշխանությունը ոչ մի կերպ չընդունելու մասին վճռական պատասխաններին, Ադրբեջանը բացահայտ ռազմական ագրեսիա սկսեց Ղարաբաղի դեմ: Ընհարումներ տեղի էին ունենում Ղարաբաղի ողջ սահմանի երկայնքով: Ադրբեջանի և նրա թիկունքում կանգնած Թուրքիայի ծավալապաշտական ծրագրերի մասին 1923թ. Արսեն Միքայելյանը, որպես ականատես, գրել է. «1918-էն մինչեւ 1921, երեք տարուայ ընթացքին, շատ պարզ կերպով կը նկատուէր ձգտում՝ իրագործելու որոշ ծրագիր մը - Ադրբէջանի միջոցով: Այդ ծրագրի նպատակն էր տիրանալ Ղարաբաղ - Զանգեզուրին եւ այդ ճանապարհով կապ պահպանել Նախիջեւանի թաթարներուն հետ եւ Հայաստանի հարաւային սահմաններով միանալ Տաճկաստանին, մէկ խօսքով, զինուորապէս եւ մահմետական տիրապետութեամբ օղակել Հայաստանի Հանրապետութիւնը...»[601]: Այս ծրագրի իրագործմանն էլ հենց ձեռնամուխ էր եղել նորաստեղծ Ադրբեջանի հանրապետությունը, բնականաբար, Թուրքիայի գերագույն հովանավորությամբ: Հարձակման առաջին նշանակետը դարձավ հայ

601. «Հայրենիք», ամս., Բոստոն, 1923թ., հմ.7, էջ 156-167:

եկեղեցին:

1918թ. Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսը նամակ է ուղարկել Մայր Աթոռ, որում մանրամասն ներկայացնում է թուրքական հարձակումների հետևանքով ստեղծված կացությունը, եկեղեցիների ու վանքերի բացահայտ կողոպուտը, թալանն ու ավերածությունները[602]: Այս ամենին ավելացավ արցախահայության նկատմամբ թուրքերի սկսած բացահայտ ջարդարարական քաղաքականությունը:

Դրությունը հատկապես օրհասական էր դարձել 1920թ.:

1920թ մարտին թուրքերը, ներխուժելով Շուշի, նոր ավերածություններ սփռեցին քաղաքում՝ «կոտորելով առանց սեռի և հասակի խտրութեան մօտ 5000 հայ, որոնց թւում թեմական առաջնորդ տ. Վահան Սրբազան եպիսկոպոսին, որի գլուխը կտրելով բարբարոսաբար շրջեցրել են քաղաքում ի տես գազանացած խուժանի»[603]: Հիրավի գազանության ակնհայտ դրսևորում, որ թուրքի կողմից արդեն իսկ անսպասելի երևույթ չէր: Շուշիում սկսված կոտորածների ու ավերածությունների մասին Ամենայն Հայոց կաթողիկոսին ուղղված զեկուցագրերից մեկում վկայված է. «Այրւեց հայոց ամբողջ քաղաքամասը... Վահան եպիսկոպոսը սպանւեց առաջնորդարանում, չկամենալով դուրս գալ: Առաջնորդարանը, թեմական դպրոցը, եկեղեցիները թալանւած են, ապա այրւած: Կռիւը սկսւելով առաւօտեան ժամը 5-ին՝ հնարաւորութիւն չի եղել կոնսիստորիայից ոչ մի դոկումենտ, ոչ մի գործ ու գանձ ազատել, նոյնպէս և եկեղեցիներից»[604]:

602. Նույն տեղում, էջ 662-663:
603. Նույն տեղում, էջ 749:
604. Նույն տեղում, էջ 747:

Արցախի թեմը խորհրդային ժամանակաշրջանում

1920թ. մայիսի 12-ին ռուսական 11-րդ կարմիր բանակը մտավ Շուշի: Մայիսի 24-ին Վարանդայի Ավետարանոց գյուղում տեղի ունեցավ խորհրդակցություն, որին մասնակցում էին այդ ժամանակներում Ղարաբաղում գտնվող Նժդեհը, Դրոն, գնդապետ Միրիմանյանը և ուրիշներ: Վերլուծելով ստեղծված իրավիճակը և գիտակցելով, որ միայն տեղական ուժերով անհնար է դիմակայել Խորհրդային Ռուսաստանի և նրան միացած ու իրեն արդեն խորհրդային հռչակած Ադրբեջանի զինված ուժերին, որոշեցին իշխանությունը հանձնել հայ բոլշևիկներին և հեռանալ դեպի Զանգեզուր: Ահա այսպիսի քաղաքական իրավիճակում Լեռնային Ղարաբաղում հաստատվեցին խորհրդային կարգեր, որոնք կործանարար եղան հատկապես հայ ազգային այնպիսի հաստատության համար, ինչպիսին էր եկեղեցին: Իսկ 1921թ. հուլիսի 5-ի ՌԿ/բ/Կ Կովկասյան բյուրոյի Արցախը Ադրբեջանին բռնակցելու մասին իրավաբանական տեսանկյունից միանգամայն անհիմն որոշումը, ըստ էության, դարձավ արցախահայության համար ամենաողբերգական իրադարձությունը:

Խորհրդային կարգեր հաստատվելու պահից ի վեր երկրամասում սկիզբ առան անսանձ կամայականությունները, բռնություններն ու թալանը, որից առանձնապես տուժեց եկեղեցին ու հոգևորականությունը: Ընդհանուր առմամբ ողջ Խորհրդային տարածքում կոմունիստները ծավալել էին հակաեկեղեցական ակտիվ քարոզարշավ, որից բնականաբար ոչ միայն զերծ չմնաց նաև Լեռնային Ղարաբաղը, այլև այստեղ այն առավել ծայրահեղական բնույթ էր ընդունել և որի հիմնական պատճառներից մեկն էլ այն էր, որ ադրբեջանական տիրապետության պայմաններում եկեղեցին առաջին հերթին ընդունվում էր որպես հակաադրբեջանական շարժման կենտրոն ու քարոզիչ: Եվ պատահական չէ, որ հենց 1920թ. ամռանն էլ սկսվեց հոգևորականության նկատմամբ բռնությունների հզոր ալիքը, որը շարունակվեց մինչև 1933 թվականը՝ Արցախի թեմի ողբերգական վախճանը: Զավեշտական է հատկապես

այն հանգամանքը, որ հայ եկեղեցու և հոգևորականության դեմ ակտիվ քաղաքական պայքարը իրականացվում էր հայ կոմունիստների ձեռքով: Բոլշևիկ Արմենակ Ղարագյոզյանի հրամանով ձերբակալվեցին Տեր-Մեսրոպ Շահնազարյանը և բազմաթիվ այլ հոգևորականներ, որոնք էլ մահապատժի ենթարկվեցին:

Պաշտոնապես ճանաչելով եկեղեցու պետությունից անկախ լինելու փաստը, իրականում կոմունիստական /բոլշևիկյան/ կուսակցությունը ակտիվորեն գործունեություն ծավալեց նրա ընդհանրապես վերացման ուղղությամբ: Այդ նպատակով էլ հենց ստեղծվեցին «անաստվածների խմբակներ», որոնցում բոլոր չափահասների ներգրավումը պարտադիր պայման էր, իսկ դրանից հրաժարվելը՝ նրանց համար «բացասական հետևանքներով ավարտ» (Մ.Բ.): Այսպիսի պայմաններում հայ ժողովրդի այնժամանակյա հիմնական ուսյալ խավը՝ հոգևորականությունը, որը կոմունիստական կուսակցության կողմից ընդունվում էր որպես խորհրդային կարգերին խորթ տարր, աստիճանաբար սկսեց հեռանալ՝ հրաժարական դիմումներ հղելով էջմիածին: «Վավերագրերում» պահպանվել է Արցախի թեմի առաջնորդ Անանիա եպիսկոպոսի գրությունը Գերագույն հոգևոր խորհուրդին, որտեղ նկարագրված է բոլշևիկյան կառավարության կողմից եկեղեցու և հոգևորականության դեմ իրականացվող ոտնձգությունների մասին. «... եկեղեցում մի քանի գիւղերի հասարակութեան ժողովելով հակաքրիստոնէական ճառախօսութիւն են արել բեմը բարձրանալով, թողնելով սովորական ժողովատեղին, եւ երբ մի երիտասարդ նկատողութիւն է արել, սպառնացել է կառավարութեան անունով, եւ քահանայք վշտացած հեռացել են...»[605]:

Ղարաբաղի տարբեր եկեղեցիներից ստանալով քահանաների բողոքագրերը՝ իրենց եկեղեցիների նկատմամբ բոլշևիկների իրականացրած բռնարարքների ու թալանի մասին, թեմական առաջնորդը հայտնվում է ծանր կացության մեջ և, անզոր լինելով դրանց դեմը առնելու, «ի նկատի առնելով ժամանակիս ծանր ու անտանելի անցուդարձն», 1924թ. մայիսի 27-ին ստիպված հոգևոր առաջնորդի պաշտոնից իրեն

605. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 828:

ազատելու վերաբերյալ խնդրագիր է ուղարկում Գերագույն հոգևոր խորհրդին[606]: Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսը, հարգելով Անանի եպիսկոպոսի խնդրանքը, նրան ազատում է թեմական առաջնորդի պաշտոնից և նրա փոխարեն նշանակում Վրթանես վարդապետ Հակոբյանին:

Միաժամանակ էջմիածինի կողմից քայլեր ձեռնարկվեցին Ղարաբաղում հայ եկեղեցու դեմ իրականացվող բռնարարքները գոնե փոքր ինչ մեղմելու ուղղությամբ: 1926թ. Գերագույն հոգևոր խորհրդի կողմից գրություն ուղարկվեց ԼՂԻՄ ժողկոմխորհի նախագահ Արմենակ Ղարագյոզյանին՝ «Արցախի գիւղերում կուսակցական գործիչների և իշխանութեան ներկայացուցիչների հակաեկեղեցական տգեղ ու պատիւ չբերող պահուածքի դէմն առնելու խնդրանքով»[607], որտեղ փաստերով ներկայացված է, որ Խորհրդային Ղարաբաղում քսանից ավելի գյուղական եկեղեցիներ փակելուց, դրանք թատրոնի և ակումբի վերածելուց զատ իշխանության ներկայացուցիչները և կուսակցական գործիչները կոպիտ բռնություններով ու անվայելուչ արարքներով վիրավորում են գյուղի հավատացյալ բնակչության կրոնական սրբություններն ու զգացումները: Սակայն էջմիածնի միջամտությունն էլ ի զորու չգտնվեց կանխելու բոլշևիկների որդեգրած նման հակաազգային քաղաքականությունը:

Արցախի թեմի առաջնորդ Վրթանես վարդապետը, Շուշիում համապատասխան գործունեության համար անհնարինության պատճառով, տեղափոխվեց Գանձասար: Գանձասարը վերստին ստանձնեց Ղարաբաղի հոգևոր կենտրոնի դերը: Սակայն խորհրդային անվանված, բայց և իրականության մեջ մուսավաթա-մահմեդական Ադրբեջանը թեկուզև քայլ առ քայլ, բայց և այնպես շարունակում էր իր հակահայկական քաղաքականությունը հասցնել հաղթական նպատակակետին:

Իսկ Ղարաբաղի թեմական առաջնորդը ակտիվ գործունեություն էր ծավալել Արցախում փակված եկեղեցիները վերաբացելու, հոգևոր կյանքը իր բնականոն հունի մեջ վերադարձնելու ուղղությամբ և նրան

606. Նույն տեղում, էջ 829:
607. Նույն տեղում, էջ 860-861:

բոլոր հիմնահարցերում օժանդակում ու ոգևորում էր էջմիածինը: Բայց և այնպես, ադրբեջանական տիրապետության պայմաններում դրանք իրականացնելը բնականաբար, ոչ միայն դժվար, այլև անհնարին էին, քանի որ հատկապես եկեղեցու նկատմամբ բռնությունները գնալով ավելի ու ավելի էին ուժգնանում:

Եկեղեցին բացահայտորեն գտնվում էր ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի խիստ վերահսկողության տակ և այդ մասին վավերագրերից մեկում՝ «Ղարաբաղի թեմի առաջնորդ Վրթանէս ծ. վարդապետի գրութիւնը Ղարաբաղի ներքին գործոց ժողովրդական կոմիսարին՝ իր գործունէութեան ընդհանուր նկարագրութիւններով, 16, մարտի, 1927թ. Գանձասար», միանգամայն ակնառու և հետաքրքիր վկայություն է արձանագրված: Ի պատասխան Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ներքին գործերի ժողովրդական կոմիսարի ներկայացրած հատուկ հրահանգի, թեմի առաջնորդը մանրամասն նկարագրում է վանքերն ու եկեղեցիները կատարած շրջագայությունների ժամանակ իր ծրագրերը, եզրափակելով նամակը հետևյալ կերպ. «Այս է մեր անելիքը: Բանւորագիւղացիական կառավարութիւնը, եկեղեցուն եւ հաւատացեալներին տուել է ազատ գործելու լուրջ իրաւունք և հնարաւորութիւն, որից մենք վերոյիշեալ համեստ չափովն ենք օգտւում Ի.Լ.Ղարաբաղում: Ես շուտով շրջան պիտի դուրս գամ ինձ վրայ դրուած յիշեալ պարտաւորութիւնները կատարելու, եթե վերոյիշեալ կէտերից որևէ մէկը չպիտի կատարեմ, ինձ անյայտ պատճառով, յարգելի կոմիսար, խնդրում եմ բարի լինէք ինձ յայտնել»[608]: Բանվորագյուղացիական կառավարության ընդունած օրենքները «Ինքնավար» հռչակված մարզում ահա այսպիսի միանգամայն նոր «կիրառումներ» էին ստանում:

Կոմունիստական կուսակցության կողմից խստիվ արգելվեցին եկեղեցական ծիսակատարությունները, հատկապես կնունքը: Ոտնահարելով հավատացյալ ժողովրդի դարերից եկած ավանդույթները, հատուկ և հրապարակային ձևով կազմակերպում էին «հասարակական կարմիր կնունք»: Իսկ կոմունիստական կուսակցության համատարած կոլեկտիվացման կուրսի գործընթացի իրականացումը, որի հետևանքով

608. Նույն տեղում, էջ 866-867:

ողջ Խորհրդային երկիրը հայտնվել էր տնտեսական ծանր իրավիճակում, այն նաև քաղաքական իրադրության սրման պատճառ հանդիսացավ: Նման խառնակ պայմաններում առանձնակի ծանր իրավիճակում հայտնվեց Ղարաբաղի հոգևոր թեմը, քանի որ, օգտվելով երկրում ստեղծված քաոսային իրավիճակից, ադրբեջանական իշխանությունների հատուկ հրահանգներով պարզապես խլվեց նրա ողջ ունեցվածքը: Առանց բացառության Արցախի բոլոր վանքերը առաջին հերթին զրկվեցին վանքապատկան տարածքներից, որի հետևանքով վտանգվեց նրանց հետագա ոչ միայն գործունեությունը, այլև պարզապես գոյությունը:

Փաստաթղթերից մեկում՝ Էջմիածնի հոգևոր խորհրդին 1929թ. փետրվարի 11-ին ուղարկված զեկուցագրում, վկայված է, որ թեմի 18 վանքերից պահվում են միայն 7-ը, 164 հայկական գյուղերում 112 եկեղեցիներից փետրվարի 1-ի դրությամբ 79-ը առգրավված են, որոնք էլ վեր են ածվել խրճիթ-ընթերցարանի, դպրոցի, շտեմարանի, 6 եկեղեցիներ կիսաավեր վիճակում են, իսկ մնացած 27 եկեղեցիներն էլ փակման վտանգի առջև են[609]: Եվ այդ վտանգն էլ չուշացավ. 1929թ. փետրվարի 21-ին Ադրբեջանի մինիստրների խորհրդի որոշման հիման վրա ԼՂԻՄ կոմիտեն ձեռնարկեց 108 եկեղեցիների փակման գործը՝ դրանք վերածելով կուլտուր-լուսավորական հիմնարկությունների[610]: 1929թ. հոկտեմբերի 4-ին մարզգործկոմի որոշմամբ փակվեց Ամարասի հռչակավոր եկեղեցին, իսկ պատմամշակութային արժեքներն ուղարկվեցին Բաքու՝ ուսումնասիրելու համար:

Նույն ճակատագիրն են ունեցել նաև ինչպես ԼՂԻՄ-ի մեջ ներառված, այնպես էլ նրա սահմաններից դուրս հայտնված պատմական Արցախի բազմաթիվ այլ հոգևոր կենտրոններում պահվող հազարավոր մասունքներ: Պատմական հարուստ ավանդույթներ ունեցող Գետաշենի Ավագ ս.Նշան եկեղեցում պահվող Ավետարանը և այլ մասունքներ Բաքվից ստացված հատուկ հրահանգով «1927-28 թվերին կոլտնտեսության ղեկավարությունը տանում է Բաքու, հանձնում թանգարանին,

609. Նույն տեղում, էջ 883-884:
610. ԼՂՀ պետարխիվ, ֆ.1, ց.2, գ.3, թ.63:

որի դիմաց գյուղի համար ռադիոընդունիչ և այլ սարքեր է ստանում... դրանից հետո ոչ մի տեղեկություն չենք ունեցել մեր Ավետարանի մասին»[611]: «Առայսօր այդ սրբությունները «ուսումնասիրվում են» Բաքվում...: Փաստորեն, խորհրդային իշխանությունը՝ հիմնովին կործանելով Արցախում դարեր շարունակ ստեղծված ու մաքրագործված Հայ առաքելական եկեղեցու բնականոն գործող համակարգը, արցախահայությանը զրկեց ոչ միայն հասարակ մարդուն տրված հավատքից, այլ նաև ինքնության պահպանման ամենահիմնական հենասյունից»[612]:

1929թ. միանգամայն կեղծ մեղադրանքներով ձերբակալվեց և Շուշիի բանտ տեղափոխվեց Ղարաբաղի թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոսը: «Ղարաբաղի թեմի առաջնորդ տ.Վրթանէս եպիսկոպոսը երրորդ տարին է ինչ գտնվում է Շուշու ուղղիչ տանը:... ստացած տեղեկություններից երևում է, որ նրա դատը տեղի է ունեցել, և նա արդարացել է եղած մեղադրանքներից»,- գրված է 1931թ. նոյեմբերի 7-ի Գերագույն հոգևոր խորհրդի ՀԽՍՀ քաղվարչության նախագահությանը ուղղված նամակում[613]:

Ղարաբաղում եկեղեցու և հոգևոր թեմի նկատմամբ իրականացվող բռնարարական քաղաքականությունը շարունակվեց մինչև նրա վերջնական կազմալուծումը: 1932թ. թեմական առաջնորդի Էջմիածնի հոգևոր խորհրդին ուղղված զեկուցագրում նշված է. «Մինչև 1930թի փետրուար ամիսը թեմումս գոյութիւն ունէին եկեղեցիներ, թեմական խորհուրդ, քահանայութիւն, ներկայումս թեմիս բոլոր եկեղեցիները վեր են ածուած դպրոցական, հասարակական, այլև այլ հաստատութիւնների: Ներկայումս թեմիս բոլոր քահանաները առանց բացառութեան հրաժարուել են, է՝ որ իրենց կոչումից, և է՝, քահանայագործութիւնից ու պարապում են իրենց տնտեսութեամբ և կամ ծառայում են որ-

611. Բ.Կարապետյան, Հարյուր տարվա երկխոսություն, էջ 20:
612. Վ.Բալայան, Բռնությունները եկեղեցու նկատմամբ ԼՂԻՄ-ում 1920-ական թվականներին, «Արցախի պատմությանն ու հուշարձանների պահպանությանը նվիրված գիտական համաժողովի նյութերը», Ստեփանակերտ, 2002, էջ 22-23:
613. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 895:

պէս ուսուցիչ...»[614]: Այսպիսինն էր եկեղեցու վիճակը Լեռնային Ղարաբաղում «եղբայրական» խորհրդային Ադրբեջանի տիրապետության պայմաններում:

1932թ. հուլիսի 21-ին Ստեփանակերտում տեղի է ունեցել վերջին հոգևոր ժողովը՝ ընտրելու համար պատգամավորներ նոյեմբերի 10-ին էջմիածնում կայանալիք Ազգային-եկեղեցական ժողովին մասնակցելու նպատակով: Պատգամավորներ են ընտրվել Ստեփան Կանայանը, Անդրեաս Նաջարյանը, Հովհաննես-Բեգ Մելիք-Քարամյանը և Զավեն Ադամյանը[615]: Էջմիածնում 1932թ. նոյեմբերի 10-ին գումարված Ազգային-եկեղեցական ժողովին մասնակցել է նաև Ղարաբաղի թեմի պատվիրակությունը՝ թեմական առաջնորդի գլխավորությամբ, որից հետո նրանց այլևս արգելվել է վերադառնալ Ղարաբաղ: Ի պատասխան Վրթանես եպիսկոպոսի Մայր Աթոռին ներկայացրած գրավոր բողոքին, հայտնել են, որ «Հայրապետական լիազօրը Նորին Սրբութեան կարգադրութեամբ անցեալ թուի դեկտեմբերից սկսած բանակցութիւններ է վարել ամենահնարաւոր միջոց գործ դնելով Ձեր՝ Ղարաբաղի թեմ վերադառնալու համար: Նոյն զեկուցումից երևում է, որ Ադրբեյջանի կառավարութիւնը ընդհանրապէս ընդունելի չի համարում Ձեր առաջնորդական պաշտօնավարութիւնը Ադրբեյջանում: Վերոգրեալը հաղորդելով Ձեզ, Գերագոյն հոգևոր խորհուրդը Ձեր Արցախի թեմ գնալու վերաբերութեամբ բանակցութիւնները վերջացած է համարում»[616]:

Հակառակ Ամենայն Հայոց Խորեն Ա կաթողիկոսի գործադրած ջանքերին, Ադրբեջանի իշխանությունների կտրուկ մերժողական դիրքորոշման պատճառով, այլևս հնարավորություն չտրվեց Ղարաբաղի թեմի առաջնորդին վերադառնալ Արցախ: Այսպես, այլևս ի զորու չլինելով դիմակայելու ադրբեջանական իշխանությունների բացահայտ հակահայկական բռնարարական քաղաքականությանը, 1933 թվականին փակվեց Ղարաբաղի հոգևոր թեմը:

«Լուսավորյալ» 20-րդ դարը դժվար է անգամ համեմատել արաբա-

614. Նույն տեղում, էջ 896:
615. Նույն տեղում, էջ 902:
616. Նույն տեղում, էջ 904:

կան, սելջուկյան, մոնղոլ-թաթարական տիրապետության միջնադարյան ժամանակների հետ, քանզի թեկուզև ծայրահեղ ծանր իրավիճակին, գոնե եկեղեցուն գոյատևելու հնարավորություն էր տրված, մի իրողություն, որ բացառվեց «ինտերնացիոնալիստական» Ադրբեջանի կողմից: Եվ Լեռնային Ղարաբաղում կիրառվող հայ եկեղեցու իսպառ վերացմանն ուղղված քաղաքականությունը իրագործվեց ըստ էության: Ղարաբաղի հոգևոր թեմի վերացումով ավելի անսանձ բնույթ ընդունեց եկեղեցիների աստիճանական փակման ու դրանց իսպառ վերացման գործընթացը: Այս առումով փաստերն ավելի քան ակնառու են. Ծարի ս.Գրիգոր եկեղեցին տեղում բնակություն հաստատած մահմեդական քրդի մի ընտանիք, սվաղով ծածկելով հայերեն արձանագրությունները, այն օգտագործում էր որպես գոմ, իսկ ս.Սարգիս եկեղեցին իր արձանագիր քարերով ու խաչքարերով որպես շինանյութ է հանդիսացել 1950-ական թվականներին կառուցված թուրքական դպրոցի շենքի համար[617]:

Մակ. Բարխուտարյանցը Դիզակի գավառի երբեմնի իշխանանիստ Տումի բնակավայրի տարածքում նկարագրել է Կարմիր եկեղեցին, որի արևմտյան լուսամուտի վերևամասում պահպանված արձանագրությունը փաստում է եկեղեցու շինության մասին. այսօր այդ եկեղեցուց մնացել է ընդամենը հենց նշված արձանագրությունը և այն էլ պահպանվում է Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանում պարզապես որպես հիշյալ եկեղեցու երբեմնի շինության ու գոյության վկայություն:

Արցախի երբեմնի վարչական ու հոգևոր կենտրոն Շուշիում հիմնականում 19-րդ դարում կառուցված հինգ եկեղեցիներից այսօր միայն երկուսն են պահպանված, իսկ մնացած երեքը տարբեր «հիմնավորումներով» քանդվել կամ միանգամայն այլ շինությունների են վերածվել: Նմանատիպ օրինակները այնքան շատ են, որ թվարկելն անգամ անհնարին է:

Մասնավորապես հենց այդ քաղաքականության արդյունքում էլ

617. Տես Ս.Կարապետյան, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 58-59:

Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը դարձավ երկրագնդի վրա միակ հայաբնակ տարածքը, որտեղ արդեն 30-ական թվականներից գոյություն չուներ որևէ գործող եկեղեցի, իսկ եկեղեցու ողջ ունեցվածքը բռնագրավվել ու պետականացվել էր: Պլանավորված նպատակային քաղաքականության ակնհայտ դրսևորում՝ իր էությամբ մարդկային իրավունքների, խղճի ու ազատության կոպիտ ոտնահարում: Իսկ եթե այս ամենին հավելենք նաև այն փաստը, որ Բաքվի իշխանությունների չափազանց «հոգատար» վերաբերմունքի շնորհիվ հայ գիտնականներին, ուսումնասիրողներին բացահայտորեն արգելվում էր ինչպես ԼՂԻՄ-ի կազմում ընդգրկված, այնպես էլ նրա սահմաններից դուրս թողնված և Խորհրդային Ադրբեջանին բռնակցված հայկական բնակավայրերում հայկական պատմաճարտարապետական կոթողների՝ հատկապես վանքերի, եկեղեցիների, խաչքարերի ուսումնասիրությունը: Հայկական պատմաճարտարապետական հուշարձանների խորագիտակ ուսումնասիրող, հայ բազմադարյան մշակույթի գանձերը վերջնական կորստից փրկելու մեր օրերի իսկական նվիրյալ Սամվել Կարապետյանը խորհրդային տարիներից ի վեր, շատ դեպքերում վտանգելով անգամ իր կյանքը, գրիչն ու լուսանկարչական սարքը ձեռքին, ոտքով շրջել է մեր պատմական հայրենիքի բոլոր այն վայրերը, որոնք չար բախտի քմահաճույքով կտրվել են մայր հայրենիքից, նրանց «պատմությունն ու արդեն իսկ մասամբ ջարդարարության զոհ դարձած մշակութային արժեքները մոռացումից փրկելու և սերունդներին ավանդելու մտահոգությամբ», վկայում է, որ «խստիվ արգելված էր (անշուշտ, Բաքվի կարգադրությամբ) լուսանկարչական սարքերով՝ հայաստանցի այցելուների մուտքը Հանդաբերդ ու Դադիվանք», ինչպես և մյուս պատմական վայրեր[618]:

Այսպիսով, խորհրդային տարիներին «եղբայրական» Ադրբեջանի իշխանությունների կողմից ամեն ինչ արվեց՝ Արցախի հայության հոգևոր-մշակութային զարկերակը կաթվածահար անելու համար, որի արդյունքում էլ Արցախը զրկվեց իր դարավոր ազգային հաստատությունից և դրա հիմնական նպատակը հայությանը դիմազրկելն էր, մայր

618. Նույն տեղում, էջ 22-23:

արմատներից վերջնականապես կտրելը: «Անցնող յուրաքանչյուր տարվա հետ ավերվող հուշարձանների թիվն ավելի է մեծացել, իսկ աշխարհագրական ընդգրկումը՝ ընդարձակվել: ... Ոչնչացող հայկական հուշարձանների շարքում առաջին տեղը բռնում էին հայերեն արձանագրություններն ու խաչքարերը, ապա վանքերն ու եկեղեցիները, այլ կերպ ասած, մշակույթի անհայտ քրիստոնեական շերտը»[619]:

Ազգային ու գաղափարա-քաղաքական լայնամասշտաբ բռնությունները ակնհայտորեն պատճառ հանդիսացան իր իսկ բնօրրանում արցախահայության հոգևոր կյանքի ընդհանուր անկման:

Ակնհայտ փաստ է, որ ցանկացած ժողովրդական շարժում կամ պատերազմ ունի իրեն ծնող պատճառները և դրանց հիմնավոր լուծումը մեծապես կախված է ճիշտ ընկալումից ու համակողմանի վերլուծությունից: Արցախյան հիմնախնդրի լուծման պարագայում թերևս ճիշտ կողմնորոշվելը այնքան էլ դժվար չէ, քանզի ինչպես պատմական փաստերը, այնպես էլ մարդկային քաղաքակրթության ներկա ժամանակներում տեղի ունեցող իրադարձությունները ավելի քան ակնառու են և մատնանշում են միայն մեկ ճանապարհ, որ կոչվում է «հանուն գոյության՝ Ազգային անկախություն»:

619. Հայոց ցեղասպանությունը, Ուսումնասիրություններ, Ս.Կարապետյան, Հայկական հուշարձանների եղեռնը Ադրբեջանում, Եր., 2001, էջ 213:

Արցախի վերաբացված թեմը

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը իր նշանավոր «Հայոց եկեղեցին» աշխատությունը եզրափակել է ճշմարիտ ու մշտապես արդիական հնչող հետևյալ արտահայտությամբ. «Հայն այն համոզումն ունի, թէ իւր Ազգային Եկեղեցին, որ զինքն անցեալին մէջ պաշտպանեց, ապագային մէջ ալ պիտի պաշտպանէ»[620]: Սակայն խորհրդային տարիներին հայ ժողովրդին և մասնավորապես արցախահայությանը հասցված արհավիրքները այնքան դաժան ու անողոք էին, որ մեկը մյուսին զորավիգ լինելու հնարավորությունը բացառված էր: Այդ հնարավորությունը ընձեռեց միայն 1980-ական թվականների վերջին Արցախում նոր թափով սկսված ազգային-ազատագրական շարժումը: Արցախյան համազգային շարժումը իրենով ազդարարեց ոչ միայն քաղաքական, այլև հոգևոր վերածննդի սկիզբը: Ուրեմն պատահական չէ, որ համազգային շարժման հենց նախաշեմին էլ՝ 1989թ. վերաբացվեց Արցախի հոգևոր թեմը:

1989թ. Ամենայն Հայոց երջանկահիշատակ Վազգեն Ա կաթողիկոսի հայրապետական կոնդակով վերակազմավորվեց Արցախի թեմը, որն ընդգրկում է ԼՂՀ տարածքը: Թեմական առաջնորդարանը դարձավ Գանձասարի ս.Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, որտեղ էլ 1989թ. հոկտեմբերի 1-ին պատարագ մատուցվեց: Երկարատև լռությունից հետո Արցախում կրկին ղողանջեցին հայ եկեղեցու զանգերը՝ իրենց շուրջը համախմբելու համար հայ հավատացյալ ժողովրդին: Հայ եկեղեցու զանգերը իրավամբ ազդարարեցին ու սկզբնավորեցին մեր ազգային վերազարթոնքի սկիզբը: Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ Արցախի թեմի առաջնորդ օծվեց Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, որի գերաշնորհ առաջնորդությամբ էլ Արցախի վերաբացված թեմը սկսեց վերակազմավորվել և հերթով վերաբացել երբեմնի մեծ հռչակ վայելող մեր եկեղեցիներն ու վանքերը: Հոգևոր առաջնորդը մեծ պատասխանատվությամբ և առանձնահատուկ ջանադրությամբ է ձեռնամուխ եղել հոգևոր հաստատության վերանորոգության գործին, ինչի մասին խոստովանել է հենց ինքը, նշելով, «Ստանձնելով թեմի հոգևոր առաջնորդի պարտականությունները՝ առաջին հերթին ստացա մեծ պատիվ ու պատասխանատվություն: Պատմական փառավոր թեմի վերաբացումն, անշուշտ, ծանր ու միաժամանակ, պատվավոր լուծ էր: Ու պիտի խոստովանել, որ այդ առթիվ մեծ ուրախություն, ցնծում ապրեցինք: Մանավանդ, որ այդ վստահությունն ընձեռվել էր վեհափառ Հայրապետի կողմից: Ցնծությամբ, հպարտությամբ, մտորումներով ու նաև ներքին երկյուղով, առաջին հերթին եկանք Արցախ: Շրջեցինք ու ծանոթացանք այն սրբավայրերին, որ պիտի նորոգվեն ու վերաբացվեն...»[621]:

1991թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ ԼՂ մարզային խորհրդի և Շահումյանի շրջանային խորհրդի միացյալ նիստը, որը և ընդունեց ինքնավար մարզը և Շահումյանի շրջանը ընդգրկող տարածքի վրա անկախ հանրապետություն հռչակելու վերաբերյալ պատմական որոշումը: Ադրբեջանական իշխանությունները այն ընդունեցին սվիններով և բացահայտորեն դիմեցին զենքի: Նույն սեպտեմբերի 25-ին Շուշիից առաջին անգամ Ստեփանակերտը ենթարկվեց հրետակոծության, որին էլ հաջորդեց Ադրբեջանի բացահայտ ռազմական ագրեսիան՝ Լեռնային Ղարաբաղը վերջնականապես հայաթափելու իր վաղեմի ծրագրերը իրագործելու պարզ մտադրությամբ: Լեռնային Ղարաբաղի ժողովրդի համար ստեղծվել էր օրհասական այնպիսի վիճակ, որի դեպքում վճռական պաշտպանական միջոցների չդիմելը կնշանակեր վերջնական կործանում: Այս գիտակցումով էլ ողջ ժողովուրդը ոտքի կանգնեց պաշտպանելու իր իսկ պատմական հայրենիքում մարդկային իր գոյության տարրական իրավունքը:

Հատկանշական է նաև, որ այդ ազատագրությանն էլ ի սկզբնաե զինվորագրվեց նաև նորաբաց թեմի հոգևորականությունը: Այստեղ էլ մեր պատմությունը նորից ու նորից կրկնվեց և «ահա մի հոգևորականութիւն, որ ծուլուած իր ժողովրդի հետ, որ տանում է նրան դէպի կռիւ, դէպի տանջանքներ և հերոսութիւններ՝ լեռնային ոգին, լեռնային կեանքի ազատութիւնը սիրելու և պահպանելու համար»[622]: Լեոյի հիշյալ

620. Մ.Օրմանեան, Հայոց եկեղեցին, էջ 248:

621. «Ստեփանակերտ», օգոստոս, 1999թ.:
622. Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 56:

խոսքերը վերաբերում էին Հասան-Ջալալյաններին, որոնք 18-րդ դարում անձամբ կազմակերպեցին ու գլխավորեցին ազգային ազատագրական պայքարը, սակայն շատ արդիական են նաև մեր ժամանակներում: Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի խոսքերը տվյալ պարագայում շատ բնորոշող են. «Արցախյան ազատամարտի ամենաօրհասական պահերին ժողովրդի հետ էինք, մարտադաշտում գտնվող զինվորների կողքին: Մեր օրինանքը, անքուն գիշերներն ու տագնապները յուրահատուկ սպեղանի էին վիրավորների, որդեկորույս մայրերի վերքերին... Ժողովուրդը, հանձինս մեզ, մարտադաշտում տեսնում էր իր նոր Ղևոնդ Երեցին...Որպես հոգևոր հայր, իմ հոգու զավակների համար պատասխան եմ կրում Աստծո, պատմության և ազգի առջև: Եթե նրանք պատերազմում են, ապա ես պարտավոր եմ լինել նրանց կողքին: Եթե ծնունդ կամ հարսանիք՝ դարձյալ պիտի լինեմ նրանց կողքին»[623]:

1992թ. մայիսի 9-ին հայ ազատամարտիկների անկոտրում կամքի շնորհիվ թուրքի ճիրաններից ազատագրվեց Ղարաբաղի հոգևոր կենտրոն Շուշին, որը հոգևոր մեծ ցնծություն պարգևեց ողջ հայ ժողովրդին: Ռուսական կայսերական զորքի կողմից 1827թ. հոկտեմբերին Երևանի ազատագրության կապակցությամբ գրված Խ.Աբովյանի հայտնի տողերը. «Օրհնվի էն սհաթը», թերևս այս պարագայում ավելի քան բնորոշ են և «օրհնյալ հազար անգամ», որովհետև ոչ թե օտարի զորքն էր մտել մեր հողը իբրև թե ազատագրելու, այլև մենք ազգովին ոտքի ելանք մեր հայրենիքը ազատագրելու, ուրեմն այն օրհնյալ է բազմակի անգամ:

1992թ. մայիսի 9-ին Շուշիի ազատարարների հետ մեկտեղ Շուշի մտան նաև հոգևոր հայրերը հոգևոր առաջնոր Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի առաջնորդությամբ և նրանց առաջին քայլերից մեկն էլ հանդիսացավ ազատագրված քաղաքի և Ղարաբաղի հոգևոր կենտրոնը հանդիսացող Ղազանչեցոց ս.Ամենափրկիչ եկեղեցու գմբեթի վրա ս.Խաչի տեղադրումը: Այդ ամենը իրականացվել է մեկ նպատակով. «որպեսզի փառքի արժանացած Արցախի նախկին մայրաքաղաքը վերագտնի իր դեմքը: Անհրաժեշտ է ամեն կերպ վերականգնել քաղաքի նախկին հարուստ ավանդույթները, այն կրկին դարձնել հոգևոր-մշակութային կենտրոն»[624]:

623. «Ստեփանակերտ», օգոստոս, 1999թ.:

Երկրամասի և ժողովրդի ճակատագրով մտահոգված Արցախի թեմի առաջնորդը նաև դիվանագիտական առաքելություն էր իրականացնում: 1992թ. հունվարի 22-23-ին Անգլիայի լորդերի պալատի փոխխոսնակ բարոնուհի Քերոլայն Կոքսի միջնորդությամբ և անմիջական մասնակցությամբ Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը և գրող-հրապարակախոս Զորի Բալայանը Մոսկվայում այցելել են Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Կանադայի դեսպանատները, հանդիպել նաև համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Երկրորդին՝ ներկայացնելով Արցախի նկատմամբ Ադրբեջանի կողմից, նրան ապօրինաբար ԽՍՀՄ զիուժի կողմից տրամադրված զենքի ու ռազմամթերքի միջոցով, կիրառվող ռազմական ագրեսիայի հետևանքներն ու միաժամանակ պահանջելով, որ ԱՊՀ-ն, Եվրոպայի երկրները և ՄԱԿ-ը համապատասխան միջոցառումներ ձեռնարկեն այդ վայրագությունները կանխելու ուղղությամբ:

1994թ. Ստամբուլում տեղի է ունեցել կրոնական խորհրդաժողով, որին մասնակցելու հրավերք ուներ նաև Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը: Սակայն թուրքական իշխանությունները մերժեցին նրա այցելագիրը, դրանով իսկ բացառելով Արցախի հոգևոր առաջնորդի մասնակցությունը խորհրդաժողովին, որի պատճառով և Ստամբուլ ժամանած հայ պատվիրակությունը, ի նշան բողոքի, հրաժարվեց մասնակցելուց և հեռացավ խորհրդաժողովից[625]: Իսկ թուրքական իշխանությունները այս քայլով մեկ անգամ ևս փաստեցին, որ հավատարիմ են մնացել իրենց ավանդական գործելակերպին և որ ժողովրդավարական այս նոր կեցվածքը տակավին խորթ է մնացել իրենց էությանը:

Արցախին պարտադրված պատերազմը ստիպեց ողջ հայ ժողովրդին բռունցքվել, միավորվել և կազմակերպորեն դառնալով ավելի

624. «Ստեփանակերտ», օգոստոս, 1999թ.:
625 «Ազգ», 16 փետրվարի, 1994թ.:

հզոր՝ իր հերթին պարտադրել մեր թշնամուն՝ հարգելու մեր ազգային գոյությունն ու իրավունքները, միաժամանակ Արցախյան հիմնահարցը տեղափոխելով հերթական բանակցային փուլը: «Արցախահայությունը իր կամքի, համառության ու համախմբվածության շնորհիվ լուծելով իր հիմնահարցը, ձեռնամուխ է լինում իր նորօրյա պետականության կերտման գործին»[626]: Այս համազգային գաղափարի իրագործմանը առաջին իսկ օրվանից զինվորագրվել է նաև հոգևոր հաստատությունը:

Արցախյան ազատամարտից հետո Լեռնային Ղարաբաղի նորանկախ հանրապետությունում բուռն թափով ծավալվեց բազում դարերի թոհուբոհով անցած, գոյատևած, բայց և իրենց վրա բոլոր ժամանակների ավերիչ հարվածներից խուսնացած մեր եկեղեցիների ու վանքերի վերանորոգման ու վերաբացման աստվածահաճ գործընթացը: Իր հայրենիքում և իր իսկ ստեղծած հոգևոր կոթողները անգամ պահպանելուց զրկված, բայց և հոգու գաղտնարաններում փայփայած ու պահպանած ժողովուրդը վերստին հնարավորություն ստացավ վերադառնալու իր ազգային ավանդակերպին:

Երկարատև նորոգումներից հետո 1998թ. ղողանջեցին 19-րդ դարից ի վեր Ղարաբաղի հոգևոր առաջնորդանիստ Շուշիի Ղազանչեցոց ս.Ամենափրկիչ եկեղեցու զանգերը՝ ազդարարելով իր վերածնունդը: Վերանորոգչական աշխատանքներն արդեն իսկ սկսված էին նաև Հայ Աղվանից կաթողիկոսանիստ Գանձասարի վանքում:

1999թ. սեպտեմբերին Արցախի հոգևոր թեմը մեծ շուքով նշեց թեմի վերաբացման 10-ամյակը: Եկեղեցական արարողությունների հետ մեկտեղ թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի նախաձեռնությամբ ու հովանավորությամբ Արցախում առաջին անգամ կազմակերպվեց գիտաժողով, որին մասնակցում էին Հայաստանի հանրապետության և ԼՂՀ ճանաչված գիտանականներ, հոգևորականներ, մտավորականներ: Առաջին գիտաժողովի կազմակերպման փաստը ևս մեկ անգամ վկայեց, որ մեր եկեղեցին եղել և մնում է հայագիտության երաշխավորը: Գիտաժողովը սկսվեց թեմի առաջնորդ Պարգև

626. Վ.Բալայան, Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 404:

արքեպիսկոպոս Մարտիրոսյանի օրհնությամբ ու հետաքրքրական զեկույցով և քննարկված հարցերը հիմնականում վերաբերում էին Հայ Աղվանից եկեղեցու պատմական ընթացքին:

Մեր նորաստեղծ պետականության հովանու ներքո արցախահայությանը վերջապես լավագույն հնարավորություններ են ընձեռվել իր աստվածային պաշտամունքները համարձակ պաշտելու և հավատարիմ մնալու իր հոգևոր արմատներին: Թեմի առաջնորդի հովանու ներքո հիմնադրվել են քրիստոնեական մանկական մշակութային կենտրոններ, եկեղեցական քարոզչական-դաստիարակչական կենտրոնը, դպրոցական ուսումնական ծրագրերում մտցվել է կրոնի պատմության դասընթացը...:

Թեմի առաջնորդի վկայությամբ 1999 թվականը ընդհանուր առմամբ եկեղեցաշինության տարի էր[627]: 1999թ. վերանորոգվել են ռուս գիտնական-արվեստագետ Յակոբսոնի կողմից «հայ միջնադարյան ճարտարապետության ու կոթողային քանդակագործության եզակի հուշարձանը և 13-րդ դարի հայ ճարտարապետության հանրագիտարանը» ճանաչված Գանձասարի համալիրը, այնուհետև Շոշկավանքը, Այգեստանի, Բաղարայի եկեղեցիները, Ամարասի վանքը, Շուշիի Կանաչ ժամ եկեղեցին և այլն: Պատմական եկեղեցիների ու վանքերի վերանորոգմանն ու վերակենդանացմանը զուգընթաց կառուցվում են նաև նոր եկեղեցիներ մեր նորանկախ հանրապետության տարբեր բնակավայրերում՝ Ստեփանակերտում, Մարտունիում, Ասկերանում Բերդաձորում և այլն:

Վերակառուցման ու վերանորոգման այս գործընթացները տարեցտարի ավելի են աշխուժանում ու իրենցով ամրապնդում արցախահայության ազգային ոգու տաճարը, և տա աստված, որ այսպես աստիճանաբար բացվեն մեր պատմական հայրենիքի բոլոր սրբարանների դռները:

627. Ազատ Արցախ, 5 հունվարի, 2000թ.:

ՎԵՐՋԱԲԱՆ

Հայ Աղվանից կաթողիկոսության պատմության ուսումնասիրությունը սկսած նրա սկզբնավորումից մինչև ներկա ժամանակները թույլ է տալիս կատարել հետևյալ հիմնական եզրակացությունները.

Քրիստոնեության քարոզչությունն ու տարածումը Հայ Աղվանից կողմերում սկսվեց ըստ ավանդության I դարի երկրորդ կեսին: Հայոց արևելից կողմերում առաջին քարոզիչ առաքյալների նահատակության ավանդական վայրերը սրբացվել, պահպանվել ու գոյություն ունեն ցայսօր:

Քրիստոնեությունը շարունակվեց տարածվել լեռնաստանում նաև հետագա դարերում ու ավելի հաստատուն դարձավ IV դարում:

Հայոց առաջին հայրապետ Գրիգոր Լուսավորչի քարոզչական գործունեության սահմանների մեջ ներառված էին նաև Հայոց արևելից կողմերը, այսինքն Արցախը և Ուտիքը: Աղբյուրագիտական տվյալների համաձայն հայոց առաջին հայրապետից հետո հիշյալ երկրամասերի քրիստոնեական լուսավորության առաքելությունը շարունակեց նրա թոռ Գրիգորիսը, ըստ հետագա ավանդության Հայ Աղվանից առաջին եպիսկոպոսը:

Հայոց արևելից կողմերում եկեղեցու դիրքերի ամրապնդմանն ու քրիստոնեության արմատավորմանն էր ուղղված Վաչագան Գ Բարեպաշտի իշխանապետական գործունեությունը: Հիշյալի առհավատչյան է բազում եկեղեցիների կառուցումն ու հոգևոր բնույթի բարեփոխումների իրականացումը հանձին Աղվենի ժողովի կանոնակարգի:

V դարում Հայոց պետականության կորստից հետո, քաղաքական մեկուսացման մեջ հայտնված Հայոց արևելից կողմերի Հայ Աղվանից եկեղեցու համար ծանր իրավիճակ էր ստեղծվել. այլադավան տիրապետողների կողմից կիրառվող հալածանքներից բացի լուրջ վտանգ էր ներկայացնում նաև քաղկեդոնականությունը: Եվ դավանանքային ու քաղաքական պայմանների թելադրանքով 552թ. Պարտավում հաստատվեց Հայոց արևելից կամ Հայ Աղվանից եպիսկոպոսական աթոռը

և, միավորելով Հայոց արևելից կողմանց, ինչպես նաև անդրկուրյան Աղվանքի մի շարք հոգևոր թեմեր, իրենով սկզբնավորեց պատմագիտության մեջ հայտնի Հայ Աղվանից կաթողիկոսական աթոռը:

Հայ Աղվանից կաթողիկոսության մեջ ընդգրկված եպիսկոպոսությունների միաբանությունը նշանակալից դեր խաղաց քաղկեդոնականության և տարատեսակ աղանդների դեմ տարվող պայքարում:

VII դարում, պարսկա-բյուզանդական շարունակվող քաղաքական մրցակցության պայմաններում Հայոց արևելից եկեղեցին մնաց հաստատուն ու անսասան իր դավանանքին: Աղբյուրագիտական տվյալները փաստում են, որ Հայ Աղվանից կաթողիկոսները ակտիվորեն էին մասնակցում երկրամասի ինչպես հոգևոր, այնպես էլ քաղաքական անցուդարձներին. նաև պարսկական ծագումով Միհրանյան տոհմի ու հատկապես Ջևանշիրի իշխանապետության ժամանակներում ու նրանից հետո:

VIII դարի առաջին կեսին, շարունակելով մնալ Հայոց եկեղեցու հովանու տակ, Հայ Աղվանից եկեղեցին կարողացավ հաղթահարել Բյուզանդական կայսրության կողմից Հայոց եկեղեցուն պարտադրվող քաղկեդոնականությունն ու պահպանել իր ազգային անաղարտ ինքնությունը:

VIII դարը ընդհանուր առմամբ Հայոց քաղաքական պատմության դժխեմ ժամանակահատվածներից է, երբ Հայաստանը, այդ թվում և Հայոց արևելից կողմերը, հայտնվեցին Արաբական խալիֆայության տիրապետության տակ: Սկսվեցին եկեղեցիների ու վանքերի մասսայական կողոպուտ ու ավերածություններ: VIII դարի վերջին Պարտավից ստիպված էր հեռանալ «աղուանից մտաւոր-կուլտուրական միակ ստացուածքը-կաթողիկոսութիւնը»[628]: Այսպես Հայ Աղվանից կաթողիկոսության համար սկսվում է «աստանդական շրջանը»:

IX դարում Հայոց արևելից կողմերի քաղաքական ու վարչական կենտրոն էր դարձել Գանձակը, որտեղ տեղափոխվեց ու որոշ ժամանակ հաստատվեց նաև Հայ Աղվանից առաջնորդությունը: Քաղաքական հանգամանքների թելադրանքով IX-X դարերում որոշակիորեն

628. Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 41:

թուլացել էին Ամենայն հայոց կաթողիկոսության կապերը ծայրամասային թեմերի հետ, որի արդյունքում որոշ թեմեր, այդ թվում Հայ Աղվանից և Սյունյաց թեմերը ձեռք էին բերել որոշակի ինքնուրույնություն, որը սակայն երբեք չի հասցրել ամբողջական մեկուսացման կամ անջատման: Եվ X դարում, կապված Բագրատունյաց հայկական թագավորական իշխանության հզորացման հետ, վերստին կանոնակարգվեցին հոգևոր հարաբերությունները:

XI-XII դարերում Հայաստանում ու, մասնավորապես, Հայոց արևելից կողմերում քաղաքական իրավիճակը, շարունակում էր մնալ անկայուն՝ սելջուկյան հրոսակների իրար հաջորդող արշավանքների պատճառով: Հայ Աղվանից աստանդական կաթողիկոսները շարունակում էին իրենց առաքելությունը՝ տեղից տեղ տեղափոխվելով: Եվ միայն XII դարի երկրորդ կեսից ու, գլխավորապես, XIII դարի առաջին քառորդում՝ Զաքարյան հայկական կենտրոնացված իշխանության պայմաններում Հայաստանի տարբեր մասերում, այդ թվում և Հայոց արևելից կողմերում սկսել էր վերակենդանանալ ու զարգանալ հոգևոր-մշակութային կյանքն ու ընդհատված շինարարությունը: Այստեղ XI-XIII դարերում կառուցվեցին հավատքի ու լուսավորության այնպիսի նշանավոր կենտրոններ, ինչպիսիք են Դադի վանքը, Գտչավանքը, Գանձասարը, Հակոբավանքը և բազում այլ վանքեր ու եկեղեցիներ:

Հայ Աղվանից հոգևոր առաջնորդության ենթակայության տակ գործող հոգևոր այդ կենտրոններում ստեղծվել են ձեռագիր մատյանների հիասքանչ օրինակներ, որոնց հեղինակները ցայսօր դասվում են մեր ազգային մեծությունների շարքը՝ իրենց թողած ազգային ու ազգապահպան գործերի համար:

1236 թվականից Հայաստանում իրենց տիրապետությունը հաստատած մոնղոլ-թաթարական զորքի մի մասը, որ բանակադրվել էր Մուղանի դաշտում, նոր արհավիրքներ պատճառեց Հայաղվանքին: Սկսվեց հայ բնակչության նոր գաղթ. ժողովուրդը դաշտային մասերից սկսեց տեղաշարժվել դեպի Արցախի լեռնային մասը:

Հայոց արևելից եկեղեցու և քրիստոնյա հայ ազգաբնակչության համար առավել ծանր իրավիճակ ստեղծվեց մոնղոլների կողմից մահմեդականությունը ընդունելուց հետո: Կործանվեցին ու կողոպտվեցին եկեղեցիների ու վանքերի մեծագույն մասը, սաստկացան կրոնական հալածանքները ինչպես հոգևոր գործիչների, այնպես և քրիստոնյա հայ ազգաբնակչության նկատմամբ:

Մոնղոլ-թաթարների հիշյալ քաղաքականության, և դրան հաջորդած Միջին ասիական հրոսակների նոր արշավանքների հետևանքով վերստին խաթարվեց Հայոց արևելից կողմերի հոգևոր առաջնորդության բնականոն գործունեության ընթացքը:

Պահպանված բազմաթիվ փաստարկներից կարելի է եզրակացնել, որ 15-րդ դարում, երկրում քաղաքական աննպաստ իրավիճակի պատճառով Աղվանից եկեղեցու ներսում տեղի է ունենցել մասնատում, որի արդյունքում Ճալեթում ևս հաստատվել է Աղվանից անվանված կաթողիկոսական աթոռ, որը, սակայն հաստատուն չէր և երկարատև գոյություն ու էական դերակատարություն չկարողացավ ունենալ: Իսկ Գանձասարը, որպես կաթողիկոսանիստ, սկսել է իր գործունեությունը ոչ թե, ինչպես ընդունված էր մինչև հիմա, 1516 թվականից, այլև XIV դարի վերջերից և XV դարի սկզբներից, ընդ որում ոչ ընդհատումներով, այլ մշտական:

Այսպիսով, պահպանված աղբյուրները միանշանակորեն փաստում են քննարկվող ժամանակաշրջանում միաժամանակ երկու կաթողիկոսությունների գոյության մասին, ընդ որում, Ճալեթի կաթողիկոսների մասին հանդիպող բոլոր հիշատակություններում Աղվանից անվան հետ գործածված է նաև «ի յաթոռն Ճալեթոյ» արտահայտությունը, ինչը հավանաբար կատարված է երկու Աղվանից աթոռները տարբերակելու նպատակով: XIV-XV դարերում բուն Արցախում Հայ Աղվանից կաթողիկոսական գահին տիրանում էին մեծամասամբ Հասան-Ջալալյան իշխանական գերդաստանի ներկայացուցիչները, որոնք էլ հիմնականում գահանիստը տեղափոխել էին Խաչեն և նստում էին՝ սկզբում Ս.Հակոբավանքում, ապա Գանձասարում:

XV դարի վերջերին և XVI դարի սկզբներին՝ Մերձավոր Արևելքում քաղաքական նոր ուժեր ասպարեզ եկան: Այդ ուժերից մեկը Օսմանյան սուլթանությունն էր, մյուսը Սեֆևյան Պարսկաստանը: Պարսկական

արքունիքի հրամանով Հայոց Արևելից կողմերում ստեղծվում են մելիքություններ, որոնք պետք է ճանաչեին Պարսկաստանի գերիշխանությունն ու հաստատվեին շահերի կողմից: Նրանց միաժամանակ շնորհվում էին որոշ իրավունքներ, որոնց թվում՝ նաև սեփական զինական ուժ ունենալու: Պարսկական արքունիքի կողմից համեմատաբար ավելի մեղմ ու սիրաշահողական քաղաքականություն տարվում էր նաև Հայոց եկեղեցու նկատմամբ:

Պարսկաստանի գերակայության ներքո Հայոց արևելից հոգևոր առաջնորդությանը վերապահված էին որոշ արտոնություններ, որոնց մասին վկայում են շահերի կողմից Գանձասարի կաթողիկոսներին շնորհված հրովարտակները: Պարսից արքունիքի կողմից նման հարգալից վերաբերմունքը Հայ Աղվանից կաթողիկոսության նկատմամբ՝ բնականաբար արվում էր քաղաքական նկատառումներից դրդված: Եվ, չնայած որ «թվացյալ» մեղմ քաղաքականություն էր տարվում նաև աշխարհիկ իշխանությունների նկատմամբ, այնուամենայնիվ, պարզորոշ նկատելի է պարսկական արքունիքի կողմից տարվող քաղաքականության իրական ուղղվածությունը՝ տնտեսապես ու քաղաքականապես հնարավորինս թուլացնել իշխանական տները, որոնց նկատմամբ կիրառվում էին տարատեսակ բռնություններ ու կեղեքումներ՝ ճանաչելով միայն հոգևոր առաջնորդությունը:

Փաստորեն, պարսկական արքունիքի կողմից Գանձասարի կաթողիկոսությանը շնորհված էր բավական արտոնյալ վիճակ, նրան ենթակա թեմերն ու եկեղեցիները ազատված էին հարկերից, որի պատճառով աշխարհիկ իշխանավորները իրենց տիրույթներում գտնվող վանքերում նվիրատվություններ էին կատարում, դրանով ազատվելով իրենց վրա դրված տարատեսակ հարկերից ու տուրքերից:

Սակայն Արցախի իշխանական տների մնացորդները, այնուհանդերձ, համեմատաբար կենսունակ գտնվեցին ու պահպանեցին իրենց վարչա-քաղաքական գոյությունը և հետագայում, Գանձասարի հոգևոր առաջնորդության շուրջը միավորվելով, շարունակեցին ազգային-ազատագրական ոգորումները: Իսկ Գանձասարի հոգևոր առաջնորդությունն իր հերթին, օգտվելով կաթողիկոսությանը շնորհված քաղաքա-

կան ու տնտեսական հնարավորություններից, իր շուրջը համախմբեց հոգևոր առաջնորդության ենթակայության տակ գտնվող հայերին ու կազմակերպեց և գլխավորեց ազգային-ազատագրական պայքարը: Եվ այսպես, Գանձասարում վերջնականապես հաստատված Հայոց արևելից կողմանց կամ Հայ Աղվանից հոգևոր առաջնորդության համար սկսվում է մի ուրույն փուլ:

XVI- XVII դարերում Հայ Աղվանից կաթողիկոսությունը ծավալել էր եռուն հոգևոր գործունեություն հայկական աշխարհիկ իշխանությունների՝ մելիքությունների քաղաքական հովանու ներքո: Հայ Աղվանից կաթողիկոսության ենթակայության տակ շարունակում էին մնալ Ղարաբաղի հինգ մելիքությունների ու Գանձակի խանության տարածքում գոյություն ունեցող եպիսկոպոսական թեմերը:

XVIII դարի 20-ական թվականներին Պարսկաստանում կենտրոնական իշխանության թուլացման պայմաններում սկսվել էր ազգային-ազատագրական շարժումների վերելք: Հայոց արևելից կողմերում պահպանված հայկական պետականության բեկորները՝ մելիքությունները ևս ընդգրկվեցին ազատագրական շարժման հորձանուտում՝ Գանձասարի Հասան-Ջալալյան հոգևոր-իշխանական տոհմի անմիջական ղեկավարությամբ: Բավական է նշել, որ ազատագրական շարժման ոգեշնչողն ու կազմակերպիչը Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսն էր:

XVIII դ. ծավալված ազատագրական շարժումները կործանարար ավարտ ունեցան Ղարաբաղի թե աշխարհիկ իշխանության բեկորների՝ մելիքությունների և թե հոգևոր առաջնորդության համար: XVIII դ. վերջերին Ղարաբաղում հաստատված մահմեդական խանության կողմից վարվող կրոնական հալածանքների քաղաքականության արդյունքում Գանձասարի կաթողիկոսությունը կորցրեց իր տնտեսական ու քաղաքական ներուժը: Միաժամանակ կաթողիկոսության ներսում սկիզբ առած հակաթոռ կաթողիկոսների գլխավորած խմբավորումների միջև պայքարը ևս բացասական հետևանք ունեցավ Աղվանից հոգևոր առաջնորդության համար: Եփրեմ Ջորագեղցի Ամենայն Հայոց կաթողիկոսի 1815թ. հունիսի շրջաբերական կոնդակով վերացվում է Աղվա-

նից կաթողիկոսությունը: «1815թ. Աղվանից Սարգիս կաթողիկոսը պաշտոնապես հռչակվեցավ որպես միայն արքեպիսկոպոս կամ միտրոպոլիտ Գանձասարի կամ Ղարաբաղի»[629]: Կաթողիկոսությանը ենթակա թեմերը միավորվում և կազմում են մետրոպոլիտություն ի հոգևորս ենթակա մնալով Ամենայն Հայոց կաթողիկոսությանը:

Հոգևոր առաջնորդության վերացումը, բնականաբար, բացասական հետևանքներ ունեցավ Հայոց Արևելից հոգևոր եկեղեցական կյանքում:

1836 թվականի մարտի 11-ի հայլուսավորչական եկեղեցու մասին հատուկ օրենքով («Պոլոժենիե») կազմվում են վեց հոգևոր թեմեր, որոնց թվում էր և Ղարաբաղի թեմը և որի սահմանների մեջ ներառված էին Ղարաբաղ, Շաքի և Թալիշ գավառները: Նոր օրենքով Շուշին դառնում է թեմի հոգևոր կենտրոնը, որի հոգևոր ենթակայության տակ էին 3 քաղաքներ՝ Շուշի, Նուխի, Լենքորան և 156 գյուղ[630]:

Ցարական Ռուսաստանի «կանոնադրությունը» իրականության մեջ դարձավ Հայոց Արևելից հոգևոր առաջնորդությանը հասցված հերթական «հարվածը»: Վավերագրական բազմաթիվ փաստեր վկայում են Արցախում ցարական իշխանությունների վանական միաբանությունների նկատմամբ վարած քաղաքականությունը, որի արդյունքում, զրկվելով վանքապատկան հողատարածքներից, վանքերի մեծ մասը փակվեց:

Խորհրդային իշխանությունը եզրափակեց այդ գործընթացը միանգամայն նոր մեթոդներով: Ադրբեջանի իրականում «իսլամական» խորհրդային հանրապետությունը, բնականաբար, չէր կարող հանդուրժել իրեն «սեփականաշնորհած», թեկուզ և արտաքուստ «ինքնավար» հայտարարված մարզում քրիստոնեական եկեղեցու գոյությունը և բացահայտ բռնություններ սկսվեցին նրա նկատմամբ: Հիշյալ քաղաքականության արդյունքները առկա էին շատ կարճ ժամկետում. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզում հիմնահատակ կործանվեցին մեծ թվով եկեղեցիներ, իսկ գույքը բռնագրավվեց ու հիմնական մասը տե-

629. Աղ.Երիցյան, «Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 251:
630. Տես Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 97:

ղափոխվեց Բաքու: Եկեղեցիների փակման ու ավերման գործը ուղեկցվում էր հոգևորական գործիչների ձերբակալություններով: Արդյունքում, 1930-40-ական թվականներից ԼՂԻՄ-ը դարձավ ԽՍՀՄ միակ երկրամասը, որտեղ արդեն իսկ չկար գործող հայկական եկեղեցի: Երկար դարերով պետականությունից զրկված ժողովուրդը, որ քրիստոնեական օրենքներով ու կարգերով էր առաջնորդվել, զրկվում է նաև եկեղեցու հովանավորությունից: Սակայն ժողովրդի հոգին լուսավորող հավատքը միշտ վառ մնաց. արցախահայությունը այդ դժնդակ տարիներին անգամ, աղոթելով առ Աստված, կարողացավ դիմակայել նաև այս փորձությանը:

Եվ այսօր մեր ժողովուրդը լիովին վստահ է, որ ունենալով իր ազգային պետականությունը, գնում է դեպի խաղաղ ու բարեկեցիկ կյանք ու ամբողջ հոգով խոստովանում է իր երախտագիտությունը, կրկին աղոթելով առ Աստված նորաստեղծ պետականության համար, որ իր աստվածային պաշտամունքները համարձակ պաշտելու, իր հոգևոր արմատներին հավատարիմ մնալու հնարավորություն է ստեղծել:

ՑԱՆԿ
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
1. Մատենագիր աղբյուրներ և վավերագրեր

1.1. Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, 552 էջ:
1.2. Մ.Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1981, 456 էջ:
1.3. Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1980, 364 էջ:
1.4. Ղազարի Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բագրատ Ուլուբաբյանի, Երևան, 1982, 537 էջ:
1.5. Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Երևան, 1987, 456 էջ:
1.6. Եղիշէ, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Ե.Տեր-Մինասյանի, Երևան, 1989, 447 էջ:
1.7. Մ.Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վարագ Առաքելյանի, Երևան, 1983, 383 էջ:
1.8. Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ .Վ. Աբգարյանի, Երևան, 1979, 446 էջ:
1.9. Ղևոնդ, Պատմություն, Երևան, 1982, 181 էջ:
1.10. Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Երևան, 1985, 557 էջ:
1.11. Յովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Երևան, 1996, 398 էջ:
1.12. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ.Ա.Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, 426 էջ:
1.13. Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1991, 540 էջ:
1.14. Տեառն Անանիայի Հայոց Կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան Տանն Աղուանից որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւն արտաքոյ Սուրբ Լուսաւորչի Աթոռոյն, Յաւելուած «Արարատի» 1897թ. մարտ, էջ 129-144:
1.15. Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս.Պետերբուրգ, 1885, 438 էջ:
1.16. Ստեփաննոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911, 618 էջ:
1.17. Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորիոյ պատրիարքի, Յերուսաղէմ, ի տպարանի սրբոց Յակովբեանց, 1871, 527 էջ:
1.18. Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, ի տպարանի Լազարյան ճեմարանի արեւելեան լեզուաց, 69 էջ:
1.19. Մաղաքիայ Աբեղայի պատմութիւն վասն Ազգին Նետողաց, Ս.Պետերբուրգ, 1870, ի տպարանի կայսերական ճեմարանին գիտունիանց, էջ 64:
1.20. Սամուէլ Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, 180 էջ:
1.21. Պատմութիւն Արիստակեայ Վարդապետի Լաստիվերցւոյ, Վենետիկ, ի տպարանի սրբոյն Ղազարու, 1845, 124 էջ:
1.22. Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871,136 էջ:
1.23. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 210, էջ 10բ-11ա:
1.24. Մատենադարան, ձեռագիր, հմ. 4669, 2561, 1795:
1.25. Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. Հրովարտակներ, պրակ Ա (ԺԵ-ԺԶ դդ), կազմեց Հ.Փափազյան, Երևան, 1956, 316 էջ:
1.26. «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, 584 էջ:
1.27. Ե-ԺԲ դարերի Հայերեն Ձեռագրերի Հիշատակարաններ, կազմեց Ա.Ս.Մաթևոսյան, Երևան, 1988, 368 էջ:
1.28. ԺԳ դարի Հայերեն Ձեռագրերի Հիշատակարաններ, կազմեց Ա.Ս.Մաթևոսյան, Երևան, 1984, 987 էջ:
1.29. ԺԴ դարի Հայերեն Ձեռագրերի Հիշատակարաններ, Երևան, 1950, 757 էջ:
1.30. ԺԵ դարի Հայերեն Ձեռագրերի Հիշատակարաններ, կազմեց Լ.Ս.Խաչիկյան, մաս Ա, Երևան, 1955, 816 էջ: Մաս Բ, Երևան, 1958, 596 էջ: Մաս Գ, Երևան, 1967, 711 էջ:

1.31. Դիվան հայ վիմագրության, պրակ II, կազմեց Ս.Բարխուդարյանը, Երևան, 1960, 240 էջ
1.32. Դիվան հայ վիմագրության, պրակ V, կազմեց Ս.. Բարխուդարյան, Երևան, 1982, 348 էջ:
1.33. Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ., Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը(1813-1933), Երևան 2001, 980 էջ:
1.34. ԼՂՀ պետական արխիվ, ֆ.1, ց.2, գ.3, թ.63:

2. Աշխատություններ և հոդվածներ

2.1. Ազգագրական հանդէս, Բ գիրք, Թիֆլիս, 1897, 518 էջ:
2.2. Ադոնց Նիկ., Հայաստանը Հուստինեանոսի դարաշրջանում, Երևան, 1987, 640 էջ:
2.3. Ալիշան Ղ., Արցախ, Երևան, 1993, 122 էջ:
2.4. Ալիշան Ղ., Հայապատում, հ.Բ, Վենետիկ, 1901, 649 էջ:
2.5. Աղաբեկյան Մ.Ա., Ստուգաբանական դիտողություններ Աղուանք տեղանվան վերաբերյալ, ՊԲՀ, 1990, հմ.1, էջ 168-177:
2.6. Ակինեան Ն., Մովսէս Դասխուրանցի կոչուած Կաղանկատուացի եւ իւր Պատմութիւն Աղուանից, Վիեննա, 1970:
2.7. Ակինեան Ն., Ս.Մաշտոց վարդապետ, Վիեննա, 1949:
2.8. Անասյան Հ.Ս., Հայկական մատենագիտություն, հ.Ա, Երևան, 1959, 1228 էջ:
2.9. Աճառյան Հ., Հայոց գրերը, Երևան, 1984, 688 էջ:
2.10. Բարխուտարեանց Մակար, Պատմութիւն Աղուանից, հ.Ա, Վաղարշապատ, 1902, 224 էջ, հ.Բ, Թիֆլիս, 1907, 192 էջ:
2.11. Բարխուտարյանց Մակար, Աղվանից երկիր և դրացիք, Արցախ, Երևան, 1999, 416 էջ:
2.12. Բալայան Վ.Ռ., Արցախի պատմություն, Երևան, 2002, 440 էջ:
2.13. Վ.Բալայան, Բռնությունները եկեղեցու նկատմամբ ԼՂԻՄ-ում 1920-ական թվականներին, «Արցախի պատմությանն ու հուշարձանների պահպանությանը նվիրված գիտական համաժողովի նյութերը», Ստեփանակերտ, 2002:
2.14. Դանիելյան Է.Լ., Հայաստանի քաղաքական պատմությունը և հայ

առաքելական եկեղեցին(VI-VIIդդ), Երևան, 2000, 256 էջ:
2.15. Երիցյան Աղ., Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, 658 էջ:
2.16. Զամինեան Աբր., Հայոց եկեղեցու պատմութիւն, Նոր Նախիջևան, 1908, 290 էջ:
2.17. Թոփճեան Յակոբ Յ, Ցուցակ ժողովածուաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Ա, Վաղարշապատ, 1898, 112 էջ:
2.18. Իսկանյան Վ.Կ., Հայ-բյուզանդական հարաբերություն-ները VII դարում արաբական առաջին արշավանքների ժամանակ, ՊԲՀ, Եր., 1971, հմ.4, էջ 61-80:
2.19. Լալայան Ե., Երկեր հինգ հատորով, հ.2, Եր., 1988, 505 էջ:
2.20. Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց հոգեւոր թեմական դպրոցի, Թիֆլիզ, 1914, 696 էջ:
2.21. Լեո, Երկերի ժողովածու, հ.1, Երևան, 1967, 567 էջ:
2.22. Լեո, Երկերի ժողովածու, հ.2, Երևան, 1967, 786 էջ:
2.23. Լեո, Երկերի ժողովածու, հ.3, Եր., 1973, 638 էջ:
2.24. Լեո, Երկերի ժողովածու, հ.8, Երևան, 1985, 568 էջ:
2.25. Կանոնագիրք Հայոց, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, հ.Բ, Երևան, 1971, 476 էջ:
2.26. Կարապետյան Ս.,Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, 248 էջ:
2.27. Կարապետյան Ս., Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, Երևան, 1997, 132 էջ:
2.28. Հայ ժողովրդի պատմություն, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, հ.4, Երևան, 1972, 683 էջ:
2.29. Հակոբյան Ա., Մովսես Կաղանկատվացու «Աղվանից պատմության ձեռագրերը», ԲՄ, 15, Երևան, 1986, էջ 110-144:
2.30. Հակոբյան Ա.,«Եղիա Արճիշեցու նորահայտ թուղթը», ՊԲՀ, 2002, հմ.4:
2.31. Յակոբեան Ա., «Վաչագանի վեպը»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Ե-Զ դարերի Աղուանքում, «Հանդես Ամսօրեա», Վիեննա, ճժէ տարի, 2003, 34 էջ:

2.32. Հակոբյան Վ.Ա., Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դդ., հ.2, Երևան, 1956, 686 էջ:
2.33. Հարությունյան Հ.Ա., Հայաստանը IX-XIդդ, Երևան, 1959, 255 էջ:
2.34. Հարությունյան Բ., Մասքթաց Սանեսան թագավորի արշավանքը Հայաստան, Լրաբեր հասարակական գիտությունների, 1981, հմ.6:
2.35. Հարությունյան Բ., Հայոց եկեղեցու թեմական բաժանումը, ՊԲՀ, 2000, հմ.2, էջ 108-127:
2.36. Հարությունյան Բ., Մեծ Հայքի հյուսիս-արևելյան մարզերի վարչաքաղաքական կացությունը 387-451թթ., Բանբեր Երևանի համալսարանի, 1976, հմ.2, էջ 77-95:
2.37. Հովհաննիսյան Ս.Հ., Աղվենի սահմանադիր ժողովի կանոնները և նրանց աղերսը Աշտիշատի կանոնների հետ, ՊԲՀ, 1967, հ.4, էջ 265-274:
2.38. Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, 1969, 530 էջ:
2.39. Ղլտճեան Արսէն, Կանոնագիրք Հայոց, Թիֆլիս, 1914:
2.40. Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ.Բ, մաս Ա, Երևան, 1978, 648 էջ, հ.Գ, Երևան, 1977, 506 էջ:
2.41. Մանանդյան Հ. և Հր. Աճառյան, Հայոց նոր վկաներ, Վաղարշապատ, 1903:
2.42. Մելիք Բախշյան Ս., Հայաստանը VII-IXդդ, Երևան, 1968, 425 էջ:
2.43. Մելիքյան Կ., Հետքաղկեդոնական ժամանակաշրջանի /Vդարի II կես - VI դար/ դավանաբանական որոշ հարցերի շուրջ, Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2001, էջ 12-17:
2.44. Մուրադյան Հ., Վարդանանց ապստամբության մասին, Երևան, 1989:
2.45. Մնացականյան Աս., Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966:
2.46. Մկրտումյան Լ., Աղվանից /Գանձասարի/ կաթողիկոսությունը 17-19-րդ դարերում, ատենախոս. սեղմագիր, , Եր., 2001:
2.47. Յուզբաշյան Կ.Ն., Ավարայրի ճակատամարտից դեպի Նվարսակի պայմանադրությունը, Երևան, 1989, 226 էջ:
2.48. Չամչյան Միքայել, Խրախճան Պատմութեան Հայոց, Վենետիկ, 1811, 494 էջ:
2.49. Չամչյան Միքայել, Պատմութիւն Հայոց, հ.Բ, Վենետիկ, 1785, 1060 էջ,

հ.Գ, Վենետիկ, 1786, 896 էջ:
2.50. Պետրոսյան քհն. Եզնիկ, Հայ եկեղեցու պատմություն, Երևան, 1990, 124 էջ:
2.51. Պետրոսյան Եզն. քհն., Աղվանից աշխարհի կաթողիկոսության մի քանի թվականների շուրջ, էջմիածին, 1984, ԺԱ-ԺԲ, էջ 78-87:
2.52. Սարգիս եպս.Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս Բ, Տփղիս, 1858, 517 էջ:
2.53. Սամվելյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, հ.Ա, Երևան, 1931, 342 էջ:
2.54. Սամվելյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հ.1, Երևան, 1939, էջ 364:
2.55. Սվազյան Հ.Ս., Աղվանից մարզպանության կազմավորման հարցի շուրջը, ՊԲՀ, հմ.4, Երևան, 1979, էջ 210-218:
2.56. Սվազյան Հ.Ս., Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» աղբյուրները, ՊԲՀ, հմ. 3, Երևան, 1972, էջ 195-206:
2.57. Սվազյան Հ.Ս., Աղվանից իշխաններ Ջուանշիրի և Վարազ-Տրդատի իշխանության տարեթվերի հարցի շուրջ, Լրաբեր հասարակական գիտությունների, հմ.11, Երևան, 1973, էջ 108-114:
2.58. Սվազյան Հ.Ս., «Աղվանից աշխարհ» հասկացությունը ըստ Մովսես Կաղանկատվացու, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1973, N1, էջ 225-234:
2.59. Սվազյան Հ.Ս., Սուրբ Եղիշան Հայոց Արևելից կողմանց, Չողա երկրի և Աղվանից աշխարհի լուսավորիչ, Լրաբեր հասարակական գիտությունների, հմ. 2, 2000, էջ 55-65:
2.60. Սվազյան Հ.Ս., Քրիստոնեության Աղվանք ներթափանցման ուղիներն ու ժամանակաշրջանը, ՊԲՀ, հմ. 2, 2002, էջ 131-141:
2.61. Սվազյան Հ.Ս., Աղվանից աշխարհի պատմություն /հնագույն շրջանից - VIII դարը/, Երևան, 2006թ.:
2.62. Ստորագրութիւն Կաթողիկէ էջմիածնի և հինգ աւառացն Արարատայ: Աշխատասիրութեամբ Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանց, էջմիածին, 1842, 410 էջ:
2.63. Ստեփանյան Հ., Հայ ժողովրդի պայքարը թաթար-մոնղոլական լծի

դեմ, Երևան, 1990, 144 էջ:
2.64. Տեր-Մինասյան Ե.Գ., Պատմա-բանասիրական հետազոտություններ, Երևան, 1971, 486 էջ:
2.65. Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975:
2.66. Ուլուբաբյան Բ., Դրվագներ Հայոց արևելից կողմանց պատմության, Երևան, 1981, 299 էջ:
2.67. Ուլուբաբյան Բ., Աղվանից կաթողիկոսների ցանկ, Երևան, 1974:
2.68. Ուլուբաբյան Բ., Հայոց երևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Երևան, 1998, 453 էջ:
2.69. Ուլուբաբյան Բ., Արցախի պատմություն, Երևան, 1994, 380 էջ:
2.70. Օրմանյան Մաղաքիա, Ազգապատում, հ.Ա, Պէյրութ, 1959, հ.Բ, Պէյրութ, 1960, հ.Գ, 1961:
2.71. Օրմանյան Մաղաքիա, Հայոց եկեղեցին, Երևան, 1993, 280 էջ:
2.72. Ռաֆֆի, «Գաղտնիք Ղարաբաղի», «Արծագանք», 1886, հմ. 45, էջ 591:

3. ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

3.1. «Արարատ», ամսագիր, Վաղարշապատ, 1896, մայիս:
3.2. «Արարատ», ամսագիր, Վաղարշապատ, 1897, ապրիլ, էջ 161-163:
3.3. «Արարատ», ամսագիր, Վաղարշապատ, 1897, փետրվար, էջ 91-96:
3.4. «Արարատ», 1905:
3.5. «Մեղու Հայաստանի», 1858թ, հմ.15:
3.6. «Նիւթեր Աղուանից պատմութեան համար», «Լումայ», 1897, գիրք Բ, էջ 329:
3.7. Էջմիածին, ամսագիր, 1976, հ. Զ, էջ 56-63:
3.8. Էջմիածին, ամսագիր, 1961, հ. Բ, էջ 7-9:
3.9. «Ստեփանակերտ», օգոստոս, 1999թ.:
3.10. «Ազգ», 16 փետրվարի, 1994թ.:
3.11. Ազատ Արցախ, 5 հունվարի, 2000թ.:

Ռուսերեն լեզվով

1. Ахундов Д.А, Архитектура древнего и ранне-средневекового Азербайджана, Баку, 1986.
2. Акопян Ал., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, 304с.
3. Бартикян Р., Источники для изучения истории Павликианского движения, Ереван, 1961.
4. Геюшев Р.Б., Христианство в Кавказской Албании, Баку, 1984, 192 с.
5. Еремян С.Т., Народно-освободительная борьба армян против персов в 450-451гг. ВДИ, 1951, н.4.
6. Еремян С.Т., Экономический и социальный строй Албании III-VIIвеках, в кн. „Очерки истории СССР III-IX веков", Москва, 1958.
7. Мамедова Ф., Политическая история и историческая география Кавказской Албании, (III в. до н.э. - VIIIв. н.э.), под. ред. З.М.Буниятова, Баку,1986, 284 с..
8. Мамедова Ф., "Агуенские каноны 487-488гг., как источник по социально-экономической истории Кавказской Албании", "Известия" АН Аз.ССР, 1964, N 4.
9. Свазян Г., Род Михранидов в Албании, "К 0свещению проблем истории и культуры Кавказской Албании и Восточных провинций Армении, Ер., 1991. стр. 79-84.
10. Тер-Гевондян А.Н., Армения и Арабский халифат, Ер., 1977, 319 стр.

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԼԱՅԱՆ

ՀԱՅ ԱՂՎԱՆԻՑ ԵԿԵՂԵՑԻՆ

(Սկզբնավորումից մինչև մեր օրերը)

Խմբագիր՝ պ.գ.թ., դոցենտ Վ. Բալայան
Սրբագրիչ՝ Մ. Ջիվանյան
Համակարգչային էջադրումը՝ Ա. Պողոսյանի

Թուղթ՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը 60x84/16:
Ծավալը՝ 15 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 250:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ
Տպագրվել է «Դիզակ պլյուս» տպարանում
2009